

Մ. ԲԱԲԼՈՅԱՆ



ՓՅՈՒՌԱՀԱՅ  
ՄԱՄՈՒԼԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՉ

«ԱՆԻ»

ԵՐԵՎԱՆ 1965

ԿԱՍՏՈՒՆ 4740. 770 ԵՂ.

ԿԻՒ







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

М. БАБЛОЯН

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ  
ЗАРУБЕЖНОЙ ПЕЧАТИ

„А Н И“

(1946—1955)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(=91.99) (05 [ԱՆԻՏ 05/07  
(91.99)(09)

Մ. ԲԱԲԼՈՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
«Ա. Ն. Ի»

(1946—1955)

A  $\frac{II}{37205}$

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
Ե Բ Ե Վ Ա Ն 1965





Սույն աշխատությունը նվիրված է սփյուռքահայ առաջադիմական «Անի» գրական-գեղարվեստական ամսագրի հնահատությանը: Աշխատությունը վեր է հանում «Անի»-ի կարեւոր դերը ռեալիզմի պաշտպանության ու արմատավորման գործում սփյուռքահայ նոր գրականության մեջ, ինչպես նաև ցույց է տալիս այն մեծ աշխատանքը, որ տարել է ամսագիրը սփյուռքի և հայրենիքի կապերի ամրապնդման գործում:



## Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Անցած ավելի քան քառասուն տարիների ընթացքում սփյուռքի տարբեր վայրերում լույս են տեսել հայկական հարյուրավոր թերթեր ու ամսագրեր: Այսօր սփյուռքում հրատարակվող պարբերականների թիվը հասնում է մոտ 130-ի: Դրա մի զգալի մասը կազմում են գրական-գեղարվեստական պարբերականները: Սակայն սփյուռքահայ մամուլը<sup>1</sup> մինչև այժմ մնում է շուտամոռասիրված բնագավառ: Հրապարակի վրա եղած մեկ-երկու գիրքը<sup>2</sup> և զանազան պարբերականներում

1 Սփյուռքահայ մամուլ ասելով մենք հասկանում ենք այն բոլոր հայկական պարբերականները, որոնք լույս են տեսել կամ լույս են տեսնում այսօր արտասահմանում (հայերեն կամ օտար լեզուներով)՝ սկսած այն ժամանակվանից, երբ մի կողմից Արևմտյան Հայաստանի ողբերգական ճակատագրի բերումով (1915—1920 թթ.) ստեղծվեց ժամանակակից սփյուռքը, և, մյուս կողմից, Արևելյան Հայաստանում գրվեց հայկական երբևէ սցիտալիտական պետականության հիմքը:

2 Սփյուռքահայ մամուլի մասին մի շարք ուսումնասիրություններ լույս տեսան վերջին մի քանի տարիներին միայն: Դրանցից պետք է նշել Ռ. Խաչատրյանի «Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» ուշագրավ աշխատությունը (Երևան, 1960) և Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի լույս բնծայած «Հայ պարբերական մամուլի պատմությունից» ժողովածուն (Երևան, 1963): Ժողովածուի նյութերից երկուսը շոշափում են սփյուռքահայ մամուլի պատմության հարցերը:

Որոշ տեղեկություններ է հաղորդում արտասահմանի հայ պարբերականների մասին Ս. Գապարյանը իր «Սփյուռքահայ գաղթախներն այսօր» գրքում (Երևան, 1962): Այդ նյութին է նվիրված և մեր «Ժամանակակից սփյուռքահայ մամուլը» համառոտ ակնարկը՝ տպագրված Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր»-ում (1962, №№ 10, 11, 12):

Ներկա ուսումնասիրությունն արդեն շարված էր, երբ լույս տեսավ նաև Կ. Դալլաքյանի «Լիբանանահայ գեմոկրատական մամուլի պատմությունից» աշխատությունը:

ցրված լրագրային հոդվածները շեն կարող ծածկել հայ ժամանակակից մշակույթի այդ կարևոր բնագավառի. ուսումնասիրության գործում եղած բացը: Ներկա աշխատությունը չի հավակնում լրացնել այդ բացը, նրա սահմանները նեղ են, պարփակում են «Անի» գրական-գեղարվեստական ամսագիրը միայն: Բայց լայն են եղել ամսագրի ընդգրկած պրոբլեմները և մեծ՝ այն դերն ու նշանակությունը, որ կատարել է նա փյունոթահայ մշակութային կյանքում՝ հտպատերազմյան տարիներին:

«Անի»-ն այն լուրջ պարբերականներից է, որոնք, ժամառակի իսկական արձագանքը հանդիսանալով, ղգալի հետք են թողնում և հիշվում են դեռ երկար ժամանակ:

Նտպատերազմյան տարիները բեկման ժամանակաշրջան էին ողջ սփյուռքահայության համար՝ ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ գրական գեղարվեստական կյանքում: Քսանական և երեսնական թվականների նահանջողական տրամադրությունները գրականության մեջ իրենց դիրքերը զիջել էին պայքարի և առողջ լավատեսության մոտիվներին, որոնք թեև սաղմնավորվել և զարգանում էին գեռես պատերազմից առաջ, բայց գերակշիռ դիրք գրավեցին պատերազմում առաջադիմական ուժերի և, առաջին հերթին, Սովետական Միության տարած փայլուն հաղթանակից հետո:

«Անի»-ն այդ բեկման լավագույն արտահայտիչը եղավ գրական մամուլում:

Նտպատերազմյան տարիներին սերտացավ սփյուռքի կապը մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ: «Անի»-ն այդ հարցում ևս իր բարձրության վրա դտնվեց, կանգնելով սփյուռք-հայրենիք գրական կապերի ջերմ պաշտպանի դիրքերում:

«Անի»-ն նշանակալից դեր կատարեց նաև գրական առաջավոր մտքերի տարածման գործում սփյուռքահայ գրական միջավայրում և լայն աշխատանք տարավ հայ դասական գրականության և սովետահայ գրողների ստեղծագործությունների ժողովրդականացման ասպարեզում:



## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Անի»-ն հրատարակվել է Լիբանանում (Բեյրութ), որտեղ 1915 թվականի եղեռնից հետո՝ մեծ թվով հայություն կենտրոնացավ և ստեղծվեց կազմակերպված գաղութ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին լիբանանահայության թիվը, մամուլի տվյալներով, հասավ 80—90 հազարի<sup>1</sup>: Նրանց ճնշող մեծամասնությունը այսօր էլ ապրում է գլխավորապես Բեյրութում և զբաղվում արհեստներով, բանվորությամբ, մանր առևտրով: Կան որոշ թվով խոշոր առևտրականներ ու գործարանատերեր: Քիչ չէ և ազատ մասնագիտությունների տեր մարդկանց ու մտավորականների թիվը:

Լիբանանահայերն ունեն դպրոցական բավական լայն ցանց—մոտ 70 դպրոց՝ ավելի քան 14.000 աշակերտներով: Դպրոցներից մոտ մեկ երրորդը յոթնամյա է կամ միջնակարգ: Կան բազմաթիվ հասարակական, մշակութային, հայրենակցական, երիտասարդական, սպորտային և այլ կազմակերպություններ: Բեյրութում հրատարակվող հայերեն պարբերականների թիվը հասնում է մոտ 30-ի, այդ թվում՝ չորս օրաթերթ և մի քանի շաբաթաթերթ:

Բնութագրելով լիբանանահայ գաղութի հասարակական-մշակութային կյանքը, Ս. Գասպարյանը իր «Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր» ուսումնասիրության մեջ գրում է. «Ոչ մի տեղ քաղաքական հակամարտություններն ու պայքարը հայկական կուսակցությունների միջև այնքան ցայտուն ու ուժեղ

<sup>1</sup> Վիճակագրական ճշգրիտ թվեր գաղութահայության մասին առհասարակ չկան: Բոլոր նման թվերը մոտավոր են: Այդ մոտավոր թվերով այժմ լիբանանահայության թիվն անցնում է 120 հազարից:

չեն, ինչպես այստեղ: Ոչ մի տեղ հայ մամուլը, տարբեր ուղղությունների պատկանող հասարակական ու մշակութային կազմակերպությունները այնպիսի խայտաբղետ պատկեր չեն ներկայացնում, ինչպես այստեղ: Ու թերևս ոչ մի երկրում հայերը երկրի հասարակական ու քաղաքական կյանքում այնպիսի կարևոր դեր չեն խաղում, ինչպես այստեղ: Լիբանանում ավելի շատ գրքեր, թերթեր ու ամսագրեր են հրատարակվում, քան սփյուռքահայ սրևէ այլ գաղութում. կրթական ցանցը այստեղ ավելի լայն է ու լավ է կազմակերպված, քան որևէ այլ գաղութում»<sup>2</sup>:

Լիբանանահայերի համախմբված կյանքը հնարավորություն է ընձեռել նրանց ստեղծելու հայկական մշակութային միջավայր՝ իր մտավոր կյանքով, որին եռանդուն կերպով մասնակցում է և հայկական դպրոցներն ավարտած երիտասարդությունը: Այս հանգամանքն օգնել է Լիբանանահայությունը՝ պահպանելու իր լեզուն, մշակույթն ու ազգային ավանդությունները, զգալիորեն հեռու մնալու ձուլման վտանգից, որ դամոկլյան սրի պես կախվել է սփյուռքահայ շատ գաղութների վրա: Անշուշտ այս նկատի ունի «Անի»-ի խմբագիրը, երբ գրում է, թե՝ «Այդ իրողությունները միայն կը բավեն որ արտասահմանյան հայ մշակույթը, գրականությունը մանավանդ, իր զարգացման համար, փնտրեր գեթ ամենեն նվազ ժլատ հողը այդ գաղութին մեջ»<sup>3</sup>:

Լիբանանահայության հասարակական-մշակութային կյանքի կազմակերպմանը մեծապես նպաստել է Լիբանանի հյուրընկալ արաբ ժողովուրդը իր բարեկամական վերաբերմունքով դեպի հայ ժողովուրդն ու նրա մշակույթը: Այդ բարեկամությունը սոցիալ-քաղաքական լայն հիմք ուներ: Ինչպես հայտնի է, արաբները ևս երկար դարեր տառապել էին սուլթանական Թուրքիայի գերիշխանության ներքո: Օսմանյան բռնակալությունը ավերի ու թալանի իր պետականացված վարքագծով ոչ միայն քայքայել էր արաբական երկրները տնտեսապես, այլև ստեղծել էր հասարակական անշնչելի

2 Ս. Գապարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 108—109:

3 «Անի», 1947, հ. 11, էջ 61:



# ԱՄՍԻ



ԱՄՍԱԳԻՐ

գրականություն և արվեստ

1

Ա. ՏՈՒՐ

ԱՊՐԵԼ

1945

22



մթնոլորտ ճնշված ազգերի նկատմամբ վարած իր ռեակցիոն քաղաքականությամբ: Այդ ամենը չէր կարող առանց հակադդեցության մնալ արաբ ժողովրդի կողմից, պայքարի չկոչել նրան:

Օսմանյան բռնակալության փոխարինումը անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի խաբեպատիր «հովանավորական» ռեժիմով, առաջին համաշխարհային պատերազմից հետո, չլուծացրեց արաբների պայքարն իրենց ազատագրության ու անկախության համար: Ավելին. Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Ռուսաստանում է՛լ ավելի ուժգին թափ հաղորդեցին արաբների ազգային ազատագրական պայքարին: Երկար և աննկուն մաքառումից հետո Սիրիան և Լիբանանը 1943-ին հասան անկախության: Սակայն հարկավոր էր էլի երկու-երեք տարի, որպեսզի դեմոկրատական ուժերի ճնշման ներքո, և Սովետական Միության եռանդուն օգնության շնորհիվ, օտարերկրյա զինված ուժերը վերջնականապես հեռանային այդ երկրներից: Դա երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի ջախջախումից հետո էր, 1946 թվականին և նշանավորում էր, ամենից առաջ, արաբ ժողովուրդների ազգային զաւրթնքը, հասարակական-քաղաքական նրանց վերելքը:

Արաբական այդ երկրները ազգային-ազատագրական երկարամյա պայքարի ընթացքում, պայքար, որը շարունակվեց քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո էլ՝ իմպերիալիզմի նոր ու բազմապիսի ոտնձգությունների դեմ, հայերի համակրությունը միշտ էլ արաբ ժողովրդի կողմն էր: Եվ ոչ միայն համակրությունը: Հայ աշխատավորները, որոնց հարազատ էին դեմոկրատիայի ու ազգերի անկախության սկզբունքները, իրենց լուծման էին մոծել արաբ ժողովրդի պայքարին՝ անկախության հասնելու համար և պատրաստ էին պաշտպանելու այդ անկախությունը նոր վտանգի դեպքում:

Եվ բոլորովին պատահական չէ, որ Լիբանանի անկախության առաջին իսկ օրերին վարչապետ Ռիադ Սոլհը, դիմելով մամուլի ներկայացուցիչներին, հայտարարել է. «Ես հայերու ներկայությունը այս երկրեն ներս կընդունիմ գրկաբաց և մասնավոր հաճույքով: Անոնք այս երկրին անկախությունը



թերևս մեզմե ավելի լավ պաշտպանեն: Որովհետև անոնք երկար ատեն ապրած են բռնության տակ, պայքարած և զոհված են անկախության համար, հետևաբար լավ գիտեն անկախության արժեքը»<sup>4</sup>: Այդ բարեկամությունը, որ շատ կարևոր հանգամանք էր արաբական երկրներում, այդ թվում և Լիբանանում ապրող հայ զանգվածների համար, տարեց-տարի էլ ավելի սերտացավ ու ամրացավ: Այդ բանն է շեշտում բանաստեղծ Սաիդ Աբլը, երբ գրում է, թե՝ «Հայերը այժմու լիբանանցի ժողովուրդը կազմող ամենաթանկագին տարրերն են մեկը կը հանդիսանան»<sup>5</sup>:

Հայ-արաբական երկարամյա բարեկամությունը՝ ընդհանուր պայքարի ու դեմոկրատական ուժերի վերելքի պայմաններում, մեծ դեր խաղաց մասնավորապես լիբանանահայ գաղութի հասարակական մտքի ձևավորման գործում, բարենըպաստ մթնոլորտ ստեղծեց հայկական մշակութային կյանքի զարգացման, կրթական ու այլ հաստատությունների և առաջադիմական կազմակերպությունների ու մամուլի գործունեության համար:

Հանգամանքների այս բերումով էր, որ լիբանանահայ գաղութը, հատկապես 1945-ից հետո, դարձավ մշակութի խոշորագույն կենտրոն սփյուռքում: Անշուշտ, դա ինքնաբերաբար կատարվող մի պրոցես չէր: Լիբանանահայ գաղութը խոշոր մտավոր կենտրոն դարձնելու գործում, բացի վերոհիշյալ նպաստավոր պայմաններից, անհրաժեշտ էին նաև նյութական զոհողություններ ու, մանավանդ, հայրենասիրական բարձր գիտակցություն, բարոյական ճիգ, որ գովելի եռանդով հանդես բերեցին հայ ժողովրդի տարադրյալ բեկորները օտարության մեջ:

«Անի»-ի առաջին համարը լույս տեսավ 1946 թվականի ապրիլին:

Նշանավոր տարեթիվ էր 1946-ը հայ գաղթաշխարհի համար: Նոր էր ավարտվել համաշխարհային երկրորդ պատերազմը, ծնկի էր բերվել ու գլխովին ջախջախվել էր ֆաշիզմը: Այդ

4 «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 1943, 1 դեկտեմբերի:

5 «Մեր նշանաբանն է Հոռաջ», Բեյրութ, 1960, 3 հուլիսի:

հակայածաւալ պայքարում փայլուն հաղթանակ էր տարել ու արժանի փառքի հասել Սովետական Միութիւնը, նվաճելով մինչ այդ չտեսնւած հեղինակութիւն մաքուր աշխարհում:

Մասնակցելով Հայրենական մեծ պատերազմին, ռուս մեծ ժողովրդի ու սովետական այլ ազգերի զավակների հետ միասին հաղթականորեն հասնելով մինչև Բեռլին, փառքի իրենց բաժինն էին նվաճել և հայ ժողովրդի արի զավակները: Սփյուռքահայ աշխատավորները հիմք ունեին հպարտ լինելու հայրենիքի իրենց եղբայրների չխրադործութիւններով, մանավանդ որ իրենք ևս քիչ եռանդ չէին ներդրել Գերմանիայի ֆաշիստական հորդանների դեմ մղւած պայքարում, այն Գերմանիայի, որի կայսերական նախորդների իմպերիալիստական մեղսակից քաղաքականութեան հետևանքն էր նրանց տխուր գոյութիւնը օտար երկնակամարների տակ:

Մեծ եղեռնի տարիների ահաւոր կոտորածներից ու տեղահանումներից փրկւած արևմտահայութեան բեկորները համաշխարհային երկրորդ պատերազմի նախօրյակին աղքատ դաղթականի գոյավիճակից հազիվ էին բարձրացել տնտեսական քիչ թե շատ տանելի մակարդակի, բայց համարյա ամենուր մնացել էին հանգուրժիկ օտարականներ, լավագույն դեպքում հյուր՝ թեկուզ շնորհալի ու աշխատասեր: Պատերազմի հաղթական ավարտը, խորտակելով Սովետական Միութեան շուրջը ֆաշիզմի և հետադիմական այլ ուժերի կողմից հյուսւած զրպարտութիւնների ու նախապաշարումների պատնէշը, առատ լույս սփռեց նաև Սովետական Հայաստանի ու նրա ձեռք բերած նվաճումների վրա, ցույց տալով աշխարհին, որ հայ ժողովուրդն ունի, ստեղծել է իր բարգաւաճ հայրենիքը, և օտարութեան մեջ ապրող հայերը անհայրենիք չեն: Այդ հանգամանքը նոր կորով ու վստահութիւն ներշնչեց սփյուռքահայ զանգվածներին, բարձրացրեց նրանց մեջ ազգային հպարտութեան ու արժանապատւութեան զգացումը:

Երկրորդ խոշորագույն իրադարձութիւնը սփյուռքահայութեան կյանքում, ֆաշիզմի խորտակումից հետո, Հայրենիքի կանչն էր, հրավերը աշխարհով մեկ ցրւած իր զավակներին՝ վերադառնալ տուն՝ Սովետական Հայաստան:



Սովետական կառավարության որոշումը հայերի զանգվածային ներգաղթի մասին (1945, նոյեմբեր) հսկայական խանդավառություն առաջ բերեց բոլոր գաղութներում: Ամենուրեք սկսեցին նախապատրաստվել մեծ ներգաղթին:

Կար մի հանգամանք ևս. դա Արտասահմանի հետ կուտուրական կապի Հայկական ընկերության ստեղծումն էր (1944, նոյեմբեր), որը տարեցտարի ծավալում էր իր աշխատանքները:

Հայրենիքի և սփյուռքի կապը, որ պատերազմին նախորդող տարիներին համարյա խալառ խզվել էր, ֆաշիզմի ջախջախման և ընդհանուր ռեակցիայի հարկադրական նահանջի պայմաններում սկսել էր աստիճանաբար ընդարձակվել: Սովետական Հայաստանի կառավարությունը օգնում և միջոցներ էր ընձեռում հասարակական, մշակութային ու գիտական կազմակերպություններին՝ ընդլայնելու կապը սփյուռքի հետ: Գաղութահայությունը հնարավորություն էր ստանում մոտիկից և սկզբնաղբյուրներից ծանոթանալու Հայրենիքի պայծառ իրականությանը: Մշակութային այդ սերտ կապը և Հայրենիքի ուշադիր ու հոգատար վերաբերմունքը ռեկոնստրուկցիան նոր աղբյուր հանդիսացան արտասահմանում ապրող հայության համար: Ահա այս միջավայրում էր, հասարակական-քաղաքական արդի ժամանակաշրջանը բնորոշող «Ժողովրդական մասսաների դասակարգային ու ազգային ինքնագիտակցության անշեղ աճի»<sup>6</sup> պայմաններում, որ սկսեց հրատարակվել «Անի» ամսագիրը, ամբլայացնելով մի անուն ևս՝ ծանրակշիռ ու լիարժեք՝ սփյուռքահայ մամուլի ստվար ցանկում:

\* \* \*

«Անի»-ին իր կյանքն սկսեց հայ ժողովրդի ապրած մեծ ուղբերգությունից ավելի քան երեք տասնամյակ հետո: Մեր պրականության արեմտահայ հատվածը, կիսելով իրեն սնող ժողովրդի դաժան ճակատագիրը, գլխատվել, մասնատվել,

6 Սովետական Միության կոմունիստական պարտիայի Մրազիրը, երկվան, Հայպետհրատ, 1961, էջ 58:



սփռվել էր աշխարհով մեկ և, դարձած «սփյուռքահայ գրականություն», այդ ժամանակաբանությամբ ապրում էր դժվարություններով ու մաքառումներով լի մի կյանք:

Հասկանալի պատճառներով, անցյալի հուշերով ապրող այդ գրականությունը, մանավանդ իր գոյության առաջին շրջանում, դալուկ, անարյուն ու առավելապես հոռետեսական էր իր բովանդակությամբ: Մի կողմից նրա վրա իր խոր կնիքն էր դրել մեծ եղեռնի չփարատվող մղձավանջը, մյուս կողմից՝ գաղութահայ կյանքը՝ իր անհեռանկար գոյավիճակով: Փոքր չէր նաև օտար մշակութային միջավայրի և բուրժուական արվեստի ապակողմնորոշող ազդեցությունը: Ստեղծվել էր մի գրականություն, «...որուն մեջ,—ինչպես նկատում է ամերիկահայ գրող և հասարակական գործիչ Անդրանիկ Անդրեասյանը,— տարամերժորեն կ'իշխեին աննպատակ մոլորումներ, վտիտ ապրումներու անարվեստ պոթիկումներ և հիվանդագին ձգտումներ՝ կյանքին փախչելով սեփական «ներաշխարհ»-ին պարապության մեջ ամրափակվելու»<sup>7</sup>:

Սփյուռքահայ գրականության այս հոգեվիճակն ավելի հասկանալի է դառնում, եթե նկատի ունենանք լքվածության այն մթնոլորտը, որի մեջ ապրում էր գաղութահայությունը այդ տարիներին: Հարցը այս կամ այն գրողի, այդ թվում և ավագ սերնդի վերապրող ներկայացուցիչների անձնավորության ու նրանց՝ դեպի Սովետական Հայրենիքը ունեցած համակրանքը կամ թշնամանքը չէր: Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, իր գոյության սկզբնական տարիներին, երբ նոր-նոր էր բուժում իր բազում վերքերը և ստեղծում իր պետականությունը, որքան էլ բաղձալի՝ այնուամենայնիվ դեռ ձեռք չէր բերել հետագայի, մանավանդ ետպատերազմյան շրջանի այն մեծ հմայքն ու կենտրոնաձիգ ուժը, որ զորավոր կռվան հանդիսանար օտարության մեջ դեգերող հայ զանգվածների համար: Դրան մեծապես խոչընդոտում էր նաև միջազգային ռեակցիան, որ թշնամանքի ու կասկածանքի պատենջ էր բարձրացրել ողջ Սովետական Միության դեմ, ինչպես և հայ «աթոռազուրկների» չարամիտ պրոպագանդը հայրենիքի դեմ:

Արտասահման ապաստանած դաշնակ ղեկավարներն անում էին ամեն ինչ, որպեսզի հեռու պահեն սփյուռքահայերին Սովետական Հայաստանի իրականությունից, խափանեն նրանց կապը հայրենիքի հետ: «Այդ կապի շղթայությունը,— ինչպես գրում էր Ալ. Մյասնիկյանը դեռևս 1924 թվականին,— շատ ձեռնադր էր դաշնակցականներին»<sup>8</sup>:

Անհաջողության հանդիպելով «Հայաստանը արևմտյան իմպերիալիստների ուժերով ազատագրելու» իրենց ցնորամիտ քարոզների (և գործերի) մեջ ու հուսախաբ՝ հայրենիք «վերագառնալու» իրենց երազանքներից, դաշնակներն ու նրանց հետևորդները գրականության ասպարեզում ուժ էին տալիս այն հոսանքին, որը մարդկանց հայացքները դարձնում էր ետ, տանում դեպի իդեալականացրած անցյալը: Այդպես ծնունդ առավ հոռետեսական մոտիվների հետ մեկտեղ նաև «անցելսպաշտությունը» սփյուռքահայ գրականության մեջ:

Սակայն առաջին տարիների մոռյլ ու անբրոշ մթնոլորտը և դեպի անցյալը նայող ու այն իդեալականացնող հոսանքը սփյուռքահայ նորաստեղծ գրականության մեջ երկար կյանք ունենալ չէր կարող: Փոխվում էին կյանքի պայմանները բիշ-բիշ ամեն տեղ: Հայ գաղութներն յաստիճանաբար բնդունում էին իրենց «կայուն» դիմագիծը: Նորահաս սերնդի գրողները, որ ծանրաբեռնված չէին անցյալի հիշատակներով, սկսել էին ավելի կապվել սփյուռքահայ գանգվածներին և նրանց հետ միասին ավելի հաղորդակից դառնալ տեղացի ժողովուրդների կյանքին, սոցիալական պայքարին, դեմոկրատական, առաջադիմական գաղափարներին: Աղետի մղձավանջն էլ, դանդաղորեն, տեղի էր տալիս հորիզոնում ավելի ու ավելի հստակորեն ուրվագծվող հայրենիքի՝ Սովետական Հայաստանի պայծառացող կերպարի առջև: Հուսալքման տրամագրությունների միջից առողջ ծիլեր էին արձակում վստահությունն ու հավատը վաղվա լուսավոր օրվա նկատմամբ:

Այդ ամենը չէր կարող անարձագանք մնալ: Գրականությունը կարող էր ապրել՝ ներշնչվելով ռեալ կյանքից միայն:

8 Ալ. Մյասնիկյան, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 5:



Եւլ ահա սկսում են նոր՝ իրականությունն արտացոլող մոտիվներ հնչել դադութահայ գրականության մեջ՝ ճակատագրի դեմ բողոքի ու պայքարի մոտիվներ, որոնք ավելի որոշակի դարձան երեսնական թվականներին, երբ ֆաշիզմի սև ուրվականն էր տարածվում Եւրոպայի վրա՝ նոր աղետներ սպառնալով ժողովուրդներին:

Երեսնական թվականների և ապա պատերազմի շրջանի սփյուռքահայ գրական սերունդը, իր առողջ մեծամասնությամբ, շատ լավ ըմբռնել էր, որ ֆաշիզմը չէր մարմնավորում միայն գերմանական իմպերիալիզմը, և պայքարը ֆաշիզմի դեմ՝ առավելապես պայքար էր միջազգային ունակութիւնի դեմ, որ մղվում էր հանուն մարդկության առաջադիմության ու ժողովուրդների ազատագրության: Գրականության առաջնակարգ դերն այդ պայքարում անժխտելի էր, և դա լավ էին գիտակցում սփյուռքահայ առաջադեմ մտածողները: Այստեղից էլ՝ հասարակության կյանքում գրականության դերի այն ճշմարիտ ընկալումը, որ շանդես բերեց գրական նոր սերունդը:

Նուպատերազմյան շրջանում, երբ ֆրանսահայ գաղութը զիջեց իր առաջնությունը, որպես սփյուռքահայ մշակութային կենտրոն, ավելի նպաստավոր պայմաններում զարգացող մերձավոր արեւելյան հայ գաղութներին, «Անի»-ն Բեյրութում դարձավ գրական այդ սերնդի գեղագիտական հայացքների լավագույն արտահայտիչը արտասահմանում:

\* \* \*

Մ. Գորկուն ուղղած իր նամակներից մեկում Վ. Ի. Լենինը գրում է, որ «Ուղղություն չունեցող ժողովուրդ անհեթեթ, անհոռի, խայտառակ ու վնասակար բան է»: Այդպիսի պարբերականների օրինակներ սփյուռքում չեն պակասում: Այլ էր «Անի»-ն: Նրա առաջին՝ ապրիլյան համարից իսկ զգացվեց, որ ծնունդ է առնում մի նոր ու լուրջ գրական-գեղարվեստական ամսագիր, որն ուղղություն ունի, կայուն գիմագիծ ու հստակ նպատակ: Ամսագրի խմբագիրը՝ Վահե-Վահյանը, որ մեծ եռանդով ձեռնարկել էր այդ գործին, արդեն ճանաչված բա-

նաստեղծ և հասարակական գործիչ էր սփյուռքահայ մտավոր շրջաններում:

Վահե-Վահյանը (Սարգիս Ապղալյան) ծնվել է Կյուրի-նում (Արևմտյան Հայաստան), 1907 թվականին: Իր բաղմա-հազար հայրենակիցների հետ միասին, նա 1915—1918 թվա-կաններին անցել է հայկական կոտորածների ու աքսորի ար-յունոտ ճանապարհներով: Պատերազմի ավարտը Սարգիս Ապղալյանը դիմավորում է Հալեպում, ուր և ստանում է միջ-նակարգ կրթություն: Տեղափոխվելով Բեյրութ, նա 1925-ին ընդունվում է Ամերիկյան համալսարանը, որն ավարտում է 1930-ին և նվիրվում մանկավարժական աշխատանքի՝ նախ Անթիլիասի դպրեվանքում, իսկ հետո Կիպրոսի Մեղքոնյան կրթական հաստատությունում, դասավանդելով հայոց լեզու և գրականություն: Այժմ էլ Վահե-Վահյանը շարունակում է իր մանկավարժական գործունեությունը: Նա Բեյրութի Դարուհի-Հակոբյան աղջիկների երկրորդական (միջնակարգ) վարժա-րանի փոխտնօրենն է: Գրել սկսել է վաղ հասակից, տպագրվել է 1930 թվականից «Անահիտ», «Զվարթնոց», «Նոր զիր» գրա-կան պարբերականներում: Երբ նա ձեռնարկեց «Անի» ամսա-գրի հրատարակության, արդեն բանաստեղծությունների երկու ժողովածուների հեղինակ էր («Արև-Անձրև», 1933 և «Ոսկի կամուրջ», 1946):

Միջանկյալ ավելացնենք նաև, որ մինչև «Անի»-ն Վահե-Վահյանը ղեկավարել է (1936—1937 թվականներին) Մեղքոն-յան կրթական հաստատության աշակերտների «Այգ» պար-բերաթերթը, որը հետո դարձավ Մեղքոնյան երկսեռ սաների շրջանավարտների միության պաշտոնաթերթը:

Սկսելով «Անի» ամսագրի հրատարակությունը, Վահե-Վահյանը լիակատար կերպով գիտակցում էր այն միսիան, որ սփյուռքահայ հասարակական կյանքը դնում էր ժամա-նակի առաջադիմական գրական-գեղարվեստական մամուլի առջև:

«Սեմին վրա» խմբագրականում, որով սկսվում է «Անի»-ի առաջին համարը, Վահե-Վահյանը շարադրում է այդ պա-հանջները, որ և իր հայացքներն են գրական մամուլի, գրա-



կանոնադրական կատարած դերի և սփյուռք-հայրենիք (Սովետական Հայաստան) փոխհարաբերության մասին: Շատ ուշագրավ է ընդամենը մեկ ու կես էջ բռնող այդ խմբագրականը:

«Անի» է վերնագրել նա իր ամսագիրը, ինչպես ինքն է նշում վերոհիշյալ խմբագրականում, ոգեկոչելու համար միջնադարյան մեր վերածննդի, մեր ժողովրդի պատմության ու մշակույթի զարգացման մի ծաղկյալ շրջանը, բայց «...ավելի փառահեղորեն կրկնելի»: Նա մերժում է «...կործանած գեղեցկություններու ամայության մեջ կոծկոծող, ինքն իր վրա փլած ու հերարձակ այն եղերամոր վանելի պատկերը, որ դեռ մինչև երեկ կը սպառնար մնալ միա՛կ խորհրդանիշը, միա՛կ իրականությունը հայ կյանքին»<sup>9</sup>: Վահե-Վահյանի համար ընդունելին պատմական Անիի «ճարտարապետած համարձակ ու սլացիկ ոճն է»: Այդ ոճը, շարունակում է նա, նկատի ունենալով Սովետական Հայաստանի փայլուն վերելքը, «վերածներ է, և բառորդարյա իր նվաճումներով խիզախորեն կը բացվի՝ ինչպես արևին, նույնպես՝ տեսնել դիտյող նայվածքներու հիացումին դեմ»<sup>10</sup>:

Վահե-Վահյանն այստեղ ուղղակի չի ասում, որ հայ ժողովուրդը կարողացել է բացահայտել իր ստեղծագործական կարողությունները՝ անցյալում «ճարտարապետած համարձակ ու սլացիկ ոճը»՝ շնորհիվ սովետական իշխանության, սովետական իրավակարգի, սակայն այդ միտքն է զարգացնում նա մի փոքր ցած, իրեն հատուկ ճկուն, պերճախոս ու պատկերավոր ոճով, ոճ, որը այլ դեպքերում մանվածապատ ու խրթին կողմեր էլ ունի, սակայն այս անգամ պարզ է ու մեկին: Նա գրում է, որ այն «...Հավատքը կը դալանի թե 1920-ին՝ նահատակ հայ ժողովրդի կյանքին մեջ պատահեցավ դեպք մը, ուր հրջանկաբաղձ զանգվածներու տարերային ուժերը բռնեցին մեր պատմության սալը թավալող ցուլերուն եղջյուրներեն, շրջեցին՝ այդ սալին անիվները, ու նզովքը վերածեցին օրհնության»<sup>11</sup>:

Պատկերավոր այս խոսքերը ավելի բան պերճախոս են:

<sup>9</sup> «Անի», 1946, հ. 1, էջ 1:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում:



Որոշակի ու պարզ են «Անի»-ի խմբագրի գրական հայացքները, որ նա մասամբ արտահայտում է հիշյալ խմբագրականում, և ապա, ավելի հանդամանորեն, ամսագրի համարներում տպագրած իր բազմաթիվ հոգւածներում ու գրախոսականներում: Դրանց և առհասարակ Վահե-Վահյանի գրական դավանանքին մենք մանրամասնորեն կանդրագոհանանք ավելի ուշ: Այստեղ՝ այն շափով միայն, թե ինչպիսի կարևոր տեղ է տալիս «Անի»-ի խմբագիրը գրականությանն ու նրա դերին հասարակության կյանքում:

«Գրականությունը, — գրում է Վահե-Վահյանը, — կյանքն իսկ է՝ ապրված, ապրվող կամ ապրվելիք, ձևառումը՝ եղածին, խորատեսվածին, կամ տեսականորեն զուշակվածին, նյութ է, լինելիություն ու վերափոխում»<sup>12</sup>: Նա կտրականորեն ժխտում է բուրժուական էսթետների «արվեստն արվեստի համար» կամ «անաղարտ արվեստի» վաղուց սնանկացած բաց սփյուռքի այլևայլ գաղութներում դեռևս իր հետևորդներն ունեցող սկզբունքը: Վահե-Վահյանը գրականությունը ևս դասում է այն գործոնների շարքին, որոնք «կյանքը/ձևավորող ուժեր» են պարունակում իրենց մեջ: Գրականությունը, հայտարարում է նա, կտրված չէ «ընկերությունը (հասարակությունը, հասարակական հարաբերությունները. — Մ. Բ.) հորինող գործոններեն», և որ այն «քմահաճ պերճանք չէ, ինչպես թափանցիկ ճարտարանքով մը վարդապետել կը փորձեն հոգիով աղքատները»:

Շեշտելով, այդպիսով, գրականության և առհասարակ արվեստի կարևոր դերը հասարակության կյանքում, Վահե-Վահյանը նշում է, որ այդ դերը ավելի է մեծանում հանդրաշահյին շրջաններում, երբ պատմական խոշոր իրադարձությունները արմատական փոփոխություններ են մտցնում ժողովրդի կյանքում: Սփյուռքահայության համար նորաստեղծ ամսագրի խմբագիրը ճշմարտացիորեն այդպիսի մի շրջան է համարում հուպատերազմյան 1946 թվականը՝ զանգվածային ներգաղթի տարին, որը հսկայական խանդավառություն էր առաջ բերել բոլոր գաղութներում, վստահություն և հավատ

<sup>12</sup> «Անի», 1946, հ. 1, էջ 1:



ներշնչել հայ մասսաներին: Ահա այն հիմնական շարժառիթը, ըստ Վահե-Վահյանի, որ դրդել է նրան հիմնադրել իր ամսագիրը:

«Կը հիմնվի «Անի»-ն, որպեսզի հանգրվանային այդ հավատավոր հոգևորիճակը առնեն արվեստի պարունակին մեջ, նրպատեն հեռանկարավոր ու կենսունակ գրականության մը ձևառումին, և, իր կարգին, ապահովեն հայ կյանքին՝ բարիքը այդ գրականության»<sup>13</sup>:

Հիշյալ խմբագրականում Վահե-Վահյանը անդրադառնում է նաև սփյուռքահայ ժամանակակից գրականության բովանդակության հարցին:

Երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանի սփյուռքահայ գրականությունը նա որակում է որպես «աղջամըղջային» այն խմաստով, որ նա երգել է հայկական եղեռնը և սփյուռքի ամենօրյա ողբերգությունը, «փոքր մնալով» առաջին զեպքում և զղալի նվաճումների հասնելով երկրորդի բնագավառում՝ «սուղվող անցյալի մը մակաբերելով թանկագին նշխարներ»:

«Այլևս ժամանակ է, որ աղջամըջային այդ գրականությունը զիջի իր ամենակալ տիրապետությունն», — գրում է Վահե-Վահյանը և ապա, կարծես բացելով փակագծերը, շարունակում է. «Մեր երկրին մեջ, մեծ ու բարի լուսաբացն է հիմա: Եվ անոր ճառագայթները ոսկի են թափեր մեր լեռներու կողերն ի վար, և արծարծեր են ստեղծագործ հրայրքը՝ Հայրենիքի մեր հարազատներու հոգիին մեջ»<sup>14</sup>:

Ահա թե ուր է ուղում սկեռած լինել սփյուռքահայ գրողների և արվեստագետների ուշագրությունը «Անի»-ի խմբագիրը, շփտելով, ի հարկե, թե՛ եղեռնի և թե՛ գաղութահայ կյանքի գոյություն իրավունքը մեր գրականության մեջ՝ որպես թեմա:

Անցյալին և անցյալի գրականությանն ու արվեստին, հղրակացնում է ամսագիրը, պետք է տալ պատշաճը և իրենց արժանի տեղը: Բայց այսօր, երբ պատերազմն ու ֆաշիզմի

13 «Անի», 1946, հ. i, էջ 2:

14 Նույն տեղում, էջ 2:

ջախջախումը շատ նախապաշարումներ փշրեցին, երբ հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ծաղկումը ավելի շոշափելի ու տեսանելի է դարձել սփյուռքահայ աշխատավորության համար, և երբ անհամեմատ լայնացել են Հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերը, գրականությունը չի կարող անտարբեր մնալ ժողովրդի կենսական շահերը շոշափող հարցերի նկատմամբ: Նրա առաջնակարգ խնդիրը պետք է լինի ամենահոանդուն կերպով խառնվել կյանքին, մասնակցել նորի գոյավորման կարևոր պրոցեսին:

«Խղճամիտ ժառանգորդի տիրականությամբ նայի՛լ անցյալին, ընդգրկե՛լ ներկան՝ նախապաշարումների ազատազրջալ, արթուն ու որոնող միտքով, ու սեեով վաղվան՝ խիղախ ու ճաճանչավոր նայվածքով — ահավասիկ առաքինությունները, որոնց թեկնածու կը հանդիսանա «Անի»<sup>15</sup>:

Ընդհանուր գծերով ահա այս հավատամքն ուներ Վահե-Վահյանը գրականության և արվեստի դերի մասին հասարակական կյանքում, երբ հիմնադրեց իր ամսագիրը:



Ծնունդ առնելով 1946-ի գարնանը, «Անի»-ն հրատարակվեց, ընդմիջումներով, մինչև 1955 թվականը: Վերջին մի քանի տարիների ընթացքում, մանավանդ 1952-ից հետո, նյութական դժվարություններն այնքան մեծացան, որ դարձան արդեն անհաղթահարելի, և իր 65-րդ համարով «Անի»-ն դադարեց լույս տեսնել:

«Անի»-ն գրական-գեղարվեստական լայն ընդգրկման ամսագիր է, որի նշանակությունը իր առաջին իսկ համարներից դուրս էր գալիս լիբանանահայ գաղութի սահմաններից: Չպետք է մոռանալ, որ մեծ ու փոքր կղզիների նման ամբողջ աշխարհում ցրված հայ գաղութները ներամփոփ ամբողջություններ չեն՝ կտրված մեկը մյուսից: Որքան էլ տարբեր է նրանցից յուրաքանչյուրի տնտեսական և հասարակական-քաղաքական միջավայրը, ըստ այն երկրների, որտեղ նրանք կաղմվել են, այնուամենայնիվ կան ոչ միայն շատ բնդհան-

<sup>15</sup> «Անի», 1946, հ. 1, էջ 2:



րություններ գաղութներին միջև, այլև բավականին սերտ կապ, առնվազն մշակութային հողի վրա, որը ի վերջո իրավունք է տալիս մեզ ընկալելու այդ գաղութ-կղզիները որպես մի ամբողջութիւն-Սփյուռք: Այնպես որ, մշակութային քիչ թե շատ նշանակալից երևութ չի սահմանափակվում տվյալ աշխարհագրական սահմաններում, նրա ներգործութիւնը տարածվում է և մյուս գաղութների վրա, ձեռք է բերում, այսպես ասած, համասփյուռքային նշանակութիւն:

Ահա այդպիսի համասփյուռքային նշանակութիւն ձեռք բերեց գաղութահայ մամուլի ընդարձակ անդաստանում նաև «Անի» ամսագիրը: Մեր ասածը արդարացի է և այն իմաստով, որ «Անի»-ին աշխատակցում էին գրողներ, գրականագետներ ու արվեստագետներ հայկական բոլոր գաղութներից՝ սկսած Հեռավոր արևելքից մինչև Եվրոպա և հեռավոր Ամերիկա: Ամսագիրը ուրախութեամբ իր էջերը հատկացրել է և սովետահայ հեղինակներին:

«Անի»-ն իր առաջին իսկ համարներից ունեցավ հետևյալ մշտական բաժինները, որ համարյա անփոփոխ պահպանեց մինչև վերջ. դրանք հետևյալներն են (ըստ խմբագրի բաժանումների).

1. Բանաստեղծութիւն

2. Արձակ գրականութիւն (պատմվածք, տպավորութիւն, հուշ, հեքիաթ, արձակ բանաստեղծութիւն, երգիծանք, որոնումներ և այլն)


3. Միջազգային գրականութիւն

4. Գրական (ուսումնասիրութիւն, վերլուծում, դատում, տպավորութիւն, դիմաստվեր, ակնարկ և այլն)

5. Գրախոսական

6. Գեղարվեստ:

Այս բաժինները, ինչպես ասացինք, մշտական ու կայուն են: Միայն «Միջազգային գրականութիւն» և, ավելի հազվադեպ, «Գրական» բաժիններն են, որ երբեմն բացակայում են ամսագրի այս կամ այն համարում:





## ԶԱՓԱԾՈՆ «ԱՆԻ»-ՈՒՄ

Զափածոն «Անի»-ի ամենաընդարձակ բաժիններից մեկն է: Ամսագիրը իր էջերում տեղ է տվել մոտ ութսուն բանաստեղծի, ըստ որում նրանց մեծամասնությունը երիտասարդ սերնդի գրողներ են: Շեշտում ենք այս պարագան՝ ջուլջ տալու համար չափածոյի երիտասարդ լինելու հանգամանքը, որն, անշուշտ, իր ուրույն կնիքն է դրել նրա բովանդակության վրա: Մյուս կողմից կարևոր հանգամանք է սովետահայ, մեծ մասամբ նույնպես երիտասարդ, բանաստեղծների գործերի առկայությունն ամսագրում: Սփյուռքահայ և սովետահայ ավագ սերնդի հեղինակների քերթվածներն ամսագիրը տպագրել է առավելապես ղանաղան տարեթվերի առիթներով:

«Անի»-ի չափածոն ուշագրավ է թե՛ իր բովանդակության և թե՛ արվեստի տեսակետից: Գաղափարական-գեղարվեստական բարձրարժեք և լավատեսությունը տոգորված, նոր ու թարմ բանաստեղծությունների կողքին, որ ամսագրի հիմնական մասն են կազմում, կան նաև վերացական, հոռետեսությունը համակված գործեր, սակայն նրանք, բարեբախտաբար, մեծ տեղ չեն գրավում ու քիչ թե շատ զգալի ազդեցություն չեն թողել ամսագրի ոգու և ընդհանուր ուղղության վրա: Կան, իհարկե, թույլ գործեր ևս, այսպես ասած, ընթացիկ՝ «ամսագրային» կյանք ունեցող ոտանավորներ: Բայց սրանց թիվն էլ մեծ չէ:

Ամսագրի չափածոյի հիմնական մոտիվը, բնականորեն, հայրենիքն է, հայրենասիրությունը, և դրա հետ սերտորեն առնչվող, հայրենադարձության թեման:

Նախորդ գլխում մենք համառոտակի խոսեցինք հայրենասիրական այն վերելքի մասին, որ ապրում էր հետպատե-

րազմյան սփյուռքը: Հայրենիքի հանդեպ այդ բուն զգացմունքը, որ համակել էր բոլորին, իր արտահայտությունը տեսք է գտնելու ու գտավ գրականության մեջ և, առաջին հերթին, պոեզիայում, որի ժանրային առանձնահատկությունը թույլ է տալիս ավելի արագ արձագանքելու ժողովրդի կենսական շահերը շոշափող հասարակական-քաղաքական երևույթներին, գեղարվեստական խոսքի վերածելու մարդկանց նոր ապրումներն ու խոհերը:

Հայրենասիրությունը, սակայն, ոչ նոր երևույթ էր, ոչ էլ, իհարկե, նոր թեմա սփյուռքահայ գրականության մեջ: Բայց հայրենիքը վերացական գաղափար չէ: Այն, նախ և առաջ, ապրող իրականություն է, ոեւալ, հարատևող գոյություն՝ իր աշխատող ու ստեղծագործող ժողովրդով: Այդպիսի հայրենիք միայն ի վիճակի է անընդհատ սնել ու վառ պահել հայրենասիրության զգացմունքը իր զավակների մեջ:

Արտասահմանում ապրող հայ զանգվածները, այդ թվում, մանավանդ, այն սերունդը, որ ծնվել ու իր մանկությունն անց էր կացրել Արևմտյան Հայաստանում, դրված էին այնպիսի վիճակի մեջ, որ հիշում էին հայրենիքը որպես արյան ու մահի երկիր, որտեղից իրենք տարիներ առաջ վայրագ նղանակով վտարվել էին ու արդեն երկար ժամանակ ապրում էին օտար հորիզոնների տակ՝ ենթակա բաղմապիսի խորթ ազդեցությունների: Նրանց համար հայրենիքը, մանավանդ սկզբնական շրջանում, այն մյուս Հայաստանն էր, արևմտյանը, ծննդավայրը առավելապես, քանդված ու ավերված, մոխիրների մեջ կորած, կապված դառն հիշողությունների, լքվածության ու դատապարտվածության զգացմունքի հետ: Գրական այն սերնդի համար, որը հասակ էր նետել արդեն սփյուռքում, հայրենիքը անցյալ էր, մանկական ու պատանեկան աղոտ ու դառնանուշ հիշողություն, և դպրոցից, զբեքից ու ավագների պատմածներից ստացած տպավորությունների մի գումար: Սովետական Հայաստանը դեռևս տիրակալ դիրք չէր գրավել նրանց մտքերի վրա:

Ծիշտ է, գրականությունը, հայ գրականությունը (և ընդհանրապես ամբողջ հայ մշակույթը, իհարկե) հայրենասիրական լուրջ ազդակ էր այդ սերնդի համար, բայց կային և ուրիշ



գործոններ, որոնք բացասաբար էին ներգործում սփյուռքահայ ձեռնարկող հոգիների վրա: Զարմանալի է, որ շատ հաճախ սփյուռքահայ գրականության մեջ, և, առաջին հերթին, պոեզիայում, հրապարակ էին նետվում դալուկ, անարյուն գործեր, որոնց մեջ հայրենիքը երգվում էր որպես անցյալի մշուշապատ հուշ, պատմա-աշխարհագրական հասկացողություն և կամ որպես վերացական գաղափար: Շատերը է, որ ունեին Սեմայի (Գեղամ Աթմաճյան) խոր հավատը և երգում էին Սովետական Հայաստանը.

Գիտեմ թե դուն երազ մը չե՛ս,  
պատրանքը չե՛ս մեր տենչերուն,  
Գիտեմ թե դուն հո՛ղ ես, քա՛ր ես,  
աշխատանքի, երգի հնոց...:

(«Հայաստանյան տարեգարձ», 1933)<sup>1</sup>:

Սովետական Հայաստանը սփյուռքահայ լայն զանգվածների համար ոեւալ իրականություն ու վերջնականապես նրանց մտքերի տիրակալը դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ու նրա հաղթական ավարտից հետո միայն: Շատերի համար այն եղավ իսկական հայտնություն, ծաղկող ու բարգավաճող երկիր, որը ոչ միայն իր սահմաններում ապրող ժողովրդի բախտն էր կերտում, այլև տուն էր կանչում օտարության մեջ դեգերող իր զավակներին:

Ահա այդ հայրենիքն էր, որ դարձավ սփյուռքահայ հուպատերազմյան շրջանի գրականության հիմնական թեման<sup>2</sup>:

Ամենից առաջ, կոնկրետ էր հայրենիքի թեման, ուներ իր

<sup>1</sup> Մենք բերում ենք Ա. Սեմայի տողերը այն պատճառով, որ նրանք տպված են «Անի»-ում (1950, հ. 2 (38), էջ 96): Սովետական Հայաստանը երգել են և ուրիշ անվանի բանաստեղծներ թե՛ ավագ սերնդից և թե՛ երիտասարդներից:

<sup>2</sup> Այդ կապակցությամբ Բեյրութի «Զարթոնք»-ը իր 1946-ի մայիսի 5-ի համարում գրում է. «Դժբախտաբար միջպատերազմյան մեր կյանքը, զանազան պատճառներով, հեռու պահված էր հայրենիքի մեջ կատարվող իրականությունեն, ու զաղութահայությունը զրկված գրեթե ամեն միջոցե՛ ունենալու համար հատուկ մեկ պատկերը հոն ստեղծված նոր կյանքին ու նվաճումներուն: Մեր գրականությունը, հետևաբար, անհաղորդ մնալով հայ-

որոշակի հասցեն. դա Սովետական Հայաստանն էր՝ իր մարդկանցով, բրտնաջան ստեղծագործ աշխատանքով, իր հաղթանակով և ուրախություններով: Յրվել էր հայրենիքը շրջապատող թշնամական մշուշը, արև կար ու լույս, և այդ լույսը արդեն առատ ճառագայթներով հասնում էր սփյուռք, ոգեշնչում բոլոր հայրենասերներին, աշխատավորին, գրողին ու արվեստագետին, դառնում էր հույս ու ապրում, դառնում բանաստեղծություն:

Հայրենիքից հեռու ապրող հայի առաջին զգացումը հայրենիքի հանդեպ, բնականաբար, կարոտն է, հայրենի երկրի, հարազատ հողի կարոտը, որ չգայուն հողիների մոտ դառնում է բանաստեղծություն և ծնունդ տալիս կարոտի երգերին: Դրանք պանդխտության երգերի յուրատեսակ շարունակությունն են՝ այլ պայմաններում: Հատկանշականն այստեղ այն է, որ եթե պանդխտը երգում է մեծ մասամբ իր ընտանիքի, իր հայրենի տան, գյուղի կարոտը, հաճախ այդ կարոտն առնելու հույսն էլ շունենալով, ապա նոր երգերում այդ կարոտն արտահայտվում է ավելի համապարփակ ձևով, ընդգրկվում է ամբողջ հայրենիքը և տողորված է լավատեսությամբ, տուն՝ հայրենիք դառնալու հաստատ հույսով:

Ու տարօրեն զեղեցիկ, կենսաբույր օր մը գարնան,  
Արևաշող ու անմահ օր մ'աննման երազի,  
Պանդխտի ցուպը ձեռքիս՝ կրկին քեզի պիտի գամ,  
Կրկին քեզի պիտի գամ, հո՛ղ իմ, հո՛ղ իմ հայրենի:

Հայրենազուրկ սերունդին ամբողջ կարոտը սիրտիս,  
Ես՝ հոգնաբեկ ու անոր, տառապահար պարմանի,

րենիքին, չէր կրցած անոր ճառագայթովը լուսավորել մեր կյանքը որ այն-բան պիտը ունեք ողևորսդ ու կենսունակ հեռանկարի մը ցուրին:

Նշան բացառություններ արտասահմանի մեր դրական մշակներուն մեջ, որոնք հակառակ տիրող նեղմիտ մտայնության մը ջլատիչ պայքարներուն, հավատացին Սովինթ Հայաստանի մեջ սկսած սրբազան գործին վեհությա-նը ու ջանացին մեր ժողովուրդին հորիզոնը լուսավորել անոր հեռանկարովը: Անոնք, իրենց ախուր առօրյային նրզին դուզահեռ, ցույց տվին նաև գոյությունը հեռուն, նոր և ամուր հիմքու վրա կերտվող հայրենիքին՝ դորդավանցին որպես մեր վերջին հանգրվանը: Չստեղծվեցավ սակայն Սովինթ Հայաստանի մեջ սկսած հսկայական կառուցումներուն համապատասխան ինքնավստահ, զվարթ, լավատես ու զեպի բարձունքներ առաջնորդող գրականություն մը՝ արտասահմանի մեջ»:



Պիտի քեզի համար տամ վերջին ավյունը կյանքիս,  
վերջին կաթին արյունիս, օ՛ հրկիր իմ հայրենի՜:

Այսպես է երգում սփյուռքահայի կարոտը երիտասարդ բանաստեղծ Գ. Աղդարյանը: Այստեղ ո՛ր հայրենիքի տենչն է արտահայտված, և՛ զոհաբերումի պատրաստակամությունը՝ հանուն այդ հայրենիքի:

Ի տես վերածնված հայրենիքի, կարոտը դառնում է հույսի ջահ, հոգնաբեկ սրտի նեցուկ անգամ հեռավոր Մաղադասկարում ապրող հայի համար: Այդպիսին են խորեն խուսիկյանի «Կարոտի երգեր» շարքի այն բանաստեղծությունները, որ տպագրել է «Անի»-ն իր 1949 թվականի հ. 5—6 (29—30)-ում:

Տղա էինք, երբոր դացինք.

— «Բարի եկաք» ըսող շեղավ:

Ձենքի շաշտն ու պատերազմ.

— Ճիշերը մեր լսող շեղավ:

Այսպես հեռացան շատերը հայրենիքից և ապրեցին «օտարություն մեջ՝ անտիր, աննեցուկ և դուրգուրանքի ու հացի կարոտ»: Բայց ստեղծվել էր, կար հայրենիքը, որ դարձել էր հույսի ջահ անգամ հեռավոր Մաղադասկարում ապրող բանաստեղծի համար: Իր անպաճույճ, բայց սրտի խորքից բխած բառերն ուղղելով այդ նորոգ հայրենիքին, խորենյանը դեռևս պատերազմի ամենադաժան շրջանում (1943 թվականին) գրում է.

Ու ճամփուս վրա ի՞նչ բուք, փոթորի՛կ,

Բայց դեռ կը քալեմ անվերջ, անվարան,

Կ'առաջնորդեմ զիս միշտ հույս մը փոքրիկ

Ու կարոտս ունիմ միա՛կ հենարան...

Եթե խորենյանի երգած այս հայրենիքը դեռևս հեռավոր փարոս է, փրկության փոքրիկ մի հույս, իսկ մեկ ուրիշ՝ «Հայաստանին» քերթվածում՝ «գերիվեր պարծանքը բաղմաշարձար հայ աշխարհի», ապա կիպրահայ բանաստեղծ Սմբատ Տերունյանի մոտ հայրենիքը, իր հերոս ժողովրդով, հավատ է, անխորտակ համոզմունք, որ նա երգում է իր «Հայաստանի եղբայրներու» բունաստեղծության մեջ:

Վերածնված, բարգավաճող հայրենիքը դառնում է հե-  
նարան իր պանդուխտ զավակների համար, հույս է ներշնչում  
նրանց, տոկալու և գոյատևելու կամք:

Հայրենասիրական բանաստեղծությունների մոտիվներից  
մեկը հայրենիքի գովին է, փառաբանումը:

Սովետական Հայաստանի լիարյուն, ստեղծագործական  
մտահղացումներով ու հոյակապ իրականացումներով հա-  
րուստ կյանքը ոգեշնչման անսպառ աղբյուր է սփյուռքահայ  
առաջադեմ գրողների ու բանաստեղծների համար: Հայրենիքի  
գովքն անող շափածո գործեր տպագրել է և «Անի»-ն իր դո-  
լուժյան ամբողջ ժամանակամիջոցում: Այդ բանաստեղծու-  
թյուններում երբեմն հանդիպում ենք հիպերբոլիկ համեմատու-  
թյունների, կրկնվող և մասամբ մեր գրականության մեջ ար-  
դեն հայտնի պատկերների ու երբեմն էլ ուխտորիկ պոզերի,  
սակայն ընդհանրապես գրված են նրանք ռեալիստական ոգով,  
անկեղծ ներշնչմամբ և հայրենասիրական ջերմ զգացմունքով:  
Բնորոշ է այդ տեսակետից Սմբատ Տերունյանի «Սովետական  
Հայաստանին» բանաստեղծությունը.

Դուն եթեր ես, բույր ու կանաչ, հեքիաթային լիճ ու անտառ,  
Դուն ջերմ խոսք ես, շող ու ճաճանչ, ոսկեխորհուրդ տեսի՛լ անձառ.  
Դուն ցնծիրդ ես, հեռավոր կանչ ու բերկրություն համայնական,  
Սովետական իմ Հայաստան...<sup>4</sup>

դրում է երիտասարդ բանաստեղծը իր երգերի «հեքիաթ աղ-  
բյուր» և հոգու «վերջին կայան» սովետական հայրենիքի  
մասին:

Նույնպիսի ջերմությամբ են գրված Արամ-Արմանի և ու-  
րիշների՝ Սովետական Հայաստանին նվիրված բանաստեղծու-  
թյունները:

Բայց սփյուռքահայ բանաստեղծները, մանավանդ երի-  
տասարդ սերնդից, չեն սահմանափակվում հայրենիքը փառա-  
բանելով միայն: Նրանց իղձն է, և դա իղձն է սփյուռքահա-  
յության մեծամասնության, որ արտահայտում են բանաս-  
տեղծները, մասնակցել հայրենիքի շինարարությանը, նոր

<sup>4</sup> «Անի», 1946, հ. 4, էջ 192:



կյանքի կառուցմանը: Նրանք պատրաստ են իրենց ողջ եռանդն ու ուժերը, իսկ հարկ հղած դեպքում և կյանքը տալու հայրենիքին, հայրենիքի պաշտպանության գործին: Այս զգացմունքները, որ պահպանեցին իրենց կենսունակությունը օտարություն մեջ և մեծ ուժով հանդես եկան հուպատեբազմյան տարիներին, ծնունդ տվեցին բանաստեղծությունների այն շարքին, որ ստացավ հայրենադարձի երգեր անունը:

«Անի»-ն լայն տեղ է տվել իր էջերում հայրենադարձի թեմային ինչպես արձակի, այնպես էլ շափածոյի բաժնում:

Հայրենադարձությանը նվիրված բանաստեղծությունները լավագույններից են ամսագրում: Նրանք արտահայտում են սփյուռքահայերի խոհերն ու ապրումները հարադատ երկրի մասին, նրանց խանդավառ վերաբերմունքը դեպի այդ երեկի իրադարձության պատմական մեծ նշանակությունը, և այն մեծ հավատն ու վստահությունը, որ կա դադուխահայ աշխատավոր մարդկանց մեջ հանդեպ սովետական հայրենիքն ու նրա ապագան:

Հայրենադարձությանը նվիրված առաջին բանաստեղծություններից մեկը պատկանում է խմբագիր Վահե-Վահյանի գրչին.

Կ'ալեկոծին երկու ծովեր, երկու անհո՞ւն՝ դեմ հանդիման...

Մեկն՝ ամերսուն կուտա ցնծուն սպասումի՜ն իր շափուղան,

Մյուսն՝ հույսի լայն թևերով հորիզոննե՛ր կը նվաճե,

Երբ հրակեզ մեր հրադին ու կարոտին բոցեն ծնած՝

Կը հայտնվի առաջին նա՛վն հայրենադարձ:

Խոհերե խո՛հ ու սիրտե սի՛րտ կը զարնվին, ալիք ալի՛ք,

Երեկն՝ իրրե անեծք ու վիշտ, վաղն՝ անսահման խինդի տեսիլք.

Ու երբ լույսի սյունի մը պես կ'ամբառնա ծովաը ծխանին,

Ամեն աչքե կարծես դարե՛ր, իրենց շիրմին քարը նետած,

Կ'արփուղջունեն առաջին նա՛վն հայրենադարձ:

Բանաստեղծի համար հուպատեբազմյան զանգվածային հայրենադարձությունը, որպես երևույթ, հավասարը չունի մեր պատմության մեջ և նշանավորում է մի նոր հանգրվան, նոր դարազուլիս մեր ժողովրդի պատմության մեջ.

«Աղգ մ' է ամբողջ՝ առաջին նալն հայրենադարձ», — եզրակացնում է Վահե-Վահյանը, ավարտելով բանաստեղծությունը:

Իր «Երգ հայրենի տան մասին»<sup>6</sup>, բանաստեղծության մեջ երիտասարդ քնարերգու Անդրանիկ Թերզյանը, որ առաջին քարավաններից մեկով հայրենիք եկավ, ընդհանրացնելով հայրենադարձի մեծ նշանակությունը և իմաստավորելով այն, գրում է «համայնական ավերի»՝ հայրենիքի մասին.

Ես կը մտնեմ քո դռնից ներս — կարծես դռնից այս մեծ

դարու...

Կոմունիստական մեծ դարը և համայնական հայրենիք բաղում հույզեր են ծնում բանաստեղծի մեջ: Հայացքը նետած «վաղվա ջինջ հորիզոնին», նա գրում է.

Սերմերդ հանձնի՛ր դու հողին,

Մտաներդ երբեք չդողան.

Հարազատ հո՞ղն է քս ուղին,

Զի դավի հո՞ղը նայիրյան:

Նույն հավատն է ներշնչել և բանաստեղծ Արամ-Արմանին, որի «Փորե» քերթվածը հայրենադարձի առթիվ գրված հաջողագույն գործերից մեկն է: Բանաստեղծությունը նվիրված է հայ բանվորին՝ հայրենիքի մեջ իր սևփական տան շինության առիթով՝ և շնչում է կուռ հավատով դեպի հարազատ երկիրը.

Փորե՛, ընկեր, ընդերքներն համայնական այս հողին,

Ու թող քրտինքըդ իջնե որպես բարիք ճակտեղ վար.

Տե՛ս, բարերն այս քեզի հետ մտերմորեն կը խոսին

Ու կը շնչեն քեզի պես՝ խաղաղ սիրո մը համար...

...Մի՛ նայիր ետ ու փորե համառորեն, ուժգնորեն,

Փորե՛ հիմա, աչքերուդ՝ տա՛ն մը գորովն ապահով...

Ալ ո՞վ կրնա բաժնել քեզ այս սրբազան հավատքին.

Որ աշխարհին զեմ ահա վարարե՛ր է որպես ծով<sup>8</sup>:

6 «Անի», 1949, հ. 5—6 (29—30), էջ 240:

7 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 14:

8 «Անի», 1948, հ. 12 (24), էջ 649:



Հայրենադարձության նվիրված բանաստեղծությունների տպագրել «Անի»-ում նաև ուրիշները, ամեն մեկը իր սեփական ձայնով, իր ուրույն եղանակով, բայց ջերմ սիրով հանգեալ իրենց հայրենիքը:

Նոր իրադրության մեջ, հտպատերազմյան շրջանում, համաշխարհային-պատմական կարևոր իրադարձությունների հետևանքով սփյուռքահայ գրականության մեջ խոր ազդեցություններ ու փոփոխություններ կրեց սոցիալական պայքարի թեման: Ֆաշիզմի ջախջախումը, դեմոկրատական ուժերի և ազգային-ազատագրական շարժումների աճը աշխարհում մեծ ներգործություն ունեցան սփյուռքահայ գրականության ու նրա բովանդակության վրա: Այդ տեսակետից իր որոշակի ազդեցությունն ունեցավ առաջադիմական գրողների վրա և սովետահայ գրականությունը: Հոռետեսության ու հուսալքության մոտիվները տեղի տվեցին ազգային և սոցիալական պայքարի մոտիվներին: Դրա ապացույցը տալիս է մեզ և «Անի»-ն:

Սոցիալական անարդարության պատկերները, որ ամենուրեք կարելի է դիտել սեփականատիրական աշխարհում, տարբեր արտացոլում են դտնում այս կամ այն բանաստեղծի մոտ: Անհատական խառնվածքը, որդեգրած աշխարհայացքը, միջավայրն ու կենսական փորձը իրենց կնիքն են դնում ամեն մի ստեղծագործողի վրա:

Բանաստեղծուհի Մարի Աթմաճյանի մոտ աշխատավոր մարդկանց (մասնավորապես կանանց) անարդար սոցիալական կացությունը պատկերված է շատ հայեցողական եղանակով, ցույց է տրված սոսկ որպես տխուր իրականություն, շաղախված կարեկցության զգացմունքով դեպի աշխատավոր կնոջ վիճակը: Այդպիսին են նրա «Մանրեհներ»<sup>9</sup> և «Մայր աղջիկներ դուք լքված»<sup>10</sup> բանաստեղծությունները: Առաջինում նա երգում է «ճոխ վաճառատան պուպրիկներ»՝ կենդանի մանեկեն աղջիկների «զրկանքով առի» կյանքը, նրանց «խոնջները մթին», որպես եզրակացություն ավելացնելով՝ «Կ'ուզեմ, ով բույրերս, ձեզ տալ թանկարժեք դիպակներն ամ-

9 «Անի», 1946, հ. 6, էջ 299:

10 «Անի», 1947, հ. 1 (15), էջ 8:

բողջ» լուի գլխով թույն արտահայտող բառերը. երկրորդում՝ կարանող կանանց չարքաշ աշխատանքը, որոնք ասեղի ծայրով վաստակում են «փշրանքն հացին արնաքամ, սովի բաժինն ալդ հետին»:

Սոցիալական բողոքի նույն մակարդակի վրա են գտնվում Զ. Մելքոնյանի «Տաղ վասն լույսի»<sup>11</sup>, «Քանսեր ունեն»<sup>12</sup>, Դևի (Մ. Ղարաբեկյան) «Քառս»<sup>13</sup>, «Խեղճ բելուղ տղա»<sup>14</sup> բանաստեղծությունները և այլն: Սրանց մեջ գերակշռում է աղքատության ու հարստության, չարքաշ կյանքի ու վայելքի պարզ հակադրությունը:

Աշխատավորական տրամադրությունների, ըմբոստության ու գիտակցված պայքարի շեշտված բանաստեղծական խոսքով են հանդես գալիս «Անի»-ում Ա. Թերզյանը, Ս. Տերունյանը, Նշան Շահենը և ուրիշներ:

Հակադրվելով բուրժուական անկումայնությունն արտահայտող բանաստեղծներին, որոնց համար կյանքը մնում է առեղծված ու ամեն շարիք՝ ճակատագրի խաղ, և մի կողմ թողնելով իրենց «պղտիկ ցավերը», նրանք հանդես են գալիս հասարակայնորեն հասուն գիտակցությամբ և նպատակի պարզ ըմբռնումով: Այս գիտակցությունն է ահա, որ իր մարմնավորումն է գտնում Վարուժան Պետիկյանի մի բանաստեղծության մեջ, ուր նա գրում է.

Ալ կը բավե՛ որ լացի պղտիկ ցավերս օրն ի բուն,  
եվ անհաղորդ մնացի մարդոց ցավին, պայքարին.  
Զրբի մարմինըս, հոգիս՝ անոնց մեկ մասն անմեկին,  
Որ իմ բայլերս ըլլային ընկեր անոնց բայլերուն<sup>15</sup>:

Աշխատավորների հետ քայլելու, նրանց ճակատագրի կերտմանը իրենց գեղարվեստական խոսքով մասնակցելու բուռն ցանկությունը երիտասարդ բանաստեղծների այս խումբին թելադրում է հրգել պայքարը, մարտը.

<sup>11</sup> «Անի», 1950, հ. 6—7 (42—43), էջ 370:

<sup>12</sup> «Անի» 1951, հ. 11—12 (47—48), էջ 617:

<sup>13</sup> «Անի», 1950, հ. 6—7 (42—43), էջ 327:

<sup>14</sup> «Անի» 1952, հ. 3 (51), էջ 157:

<sup>15</sup> «Անի», 1954, հ. 4 (64), էջ 189:



Քանզի՛ առանց անհաշտ մարտի,  
Առանց արյան ու զոհերու փոթորկահար,  
Երկրի վրա,  
Կա լոկ արցունք, կապանք ու քաղց,  
Կա միայն վիճ մեզի համար:  
(Ս. Տերունյան, «Երգ գրոհի») 16:

Իր մարտական առույդ շնչով ուշագրավ է և Նշան Շահենի «Կամք և հարատևություն» բանաստեղծությունը («Բանտի երգեր» շարքից): Դա առնական հեքով ու հաղթանակի հավատով տոգորված բանաստեղծական պեղեցիկ պատկեր է, որ մարմնավորում է պայքարի ոգին.

...Օվկիանին ահեղ լանջքը ճեղքելով,  
— Կուրծքը լայնաբաց անվհեր մարտիկ —  
Նավըս կը սուրա խկահեղ վազքով՝  
Դեպի մարտնչում, դեպի փոթորիկ:  
Որքա՛ն փայփայեմ պիտի նավըս սեղ,  
Դղվեմ ժպտաշող երկաթներն ամուր,  
Փաթթվիմ տենդով՝ վիզին իր անթեք,  
Անհազ համբուրեմ բաշերը փրփուր,  
Մինչև որ խրոխտ ուժերը ծովուն  
Խոնարհին, իչնան՝ երթիս հանդիման...  
Ծովեզրին կանգնեմ փարոս մը որուն  
ճուրհերը՝ որպես հմայքն առաքվան՝  
Երնգով ողորկն երազի ճամփան 17:

Պայքարի, սոցիալական զարթոնքի մոտիվներ կան նաև «Անի»-ում տպագրված մյուս բանաստեղծների գործերում: Հետաքրքիր է նշել նրանցից Ե. Կոպելյանին, Հ. Գալուստյանին, Ա. Շավարշին:

Նրանք երեքն էլ պոլսահայ երիտասարդ գրողներ են, որ իբևեց փոքրիկ գրքույկներն են հրատարակել 1948—1949 թվականներին: Այդ գրքույկներից մի քանի բանաստեղծություն է ընտրել ու տպագրել ամսագիրը, բայց դրանք էլ բավական են պատկերացում տալու համար գրական այն զար-

16 «Անի», 1949, հ. 5—6 (29—30), էջ 270:

17 «Անի», 1954, հ. 1 (61), էջ 35:

թոնքի մասին, որը թեև կարճատև, բայց այնուամենայնիվ հնարավոր եղավ պատերազմի հաղթական ավարտից հետո թուրքիայում: Այդ բանաստեղծությունները, թեև կարող «արվեստի բարիքներուն», ինչպես մի առիթով ասում է Վահե-Վահյանը, ցույց են տալիս, որ երիտասարդ գրողները հաղորդակից են աշխատավոր մարդկանց կյանքին, ազատության կարոտը կա նրանց մեջ և լավատեսությունը ապագայի: Բերենք մի հատված Ե. Կոպելյանի «Գիշեր» բանաստեղծությունից: Տալով գիշերվա պատկերը և նկարագրելով ազատության համար «բռնկած սիրտերով» մարդկանց զնդակահարման տեսարանը, հեղինակը գրում է.

Հիմա

Գիշեր չէ այլևս, սիրելիս,

Ահա դարձյալ բռնկեցավ հորիզոնը

Եվ արևը մագլցելով երկինքն ի վեր.

Քնացող մարդիկ դարձյալ պիտի արթնան,

Ու պիտի հնչի փողը

Հացի և կյանքի պայքարի<sup>18</sup>:

Զափածոն «Անի»-ում չի սահմանափակվում, իհարկե, հայրենիքի և սոցիալական պայքարի երգերով միայն: Մենք շեշտեցինք դրանք ամսագրի հիմնական ուղղությունը, նրա որդեգրած գրական սկզբունքները վեր հանելու նպատակով: «Անի»-ում լայն տեղ են գրավում նաև լիրիկական ժանրի այլ բանաստեղծություններ, սիրո, բնության, աշխատանքի երգեր և այլն: Իրենց կարգին այդ երգերը ևս գաղափարական լիցք ունեն իրենց մեջ և անձնական ասրումների, հույզների, սեփական աշխարհըմբռնման միջոցով արտահայտում են հեղինակների վերաբերմունքը դեպի արտաքին աշխարհը, դեպի կյանքի այլևայլ երևույթները և մարդկային փոխհարաբերությունները:

Խոսելով այդ թեմաներով գրված գործերի մասին, մենք կուզեինք առաջնությունը նորից երիտասարդներին տալ:

Այդ երիտասարդ ստեղծագործողների մոտ բնորոշը նրանց

<sup>18</sup> «Անի», 1950, հ. 1 (37), էջ 20:



աշխարհը մերոնման թարմությունն է, նրանց լավատեսությունը կյանքի, ապագայի նկատմամբ:

Սերը նրանց հրգերում առողջ, կենսահաստատ զգացում է, չունի հիվանդագին այն դալկությունն ու գունատությունը, որ հատուկ է անհեռանկար և հուսալքված հոգիներին:

Նույն համապարփակ սիրո մոտիվներն են հնչում Հ. Մաթյանի «Գարնան երգ»-ում<sup>19</sup> և Ա. Թերզյանի «Ծրջանկություն»<sup>20</sup> բանաստեղծության մեջ: Առաջինը ավելի շատ դարնան, բնության զարթոնքի գովերգությունն է: Բանաստեղծի մեջ այնքան սեր ու խնդություն է արթնացրել գարունը, որ նա պատրաստ է իր հոգու «լույսերը ցնծուն» շաղ տալու բոլոր սրտերին:

Ա. Թերզյանի բանաստեղծության մեջ ավելի շեշտված կերպով է արտահայտված հեղինակի հումանիստական մտածողությունը: Կյանքից «խլած» երջանկությունը նա պատրաստ է «տալ մաս առ մաս աղքատներու սեղանին», որովհետև

...կան քանին՝ ձյունագետ՝

Աչքերուն մահ ու արցունք, որոնք հիմա կը դողան

նրյունարորր գեռ գալիք Արեգակին դեմ վաղվան...

Վերոհիշյալ բանաստեղծություններին համահնչյուն են Վ. Պետիկյանի «Հորդոր»<sup>21</sup>-ը, Պ. Մինասյանի «Նուսաբաց»-ը<sup>22</sup> և ուրիշներ:

Այդ թարմ, լավատեսական ու հումանիստական ոգին է տիրապետում և բնությանը, աշխատանքի գովերգմանը նվիրված ու խոհական բաղմամբով մյուս բանաստեղծություններում:

Մինչև այստեղ մեր խոսքը վերաբերում էր «Անի»-ի չափածոյի այն հիմնական մասին, որը հատկանշում է նրա ռեալիստական, առաջադիմական ուղղությունը: Դրանով ամսագրի չափածոն չի սպառվում:

19 «Անի», 1952, հ. 11—12 (59—60), էջ 620:

20 «Անի», 1946, հ. 3, էջ 137:

21 «Անի», 1954, հ. 2 (62), էջ 79:

22 «Անի», 1947, հ. 5 (17), էջ 256:

Զանազան տարեթվերի առիթով «Անի»-ն տպագրել է արևմտահայ ավագ սերնդի գրողներին պատկանող (վ. Թեքեյան, Ա. Զոպանյան, Թ. Աղատյան) մի շարք չափածո գործեր, այդ թվում չորս անտիպ բանաստեղծություն Թեքեյանից («Երեք թռչուն», «Զեփ կրնար, քաղցր անցյալ», «Տեսիլք մահու», «Երբ օրը գա վերջապես...»): Դրանք մեր գրականության մեջ արդեն իրենց ծանրակշիռ խոսքն ասած հեղինակների գործեր են ու թերևս որոշ հետաքրքրություն կարող են ներկայացնել ամսագրի կողմից կատարած ընտրության տեսակետից միայն:

«Անի»-ի անցած ուղին բնորոշելու համար, անհրաժեշտ է կանգ առնել այն հեղինակների վրա, որոնք գրական ասպարեզ էին իջել հիմնականում քսանական թվականներին և տեականորեն աշխատակցել են ամսագրին՝ նրա հրատարակման տարիներին: Նրանց հասարակական և գրական-գեղարվեստական հայացքները ձևավորվել էին այն միջավայրում, որ բնորոշ էր սփյուռքի համար երկու պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում:

Սփյուռքահայ գրական միջնորդները այդ տարիներին ենթակա էր արևմտյան աշխարհում ստեղծված հասարակական-քաղաքական միջավայրի և գրական երևույթների խիստ ազդեցության:

Գրողների մի մասը, որ կապված էր առավելապես աշխատավոր դասերի ու առաջադիմական հոսանքների հետ, որդեգրեց գրական առաջադիմական ուղղությունը և դիտեց գեղարվեստական խոսքը որպես պայքարի միջոց ընդդեմ իմպերիալիզմի, ֆաշիզմի, հետադիմության: Այդ ուղղության փայլուն ներկայացուցիչներն էին Մ. Մանուշյանը, Ա. Սեման (Գ. Աթմաճյան), Լասը (Լուիզա Ասլանյան), որոնք նաև իրենց կյանքը տվին այդ պայքարին:

Հայ հեղինակների մյուս մասը հետևեց գրական այլ ուղղությունների:

Ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմը չէր կարող ու չուժեց Արևմուտքի առջև ծառացած շատ պրոբլեմներ: Ամպերը չցրվեցին ու երկիրքը չպարզվեց: Քաղաքական նոր կնճիռներն ու սոցիալական նոր պրոբլեմները



ժողովուրդներին կազնեցրին նոր մտահոգությունների առջև: Դրանց արդյունքն էին դժգոհությունների և հոռետեսության այն արտահայտությունները, որոնք գալով գրականություն, սնեցին նրա հակառակիստական, անկումային հոսանքները:

Այդ տրամադրությունները պարարտ հող գտան նաև սփյուռքահայ միջավայրում: Սփյուռքի ծանր դոյավիճակը, մոտակա ապագայում այդ դժվարին կացությունից դուրս գալու անհնարինությունը, հիասթափությունը կյանքից, ապա-դայի հեռանկարների անորոշությունը շատերի մեջ առաջ էին բերում անհուսություն, դատապարտվածություն, ապուխտիզմի զգացում, որ իր արտացոլումն էր գտնում նաև գրականու-թյան մեջ:

«Անի»-ն զերծ չմնաց այդ ազդեցությունից, նրա էջերում ևս հանդիպում ենք մի շարք գործերի, որոնք բովանդակում են անառողջ տրամադրություններ, հուսալքության ու անկու-մային մոտիվներ:

Այդ տրամադրություններն արտահայտված են Արշամ Տատրյանի, Սարգիս Սահակյանի, մասամբ Բյուզանդ Թո-փալյանի ու մի քանի այլ հեղինակների «Անի»-ում լույս տե-սած բանաստեղծություններում<sup>23</sup>:

Ա. Տատրյանի բանաստեղծությունների («Ներքին չեռ-նաշղթա» շարքից) հիմնական մոտիվը ինքն իր մեջ ամփոփ-ված անհատի ներքին ապրումներն են: Ծայրահեղ ինդիվիդու-ալիզմով համակված բանաստեղծը կյանքը դիտում է իր եսի նեղ տեսանկյունից և հոռետեսի աչքերով: Ոչ մի հեռանկար կյանքում, ոչ մի կուլան:

Երբ նա սեր է երգում, կարծեք դիմում է ոչ թե կենդանի, ձև, մարմին և հողի ունեցող էակի, այլ մի ինչ-որ վերացա-կան հասկացողության, սկզբունքի, որը ավելի հակված է դեպի շարը (համենայն դեպս ունակ չէ բարին կատարելու), մարմ-նավորում է վհատությունը, անհուսությունն ինքր: Նրա այդ երգը ավելի շուտ անանձնական սիրո տվայտանքներ են, քան

<sup>23</sup> Առանձին հեղինակների մասին խոսելիս մեծ մասամբ մեր մեկնա-կետը «Անի»-ում տպագրված նրանց գործերն են:

մարդկային զգացմունքների արտահայտություն («Նախեր-  
գանք») <sup>24</sup>:

Դիմելով իր սրտի «անգութ հրեշտակին», Ա. Տատրյանը  
գրում է.

— Իզո՞ւր է, օ՛հ, Իզո՞ւր, ա՛լ իզուր ամեն բան,  
Նույն իսկ զեմն այս սիրտին խոյանքին անխափան,  
Նույն իսկ զեմն այս աչքին՝ մերթ օրրան, մերթ դամբան:

Հի աշխարհն որ առավ քեզմով կյանք մ'արփավետ,  
եվ որուն մեջ կ'ուզես բնակիլ ինծի հետ,  
Ինձ համար է մեռած՝ լուսնին պես, առ հավետ...

(«Անկարելին») <sup>25</sup>

Ա. Տատրյանի հոռետեսությունը սիմվոլիստական մտա-  
պատկերներով տառապող իր մի շարք բանաստեղծություն-  
ներում («Մենություն» <sup>26</sup>, «Տիեզերաշինություն» <sup>27</sup>) անսահ-  
ման է.

Ու սո՛ւզ, սո՛ւզ, եղա սո՛ւզ իրերուն մեջ առիլ,  
եղա ա՛չք ևս կուրցած ու բաց աչք մեռելի...

(«Կորսված ու վերագտնված միությունը») <sup>28</sup>:

Ահա բանաստեղծական այն մթնոլորտը, որի մեջ շնչում  
է Ա. Տատրյանը, քրքրելով ներքին մի աշխարհ, որ կտրված  
է կյանքից, շրջապատող հասարակությունից, անկարեկիբ և,  
իհարկե, բացարձակապես հեռու բոլորի որևէ արտահայտու-  
թյունից:

Սփյուռքահայ նույն միջավայրի ծնունդ է և բանաստեղծ  
Ս. Սահակյանը: Նրա մոտ թեև չկա Ա. Տատրյանի միստի-  
ցիզմը և մռայլ հոռետեսությունը, սակայն բացակայում է և  
նպատակի հստակությունը: Այդ հանգամանքը թույլ չի տվել  
ներան գտնելու, ունենալու բանաստեղծական իր հստակ ուղին:  
Եվ նա մնում է կիսաճանապարհին, ու հույսը չի այցելում  
ներան՝ պայծառություն և լավատեսություն ներշնչելու նրա  
ստեղծագործությանը:

<sup>24</sup> «Անի», 1950, հ. 8 (44), էջ 426:

<sup>25</sup> «Անի», 1952, հ. 4—5 (52—53), էջ 202:

<sup>26</sup> «Անի», 1948, հ. 12 (24), էջ 626:

<sup>27</sup> «Անի», էջ 627:

<sup>28</sup> «Անի», էջ 626:



Կորցնելով իր ծննդավայր-հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, նա չի կարողանում գտնել իր նոր, վերածնված հայրենիքը՝ Սովետական Հայաստանը: Ու այդպես էլ մնում է՝ դեգերելու «արևին տակ օտար»:

Այսքան տարի կը շնչեմ այս արևին տակ օտար,  
Առանց որ թե՛ մը կապե զիս դեռ հողին ու ջուրին,  
— Արմատախիլ ու հազիվ տարատնկված իբրե ծառ,  
Ոստերն որուն ամեն օր հետզհետե կը ծյուրի՜ն...

Ինչպե՞ս գրել անանուն ողբերգությունը երբեք՝  
Անհայրենիք մանկության, պատանության սրտաբեկ,  
Ու տարագիր աշնանալ սպառնացող օրերուն...<sup>29</sup>:

«Հետզհետե ծյուրող ոստերի» և «աշնանալ սպառնացող օրերուն» տրամադրությունն է ահա, որ առկա է նրա «Բարբարոս աղոթք»<sup>30</sup>, «Երազին»<sup>31</sup> և այլ բանաստեղծություններում:

Կտրված հասարակությունից ու հասարակական կյանքից, դժգոհ իրեն շրջապատող իրականությունից, Ս. Սահակյանը ուժ չի գտնում իր մեջ՝ հաղթահարելու սեփական թուլությունը, որ թուլությունն է անհատ-մտավորականի, և իր հոգու ողջ «մախանքն ու քենը» ուղղում է մարդկանց դեմ, ներսույալ և իր սեփական հսը:

Կ'ատեմ մարդիկը հիմա.  
Մանավանդ զիս կ'ատեմ ես,  
...Բայց իմ անգոր զայրույթես  
Ոչինչ ոչ որ կ'իմանա...

...Տեր, մարդկությունը համակ  
Տուր ցասումիս նշավակ,  
Եվ կամ փրկե զիս ինձմե...

(«Բարբարոս աղոթք»)

Վահե-Վահյանը, գրախոսելով «Անի»-ում Ս. Սահակյանի «Բարձրաբերդ» ժողովածուն, գրում է. «Իր քերթվածներուն թվականները որքան կը մոտենան այս օրերուն, այնքան

29 «Անի», 1946, № 8—9, էջ 441:

30 «Անի», 1947, հ. 11, էջ 595:

31 «Անի», 1950, հ. 4—5 (40—41), էջ 192:

զգալիորեն կը պայծառանա բանաստեղծին ներքին աշխարհը, կյանքին վրա իր նայվածքը կ'ըլլա վճիտ, հոգին կը զինվի նոր կորովով ու հաղթանակի հավատքով, իր տողերը կստանան ուժգնություն, ու կը բյուրեղանա իր արվեստը»<sup>32</sup>:

Դժվար է համաձայնել Վահե-Վահյանի այս կարծիքի հետ: Ս. Սահակյանի հայացքը չի հասնում մինչև աշխատավոր զանգվածները և իր հայրենիքը վերածնող ու կառուցող հայ ժողովուրդը, իր տողերը ուժգնություն չեն ստանում և՛ հետագա քերթվածների մեջ, նրան համակում է մի գորշ «Անտարբերություն»<sup>33</sup> կյանքի ու մահվան հանդեպ:

Արվեստը: Բայց ինչպիսի կարելի է անջատել արվեստը նյութից, բովանդակությունից: Դրանք մնում են անբաժանելի, և Ս. Սահակյանի օրինակն էլ նույն բանն է ասում:

Մինչպատերազմյան սերնդին է պատկանում և Բ. Թոփալյանը՝ բանաստեղծական իր ուրույն ոճով ու մտածելակերպով: «Արևմուտքի խառնարանին մեջ տվյալ տող բանաստեղծ...», այսպես է անվանում նրան «Անի»-ի խմբագիրը:

Բ. Թոփալյանի բանաստեղծությունների նյութը առավելապես մարդն է, կյանքը. այդ նրա ստեղծագործության դրական կողմն է: Սակայն «Արևմուտքի խառնարանը» իր մոգեռնիստական ու ձևապաշտ արվեստի ապակողմնորոշող ուժերի ազդեցությամբ կարծես դուրս է մղել նրան ռեալիստական արվեստի բնականոն հունից, ու նա փարել է վերացականին, «անաղարտ արվեստի» սկզբունքներին:

Թոփալյան-բանաստեղծը դժգոհ է իրեն շրջապատող իրականությունից, բայց և չի առաջադրում այդ իրականությունը վերափոխող ռեալ միջոցներ, տեսնում է մարդկանց թշվառությունը, որը նրան ցավ է պատճառում, որովհետև նա սիրում է մարդկանց, սակայն չի հանդում պայքարի գաղափարին, թեև ընդլզման պահեր ունենում է: Արևմտյան աշխարհի ժամանակակից իրադրությունը, մանավանդ ֆաշիզմի և պատերազմի նյութած աղետները նրա համար անբացատրելի մի կողմն են տիեզերքի քաոսային վիճակի: Այստեղից էլ՝ նրա բանաստեղծությունների վերացականությունը: Նրա պոե-

32 «Անի», 1946, հ. 8—9, էջ 504:

33 «Անի», 1952, հ. 4—5 (52—53), էջ 185:



տիկական զինանոցում սովորական պատկերներ ու հասկացողություններ են անեզրայինը, գերեզրայինը, տաբերայինը, անհունը, բացարձակը: Համաձայն Թոփալյանի կենսափիլիսոփայության, մարդը անկարող էակ է, բնազդների գերի, որ ժամանակի ու տարածության անհունության մեջ առկայծում է մի պահ ու անցնում, թողնելով «անավարտ Բաբելոններ»:

Ու մարդը նույն,

Այսահար,

Կալանավոր՝ իր ճիգին՝ ազատության, տեղում՝,

Կը տառապի, կը կոտտա՛...

Կարերը մինչ կը քրքջան... «Շատե՛ր եկան ու դացին...»<sup>34</sup>:

Նույնանման մտքեր են արտահայտված և «Անթափանցելին»<sup>35</sup>, «Սադայելական»<sup>36</sup> բանաստեղծություններում:

Տիրզերական քառուսի ու մարդկային ճիգի ունայնության պատկերները հնու չեն բուրժուական իրականության ճիշտ արտացոլումը լինելուց, մանավանդ երբ դրանց հիմքում ընկած է «սսկեկույտին» տիրանալու անսանձ կիրքը: Թոփալյանը լավ է ընկալում չարիքը, որ սպառնում է մարդկային հասարակությանը, երբեմն ընդվզում է նրա դեմ ու պատրաստ է դիմելու կրակի («Կրակե հաղթանակ»)՝<sup>37</sup>, կամ ավերիչ մի ալլ ուժի («Սադայելական») օգնության, հիմնահատակ կործանելու չարի վրա կառուցված աշխարհը՝ նորը, կատարյալը կառուցելու բարի ցանկությամբ: Բայց չարն ու չարիքը բանաստեղծի մոտ նույնպես վերացական, մետաֆիզիկ հասկացողություններ են (ինչպես, ի դեպ, և բարին ու արդարը): Նա չի տեսնում, թեքս չի հավատում իրեն շրջապատող հասարակության մեջ այն առաջավոր ստեղծարար ուժերին, որոնք բարձրանում են փոխարինելու իր դարն ապրածին, այն առողջն ու բանտկանը, որ գիտակցում է իր միսիան ու տողորված է նոր, արդար հասարակարգ կառուցելու հավատով:

34 «Անի», 1948, հ. 6 (18), էջ 281:

35 «Անի», 1950, հ. 2 (38), էջ 74:

36 «Անի», 1952, հ. 3 (51), էջ 122:

37 «Անի», 1949, հ. 8 (32), էջ 408:

Քառասայինի նրա պատկերացումը թույլ չի տալիս տեսնելու հա-  
ւարակական ուժերի գոյությունը, որ ենթադրում է շահերի  
ընդհանրություն և կազմակերպվածություն, ու բանաստեղծը  
սպալվինում է անհատին, նրա հոգու կատարելագործման  
կարողությունը.

Հոգին՝ մինակ, միայնակ, իր մենությամբ տոգորուն,  
եվ ինքնիրմով պիտի ա՛ն մաքառի՝ մինչ ի կատար:

(«Անթափանցելին»)

Այստեղից են բխում և նրա որոշ իդեալիստական հա-  
յացքները բանաստեղծության (արվեստի) էության մասին:  
Ըստ Թոփալյանի, բանաստեղծությունը «Այլափոխում է՝ բա-  
ռերու սովորական իմաստին և հրաշալիի վերածում»,  
կամ «Բանաստեղծությունը հրաշքն է, որ կհաղցնե ծիրանի  
իր (մարդու.—Մ. Բ.) երազներուն,— որոնք տրորված են  
նյութապաշտ ու ստորնաքարշ կրունկներու տակ,— ու կդարձ-  
նեն իրականություն մարդկային արժանավորության բոլոր  
տարրերը»<sup>38</sup>:

Թոփալյանի «Միայնակ խոկացող» հոդուն, ինչպես ասա-  
ցինք, մարդն ու մարդկայինը, կյանքը, ամբողջությամբ վեր-  
ցրած, խորթ չէ: Բայց նա ընկալում է այդ բոլորը յուրովի,  
տիեզերականի, անորոշի, քառասայինի պրիզմայում բեկեղուց  
հետո: Միայն այն դեպքում, երբ նա դիմում է կոնկրետ մար-  
դուն, ռեալ բնությունն է դարձնում իր բանաստեղծության  
նյութը, նրա ոտքերը կարծես ամուր կանգնում են մայր հողին,  
ու նա դառնում է լավատես, հավատում մարդու ապագային  
ու գեղեցկին կյանքում:

Այդպիսի բանաստեղծություններ են, օրինակ, «Առաջին  
իրթ»-ը<sup>39</sup>, «Շրջան»-ը<sup>40</sup> գրված 1945 թվականին, պատերազմի  
հաղթական ավարտի շրջանում: Հաղթանակը բանաստեղծի  
մեջ հույս է ներշնչում, որ «խավարակուռ ու անսանձ» շրջա-  
ներից հետո, երբ «մարդն անկուշտ կը փնտրե վիժումն իր  
մեծ ջանքերուն»,

38 Տե՛ս «Անդաստան», 1957, № 6—7, էջ 19:

39 «Անի», 1946, հ. 1, էջ 6:

40 «Անի», 1946, հ. 1, էջ 7:



...Կը հասնին շրջաններ արեններով արգելանդ...

Արեններուն մեշեն խոր՝ նոր հաղթական արեններ...

Տիեզերքի երկունքով կը ծընի դարն ադամանդ:

(«Շրջան»)

Մասշտաբն այստեղ մնում է տիեզերականը, առկա է և վերացականությունը, բայց կա և լավատեսությունը, հավատը:

Այլ են, և մոտ՝ կյանքին, նրա «Վեցերորդ հարկի մը պատուհանեն»<sup>41</sup>, «Երեկոն ահա քաղաքին վրա»<sup>42</sup> բանաստեղծությունները: Իսկ ավելի բնորոշ են Թոփալյանի ստեղծագործական մտորումների ճանապարհին նրա «Վայրկյան»-ը<sup>43</sup> և է՛լ առավել՝ «Երգ կառուցման և պայքարի»-ն<sup>44</sup>:

Պահպանելով վերացականի՝ իրեն հատուկ կոլորիտը, նա «Վայրկյան» բանաստեղծության մեջ ընդհուպ մոտենում է ռեալականին, կյանքին:

— Լույսերը ե՛րբ գրկեցին ստեղնաշարն սպիտակ  
Նուրբ ձեռքերուդ, որ հանկարծ իմ ձեռքերու տենդին մեջ  
Կը պրկվին լուսյամբ ու կը հնչեն տենդահար:

Լըռե, այսպես բարոյթյամբ, բարձրացի՛ր իմ տենչանքիս...  
Պիտի այսպես ըլլայիր հավերժական տե՛նդն անմար —  
Աստվածներու ոստանին բարձրացրնող օ՛ր խոյանք,  
Տա՛ր Թեկուդ սահմաններն, ընդունե՛ր զիս, ե՛ս եմ, — կյա՛նք:

Վերը հիշատակված վերջին («Երգ կառուցման և պայքարի») բանաստեղծության մեջ, որ ռեալիզմով է շնչում, Բ. Թոփալյանը հանդես է գալիս կարծեք բոլորովին նոր դեմքով. նա ծառանում է չարիքի դեմ ու պայքարի կող ուղղում անցյալին՝ գալիքի դիրքերից.

Կը նետեմ վերջնակա՛ն մոռացման վիհերուն  
Վատնրված ու թշվառ օրերն իմ անցյալի...  
Օ՛ր, ներկան կը վառի պայքարով ու կյանքով...:  
Անցյալի վրա ի՞նչ ալ հարվածն անհեղին:

41 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 5:

42 «Անի», 1946, հ. 2, էջ 80:

43 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 5:

44 «Անի», 1943, հ. 2 (26), էջ 65:

...Բյուրավոր կամքերու կուտակումն այս արի,  
Կառուցման դըրուհն այս դաշտերուն մեջ արյան,  
Ջարիքին զեմ վարար ծառացումն անվըհատ  
Կը զինեն իմ հողիս զորությամբ մ'անսահման:

Բանաստեղծական այս ընդվզումը, որ ժամանակ առ ժամանակ երևան է դալիս նրա մոտ, երբեմն թույլ, երբեմն ուժգընորեն, նույնպես հարազատ է Թոփալյանի գրչին և արտահայտում է նրա պոետական «անհնազանդությունը» մոգեոնիստական արվեստի սկզբունքներին:

Ետպատերազմյան առաջին տարիներին, հայրենասիրական ընդհանուր ոգևորության շրջանում, եղան նաև բանաստեղծներ, որոնք մեկուսանալու վտանգից դրդված, ինչ-որ չափով տուրք տվեցին հայրենասիրությանը, սակայն ըստ էության նրանք սփյուռքահայ առաջավոր զանգվածների և Սովետական Հայաստանի հետ չէին ու այգպես էլ մնացին: «Անի»-ն տպագրել է այդ հեղինակներից Արսեն Երկաթի մի շարք դործերը, որոնք ոչինչ չեն ավելացնում ամսագրի չափածոյին, մասամբ վերացական են և մշուշապատ ու ապակողմնորոշող, ինչպես, օրինակ, «Երգ ապագայի»<sup>45</sup> բանաստեղծությունն է, որտեղ հեղինակը դիմում է «հայ ինկերոջը», որ նա «գիտակցի», թե պիտի բացվեն «հայ ցեղի» երազված «արշալույսները...»: Չտեսնելով (ավելի ճիշտ՝ չուզելով տեսնել) արդեն բացված սովետական արշալույսը, Ա. Երկաթը ձգտում է շեղել նաև ուրիշների՝ երիտասարդության հայացքը այդ արշալույսից:

1947-ի վերջերից նրա բանաստեղծություններին ամսագրերի էջերում այլևս չենք հանդիպում:

\* \* \*

«Անի»-ն իր էջերում լայն տեղ է հատկացրել սովետահայ հեղինակներին: Չկա ամսագրի մի համար, որտեղ սովետահայ գրողները հանդես եկած չլինեն բանաստեղծություններով, պատմվածքներով կամ հոդվածներով: Դա ամսագրի մեծ առավելություններից մեկն է: Իր այդ աշխատանքով «Անի»-ն ղգալի ծառայություն է մատուցել սփյուռքահայ ընթերցողներին:

<sup>45</sup> «Անի», 1947. հ. 10, էջ 534:



րին ու գրական մտքին: Այդ միջոցով ամսագիրը պրոպագանդել է սովետահայ գրականության նվաճումները հայկական դադութներում:

Սփյուռքահայ գրասեր հասարակայնությունը, որի կապերը մայր հայրենիքի գրական կյանքի և արվեստի աշխարհի հետ բավականին թուլացել էին պատերազմին նախորդող տարիներին, «Անի»-ի միջոցով սկսեց լայնորեն ծանոթանալ մեր կյանքի նաև այդ բնագավառներին: «Անի»-ն միակ պարբերականը չէր, իհարկե, որ հայրենիքի ու սփյուռքի մշակութային մերձեցման այդպիսի կարևոր դեր էր վերցրել իր վրա: Նույնիսկ նաև ուրիշ պարբերականներ թե՛ ադ շրջանում և թե՛ նախորդ տարիներին, ինչպես, օրինակ, «Ծիածան», «Ժողովուրդի ձայն», «Կայծ», «Աշխատանք», «Նոր ուղի», «Դեպի երկիր» և այլն (դա միայն Մերձավոր արևելքում): Բայց «Անի»-ի դերը եղակի էր իր ծավալով ու հետևողականությամբ:

Ինչպես ասացինք, «Անի»-ն իր յուրաքանչյուր համարում, սփյուռքահայ գրողների հետ միասին, տպագրել է և սովետահայ հեղինակների գործերը: Նյութերի ընտրությունը՝ կատարված մտածված և ճաշակով, ցույց է տալիս, որ ամսագիրը իր առջև ինդիր է դրել պարբերաբար ծանոթացնելու իր ընթերցողներին այն լավին ու նորին, ինչ ստեղծվում է հայրենի երկրում գրականության ու արվեստի բնագավառներում, հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդ ստեղծագործողների վրա:

Սովետահայ չափածոյի ընտրությունը կատարելիս խմբագիրն ունեցել է իր որոշակի մոտեցումը, իր սկզբունքները: Առաջին հերթին նա առավելությունը տվել է հայրենասիրական մոտիվներով գրված բանաստեղծություններին, այն գործերին, որոնք ավելի մոտ են սփյուռքահայ աշխատավորների հոգուն, ավելի են հետաքրքրում ու հուզում նրանց: Ընտրված բանաստեղծությունների թեմատիկան բավական ընդարձակ է: Այն ընդգրկում է երգեր հայրենի բնության, նրա քաղաքների ու շենքերի գեղեցկության, նրա ձեռք բերած նվաճումների և, վերջապես, հայրենիքը վերաշինող մարդկանց աշխատանքային սխրագործությունների մասին:

Ձգալի թվով բանաստեղծություններ կան նվիրված հայ-

րենիքի հերոս պաշտպաններին, մանավանդ ամսագրի առաջին երկու տարիների համարներում, երբ պատերազմը նոր էր ավարտվել և դեռ թարմ էին անցած հերոսական մարտերի ու տարած հաղթանակների տպավորությունները:

Մի այլ շարք բանաստեղծությունների թեման հայրենադարձությունն է, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական այդ խոշոր իրադարձությունը, որն իր լայն արձագանքը գտավ սովետահայ բանաստեղծների մոտ:

Ընտրության երկրորդ սկզբունքը՝ սովետահայ բանաստեղծներին ներկայացնելն է սփյուռքի ընթերցողներին: Վահե-Վահյանն այդ անում է շատ գործիմաց կերպով: Նա սովորաբար աշխատում է ներկայացնել սովետահայ բանաստեղծներին իրենց մի շարք առավել բնորոշ գործերով, տպագրելով դրանք երբեմն ամսագրի հաջորդական երկու-երեք համարներում, քիչ թե շատ ամբողջական գաղափար տալու համար տվյալ գրողի մասին, ղետեղելով, անհրաժեշտության դեպքում, մերթ շատ համառոտ ծանոթագրություն հեղինակի մասին, իսկ ավելի հաճախ՝ տալով դրանք հեղինակի նոր լույս տեսած գրքին նվիրված գրախոսականի հետ միասին:

Այսպես. ամսագրի 1947 թվականի № 3 (15)-ում տպագրելով Գ. Էմինից ամբողջ յոթ բանաստեղծություն («Հաղթանակի ճամփան» շարքից), Վահե-Վահյանը ծանոթագրության մեջ համառոտակի խոսում է բանաստեղծությունների այդ շարքի հայրենասիրական բովանդակության մասին և ապա ավելացնում, որ Գ. Էմինը այն գրողներից մեկն էր, որ քննադատվեց Հայաստանի Սովետական Գրողների Երկրորդ համագումարում, սակայն ոչ այն բանի համար, ինչ չարամտորեն ուղում էին վերագրել համագումարին «հայ աթոռաղուրդիները» արտասահմանում. «Հայրենասիրությունը չէր երբեք թիրախը այդ քննադատության, — գրում է նա, ինչպես հավատացնել համառեցան՝ մեր Հայրենիքին մեջ ամեն երևույթ գլխիվայր շրջված տեսնելու ախտեն տառապողները արտասահմանի: Եվ այդ քննադատությունը չէր երբեք «բանագրանք» կամ «աղդարարություն զնդակահարության», ինչպես չարախինդ գուշակությամբ մը մխիթարեցին իրենքզիրենք՝ նույն շրջանակները: Այդ Համագումարեն վերջն էր որ Բորյան, Կա-



պոլտիկյան և էմին ուղարկվեցան Մոսկվա, որպես պատգամավորները Հայաստանի երիտասարդ գրողներուն: Եվ անկե վերջն էր որ, տաղանդավոր այդ քերթողներուն հայրենաշունչ բազում քերթվածներուն հետ, ունեցանք Գևորգ էմինի «Հաղթանակի ճամփան», ուր ճշմարիտ հայրենասիրությունը, սրտառուչ քնարականության մը մեջն, կը բարձրանա ուժղնությանը դուրսադնականին, մնալով խորապես մարդկային՝ նույն ատեն: Դա՛ս մը կա այստեղ, մեծ դաս մը՝ սորվիլ դիտողներուն համար»<sup>46</sup>:

Հետագայում, ամսագրի 1952 թվականի հ. 3 (51)-ում ամսագիրը նորից է անդրադառնում Գ. էմինի պոեզիային (միջանկյալ առանձին բանաստեղծություններ տպելով նրանից իր այլ համարներում), այս անգամ արդեն բանաստեղծի մի ամբողջ շարք գործերի հետ միասին (ուժ բանաստեղծություն) տպագրելով նաև խմբագրի գրախոսականը Գ. էմինի «Նոր ճանապարհ» ժողովածուի մասին:

Այս ձևով ամսագիրը պարբերաբար սփյուռքահայ բնթերցողներին է ներկայացնում Հովհ. Շիրազին, գրախոսելով նրա երկու գիրքը («Լիրիկա» և «Գիրք խաղաղության և սիրո»), Ս. Կապուտիկյանին («Այս իմ երկիրն է»), Գ. Բորյանին («Երեվանյան լուսաբաց»), Աշ. Գրաշուն («Իմ դարունը»), Պ. Սևակին («Անմահները հրամայում են»), Վ. Դավթյանին («Առաջին սեր»), Ս. Տարոնցուն («Դավթի երգը»), Արշ. Մարգարյանին («Ձնծաղիկներ»):

Բացի վերոհիշյալ հեղինակներից, առանց գրախոսելու առիթը ունենալու, ամսագիրը տպագրել է սովետահայ շատ այլ բանաստեղծների գործերը (Ե. Չարենց, Ն. Զարյան, Մ. Մարգարյան, Հր. Հովհաննիսյան, Վ. Գրիգորյան, Սարմեն և ուրիշներ), որոնք աչքի են ընկնում իրենց թեմատիկ բազմազանությամբ, խոր բովանդակությամբ ու բարձր արվեստով:

Հատկանշական է, որ ամսագիրը, կատարելով իր ընտրությունը և տեղ տալով սովետական հայրենիքը գովերգող ու սովետական կյանքը պատկերող բազմաթիվ բանաստեղծությունների, չի տպագրել այնպիսի գործեր, որոնք իրենց վրա կրում են անհատի պաշտամունքի կնիքը:

<sup>46</sup> «ԱՆԻ», 1947, հ. 3 (15), էջ 125:

## ԱՐՁԱԿԸ «ԱՆԻ»-ում

«Անի»-ի արձակը մեծ մասամբ բաղկացած է պատմրվածքներից: Դա հասկանալի է միջակ ծավալի ամսագրի համար: Ակնարկներ համարյա թե չկան (ընդհանրապես գեղարվեստական ակնարկը, այժմյան հասկացողությանը, արևմտահայ, հետևապես և սփյուռքահայ, գրականության մեջ գրեթե բացակայում է)<sup>1</sup>: Պատմվածքներից բացի, ամսագիրը տպագրել է մեկ ամբողջական վեպ (Սմբ. Փանոսյան—«Որ սրբկալ էին զատված»), մի քանի հատվածների վեպերից, Վահե-Վահյանի «Հարալեզներու հաշտությունը» հայրենական հուշերը, մեկ ամբողջական պիես (Պ. Մասիկյան—«Որբուհիին խաչը»), և փոքր ձևերի մի քանի այլ գործեր՝ չհաշված օտար գրականություններից կատարված մի շարք թարգմանությունները: Ընդարձակ տեղ են գրավում «Անի»-ում և սովետահայ արձակագիրների գործերը:

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը սփյուռքահայ արձակի հիմնական թեմաներից մեկը մնացել էր: Պատերազմից հետո ու մինչև այսօր էլ այդ թեման չի հնացել, թեև արդեն չի գրավում իր նախկին տեղը արձակում: Եվ դա միանգամայն հասկանալի է: Այնքան բացառիկ էր 1915-ի ահավոր փրկումը և այնքան խոր ու ողբերգական հետքեր թողեց այն հայ ժողովրդի հետագա սերունդների կյանքում, որ թերևս դեռ հրկար ժամանակ հայ գրողները անդրադառնան դրան: Որովհետև մինչև այսօր էլ ըստ էության ոչ սփյուռքահայ, ոչ էլ սովետահայ գրականության մեջ չի

1 Տե՛ս Վահե-Վահյան, «Անի», 1949, հ. 5—6 (29—30), էջ 334:



ստեղծվել, կամ, ավելի ճիշտ, չեն ստեղծվել եղեռնի ամբողջ խորություներ և ճակատագրական նշանակությունն ընդգրկող գեղարվեստական բարձրարժեք երկեր, որոնք գեղեցիկ խոսքի մեծագույն ուժով լույս աշխարհ բերեին ու մերկացնեին պատմական այդ սև ոճիրի ողջ էությունը և նրա բոլոր մեղսակիցներին՝ սկսած թուրք ջարդարարներից մինչև գերմանական «քաղաքակիրթ բարբարոսները»։ Միջազգային այս կամ այն պրոբլեմը կամ տերիտորիալ հարցերը ժողովուրդների ոչընչացման գնով լուծելու այդ թեմայի այժմեականությունը չի հնացել նաև մեր օրերում։

«Անի»-ում տպագրված արձակի մի ստվար մասի, այդ թվում և վերը հիշատակված Սմբ. Փանոսյանի վեպի թեման հայկական եղեռնն է, 1915-ի կոտորածներն ու աքսորը և յաթաղանից, սովից ու անապատի ավազուտներից հրաշքով յղատվածների աստանդական կյանքը օտար երկրներում, զանազան քաղաքների «քեմբ»-երում ու որբանոցներում։

Տարբեր մակարդակի գործեր են այդ թեմայով գրված պատմվածքները ամսագրում (Ս. Փանոսյանի վեպի մասին կիսոսենք առանձին)։ Հաջող գործերի կողքին, ինչպես, օրինակ, Լ. Զ. Սյուրմելյանի «Հարց կուտամ ձեզի, տիկիներ ու պարոններ»<sup>2</sup> վեպի երկու հատվածներն են, կան և միջակ ու պատմվածքի գեղարվեստական մակարդակին չհասնող գործեր։ Ալետի մասին եղած գեղարվեստական գրականությունը մեծ մասամբ գրի առնված անձնական հիշողությունների, տպավորությունների, վկայությունների արդյունք է, որ երբեմն, շնորհալի գրչի տակ, դառնում է վեպ կամ պատմվածք, իսկ հաճախ՝ կոտորածների, տեղահանումների ու բազմապիսի բռնությունների մերկ նկարագրություն։ Լայն մասշտաբի, իմաստավորված, հայկական եղեռնը որպես պետականորեն մտածված ու ծրագրված ոճրագործություն ներկայացնող գեղարվեստական երկ, ինչպես ասացինք, մինչև այժմ էլ չի ստեղծվել մեր գրականության մեջ։

«Անի»-ում տպագրված պատմվածքների մի մասում պատկերված են հայերի զանգվածային կոտորածներից ու

2 «Անի», 1946, հ. 1, էջ 32, հ. 8—9, էջ 451։

աքսորից տարբեր դրվագներ: Հեղինակները, քիչ բացառությամբ, իրենց այդ պատմվածքների նյութը վերցնում են Արևմուտյան Հայաստանի այն գավառից (ու անգամ գյուղից), որտեղ իրենք ծնվել ու մեծացել են, և պատկերել են այն դեպքերը, որոնց ակամա վկան ու մասնակիցն են եղել:

Առաջինը, որ աչքի է ընկնում այդ գործերում, կոտորածի ու անլուր բռնությունների նկարագրությունն է՝ հաճախ նատուրալիստական մանրամասնություններով: Ոճրային դեպքերի թողած սարսուցուցիչ ազդեցությունն այնքան մեծ է, խոր ու ճնշիչ, որ երեք տասնամյակ անց էլ հեղինակներից շատ քչերին է հաջողվում բարձրանալ եղելությունից վեր ու դերժ մնալ փաստերի մերկ արձանագրությունից:

Քննարկվող գործերից մի քանիսում հեղինակները պատկերում են նաև հայերի դիմադրությունը, որ առհասարակ եղել է տարերային և միշտ էլ ինքնապաշտպանական բնույթ է կրել (Համբարձում Կաթավյան—«Արսենն ու Նուրին»<sup>3</sup>, Ստ. Շահպաղ—«Իր տունը»<sup>4</sup> և այլն): Չնայած այն բանին, որ դիմադրության փորձերը պատկերելիս հեղինակները այդ և մի քանի այլ գործերում ժողովրդին դուրս են բերում կրավորական վիճակից, այնուամենայնիվ գեղարվեստական հիշվող կերպարներ չեն ստեղծվում, մեծ մասամբ դրանք սխեմատիկ են, անարյուն: Երբեմն հաջողվում է տալ սիրո, փոխադարձ օգնության սրտաշարժ տեսարաններ: Այդ տեսակետից ուշադրավ է Մ. Տեր-Ստեփանյանի «Դժոխքի ճամփան» պատմվածքում Միրիկի ու Վարդուշի անեղծ սիրո ողբերգական պատմությունը:

Մ. Տեր-Ստեփանյանի պատմվածքն ունի մի ուրիշ հետաքրքիր կողմ և, որ երբեմն աղոտ կերպով դրսևորվում է և ուրիշ հեղինակների մոտ. դա գերմանական իմպերիալիստների մեղսակցությունն է հայկական եղեռնին: Հիշյալ պատմվածքում պատկերված է գերմանական երկաթուղային ընկերությունում աշխատող հայերի աքսորը: Ինչպես ասում է հեղինակը, թուրք իշխանությունները իրենց իրավասու-

3 «Անի», 1955, հ. 5 (65), էջ 250:

4 «Անի», 1947, հ. 2 (14), էջ 80:



թյունների մի խոշոր տոկոսը երկրում զիջել էին գերմանական մենաշնորհյալ ընկերությունն ու նրա պաշտոնյաներին, որոնց մոտ աշխատող ամեն մի հայ ենթարկվում էր «...մահին պակաս զրկանքներուն առավելագույնին ու կը հանդուրժեր նվաստացումներուն ամենն նվաստին»...: Երբ օգտագործվում են հայ շինականների ֆիզիկական վերջին ուժերը, գալիս է և նրանց աքսորի ժամը դեպի սպանդ ու անապատները:

Նկարագրելով «գերմանադրոշմ նրբությունամբ» կատարվող տեղահանության այդ գործողությունը, որին ներկա են, թուրք ոստիկաններից բացի, գերմանական ընկերության ներկայացուցիչ ինժեները և տեղացի քրդեր, հեղինակը գրում է.

«Ճնտո Չավուշ, իր վրանին առջև, վայրի տանձենիի մյրունին հենած, ճերմակ պիսակներով իր կարմիր ու խոշոր թաշկինակը ջղայնորեն շարժելով, ողջերթ կը մաղթեր մեզի: Ու երբ Զաքարին հետ կը համբուրվեր անիկա, թաշկինակը տարավ աչքերեն ջրվիժող արցունքներուն: Գոնե մարդկային կարեկից սիրտ մը կու լար մեր հոտեն...»

Քյուրդ-արաբի մը սիրտ էր ան ...Մինչ գերման երկրաչափին դեմքեն արձանային ցրտություն մը կը ճառագայթեր, սառեցնելով բոլոր հույսերը»<sup>5</sup>:

Քուրդ և հայ շինականների բարեկամական զգացմունքների նման արտահայտությունների, իսկ ավելի հաճախ հայ-արաբական բարեկամության պատկերման մենք հանդիպում ենք ամսագրում տպագրված այլ գործերում ևս:

Պատմվածքների այդ շարքը չի սահմանափակվում եղեռնի տարիներով միայն: Զգալի թվով արձակ գործեր պատկերում են եղեռնը վերապրող հայերի ողբերգական վիճակը հետագա տարիներին: Այդ թեմայով գրված հաջող գործերից են Ա. Անդրեսոյանի ու Տ. Վարժապետյանի որբանոցային կյանքին նվիրված պատմվածքները:

Ա. Անդրեսոյանի «Ծնունդի երգը»<sup>6</sup> և «Երկու եղբայրները»<sup>7</sup> պատմվածքներում նկարագրված են հուզիչ պատկեր-

5 «Անի», 1949, հ. 5—6 (29—30), էջ 254:

6 «Անի», 1947, հ. 4 (16), էջ 175:

7 «Անի» 1950, հ. 6—7 (42—43), էջ 309:

ներ Հունաստանում տեղավորված ամերիկյան որբանոցներում ապրող և «...անողոք բանտապահներու քմահաճույքին հնթարկված, կիսաքաղց ու գանակոծված հոգիներով թիապարտներու...»՝ հայ որբերի կյանքից։ Առաջին պատմվածքում պատկերված է որբանոցի տղաների ընդվզումը հույն զինվորների սվիններով պահպանվող ներքին «կարգ ու կանոնի»՝ կամայականության ու խոշտանգումների դեմ, երկրորդում՝ որբ տղաների սրտաշարժ համերաշխությունն ու չոր, մարդկային զգացմունքներից զուրկ ամերիկյան տնօրենը։

Ուշագրավ է և Տ. Վարժապետյանի «Մեծ մարդը»<sup>8</sup> պատմվածքը, որտեղ հեղինակը, հակադրելով միմյանց որբանոցայեցելող երկու մարդու՝ մի հարուստ տուրիստի և բանաստեղծի, ցույց է տալիս, որ անգամ որբերն իրենք լավ հասկանում են, թե մեծ մարդը ցուցամուկ ու մեղշանական իր սնափառությանը հագուրդ տալու համար որբերին մի քանի ինձոր բաժանող հղիացած տուրիստը չէ, այլ հայ բանաստեղծը, որ հոգեկան մի ամբողջ «մշտադալար ու պտղառատ» մրգաստան է նվիրում որբերին։ Այդ բանաստեղծը լինում է Վահան Թեքեյանը։

«Անի»-ի պատմվածքների մեջ զգալի տեղ է գրավում սփյուռքահայ ժամանակակից կյանքն իր բազմապիսի կողմերով։

Հետաքրքիր է ու շատ բնորոշ, որ բուրժուական հասարակության կյանքն արտացոլող այդ պատմվածքներից ոչ մեկում պայծառ չէ ոչ այսօրը և ոչ էլ վաղվա օրը։

Այդ պատմվածքներն աչքի են ընկնում, ամենից առաջ, իրենց պատկերած կյանքի անհեռանկարայնությամբ. նախ՝ օրվա ապրուստն ապահովելու ճնշիչ հոգսերի տեսակետից, որ անընդհատ դառնացնում է հասարակ մարդկանց կյանքը, և, երկրորդ, երբ անգամ հաջողվում է հարատև աշխատանքի ու մեծ զոհողությունների զնով հասնելու բարեկեցության ինչ-որ աստիճանի՝ կյանքում հետաքրքրություն գտնելու, հասարակական բարոյական իդեալներ փնտրելու և առհասարակ պայծառ հեռանկարներ ունենալու տեսակետից։ Այդ

<sup>8</sup> «Անի», 1955, հ. 5 (65), էջ 246։



անհեռանկարայնությունը ավելի է ճնշիչ դառնում նրանց անհայրենիք գոյավիճակի հետևանքով:

Այս շարքի պատմվածքներում պատկերված կյանքը առաջ է բերում հակակրոնություն և ընդվզում բուրժուական, սեփականատիրական կարգերի դեմ, որոնց ծնունդն է այդ կյանքը, և բողոքի զգացում գաղթականական այն վիճակի դեմ, որ ի վերջո նույնպես այդ աշխարհին հատուկ քաղաքական և դիվանագիտական խաղերի արդյունք է:

Սեփականատիրական աշխարհի տխուր բարքերի պատկերմանն է նվիրված Անդր. Անդրեասյանի «Վերջին կայանը»<sup>9</sup> պատմվածքը: Այն սկսվում է կենցաղային մի ոչ արտառուց գեպքով՝ կնոջ դավաճանություն: Քայքայվում է երևութապես հունի մեջ մտած մի ընտանիք: Մանուկը՝ խաբված ամուսինը, թողնում հեռանում է տանից: Երեխաներ չկան ընտանիքում, և թվում է թե ողբերգությունն այստեղ կարող է ավարտվել. Մանուկը երիտասարդ է, առույգ, աշխատասեր: Բայց ոչ. ողբերգությունը նոր է սկսվում: Մեկ անգամ հունից դուրս եկած և աշխատանքը կորցրած Մանուկը այլևս չի կարողանում նորմալ հունի մեջ ընկնել, ամիսներ շարունակ թափառելով Սան-Ֆրանցիսկոյում, չի կարողանում որևիցե աշխատանք գտնել իր համար: Բայց «...կը հուսադրեր ինքզինք. թերևս վաղը բախտը ժպտեր իրեն, որևէ զբաղում հանելով դեմը», մանավանդ որ երկրի պրեզիդենտը «...լավատես գուշակություններ կ'ըներ. ամեն տան՝ երկու ինքնաշարժ, և ամեն սեղանի՝ երկու հավ կը խոստանար»:

Սակայն կապիտալիստական աշխարհն իր դաժան օրենքներն ունի. «Տագնապը ահռելի ուժգնությամբ զարկեր ու քայքայեր էր երկրին տնտեսական կառուցվածքը: Փողոցներուն մեջ կը հանդիպեր իրեն նման թափառող բյուրավոր անգործներու, թափթփված ու մաշած հագուստներով: Անոնց չափիված դժգույն դեմքերը մռայլ ու ծերացած էին անհուսալից, տանջանքի կամ ընդվզումի թախծագին արտահայտություններով»:

Ահա և մի բնորոշ պատկեր մեծ քաղաքի գիշերային անցուդարձից, սեր վաճառող, «ցուրտեն կծկված մենավոր աղ-

9 «Անի», 1949, հ. 11 (35), էջ 56 և հ. 12 (36), էջ 634:

ջիկներու» կյանքից, որ տալիս է հեղինակը մի հակիրճ դիա-  
լոգում.

«— Մասնավոր մեկը մը կըսպասեք, օրիորդ...

— Զէ, տրամադրելի եմ,— պատասխանեց կինը հոգնած  
շեշտով»:

Դառն օրեր են սկսվում անգործ թափառող Մանուկի հա-  
մար: Աստու ընկնելով երկու ավազակների ծուղակը, Մանուկը  
դառնում է նրանց զոհը, բոլորովին միամտորեն ու ակամայից  
մասնակցելով հանցագործության մի ակտի: Հանցագործները  
փախչում ազատվում են, իսկ նա առաջնորդվում է բանտ:  
Բանտային տասնվեց տարուց հետո՝ նորից հին, թափառական  
անգործի վիճակը, «չարագործի» պիտակն էլ վրան: Քանի՞  
անգամ Մանուկին հեռացնում են դժվարությամբ ձեռք բերած  
աշխատանքից որպես նախկին «դատապարտյալի»:

Նա գործում է վերջին ճիգը, սովամահությոնից ազատ-  
վելու համար գնում է ոստիկանատուն ու խնդրում, որ իրեն  
նորից բանտ ուղարկեն: Նրան բանտ չեն ընդունում, թե՛  
օրենքն արգելում է առանց հանցանքի բանտ նետելը: Մա-  
նուկը անիծում է աշխարհը, այն աշխարհը, որ կրակով, սրով,  
անապատների ավազուտների միջոցով լափեց իրենց ողջ գեր-  
դաստանը և հիմա էլ կանգնեցրել է իրեն սովամահ լինելու  
դառն իրականության առջև:

Ուժասպառ, հիվանդ, աշխարհում ոչ մի կարեկից չունե-  
ցող հուսահատ ծերունուն մի բան է մնում անել՝ հրաժարվել  
կյանքից, նզովելով աշխարհը և նրա անարդար օրենքները:  
Ու նա վերջ է տալիս իր կյանքին, բացելով գազի ծորակները:

Ուրախ չէ և Բենիամին Նուրիկյանի «Առասպելական հըս-  
կան»<sup>10</sup> պատմվածքի հերոսների կյանքը: Ահա Ակոբ աղբարը,  
որ «...տարիներով մալ ու մորուք ճերմկցույցեր էր միևնույն  
դործարանին առիքին տակ—ավելը միշտ ձեռքը, սալակն ալ  
միշտ առաջքը»: Կամ Արմենը, որ «վազեր եկեր էր Ամերիկա,  
երեք ծով ու երեք ցամաք կտրելով, ի խնդիր կաթիլ մը յուղի,  
իր հոգիին կանթեղին համար: Եվ անմիջապես հասկացած  
էր, թե այդ յուղը չէր բաշխվեր փողոցներուն անկյունը: Պետք

10 «Անի», 1950, հ. 3 (39), էջ 121:



Լր զայն գտնել քրտինքով և բանտարկությամբը իր պան-  
դուխտ հոգիին—գոնե ատենի մը համար պողպատե ու կրդ-  
մինդրե շենքի մը մեջ, որուն գործարան անունը կուտային  
մարդիկ: Բայց ո՞վ պիտի նշանակեր չափը այդ ատենին:  
Սիրտեն արյուն կը քամվեր ամեն օր, ու կը զգար թե այդ ար-  
յունը գինն է իր հրազին»:

Նույնանման պատկերներ են բացվում մեր առջև և այլ  
արձակ գործերում: Կապիտալիստական դառն իրականության  
մասին են խոսում Ստեփան Շահապզի մի քանի պատմվածք-  
ները: Այդ դառնությունը ճաշակում է փոքրիկ Հերմինեն իր  
ծնողների հետ միասին, լոկ այն պատճառով, որ «գարսոնի»  
աղջիկ է («Դատապարտյալ ծնողները») <sup>11</sup>, անգործ և ուղե-  
կորույս զավակների մայր, սպասուհի Մարիամը («Երկու  
մանչերու մայրը») <sup>12</sup>, երիտասարդ փեսացուն («Մեռած  
մարդը»՝ «Ամեն տեղ կա խենթ» շարքից) <sup>13</sup>, որ հրաժարվում է  
իր հարսնացուից, որովհետև սակարանն ընկել է ու ինքը սնան-  
կացել: Հետաքրքիր են այդ երիտասարդի խորհրդածություն-  
ները փողի մասին. «Հոն..., զոր երկինք կը կոչեն, կապրին  
եղեր առանց դրամի, բայց հոս, վարը, հողին վրա, հոս՝ ծա-  
ղիկներուն ու մարդոց մեջ, աղջիկների և կիներու հետ, դրամը  
կյանքն է, կյանքը դրամն է: Երբ ջուրը ցամքի՝ հողը, ծաղիկը,  
ծառը, լեզուն, կիները կը չորնան. ուստի, երբ դրամն ալ  
ցամքի՝ մարդը կը չորնա, միտքն ալ, ձեռքն ալ, արյունն ալ,  
սիրտն ալ հետը: Անխուսափելիորեն: Դրամ են՝ օդը, ջուրը,  
արևը, լուսինը, հողը, սերը, մահը: Դրամ ենք դուն ալ, ես ալ:  
Առանց դրամի ոչնչություն կա միայն: Աշխարհը խավար է  
առանց դրամի»:

Տրդատը, սակայն, դրանց մեջ, «բախտ» ունի (Ստ. Շահ-  
պազ—«Տրդատին լախտը») <sup>14</sup>, որովհետև փող ունի: Բայց ո՞ր  
մարդը կը նախանձի նրա «բախտին», ո՞վ կհամաձայնի տի-  
րանալու այդպիսի բախտի՝ սիրուց, գեղեցկից և մարդկային  
վեհ զգացմունքներից հրաժարվելու գնով:

11 «Անի», 1946, հ. 8—9, էջ 458:

12 «Անի», 1949, հ. 4 (28), էջ 201:

13 «Անի», 1950, հ. 8 (44), էջ 456:

14 «Անի», 1948, հ. 12 (24), էջ 637:

Ոչ էլ նախանձելի է Արտաշեսի ճակատագիրը՝ Լ. Դարբինյանի (Իրան) համանուն պատմվածքում<sup>15</sup>։ Ողբերգական կամ արտառոց ոչինչ տեղի չի ունենում նրա միալար, որևէ հետաքրքրությունից զուրկ տաղտուկ կյանքում։ Բայց այդ տաղտուկությունն ինքը ողբերգություն է, որ զգում է շարքային ծառայող Արտաշեսը։ Տասնյակ տարիներ մի կտոր հացի համար հավատարմորեն ծառայելուց հետո, կյանքի վերջում շատերի նման նա ևս հանգում է այն եզրակացության, թե «գործատիքը կեղծ բարեպաշտություն է փարում եկեղեցուն, կրոնին։ Խոսում է նա մարդկային իրավունքներից, արդարամտությունից, սակայն այդ պիտակի տակ թաքուն, դիվային ծրագրեր է որոճում՝ ուրիշների աշխատանքի ու զրկանքի դնով իր միլիոնները բաղմապատկելու»։

Ոչնչով չի տարբերվում Մերձավոր արևելքի հայ աշխատավորների կյանքից և ֆրանսահայերինը, առնվազն նրանցից շատերի։ Ամսագրում ֆրանսահայերի կյանքն է պատկերում իր մի քանի պատմվածքներում Զարեհ Որբունին։ Տիպական է նրա Արմենը՝ «Օտարականը»<sup>16</sup> պատմվածքում։ Նա եղբունի տարիներին կորցրել է ծնողներին, մանկությունն անց է կացրել որբանոցում, ուր «հիվանդությունը պղտիկներին ուռեցնելով կը մեռցներ»։ Տարիներ հետո, այնուամենայնիվ, նա կարողացել է ստեղծել իր օջախը, ունենալ իր փոքրիկ ընտանիքը։ Բայց երջանկություն չի գտել։ Անգամ իր սեփական տանը նա իրեն մենակ է զգում, որպես օտարական, որովհետև նա երազ չունի ու չի ունեցել, որովհետև կյանքը դեռ մանկուց խել է նրանից երազելու մարդկային երջանկությունը։ Երազելու ուրախությունը նա չի վերագտել և իր նոր շրջապատում։ Ու նա մենակ է և ապրում է հոգեկան այդ մենակության ողբերգությունը։ «Ես միևնաչափ եմ, և իմ մեջս ոչ մեկ երազ կա...»։

Կյանքի դժվարությունների տակ ճնշված և ըստ էության անհեռանկար մարդիկ են Զ. Որբունու «Հանուն տառապան-

15 «Անի», 1955, հ. 5 (65), էջ 262։

16 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 6։



բին»<sup>17</sup>, «Շառլոտյական»<sup>18</sup>, «Մարդը, որ անցյալ շուներ»<sup>19</sup>, ինչպես և «Անձրևոտ օրեր»<sup>20</sup> պատմվածքների գործող անձինք: Տխուր է նրանց կյանքը, միօրինակ ու ձանձրալի, ամենօրյա հոգսերի ու ապրումների տաղտուկ ցանցում կաշկանդված: Ոչ մի հետաքրքրություն դեպի հասարակականը, հանրայինը, չըջապատը:

Այդպիսին է շարքային մարդկանց կյանքը, բայց ավելի ուրախ չէ նաև մտավորականների վիճակը:

Ամսագիրն իր 1954 թվականի երեք համարներում տպագրել է Զ. Որբունու «Օրագիր»-ը: Դա նորա քաղաքից-քաղաք թափառումների օրագրությունն է: Չնայած որոշ ավելորդ մանրուքներին, «Օրագիր»-ը կարդացվում է հետաքրքրությամբ: Սակայն ուշագրավը սփյուռքահայ մտավորականի (տվյալ դեպքերում հեղինակի) այն վիճակն է, որի պայմաններում նա ստիպված է աշխատել (ապրուստ հայթայթել) և միաժամանակ ստեղծագործել: Հարցը նյութական բարեկեցության աստիճանը չէ միայն, այն կարող է երբեմն և բարձր լինել: Կարևորն այն է, որ, ինչպես գրում է Զ. Որբունին, գրողը, արվեստագետը նյութականի համար ստիպված է ծախսել «...օրական տասնվեց ժամ աշխատանք»: Մտավորականի, ստեղծագործող մարդու համար սա ուժերի չափազանց շռայլ վատնում է:

Սփյուռքահայ արձակի կարևոր թեմաներից մեկը ծովման, կամ, ինչպես երբեմն գործ են ածում արևմտահայերը, ուծացման պրոբլեմն է, որն իր արտացոլումն է գտել նաև «Անի»-ի արձակում:

Նոր չէ այդ պրոբլեմը: Այն սկիզբ է առել դեռ այն ժամանակներից, երբ հայ շինականը, գործավորը, արտաքսվելով իր հարազատ երկրից, դարձավ «ավազի հատիկ մը... բազմամիլիոն ժողովուրդներու ծավալուն տարածքին մեջ»:

Սփյուռքահայ գրականության մեջ ծովման պրոբլեմը իր դեղարվեստական ցայտուն արտահայտությունը գտել է Շա-

17 «Անի», 1946, հ. 2, էջ 59:

18 «Անի», 1951, հ. 10 (46), էջ 535:

19 «Անի», 1955, հ. 5 (65), էջ 235:

20 «Անի», 1951, հ. 11—12 (47/48), էջ 591:

հան Շահնուրի «Նահանջը առանց նրդի» հայտնի վեպում: Այնուհետև սփյուռքահայ գրականությունը, իսկ ավելի հաճախ՝ հասարակական-քաղաքական մամուլը բազմիցս անդրադարձել են այդ հարցին: Մեր օրերում այն ցած չի իջնում ընդհանրապես մամուլի էջերից, որովհետև ձուլման վտանգը, մանավանդ նոր սերնդի մեջ, ավելի վտանգավոր մասշտաբներ է ընդունել:

Սակայն պետք է նշել, որ ձուլման պրոբլեմը լայն տեղ չի դրավել «Անի»-ի էջերում, զիջելով առաջնությունը այնպիսի ոգևորիչ թեմաների, ինչպես հայրենասիրությունն է ու հայրենադարձը, և այնպիսի հասարակայնորեն հրատապ հարցերի, ինչպես աշխատավոր մարդկանց վիճակն է ու սոցիալական պայքարի թեման: Սա միանգամայն օրինաչափ է ու բնորոշ «Անի»-ի ու նրա դավանած գրական-գեղագիտական հայացքների համար:

Ասիմիլյացիայի թեմային է նվիրված Արմեն-Շիրակի «Խնդիրը»<sup>21</sup> պատմվածքը: Սիմվոլիկ այդ վերնագիրը (Խնդիր) տղայի անուն է, որ 1915-ի եղեռնին մի կերպ փրկվում է արյունալի ջարդից, սակայն հետո, մեկնելով Ամերիկա, կույ է գնում սպիտակ ջարդին<sup>22</sup>, օտարանում, հեռանում է իր ժողովրդից:

Ամենից ավելի ձուլման պրոբլեմին անդրադարձել է Տիգրան Վարժապետյանն իր պատմվածքներում, որոնց նյութը նա վերցրել է առավելապես ամերիկահայ կյանքից: Այդ գործերից են նրա «Քիլիմանջարո»<sup>23</sup>, «Աղբյուր գիտե՞ս»<sup>24</sup>, «Մյուս ափը»<sup>25</sup> պատմվածքները: Վերջինս ավելի ուշագրավ է. այնտեղ բխվում են երկու աշխարհ՝ արևելյան—հայկականն իր ազգային-սոցիալական սովորություններով, հոգեբանությամբ ու ավանդություններով, և արևմտյան-ամերիկյանը իր չոր հաշվենկատությամբ, էգոիզմով, երբ մարդը իր սեփական

21 «Անի», 1952, հ. 2 (50), էջ 90:

22 Ի տարբերություն հայկական արյունալի կոտորածների՝ կարմիր ջարդի, սփյուռքահայ մամուլում սպիտակ ջարդ է անվանվում ասիմիլյացիան, ձուլման պրոցեսը:

23 «Անի», 1950, հ. 1 (37), էջ 30:

24 «Անի», 1950, հ. 8 (44), էջ 438:

25 «Անի», 1949, հ. 8 (32), էջ 409:



բարեկեցության ու հանգստի համար ոչ միայն հրաժարվում է իր ժողովրդից ու լեզվից, այլև ուրանում է անգամ իր հարս-  
դատ մորը:

Այդ պատմվածքների դրական կողմն այն է, որ նրան-  
ցում չկա ուրիշ ժողովուրդների արժանապատվությունը նսե-  
մացնող որևիցե բան կամ հայկականը ուրիշ ազգերից վեր  
դասելու տենդենց: Պատկերվածը ողբերգական ճակատագիրն  
է հայ ժողովրդի այն զավակների, որոնք իրենց կամքից ան-  
կախ ընկնելով օտար միջավայր, տեղի են տալիս ու կամա թե  
ակամա հրաժարվում դարերից եկող և բազում սերունդների  
ջանքերով սրբագործված մայրենի լեզվից ու մշակույթից:

Ինքնին հասկանալի է, որ այս պատմվածքները լավա-  
տեսությամբ չէ որ շնչում են: Դրանք գեղարվեստական պատ-  
կերների միջոցով արձանագրում են փաստերի իրական վի-  
ճակը, ընդգծելով երևույթի ժխտական արդյունքները: Երկ-  
րորդ պլանում, որպես ֆոն, քննադատվում է իմպերիալիս-  
տական քաղաքականությունը, որ դուրս բերելով փոքր ժողո-  
վուրդներին իրենց զարգացման բնականոն հունից, ուղղակի  
կամ անուղղակի ճանապարհներով թելադրում է ուժեղի  
կամքը, լեզուն, սովորությունները, բարքերը:

Այլ է պատկերը արձակի այն գործերում, որոնց թեման  
հայրենիքն է ու հայրենադարձությունը: Այդ գործերի թիվը  
մեծ է ամսագրի թե հայրենադարձի և թե հետագա տարիների  
համարներում: Դրանցից յուրաքանչյուրը տոգորված է հայրե-  
նիքի սիրով ու կարոտով, լավատեսական է իր խորքով, հու-  
սազրիչ, ոգևորող:

Այդ զգացումները լավ են արտահայտված Պետրոս Լամ-  
պանյանի «Սիրեկանիս մոտ»<sup>26</sup> պատմվածքում, որ գուցե և  
ճիշտ լինեք անվանել ակնարկ: Օտարություն մեջ ապրող, պա-  
տերազմի արհավիրքների բովով անցած պանդուխտ հայր՝  
կլանված հայրենիքից եկած գիտնականի պատմածներով,  
սիրահարի նման չի զգում, թե ինչպես է անցնում գիշերը:

«Եվ մենք հայրենիքի կարոտով լեցված, մենք՝ կրկնա-  
պես պանդուխտներս, հիացումով ու զարմանքով կը լսեինք

26 «Անի», 1946, հ. 1, էջ 39:

այդ առաքյալին «արևահամ» խոսքերը: Անոր ձայնը հայրենի աղբյուրներուն գլգլան հրգը ուներ իր մեջ: Քաղցրորեն հանձնելով այդ հրգի ալիքներուն, երանելի ինքնամոռացմամբ մը, փոխադրված էինք հայրենիք: Տարբեր օդ մը կխուժեր մեր թոքերեն ներս: Օդ մը՝ թեթև, բուրումնավետ: Մեր կբաժ ուսերեն, աներևույթ բայց ճշդի՛շ ծանրություն մը վար էր ինկեր»:

Այս ակնարկ-պատմվածքի ոգին է տիրում և ամսագրում տպագրված մյուս այն բազմաթիվ գործերում, որոնց թեման հայրենիքն է, հայրենիքի կարոտալի սերը, արտահայտված ամենատարբեր ձևերով ու պատկերազարդված կյանքից վերցրած տիպական բազմաթիվ փաստերով:

Սովետական Հայաստանի գոյությունը, նրա պայծառ իրականությունը ինքնավստահություն է ներշնչում սփյուռքում ապրող հայերին, որոնք ամենաբարյացակամ շրջապատում էլ շատ անգամ մնում են «եկվորի», «օտարի» գոյավիճակում, և եթե միշտ չէ որ այդ բանը հիշեցնում են նրանց, ապա հիշեցնելու վտանգը շարունակ մնում է: Մեր հիշատակած այդ ինքնավստահությունը լավ է արտահայտված Միհրան Տեր-Ստեփանյանի «Արմինիան» կոնակս է...»<sup>27</sup> պատմվածքում, որի հերոսը իր ամենից խոր հուզումը իր հիսնամյա կյանքում ապրում է այն պահին, երբ ոեալ կերպով զգում է թե հայրենիք ունի և այդ հայրենիքը կարող է տեր ու պաշտպան կանգնել իրեն: Աշխատանքից վտարվելու, անգործ մնալու վտանգը՝ ժամանակակից սեփականատիրական աշխարհի այդ պատուհասը՝ այլևս ահալոր չէ նրա համար.

«—Ընկերներ՛ր, գացեք ըսե՛ք այդ մարդուն, իրմե մեծի՛ն ալ և բոլորի՛ն, թե ես պաշտոնազրկությունն չեմ վախնար... «Արմինիան» կոնակս է... «Արմինիան»: Չե՛ք լսած իր մասին... Ուրեմն լսեցեք... Երկու հարյուր միլիոննոց եղբայրական զանգվածի և աշխարհի մեկ վեցերորդ մասին հենած «Արմինիա՛ն», ի՛մ հայրենիքս... Սովետական Հայաստանը... Դուք ըսեք՝ «էրիվա՛նը» դիս կը կանչե...»:

Հայրենիքի կանչը՝ ներգաղթը, խոր ներգործություն ունեցավ ամբողջ սփյուռքահայության վրա և հիմք դարձավ գրա-

<sup>27</sup> «Անի», 1946, հ. 3, էջ 126:



կան բազմաթիվ ստեղծագործություններ: Այստեղ չի կարելի չնշել այն ջերմ խոսքը, որ նվիրեց ամսագիրը հայրենիք ուղեվորվող ներգաղթողների առաջին քարավանին: Մեկ էջանոց այդ հոդվածը<sup>28</sup> կարդացվում է որպես արձակ բանաստեղծություն:

Ժամանակը, գրում է «Անի»-ն, մնացել է ապշահար այդ երևույթի իմաստի ու ծավալի մեծության հանդեպ: Փոխվում է հայ ժողովրդի պատմությունը, որ գրված էր արյունով ու արցունքով: «Սկիզբ կառնե պատմություն մը ուրիշ՝ որուն էջերուն մեջ արեւ պիտի դա բնակիլ, և պիտի ըլլա անիկա շողարձակ, ժպտուն, հպարտ»:

Ներգաղթի թեմայով գրական լավագույն գործերից մեկը ամսագրում Գեղամ Սեանի «Ներգաղթը»<sup>29</sup> պատմվածքն է: Այնտեղ գեղարվեստական ճշմարտացի խոսքով վերարտադրված են այն հուշերն ու ապրումները, որոնք փոթորկում են Ստամբուլում ապրող հայ երիտասարդների սրտերը: Ետպատերազմյան տարիներն են: Թուրքական իշխող շրջանակները և պաշտոնական գաղափարախոսությունը անում են ամեն ինչ, որպեսզի մոռացնել տան հայերին (ինչպես նաև հույներին և ազգային ուրիշ փոքրամասնությունների) իրենց մայրենի լեզուն, մշակույթը, ավանդությունները, ազգային ինքնությունը: Ավելին. ստեղծում են այնպիսի մթնոլորտ (այդ թվում և թուրք երիտասարդության համար), որ նրանք, ինչպես հեղինակն է ասում, երկաթառե վարժությամբ կորցրնեն իրականության գիտակցումը և իրենց կարծեն ազատ՝ բռնության այդ երկրում:

Բայց դեմոկրատական ուժերի ջախջախիչ հաղթանակը երկրորդ համաշխարհային պատերազմում բացեց շատերի աչքերը: Ազատության տենչը «...դարձավ փոթորիկ մը, որոն պիտի անդոր մնացին թրքական գրաքննությունն ու ոստիկանությունը»:

Ահա ազատության այդ տենչի ու բռնության միջև ծագած

<sup>28</sup> Վահե-Վահյան, «Խոսք ողջերթի», «Անի», 1946, հ. 3, էջ 160:

<sup>29</sup> «Անի», 1950, հ. 6—7 (42—43), էջ 328, հ. 8 (44), էջ 428, 1951, հ. 9 (45), էջ 484:

կոնֆլիկտն է՝ ներգաղթի ֆոնի վրա, որ իր պատմվածքի հիմքն է դարձրել հեղինակը:

Երիտասարդների հայրենաբաղձության մասին է պատմում և Արմեն Դարյանը իր «Միք, մեր սիրելի ընկերը»<sup>30</sup> պատմվածքում, նկարագրելով դժվարությունների դեմ տարվող պայքարի այն համառ հետևողականությունը, որը ի վերջո հասցնում է Միքին (Միքայելին) իր անձկալի նպատակին՝ հայրենիք մեկնող նավը բարձրանալուն:

Այլ կոնֆլիկտ է բացվում ընթերցողի առջև Հ. Գոշի (Չգրըզձյան) «Անավարտ սեր...»<sup>31</sup> պատմվածքում: Երկու սիրող սրտերի՝ Արփինեի ու Գրիգորի միջև պատահելովում է ներգաղթի պրոբլեմը: Դժվարին երկընտրանքի առջև կանգնած Արփինեն քաջություն է ունենում վճռականություն հանդես բերելու և ղոհելու իր սերը հանուն հայրենիքի, հանուն հավաքական սիրո:

«— Ուրիշ բան չէ՛ այս... հայրենի՛ք է, — ասում է նա Գրիգորին, — որուն՝ քեզի պես սիրելիները շատ սիրով կը ղոհեն, ամեն երկինքի տակ...»:

Գրիգորը ծանր ապրումների մեջ է: Նրա «...հայրը, քիչ մը շատ քաղքենի, հայրենիքին համը՝ անոր հողեն, ջուրեն ու սեփական ժողովուրդեն զգալու անկարող... մեկ խոսքով՝ քիչ մը շատ վաճառական ու դրամը մարդուն տեղ առնող, չի խանդավառվիր հայրենիքով»: Այդ վաճառականի համար «հացին գտնված տեղն է հայրենի՛քն ալ, մայրենի՛քն ալ»:

Ընտանիքով հայրենիք վերադառնալու հեռանկար չունի Գրիգորը: Նա նույնպես երկընտրանքի առջև է կանգնած. կամ հայրենիք ու սեր, կամ ծնողները: Նա լավ ձայն ունի, նրա երազն է մշակել իր ձայնը հայրենիքում: Եվ ահա, այդ երկու քնքուշ սերերը՝ հայրենիքի ու Արփինեի՝ կոփում են նրա կամքը. վերջին պահին, «հակառակ խիստ հսկողության», նա թափանցում է նավը, «վերածելով կյանքը նպատակի», դարձրնելով այն նպատակային:

Մենք խոսեցինք այստեղ մի քանի պատմվածքների մասին միայն: Հայրենադարձի թեմայով մյուս գործերը ևս ուշա-

30 «Անի», 1947, հ. 4 (16), էջ 189:

31 «Անի», 1948, հ. 9—10 (21—22), էջ 489:



զրաւ շատ բան ունեն իրենց մեջ: Հայկական յուրաքանչյուր գաղութ կյանքի իր ուրույն պայմաններն ունի և իր ուրույն մթնոլորտը, և պանդուխտ հայերից յուրաքանչյուրը՝ իր հոգսերը, իր ուրախութիւնն ու վիշտը, իր դժվարութիւններն ու հեռանկարները:

Հայրենադարձութեան հարցը հաճախ բարդ իրադրութիւնների առջև է կանգնեցնում նրանց, առիթ տալիս մեծ ու փոքր բաղմապիսի բախումների: Այդ կոնֆլիկտներից մեկը մարդկանց մեջ արմատացած սեփականատիրական զգացմունքների և հայրենասիրական զգացմունքի հակադրութիւնն է, ըստ որում ամեն անգամ չէ, որ հաղթող է դուրս գալիս հայրենիքի սերը:

Անդրանիկ Սարգսնի (Իրան) պատմվածքում («Քեռի Զավենը մնաց...»<sup>32</sup>) վաթսուամյա գյուղացին դժվարանում է հունձը չարած մեկնել հայրենիք. նրա մեջ շատ ուժեղ է սեփականատիրական զգացմունքը: Ամբողջ գյուղը դատարկվում է, մնում է միայն նրա ընտանիքը, մեն մենակ: Այդ անվճռականութիւնն էլ պատճառ է դառնում նրա ողբերգական վախճանին:

Ավելի ուժեղ է արմատացած սեփականատիրական զգացմունքը Ս. Փանոսյանի «Ինքզինք ողջ-ողջ խորովեց...»<sup>33</sup> պատմվածքի հերոս Քերոբ Պեպոյի մեջ: Հակադրվելով կնոջն ու ավագ որդուն, որոնք անդրդիւիորեն որոշել են հայրենիք մեկնել, Քերոբ Պեպոն, կապված լինելով իր հողակտորին (այգուն) և անցյալի հիշատակներին, ոչ մի կերպ չի հաշտվում դրանցից հրաժարվելու մտքի հետ: Նա չի բարձրանում փոքրը, ժամանակավորը ավելի վսեմին, հպատակայինին զոհաբերելու գիտակցութեան: Իր սուր կոնֆլիկտը ընտանիքի հետ հասցնում է Քերոբ Պեպոյին ինքնասպանութեան:

Անդրադառնալով վերոհիշյալ պատմվածքին, Վահե-Վահյանը իր մի գրախոսականում գրում է, որ այն «...կը բանա նոր էջ մը իր (Սմբ. Փանոսյանի—Մ. Բ.) գրականութեան մեջ: Կը պարտովի, կը փլչի, կը մեռնի հինը՝ մարդկորեն հասկնալի ու հուզիչ իր տրամութեամբ, իսկ նորը կը բարձրա-

32 «Անի», 1949, հ. 10 (34), էջ 523:

33 «Անի», 1947, հ. 2 (14), էջ 65:

նա, իր դիմե իր փրկության, Հայրենիքի ձայնն կանչված»<sup>34</sup>:

Հայրենադարձության հարցերին նվիրված մի շարք այլ գործերում պատկերված են այն համառ անհատները, որոնք իրենց կարծրացած սահմանափակության կամ հայրենիքի շուրջը տարածվող թշնամական լուրերի ազդեցության տակ ոչ մի կերպ չեն կարողանում ազատագրվել հին նախապաշարումներից և անգամ անտարկելի փաստերի դեպքում էլ համառում են ընդունել իրենց սխալը:

«Անի»-ի արձակի մի զգալի մասը նվիրված է կապիտալիստական աշխարհի բարքերի ու կենցաղի պատկերմանը, բարձրացնում է սոցիալական անարդարության ու սոցիալական պայքարի հարցեր: Դա միանգամայն համապատասխանում է ամսագրի կողմից զբաղանության ակտիվ դերն ընդունելու և որդեգրելու մեր նշած սկզբունքներին: Մյուս կողմից ցույց է տալիս և՛ սփյուռքահայ առաջադիմական զբաղանության անվիճելի աճը:

Պատմվածքների մի խումբ բուրժուական աշխարհի այս կամ այն ստվերախիտ կողմի սոսկական նկարագրությունն է տալիս: Տիրապետողն այդ գործերում հեղինակների հայեցողական մոտեցումն է երևույթներին, բայց այդ վիճակում էլ դրանք զուրկ չեն դեղարվեստական ներգործության որոշ ուժից:

Տգեղ, ժպիրհ բարքերի մի պատկեր է ստեղծել «Աղջնակը շուքին մեջ...»<sup>35</sup> պատմվածքում Սմբ. Փանոսյանը, տալով հեռապատկերը այն ողբերգության, որ սպասում է դեռևս արբունքի չհասած ու «աղաչի ողորմածությանը» ենթակա մի աղջկա: Նույն հեղինակի մեկ ուրիշ պատմվածքում («Պատուհաս»)՝<sup>36</sup>, արևելյան հետամնաց կենցաղի նկարագրության հետ մեկտեղ, տրված է և՛ հարուստի գծծության մի տիպական օրինակ:

Սեփականատերի հոգեբանական հաջող կերպար է Վա-

34 «Անի», 1949, հ. 10 (34), էջ 560:

35 «Անի», 1948, հ. 1 (25), էջ 5:

36 «Անի», 1948, հ. 11 (23), էջ 562:



րութան Աճեմյանի «Մտերիմ ռազմավարություն»<sup>37</sup> պատմը-  
վածքի հերոս Սահակը: Հարստանալու զարմանալի տենչ կա  
նրա մեջ: Եթե ուրիշները հարստանալով հաճախ ամբարտա-  
վանանում են, նա միայն լաց է լինում ու զանգատվում: Եվ որ-  
քան բազմապատկում է հարստությունը, այնքան ավելի է  
տրտնջում ու դժգոհում կյանքի դժվարություններից:

Բուրժուական իրականության հարազատ մի պատկերն է  
ուրվագծված Զարեհ Որբունու «Ավանդություն մը»<sup>38</sup> պատմը-  
վածքում: Նրա հերոսը խոշոր դագաղագործ Գարլինն է, որ  
«տնտեսական գեշ ժամանակներուն» մեջ, երբ «ողջերը այն-  
քան էլ ձեռնտու չեն առևտուրին», կարողանում է ճարպիկ-  
որեն ու հաջողությամբ առաջ տանել իր գործը, քանզի «մահը  
կարելի չէ կասեցնել իր ընթացքին մեջ, իսկ մեռելները ան-  
կարելի է թաղել առանց դագաղի»:

Ա. Ալիքյանի («Զհաց մեր հանապազորդ»<sup>39</sup> և Հայկ Գու-  
յումճյանի («Մղձավանջ»<sup>40</sup>) պատմվածքները նվիրված են  
գործազուրկների կյանքին: Եթե առաջինում համակերպում  
կա և հույսի «կապույտ դրոշ» միայն, ապա երկրորդում տի-  
րապետող մոտիվը բողոքն է, ըմբոստությունը, երբ իրակա-  
նության ծանր հարվածների տակ գիտակցվում է կյանքի անի-  
րավությունը և հնարավոր է դառնում անհատական ողբեր-  
գության միջից տեսնել ընդհանուր անարդարությունը: «Ու  
բաց իր աչքերուն առջևն անցան անոնք որ կը խճողեն ճամ-  
փաները, իրենց անոթի վայրույթը կ'անցընեն պողոտաներն:  
Գիտցավ թե ինք չէր առանձին: Եվ այդ մտածումին հետ՝ ուժի  
հոսանք մը անցավ իր մեջն: Զգաց թե բազուկները կը պրկի-  
վեն և իր բարի ձեռքերը կը շինեին կարծր կոտփներ»:

Նույն այդ գաղափարն է համակում և Ա. Դարյանի «Եր-  
ջանկությունը»<sup>41</sup> պատմվածքի հերոսին՝ գործազուրկ գրաշա-  
լին, որի կարող բազուկները անիրավորեն անգործության են  
մատնվել: Որպեսզի այդ բազուկներն իրենց իրավունքին տի-

37 «Անի», 1951, հ. 9 (45), էջ 480:

38 «Անի», 1952, հ. 1 (49), էջ 4:

39 «Անի», 1947, հ. 11, էջ 574:

40 «Անի», 1949, հ. 3 (27), էջ 134:

41 «Անի», 1948, հ. 12 (24), էջ 628:

րանան, մտորում է պատմվածքի հերոսը, տոկունություն է պետք ու պայքար:

Ավելի լայն ընդգրկում ունի Ա. Դարյանի մեկ ուրիշ՝ «Կաղանդի գիշերը»<sup>42</sup> պատմվածքը: Հիմնականում դա մի ֆրանսուհու՝ տիկին Ժյուլիենի ձախողված կյանքի տխուր պատմությունն է, որ անում է նա նոր տարվա գիշերը (մի տեղ, Մերձավոր արևելքում), սեղանի շուրջը հավաքված հայ երիտասարդներին, ի տես այն սոսկալի հակասության, որ կա մի կողմից փոքրաթիվ անհատների ճոխ սեղանի և ճնշող մեծամասնության աղքատիկ նոր տարվա միջև: Տիկին Ժյուլիենի հանգում է այն եղրակացության, որ ապրելը պարտականություն է միայն, այլ և ամեն անհատի իրավունք, իսկ «...երջանիկ ապրիլը՝ ավելի զորեղ ու ճշմարիտ իրավունք մը», և ինքը «...վստահ է թե պիտի դա օր մը, ուր կաղանդին բարիքները պիտի չլլան մենաշնորհը քիչերուն, թե՛ շաբաթվան հասարակ օրերն անգամ պիտի ըլլան կաղանդի մը ավելի տոնական, և այն ատեն՝ երջանկությունը ոչ երազ պիտի ըլլա ոմանց համար, և ոչ ալ դրամով պիտի վաճառվի ուրիշներուն...»:

Հետաքրքիր է պատմվածքում այն զուգահեռը, որ անց է կացնում հեղինակը հայ երիտասարդների ու նրանց սեղանակից դարձած Ժյուլիենի միջև: Այն դեպքում, երբ վերջինս հրաժարվում է իր հայրենիքը՝ Ֆրանսիա վերադառնալու մտքից (ուր նա այնքան դառնություն է տեսել), հայ երիտասարդների համար երջանիկ ապագայի միակ հույսը է՝ և մնում է իրենց սիրելի հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Ողջիտական թեմային և բուրժուական բարքերի պատկերմանը ավելի հաճախ անդրադառնում է ամսագրում տպագրած իր պատմվածքներում արձակագիր Գեղամ Սևանը:

Սեղմ են, դիպուկ ու պատկերավոր նրա պատմվածքները: Յուրփառանշուրը դրանցից կարծեք կյանքի մի կենդանի բեկորն է իր ուրույն կոլորիտով, իր մարդկանցով ու նրանց ապրումներով, սերերով ու տառապանքներով: Եվ որովհետև այդ պատմվածքների նյութը վերցված է սեփականատիրական աշ-

42 «Անի», հ. 9—10 (21—22), էջ 481:



խարհի ամենահետամնաց անկյուններից մեկի՝ Թուրքիայի առօրյայից, որտեղ ծնվել է հեղինակն ու անցկացրել իր երիտասարդության ամենից ավելի տպավորվող տարիները, հասկանալի պատճառով նրանցում գերակշռում են ծանր կյանքի ու տառապանքների պատկերները: Այդպիսին են «Ակդեոր Հասանը», «Մատաղը», «Հազարին կեսը», «Գործողության մը փոխարժեքը», «Էֆենդին», «Արծաթի պտղամանը» պատմվածքները, որոնք տպագրված են 1950—1954 թվականների համարներում:

Այդ պատմվածքներում Գ. Սևանը վերարտադրում է, ժողովրդի կենցաղի հետ միասին, բուրժուական իրականության հուռի կողմերը, ստեղծելով շահագործման, խաբեության, մոլթ արարքների ու կեղտոտ բարքերի տպավորվող պատկերներ, որոնք կարծես ամբողջությամբ ու անփոփոխ վերցված լինեն կյանքից: Հեղինակի հմտորեն ուրվագծված հերոսները հոգեբանական տեսակետից պարզ կերպարներ են: Նրանք բնկալում են կյանքն այնպես, ինչպես այն կա, առանց հոգեկան բարդ ապրումների, առանց խորանալու երևույթների ու նրանց պատճառների մեջ:

Կյանքի մեկ ուրիշ մոայլ կողմը, որոշ շրջանների ազգային խտրականության դատապարտելի վարքագիծն է բացահայտված ու դատապարտված հեղինակի «Կյավուր Պետրի» և «Ունեորության տուրքը» պատմվածքներում: Սակայն թուրքական իրականության այդ ընդհանուր մոայլության մեջ էլ կան լուսավոր կետեր, և դա Լազ Մուստաֆայի պայծառ կերպարն է («Լազ Մուստաֆա»<sup>43</sup>), կյանքի և ճշմարտության իր սիրով, պայքարով ու ապագայի իր անընկճելի հավատով:

Այդ լուսավոր դեմքերից են և այն ազատասեր երիտասարդները, որոնց պատկերել է Գ. Սևանը իր «Սև ծովը նույնն է միշտ»<sup>44</sup> պատմվածքում, հակադրելով պաշտոնական, կեղծ, ոստիկանական «հայրենասիրությանը» երիտասարդ, առաջադեմ թուրք երիտասարդների մաքուր, իսկական հայրենասիրությունը:

43 «Անի», 1950, հ. 2 (38), էջ 33:

44 «Անի», 1952, հ. 3 (51), էջ 124 և հ. 4—5 (52—53), էջ 188:

Գ. Սևանի պատմվածքները ամսագրի արձակի ամենա-  
հաջող էջերից են<sup>45</sup>;

«Անի»-ն իր գեղարվեստական արձակի մի քանի գործե-  
րում անդրադառնում է իմպերիալիզմի վարած քաղաքակա-  
նությունը դադութային կամ կիսանկախ երկրներում և ռա-  
սիզմի հարցերին:

Ֆրանսիական իմպերիալիստական շրջանների ոտըն-  
ձգություններին է նվիրված Մ. Տեր-Ստեփանյանի «Փախ-  
վախը՝ մահվան առջև»<sup>46</sup> պատմվածքը: Այս և արձակի մի  
շարք այլ գործեր շեշտված հրապարակախոսական բնույթ  
ունեն: Այդ հանգամանքը սակայն չի թուլացնում նրանց ներ-  
գործուն ուժը, այլ որոշ իմաստով ավելի է շեշտում ամսագրի  
որդեգրած սկզբունքը, որը, ինչպես ասել ենք, «մաքուր ար-  
վեստ» ստեղծելը չէ:

Մ. Տեր-Ստեփանյանի պատմվածքի նյութը Սիրիայում,  
պատերազմի ավարտից հետո տեղի ունեցած արյունալի դեպ-  
քերն են:

«Երրորդ Հանրապետության կայսերապաշտ ավանդու-  
թյուններուն մնացորդացը կը կարծեր թե այս երկրին մեջ ու-  
նեք քաղաքական, զինվորական, մշակութային ու տնտեսա-  
կան դիրքեր... Ուստի կը փորձեր նահանջել հետո բռնի ուժով  
վերագրավել հին դիրքերը, և կը դներ ժամանակավորեալ պա-  
հանջներ»:

Ֆրանսիական իմպերիալիզմը մենակ չէր այդ գործում:  
«Աղվեսամիտ երրորդ կողմն ալ,— շարունակում է հեղի-  
նակը,— ձեռքի տակե քարյուղ կը սրսկեր՝ արդեն բոցավառիլ  
սկսող կրակին վրա...»:

Պատմվածքի մեջ իմպերիալիստական այդ ոտնձգու-  
թյուններին հակադրված է այն համերաշխությունը, որ ընդ-  
հանուր վտանգի հանդեպ ստեղծվում է տեղացի արաբների

45 «Անի»-ն իր համարներում տպագրել է Գ. Սևանից տասներեք պատմե-  
վածք, որոնք կարող են մի ծավալուն հատոր կազմել: Դրանց մի մասը  
ամսագիրը լույս է ընծայել առանձին գրքով, տալով հատորին «Սև ծովը  
նույնն է միշտ» խորագիրը (Մատենաշար «Անի» ամսագրի, հ. 7, Բեյ-  
րութ, 1954):

46 «Անի», 1947, հ. 3 (15), էջ 126:



ու Սիրիայում ապրող մյուս ժողովուրդների միջև: «Ցեղի, կրոնքի, ավանդույթյուններու և նախապաշարումներու ստեղծած խտրութեանց բոլոր պատենշները կը փլչեին, կը քանդվեին մեկ անգամեն... «Պապա, հաց» ճշացող պզտիկիս անոթութիւնը կը կշտանար դրացի արարին ղրկած հաց ու պանիրով»:

Երկու պատմվածք ամսագրում՝ Տ. Վարժապետյանի «Աբրահամ Լինգըն Կրինը և Պլեքին»<sup>47</sup> ու Սուրեն Մանվելյանի «Կոշումին տեր բժիշկը»<sup>48</sup> պատկերում են ռասայական խտրականութեան այն ամոթալի երևույթները, որ մինչև հիմա էլ դեռ գոյութիւն ունեն Ամերիկայում:

Աբրահամ Լինգըն Կրինը Վարժապետյանի պատմվածքում նեղր տղա է, Պլեքին՝ հարուստ սպիտակամորթ մի կնոջ շուն: Պատկերելով ամերիկյան ապրելակերպի որոշակի կողմերը, հեղինակը ցույց է տալիս, որ բարքերի այդ կացութեան հետևանքով ստեղծված են իրադրութիւններ, երբ շան վիճակը սևամորթ մարդու վիճակից ավելի գերադասելի է դառնում: Հիվանդ նեղր տղային համաձայնում են վիրահատել միայն անասնաբուժական հիվանդանոցում, որտեղ առօր-փառօր բուժվում է նաև Պլեքի շունը, բայց... շատ ավելի նպաստավոր պայմաններում:

Ուրիշ տեսանկյունից է մոտենում ռասիզմի արտահայտութեանը Ամերիկայում Ս. Մանվելյանը: Նրա պատմվածքի գործող անձինք են նեղրը, հայը և երկու ամերիկացիներ: Նեղրը վեհանձն մարդ է, բժիշկ: Նա մեծ ծառայութիւններ է մատուցել պետութեանը: Մասնակցել է պատերազմին, պարգևատրվել է շքանշաններով: Ամերիկացիներից մեկը բիզնեսմեն է, երկաթուղային ընկերութեան փոխ-նախագահ. մյուսը վագոն-ճաշասրահի վերակացու, որ «...ատենը մեյ մը գրպանեն դուրս բերելով դոլլարներով կազմված տրցակը՝ կը շոյեր, համբուրեկու չափ կը փաշփայեր ու կրկին կը տեղավորեր դրպանին մեջ»: Հայը ամերիկյան քաղաքացի է, որի մասին փոխ-նախագահը հեղանքով ասում է, ականարկելով նրա եկվոր լինելը, թե «Ջարմանալին այն է, որ՝ չափահասութեան

47 «Անի», 1952, հ. 10 (58), էջ 515:

48 «Անի», 1950, հ. 1 (37), էջ 16:

մեջ քաղաքացիության արժանացած մարդիկ միշտ ալ լեզունին կ'երկնցնեն»:

Կոնֆլիկտն սկսվում է նեգրին՝ որպես սեամորթի, վագոն-ճաշասրահից դուրս վտարելով: Ավարտվում է պատմել-վածքը նրանով, որ նեգր բժիշկը շտապ օգնության է հասնում իր մարդկային և քաղաքացիական արժանապատվությունը այդպես ծանրորեն վիրավորող փոխ-նախագահին, երբ վերջինս սրտի շատ վտանգավոր նոպա է ունենում գիշերը:

Պատմվածքի ուշագրավ մի կողմն էլ այն է, որ նրա հերոսներից հայը, որ տվյալ դեպքում հանդիսանում է ամերիկահայության ներկայացուցիչը, անտարբեր չի մնում ռասայականության այդ արտահայտության հանդեպ, ակտիվորեն միջամտում, պաշտպանում է նեգրին, մտերմանում նրա հետ: Այդ դեպքը տալիս է տալիս նրան վերհիշելու իր ժողովրդի հին ցավերը. «Ես ալ, երկար դարերով բիրտ ուժի քմայքին ենթակա ժողովուրդի մը մեկ զավակը՝ այդպես տոկալով վերապրեր էի՝ տեսնելու արշալույսը, որ ծագեցավ իմ պապենական հայրենիքիս վրա, անոր բերելով ազատություն, ապահովություն և աճելու նոր պայմաններ»:

Երկրորդ համաշխարհային պատերազմի իրադարձություններին վերաբերող արձակ գործերը քիչ են «Անի»-ում, թեև պատերազմի արձագանքներին կարելի է հանդիպել բաղմաթիվ այլ նյութերում:

Առանձին այդ գործերից են Զ. Որբունու օրագրերը («Պատերազմի օրագիր»<sup>49</sup>), հետաքրքիր այն տեսակետից, որ ցույց են տալիս, թե որքան անկազմակերպ ու անպատրաստ էր ֆրանսիական բանակը, երբ ֆաշիստական հորդաներն սկսեցին շարժվել դեպի արևմուտք:

Պ. Լամպաճյանի «Վիեննական գիշերներ»-ը<sup>50</sup> պատմում է ֆաշիստական գազանությունների մասին Վիեննայի համակենտրոնացման ճամբարում: Պատկերավոր այդ պատմվածքում, հեղինակը, խորամուխ չլինելով ֆաշիզմի ոճրային էության մեջ, գեստապոյական գազանությունները հակված է բացատրել լոկ պատերազմական վիճակով:

49 «Անի», 1948, հ. 9—10 (21—22), էջ 457:

50 «Անի», 1946, հ. 5, էջ 258:



Մ. Տեր-Ստեփանյանի «Գրավ մը»<sup>51</sup> պատմվածքը նվիրված է «լույսի և խավարի հավիտենական մարտնչումին նոր և ահռելի մեկ դրվագին»՝ Հայրենական Մեծ պատերազմին, որի մեջ Սովետական Միությունը, ինչպես հեղինակն է ասում, մարմնավորում է Լույսը։ Կատարվում է այն, ինչ տարիներ շարունակ հրազել և հավատացել էին սփյուռքահայ զանգվածները—հաղթում է Լույսը, ծնկի բերելով խավարի ուժերին՝ իրենց իսկ որջում։ Այդ հաղթանակի նշանակությունը առավել մեծ է սփյուռքահայի համար. նախ՝ որովհետև նա միշտ լույսի ու խաղաղության կողմն է եղել, և երկրորդ՝ որ այդ ահռելի գոտեմարտին մասնակցել են և իր հայրենիքի զավակները, հետապնդելով թշնամուն մինչև Բեռլին։

«Անի»-ում տպագրված արձակ գործերի մեջ կան մի քանի պատմվածքներ, որոնք իրենց թե բովանդակությամբ ու թե ձևով չեն ներդաշնակում ամսագրի առողջ ոգուն, և որոնց վրա մենք կուզեինք բեռնել բնօրրոգի ուշադրությունը. դրանք են՝ Բյուզանդ եղիայանի «Վերջին շառավիղ»<sup>52</sup> ու «Մեր կորուստները՝ մեր պետությունեն»<sup>53</sup> պատմվածքները և Հրաչ Զարգարյանի արձակ բանաստեղծությունները։

«Վերջին շառավիղ»-ը դժբախտ սիրո և այդ սիրո պտուղ, լքված մի աղչկա ողբերգության պատմությունն է։ Մեզ հետաքրքրողը, սակայն, այդ պատմությունը չէ։

Ինչպես ճիշտ նկատում է Վահե-Վահյանը իր գրախոսականներից մեկում<sup>54</sup>, Բ. Եղիայանի պատմվածքների մեջ հանկարծ «...կը խուժե խորհրդածություններու հեղեղ մը ու կը կլանե, կը խեղդե զանոնք»։ Այդպես է պատահել և տվյալ դեպքում։ Բայց հարցը պատմվածքը խորհրդածություններով հեղեղելը չէ միայն։ Բ. Եղիայանը այդ խորհրդածություններում արտահայտում է միանգամայն սխալ մտքեր։ Տուրք տալով անվանի, հարուստ, բարձր պաշտոնների ու դիրքի հասած մարդկանց պաշտամունքին, նա վերագնահատման է ենթարկում հայ ամիրաների դերը մեր պատմության մեջ, հետադի-

51 «Անի», 1946, հ. 4, էջ 186։

52 «Անի», 1948, հ. 7 (19), էջ 342 և հ. 8 (20), էջ 409։

53 «Անի», 1949, հ. 3 (27), էջ 126։

54 «Անի», 1950, հ. 4—5 (40—41), էջ 299։

մական ու հակադիտական դիրքերից լուսաբանում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները:

Ըստ Բ. Նզիալանի, «օսմանցի հայերը ապերջանիկ չէին ամիրաներու այդ օրերուն: Նրկիրը մերը չէր, բայց անոր վաճառականությունը և վերելքը մերն էր,— դրո՞ւմ է նա ու ապա շարունակում:

«...Մեր ամիրայությունը մենք տապալեցինք մեր հեղափոխությունով: Մենք չհասկցանք մեր ամիրաներու մեծությունը, և ուստի չհանդուրժեցինք անոնց մեծության: Մենք օտար աշխարհ գացինք եկանք, օտար լեզու և օրհներ գոյրինք. Ազատություն, Նզրալություն, Հավասարություն ու բազմատեսակ օտար տունկեր բերինք, ուղեցինք աճեցնել մեր ալ կլիմային մեջ:

Մեր ամիրաները հին-գլուխ, բայց հիանալի վարիչներ էին: Անոնք պապա մարդեր էին, պետություն և արքունիք տեսած, ու գիտեին թե ինչ ըսել է ժողովուրդ կառավարելը, տուն ունենալ ու պարտեզ տնկելը: Մենք սակայն մեր նոր գլուխ մարդերը հառաջ քշեցինք, և անոնք կրցան մեր ամիրաները կոչել դավաճաններ, և մեկ առ մեկ վար առին զանոնք ազգին աթոռներեն, անոնց տեղը դնելով սկզբունքներ ու վարդապետություններ»<sup>55</sup>:

Մեր թեմայից դուրս է «օտար տունկերը հայկական կլիմայում» աճեցնելու հին տեսության քննադատությունը: Հայտնի է, որ հեղափոխությունները չեն արտածվում կամ ներմուծվում: Դա ճիշտ է ինչպես մեր օրերի, այնպես էլ այն ժամանակների համար: Հայտնի է նաև, որ հայ ազատագրական շարժումը իր խոր արմատներն ուներ ժողովրդի մեջ և ուղղված էր վայրագությունների, դաժան բռնությունների, սովորական դարձած թալանի դեմ. այլ կերպ ասած՝ թուրքական դեսպոտիզմի դեմ:

Այլ հարց է, որ իմպերիալիստական պետությունների դիվանագիտական խաղերը, միջազգային աննպաստ պայմանները, տերիտորիալ մասնատվածությունը ի դերև հանեցին հայ փոքրամիլ ժողովրդի թափած մեծ ճիգն ու առատ

55 «Անի», 1948, № 7 (19), էջ 344:



արյունը: Այլ հարց է, վերջապես, որ հայ ազգայնական որոշ խմբակցությունների և մասնավորապես դաշնակցության արկածախնդրական գործելակերպը հաճախ ողբերգական տարր էր մտցնում այդ շարժման մեջ կամ երբեմն էլ զանդվածային ողբերգության հասցնում ժողովրդին: Սակայն արևմտահայության այդ ողբերգությունը բացատրել ամիրայական դասի բացակայությամբ և ցավել դրա համար (այդ միտքն է, ի վերջո, արտահայտված մեջբերված տողերում), առնվազն անհեթեթություն է, որ կարող է արտահայտել հայ ազատագրական պայքարի շարժիչ ուժերին անտեղյակ, հետադիմական մտայնությամբ տառապող մի մարդ:

«Շատ ուրույն սոցիալական այդ վերնախավը,— գրում է Ա. Կարինյանը ամիրաների ու ամիրայության մասին, — օսմանյան պետականության հիմնական հենակետերից մեկն էր: Արևմտյան կապիտալիստական պետությունների տնտեսական էքսպանսիայի օրերին միևնույն ամիրայությունն է ձիգ անում ամրացնել ու պաշտպանել քայքայվող սուլթանատի նկիսված հասարակարդը»<sup>56</sup>: Ամիրաները, այդպիսով, ոչ միայն շահագրգռված չէին տիրող ռեժիմի տապալման կամ փոփոխման մեջ, այլ, ինչպես ձիշտ նշում է Մ. Ներսիսյանը, ընդհակառակը, «...դեմ էին արևմտահայ քաղաքական շարժումներին և, մասնավորապես, ժողովրդական-դեմոկրատական շարժումներին»<sup>57</sup>: Ամիրաները չէին, որ պետք է մտածեին հայ ժողովրդի ճակատագրի մասին: Թուրք տիրապետող վերնախավի հետ միասին, նրանք ևս մասնակցում էին այն կրքերնակի շահագործմանը, որին ենթակա էր հայ ժողովուրդը ասիական դեսպոտիզմի այդ երկրում<sup>58</sup>: Եվ եթե նրանք՝ ամիրաները «պապա-մարդեր» էին և «հիանալի վարիչներ», ապա դա կարող է վերաբերել թերևս իրենց ֆինանսական և առևտրա-արդյունաբերական գործունեությանը, իրենց ծառայությանը սուլթանական պետությանը, իրենց «տունը ունենա-

56 Ա. Կարինյան. «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հ. 2, Երևան, 1960, էջ 156:

57 Մ. Ներսիսյան. «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ», Երևան, 1955, էջ 267:

58 «Հայ նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962, էջ 12:

լուն և պարտեզը տնկելուն», բայց ոչ հրեք ժողովուրդ կառավարելուն՝ ժողովրդի շահերից ելնելու առումով:

Միայն մոտիվներ են հնչում և Բ. Նդիալանի վերը նշված երկրորդ գործում, որը ոչ այնքան պատմվածք է, որքան խորհրդածությունների մի դումար հայ ժողովրդի անցյալի մասին: Հայ ժողովրդի ողբերգական ճակատագիրը նա ճգնում է բացատրել այն հին ու մաշված հանկերգով, թե հայերը ամիաբան ժողովուրդ են: Եթե, դատում է Նդիալանը, հայերը ամիաբան լինեին, գիտենային իրենց ձեռք բերած «անբավ հարստությունները» լավագույն կերպով օգտագործել, «տրեստեսական համագործակցության սխտեմ» ստեղծել (դրան հետևում է մերկանտիլիզմն ու տնտեսական մատերիալիզմը հիշեցնող պարզունակ մի քարոզ), ապա թերևս այլ լինեք նրանց ճակատագիրը<sup>59</sup>:

«Անի»-ի համարներում հինգ արձակ բանաստեղծություն ու պատմվածք կա տպագրված Հրաչ Զարդարյանից («Աշնանային» (1948, հ. 11/23), «Գարնանամուտի առավոտ մը» (1949, հ. 7/31), «Նարկիսին հեքիաթը» (1949, հ. 9/33), «Արվեստագետը» (1950, հ. 1/37) և «Զիթենիին արցունքները» (1954, հ. 3/63), որոնք, սակայն, ոչինչ չեն ավելացնում ամսագրի արձակին: Պատճառը գեղարվեստական երկը կազմող երկու բաղկացուցիչ տարրերի՝ բովանդակության ու ձևի, դադափարի ու արվեստի միասնականության բացակայությունն է, իսկ ավելի կոնկրետ՝ բովանդակության, դադափարի չնչնությունը, որ բնորոշ է Հ. Զարդարյանի այդ գործերին:

«Արվեստի խնդիրն է, — գրում է Գ. Վ. Պլեխանովը, — պատկերել այն ամենը, ինչ հետաքրքրում ու հուզում է հասարակական մարդուն...»<sup>60</sup>: Այն, ինչ պատկերում է Զարդարյանը, չի բավարարում արվեստի այս ճշմարիտ չափանիշի պահանջները: Նրա պատկերածը հասարակությունից երես դարձրած, ունալ իրականությունից հեռացած ու «մաքուր ար-

59 Խորանալով իր հետադիմական հայացքների մեջ, Բ. Նդիալանը հետագայում միացավ դաշնակցականների գաղափարաբանությանը, որդեգրելով Սովետական Հայաստանն անտեսելու և սփյուռքը հայրենիքից մեկուսացնելու նրանց թշնամական խելացնոր քաղաքականությունը:

60 Г. В. Плеханов, Сочинения, т. XIV, стр. 83.



վեստի» ուղորտնեցում մեկուսացած մարդու մանր, աննշան, եսական ապրումներն են, որոնք չեն բավարարում և չեն կարող բավարարել հասարակական մարդուն, ուրեմն և չեն կարող գոհացում տալ արվեստի պահանջներին, որքան էլ հեղինակը ձգտի բովանդակության շնչինությունը ծածկել ոճական պաճուճանքներով: Այդ ճիգը Հ. Զարդարյանի մոտ վեր է ածվում, ի վերջո, բառաշատության ու ոճի վերամբարձության:

«Զիթենիի արցունքները» պատմվածքում Զարդարյանը նկարագրում է երկու ընկերների՝ Վարդանի և Վաղգենի անցկացրած մեկ օրը, տալով նրանց խորհրդածությունները կյանքի և բնության մասին. բնափիլիսոփայական մի զրույց, որտեղ արտահայտված մտքերը նաև իրենք՝ հեղինակինն են, սուբյեկտիվ, իդեալիստական.

«—Կը լողայի միայն իմ ճշմարտությանս մեջ, և իմ ճշմարտությունս լեցուցած էր ամբողջ աշխարհը...»: Ասում է Վարդանը մի առիթով: Նրա համար գերադասը իր՝ անհատի, սուբյեկտի ճշմարտությունն է: Կյանքի օբյեկտիվ ճշմարտությունը, որի գոյությունը նա այնուամենայնիվ ընդունում է, համարում է «ստորագաս» կատեգորիա, սոսկ իրականություն, իսկ անհատի ճշմարտությունը՝ վերին իրականություն:

Հ. Զարդարյանի արվեստի վրա իր անհերքելի ազդեցությունն է թողել ժամանակակից բուրժուական աշխարհի իրականությունը, որ «Արվեստագետը» պատմվածքում որակված է որպես «պոռնկացող արևմուտքի մեծ փլատակներուն դիմող արդի ժամանակ»<sup>61</sup>: Այլ կերպ չի կարելի բացատրել ձանձրույթը ինչ-որ առաքինության աստիճանի բարձրացնելու Վարդանի մտորումները:

«Բնությունը չի գիտեր ի՛նչ ընե, ինչպե՛ս ընե որ քիչ մը աստված դնե մարդուն մեջ: Թերևս, ձանձրույթը այդ իր միջոցներեն մին է, թերե՛ս... Ձանձրույթեն բացարձակապես զրկված մարդը թերևս քիչ մը ավելի անասուն է, քան թե ձանձրույթն կրծվող ասունը, թերե՛ս... Ձանձրանալ՝ սաստիկ ապրիլ է. չձանձրանալ՝ անասնություն է, կամ՝ դանդաղ անձնասպանություն»:

Ընկերոջ, Վազգենի, վարանոտ ու հակասական առարկությունը ևս չի փրկում վիճակը: Նա «ձանձրույթի հրեշին» հակադրում է աշխատանքը, բայց նրա մոտ աշխատանք հասկացողությունը հասարակական հանրագուտ բովանդակություն չունի, այն օժտված է «ձանձրությանսպան» հատկությամբ միայն: Աշխատանքը չի վերացնում «կյանքի առօրյա կերակուրին անհամությունը», այլ կարծես նրա մի բաղկացուցիչ մասն է կազմում: Այդ «անհամությունը» մեղմացնելու համար, Վազգենը ևս ձանձրույթի ինչ-որ դոզա է վերապահում իրեն:

Շարունակելով իր հակասական մտքերը, Վազգենը արվեստը ևս «ալքոլամոլություն», «ալլաղան խաղամոլությունների», «ցոփության», «էլեկտրոշոկի» հետ միասին դասում է այն երևույթների շարքը, որոնք սնում են «ձանձրույթի հրեշը»:

Գաղափար տալու համար Հր. Զարդարյանի ոճի մասին, մենք թույլ ենք տալիս մեզ մեջ բերելու մի փոքր ընդարձակ հատված նրա նույն «Զիթենիի արցունքները» պատմվածքից: Խոսքը վերաբերում է երկու եղբայրների (հորեղբորորդիների) մանկական անկեղծ ու հաշտ սիրո նկարագրության, որ ստացել է հետևյալ ճոռոմ մենախոսության ձևը.

«...Հողիս անսահմանորեն գոհ էր իր հոգիեն... Ներքին բոլոր կիրքերը բավարարված: Փառատենչ լավաներե զտված հերոսություն: Լուռություններու մեջ, անձայն, հանգեստ վճարված շնորհ: Երախտապարտության հրագունդ, բոլորին բաշխվող ջերմություններու անբարբառ հեշտանք: Գորշ ու բյուր հանգույցներե լուծված՝ բյուրեղ տարածություն: Արարողական խռովք սկզբնադարյան: Միջոց՝ նազովրեցիին տեսքովը թրթռուն: Անճառելի համոզում՝ ակտին անգերազանցելի եղելությանը: Զիթենահյուս պսակադրություն, ի գիտություն աշխարհի, ի գիտություն մարդկության: Հոգիե հոսող Հորդանան, օծում՝ սփածանելի կրող մարդուն մատվըներեն: Մեծագոշ հրավեր ձիթենիներու սոսավյունով, հեկեկանքներով...»:

Ինչպես ասացինք, «Անի»-ն խոշոր ծավալի երկու գործ է տպագրել իր համարներում՝ Վահե-Վահյանի «Հարալեզներու



Հաշտությունը» Հայրենական հուշերը և Ս. Փանոսյանի «Որ մերկավ էին զատված» վեպը<sup>62</sup>։

«Որ մերկավ էին զատված» վեպի թեման 1915-ի եղեռնն է և հայ մարդու ճակատագիրը՝ սկսած տարագրություն տա-  
րիներից մինչև հրկրորդ համաշխարհային պատերազմն ու  
զարձը Սովետական Հայաստան։

Տիրապանակերտցի տասնյոթամյա Մուրադին հայրն ուղար-  
կել էր մեծ քաղաք, ուսում ստանալու և կրթված մարդ դառ-  
նալու համար։ Երիտասարդի վերագրածը դեպի հայրենի տուն  
դուգադիպում է եղեռնի սկզբին։ Հաղիվ ազատվելով սպան-  
դից, երկար թափառումներից հետո, նա հասնում է սիրիա-  
կան անապատի բեդվիդների վրաններին, որտեղ և ապաստան  
է գտնում։

Մուրադի համար սկսվում է մի նոր կյանք Շեյխ խալաֆի  
ցեղախմբում։ Իր ազնիվ ու վեհանձն հոգու և նվիրված աշխա-  
տանքի համար բոլորն սկսում են սիրել նրան։ Ցեղախմբի  
վաչրից-վար թափառելու ընթացքում առիթներ չեն պակա-  
սում, որ Մուրադը ցուցաբերի նաև իր խիզախությունը, մանա-  
վանդ թուրքական պատժիչ ջոկատների հետ տեղի ունեցած  
ընդհարումների ժամանակ։ Մուրադը դառնում է՝ Շեյխ խալա-  
ֆից հետո՝ երկրորդ անձնավորությունը ցեղախմբում։ Այդ  
ընթացքում Շեյխ խալաֆի մարդիկ թուրք ոստիկանների ձեռ-  
քից ազատում են մի մեծ խումբ հայ կանանց ու երեխաների,  
որոնք նույնպես ապաստան են գտնում Շեյխի վրաններում։  
Նրանց ապահովության գործում մեծ դեր է խաղում Մուրադի  
հեղինակությունը։

Յոթ տարի անց, պատերազմի վախճանից հետո, հայ  
զաղթականների խումբը և Մուրադը, Շեյխ խալաֆի համա-  
ձայնությամբ, թողնում են բեդվիդներին ու մեկնում Հալեպ,  
միանում արևմտահայության մնացորդներին։

Անցնում են նորից տարիներ։ Փոթորկվում ու ավարտվում  
է երկրորդ համաշխարհային պատերազմը։ Այն, ինչ չի վի-

62 Այն նպագրվել է ամսագրի 1950—1952 թվականների 21 համարնե-  
րում, արժանացել է «Անի»-ի գրական մրցանակին և ապա, 1953-ին, լույս  
է տեսել առանձին գրքով Բեյրութում, «Անի» հրատարակչության կողմից  
(մատենաշար թիվ 5)։

ճակվում Մուրադին, ճակատագիրը պարզեում է արաբական անապատում ծնված նրա որդուն, որին, իր սերնդակիցներից շատերի հետ, հաջողվում է վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Ահա համառոտակի վեպի բովանդակությունը։ Ընդ սմին վեպում նկարագրված հիմնական իրադարձությունները տեղի են ունենում սիրիական անապատում և Հալեպում։ Վեպի վերջավորությունը սխեմատիկ է, դեպքերը հաջորդում են միմյանց կալեյդոսկոպային արագությամբ, ավարտվելով հայրենիք մեկնող բարավանի շոգենավային տեսարանով։

Թեման այս նոր չէր սփյուռքահայ գրականության մեջ։ Տարագրության տարիներին հաղարավոր հայեր, մանավանդ հայ որբեր, ապաստան ու հովանավորություն էին գտել արաբ ժողովրդի մոտ։ Գրականության ու մամուլի մեջ շատ նման դեպքեր էին արձանագրվել։ Համանման սյուժեով, Ս. Փանոսյանի վեպից մի փոքր առաջ, 1949-ին, լույս էր տեսել Լևոն Մեսրոպի «Կախարդող լեռը և ներգաղթող ձին» վեպը<sup>63</sup>։

Փանոսյանի վեպի հիմքում, ինչպես տեսանք, դրված է աղետից փրկված հայի ճակատագրի հարցը։ Այն իր զարգացումն ստանում է հայ և արաբ ժողովուրդների բարեկամության միջոցով, իսկ լուծումը՝ Սովետական Հայաստանի գոյության մեջ, որ իր ծոցն է ընդունում տարագիր հայության նորանոր զանգվածներ։

Հայ և արաբ ժողովուրդների բարեկամությունը, որ վեպի հիմնական գաղափարներից մեկն է, պատմական իր հիմքերն ունի։ Այդ բարեկամությունը, ինչպես արդեն ասել ենք, բխում էր, ամենից առաջ, երկու ժողովուրդների ճակատագրի ընդհանրությունից։ Նրանք երկուսն էլ, արաբներն ու հայերը, միևնույն բռնակալ իշխանության տակ էին ապրել ու տառապել հրկար տարիներ։ Վեպում կան այդ բարեկամության մի շարք սրտառու տեսարաններ, ինչպես, օրինակ, հայ անպաշտպան կանանց ու երեխաների փրկությունը թուրք ոստիկանների ձեռքից, կամ Մուրադի անձնազուգ պայքարը բեղ-

63 Լ. Մեսրոպի այդ վեպը՝ «Կախարդող լեռը» վերնագրով, հրատարակվեց նաև Երևանում, 1955-ին։



վիճանների հետ մեջք-մեջքի՝ ընդգեմ թուրք պատժիչ ջոկատ-ներին:

Լավ է պատկերված վեպում արաբ վաչկատուն ցեղա-խմբի՝ բեդվիճանների կյանքը անապատի պայմաններում, նրանց ծանր աշխատանքն ու մաքառումը չափից ավելի ժլատ բնու-թյան դեմ: Հեղինակի հաջողությունն է, անշուշտ, որ նա, պատկերելով Շեյխ Խալաֆի մարդկանց, որպես արիասիրտ մարտիկների, միաժամանակ ցույց է տալիս նրանց արդա-րամտությունն ու աշխատասիրությունը: Հետաքրքիր են նաև բեդվիճանների կյանքի որոշ կենցաղային նկարագրությունները:

Ընդհանուր առմամբ Սմբ. Փանոսյանին հաջողվել է ուր-վագծել այն իրադրությունը, որ ստեղծվել էր արաբական ա-նապատի մի անկյունում առաջին համաշխարհային պատե-րազմի տարիներին: Սակայն վեպը, որպես կոմպոզիցիոն ամբողջություն, ունի նաև էական թերություններ: Այն զերծ չէ նաև հեղինակի որդեգրած մեթոդի՝ ռեալիզմի դեմ կատա-րած մեղանշումներից:

Վեպի կոմպոզիցիոն սխեման՝ Մուրադի փրկվելը արաբ-բեդվիճանների ձեռքով, նրա ծառայությունները Շեյխ Խալաֆի ցեղախմբին, արժանի գնահատանքը և ի վերջո վերադարձը իր ժողովրդի ծոցը՝ ճիշտ է մտահղացված ու տրամաբանա-կան է: Բայց այդ սխեմայի ոչ բոլոր օղակներն են, որ գտել են իրենց մարմնավորման գեղարվեստական ճիշտ ուղին: Համոզիչ չէ, օրինակ, և օբյեկտիվ ճշմարտությունների վրա չի հիմնվում Մուրադի գլխապստույտ վերելքը փախստական հայից մինչև Շեյխի վեզիրը և այդ կապակցությամբ Հասանի (նախկին վեզիրի) անկումը: Չմոռանանք, որ Մուրադը միշտ էլ հանդես է գալիս ու մնում ք էրմենի՝ արաբական այդ շրջա-պատում, և քրիստոնյա ղեկավարի նրա դիրքը ավատական ու կրոնական նախապաշարումներից չազատագրված բեդ-վիճանների մոտ մնում է շատ խնդրական:

Թույլ են լուսաբանված արաբական ցեղախմբերի ու թուրքական իշխանությունների հարաբերությունները և հիմ-նավորված չէ արաբների ատելությունը վերջինների հանդեպ, թեև ըստ վեպի կառուցվածքի արաբ-թուրք հարաբերությու-նները, որպես հարաբերություններ ռայանների ու տիրողների

միջև, առանցքային պիտի լինեին վեպում: Եթե այդ հարցը պատշաճ գեղարվեստական հիմնավորում գտած լիներ, ապա ավելի հասկանալի կլինեին այն ջերմ վերաբերմունքն ու համակրանքը, որ դրսևորում են բեզվինները ու մասնավորապես Շեյխն ու Հասանը հայերի նկատմամբ: Դա ավելի կհիմնավորեր նաև արաբների ու թուրքերի պատժիչ ջոկատների բախումը, որը վեպի ներկա վիճակում պատկերանում է մեղավելի շուտ որպես հայերի նկատմամբ բեզվինների բարյացակամության մի ակտ, քան որպես արաբ ժողովրդի ազատագրական պայքարի մի դրվագ:

Վեպի գլխավոր հերոսները, որպես գեղարվեստական կերպարներ, նույնպես զերծ չեն լուրջ թերություններից: Ամբողջական չէ Շեյխ Խալաֆի կերպարը: Մուրադի՝ որպես վեպի հիմնական հերոսի ու գլխավոր կերպարի՝ զարգացումը շատ ավելի արագ է տեղի ունենում, քան այդ թույլ են տալիս դեպքերը իրենց բնական, օբյեկտիվ զարգացման մեջ: Անգույն ու սխեմատիկ է, որպես բացասական կերպար, Խալեա աղան (թուրքերի գործակալը արաբների մեջ):

Ռեալիստական վեպից պահանջվում է, որ այն ճշմարտապատում լինի նաև իր մանրամասների մեջ: Այդպես չէ Փանոսյանի վեպում: Նատուրալիստական մեղանշումներից բացի, կան մի շարք անհարիրություններ ժամանակի, տեղի, տարածության, դեպքերի հաջորդականության մեջ, որոնցից հեղինակը կարող էր խուսափել վեպի ավելի լուրջ մշակման դեպքում: Այդպիսին է հայ գերիների ազատագրման տեսարանը, ռազմական գործողությունների նկարագրությունը, որ մի քանի դեպքերում սարգեցված է միամտության չափ:

Եվ, վերջապես, պատվաստի տպավորություն են թողնում բեզվիններին շատ հեշտությամբ նստակյաց դարձնելու, ջրանցք կառուցելու, վար ու ցանքսի սովորեցնելու Մուրադի հաջողությունները: Անտեսելով վաչկատուն-բեզվինների ապրելակերպի սոցիալ-տնտեսական հիմքերը, հեղինակը, ելնելով իր հերոսին՝ Մուրադին բարձրացնելու դանկությունից, նրան անհատի ուժերից վեր գործ է վերագրում և, ինչ խոսք, վրիպում է, մեղանշելով գեղարվեստական ճշմարտության ու ռեալիզմի դեմ: Այդ ավելի է աչքի զարնում մանավանդ այն



քանից հետո, երբ, ըստ հեղինակի, Մուրադի մեկնումով վերջ է տրվում և բեղվիներին նստակեցությանը: Առհասարակ Մուրադի՝ որպես կենտրոնական հերոսի՝ բեղվիների կյանքում կատարած դերի գերազնահատուկությունը զգացվում է վիպի համարյա ամբողջ ընթացքում և աններգաշնակության զգալի տարր է մտցնում երկի մեջ:

Այս բոլոր թերություններով հանդերձ, Ս. Փանոսյանի վիպն ունի իր անժխտելի արժանիքները և ընթերցվում է հետաքրքրությամբ, որ խոսում է հեղինակի գեղարվեստական մտածողության ու պատմելու ձիրքի մասին: Երկի դրական կողմերի հաշվին պետք է դրանցել նաև այն հայրենասիրական ոգին, որով տոգորված է ամբողջ վիպը:

Հետաքրքիր է այդ տեսակետից Մուրադի զրույցը Սիրիայում հաստատված գաղթական հայերի հետ: Ավարտվել է համաշխարհային առաջին պատերազմը, անցել է ևս մի քանի տարի: Սովետական Հայաստանի ստեղծման լուրը հասել է նաև սիրիական անապատները: Մուրադը հանդիպում է ոմն Ռաշիդ աղայի մոտ որպես հնձվոր աշխատող հայերի մի խմբի և առաջին անգամ նրանցից լսում Սովետական Հայաստանի դոյություն մասին: Հնձվորներից մեկը, որ, ըստ երևույթին, դաշնակցության ազդեցության տակ է գտնվում, թույլ է տալիս զրպարտալից հարձակումներ սովետական իշխանության դեմ: Պատասխանելով նրան, հնձվորներից ամենաերիտասարդը, որ ավելի լավատեղյակ է իրերի դրության, ասում է Մուրադին.

«—Մի հավատար, անոնց ուղեղը քեռս է, չեն սիրեր հայրենիքը, որովհետև հոն խելոք մարդիկ ելան մեջտեղ, ուսին ու դրացի ժողովուրդներուն հետ եղբայրացան ու փրկեցին մեր ազգը, մեր հողը: ...Հայաստանը, իր պատմության ընթացքին, առաջին անգամ է, որ ուղիղ ճամբուն մեջ ինկած է, դուռն է խաղաղություն և ապահովություն. եվ համայնական աշխատանքը ամենին լավ միջոցն է՝ մարդս երջանկացնելու համար...»<sup>64</sup>:

Ավելի ուշ, ֆաշիզմի ջախջախումից հետո, Սովետական Հայաստանը լայնորեն ծանոթ է ամբողջ սփյուռքահայու-

<sup>64</sup> «Անի», 1952, հ. 11—12 (59—60), էջ 595:

թյանը: Վեպի վերջին գլխում Մուրադի բռնին ասում է իր շուրջը նստող անապատի արարեներին, ցույց տալով դեպի հյուսիս.

«...Արմինիան հոն է. այդ լեռներուն մյուս կողմը, Արա-րատեն անդին: Ժողովո՛ւրդ, լեզո՛ւ, կառավարությո՛ւն ...ա-մենը էմենի է—գինվոր, բանակ, ժեներալնե՛ր... ոռոնք Բեռ-լին մտան ու սերային<sup>65</sup> պատին գրեցին. «Ալամանիա՛, հիշե՛ սուրս...» հայերենով ու կարմի՛ր...»<sup>66</sup>:

«Որ մրրկավ էին զատված» վեպն ավարտվում է հայրե-նադարձության տեսարանով: Սովետական Հայաստան գալու «...առաջին պատեհությունը,— գրում է հեղինակը,— տվիք էին անոնք (ծնողները—Մ. Բ.) երիտասարդներուն...», շեշ-տելով, այդպիսով որ սփյուռքահայության և, առաջին հերթին, սփյուռքահայ երիտասարդության ապագան Սովետական Հայրենիքն է:

«Հարալեզներու հաշտությունը»<sup>67</sup> հայրենական հուշեր են: Դրանք պատկանում են «Անի»-ի խմբագրի գրչին և ար-դյունք են հեղինակի հայրենիք կատարած առաջին այցելու-թյան՝ որպես Հայաստանի Սովետական գրողների նրկորդ համագումարի հյուր:

Սփյուռքահայ գրողների հայրենական տպավորություն-ները մեծ նպաստ են բերել գաղութահայ աշխատավորների հայրենասիրության դաստիարակման գործին: «Հարալեզ-ներու հաշտությունը» այդ հուշագրությունների մեջ լավա-գույններից է. այն զրված է գեղեցիկ, պատկերավոր լեզվով և հայրենասերի անկեղծ ու ջերմ զգացմունքով:

Հայաստանում կատարած իր բոլոր շրջագայությունների, հանդիպումների, զրույցների մեջ Վահե-Վահյանը հանդես է բերում անհադ հետաքրքրություն դեպի իր հայրենիքը ու նրա մարդիկ, դեպի նրանց աշխատանքն ու կենցաղը, մտածում-ներն ու երազանքները: Նա աշխատում է թափանցել բոլոր

65 Ապարանք, պալատ (թուրքերեն): Նկատի ունի Ռայխստագի շենքը:

66 «Անի», 1952, № 11—12 (59—69), էջ 613:

67 Տպագրվել է ամսագրի 1946—1950 թվականների համարներում, ա-պա լույս է տեսել առանձին գրքով Բիյուրթում, 1953-ին («Անի» մատե-նաշար, թիվ 6):



երևույթների խորքը, համեմատություններ ու ընդհանրացումներ է անում, արտահայտում իր կարծիքներն ու խոհերը տեսածների ու ղգացածների մասին:

Հայրենիքում ամեն ինչ խոր, անմոռանալի տպավորություն է թողնել նրա վրա և, ամենից առաջ, պետականորեն կազմակերպված ժողովրդի ծրագրված, նպատակասլաց աշխատանքը երկրի վերակառուցման բնագավառներում: «Հայրենական կյանքի բոլոր մարզերուն, արդյունաբերական, շինարարական, իմացական ու վարչական բոլոր ձեռնարկներուն մեջ,— գրում է Վահե-Վահյանը,— մարդիկ կը մտածեին ու կը գործեին պետական շափանիշով, իր ճակատագիրը շինող ուժերը սանձահարած և ապագային վստահությամբ նայող ժողովուրդի մը վավակներուն կամքովն ու հավատքովը»<sup>68</sup>:

Հեղինակը մեծ ոգևորությամբ է խոսում այն բոլոր նվաճումների մասին, որ նա տեսնում է հայրենիքում, լինի դա գործարան թե հիդրոկայան, նորակառույց ավան թե կոլտընտեսություն, դպրոց թե համալսարան, թատրոն թե ակադեմիա: Նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում իր տեսածների մասին, բերում է թվական տվյալներ, պատմում ու նկարագրում է սիրով, բանաստեղծական շունչ դնելով իր ասածների մեջ:

«Պետական հզոր միջոցները և իմաստությամբ ղեկավարված աշխատանքը միասնաբար, հաջողեցին են մարդկային կամքին հպատակեցնել՝ ինչ որ բնությունը ամբարել է մեր երկրին մեջ իբրև ույժ և արժեք», — եզրակացնում է նա:

Առանձին ներշնչանքով է խոսում Վահե-Վահյանը մեր երկրի մշակութային կյանքի մասին, նկարագրում այն գուրդուրալից վերաբերմունքը, որ ցուցաբերում են սովետական մարդիկ մեր անցյալի ժառանգության հանդեպ, պատմում է մեր թանգարանների, այնտեղ կուտակված արժեքների և մանավանդ նրանց գիտական ուսումնասիրման խելացի կազմակերպման մասին: Ժողովրդական կրթության ու գիտության զարգացման լայն դրվածքը մեր երկրում նույնպիսի ոգևորություն է պատճառում Վահե-Վահյանին: Գիտությունների

68 «Անի», 1949, հ. 3 (27), էջ 140:

ակադեմիայի մասին խոսելիս, օրինակ, նա ասում է, որ այն պատիվ կարող է բերել ոչ միայն բռնության լծից նոր ազատագրված մեր ժողովրդին, այլև «հառաջացած մշակույթով որևէ ժողովուրդի»:

Իր հոշերում Վահե-Վահյանը, որպես բանաստեղծ, բնականաբար մեծ տեղ է հատկացնում մեր գրականությանը և նրա մշակներին, խոսում է մանրամասնորեն գրողների համագումարի ու այնտեղ արծարծված հարցերի մասին:

Շատ ուշագրավ է Վահե-Վահյանի հանդիպումն ու զրույցը Դ. Դեմիրճյանի հետ, որի ընթացքում շոշափվում են բազմապիսի հարցեր, այդ թվում և 1915-ի արյունալի իրադարձությունները գրականության մեջ լայնորեն արտացոլելու հարցը:

«Գրեցե՛ք, թող կարդան ու շոռահան մեր զավակները, մեր հետնորդները: — Ասում է Դ. Դեմիրճյանը: — Թող լսի և ողջ աշխարհը, եթե ունի ականջ: Եվ դա կարեոր է՝ ոչ միայն ազգային, այլև մարդկային տեսակետից: Ես հոգով հավատում եմ ու ցանկանում մարդկայի՛ն եղբայրության: Բայց եղբայրություն առանց արդարության—չի՛ լինի...»:

Որպես արտասահմանից եկած և սփյուռքը լավ ճանաչող գրող, որ ապրել է աղետն ու որբության դառնությունը՝ մանուկ տարիներին ու «սփյուռքային ամոթը»՝ դիտակից հասակում, նա չէր կարող չբաղդատել սովետահայ պայծառ իրականությունը դառն անցյալի և սփյուռքահայ կյանքի հետ: Այդ անհամեմատելի մեծությունների ակամա համեմատության բազմաթիվ առիթներ է ունենում նա հայրենիքում, և ամեն մի առիթ նորից է բորբոքում հայրենասերի ցավը նրա հոգում՝ հանդեպ սփյուռքի անմխիթար իրականության ու բուն իսկ նրա գոյության ու նա գրում է դառնությամբ. «Ա՛հ, մեր անեծքը, Սփյուռքը... ուր քու պատկերդ, պատկերը հայ մարդուն, կը դառնա ամեն օր քիչ մը ավելի անձանաչելի, փերեզակի անգույն մորթով ու վարձկանի հավատուրաց ծիծաղով»<sup>69</sup>:

Այդ ծանր պատկերը սակայն հուսալքման տրամադրություն չի ստեղծում նրա մեջ. կա հայրենիքի փառապանծ իրողությունը, որ ոգեշնչում է սփյուռքահայությունը և կանչում

69 «Անի», 1949, հ. 4 (23), էջ 287:



բոլոր իր տարադիր զավակներին տուն՝ միացնելու իրենց ճիգը երկրի կառուցողների եռանդին:

Հուշերի մեջ Վահե-Վահյանը պատմում է իր հանդիպումների մասին հայրենադարձների հետ: Նրանք շատ են. կան ընկերներ, գրչակիցներ, կան և իր նախկին աշակերտներից: Պատմում են նրանք հայրենիքի, իրենց նոր կյանքի, իրենց աշխատանքի ու հեռանկարների մասին: Վահե-Վահյանը այդ հանդիպումներից հանդում է այն եզրակացության, որ «Ամբողջ երկիրը ցնցող աշխատանքի և հառաջադիմության տենդը անցեր էր նաև իրենց (հայրենադարձներին)», որոնք «...գիտեին հայրենիքին սերը չշփոթել դուրակեցության բաղձանքին՝ հետ», չհաշված այն անհատներին, որոնք «Հայրենիքը երեակայն էին վաշտ մը անաշխատ վայելքի»:

Վահե-Վահյանի հուշերը կազմում են մոտ 500 էջանոց սովորածավալ մի գիրք: Այն մեր հայրենիքն է՝ դիտված սփյուռքահայի աչքերով: Հուշերն ընթերցողի առջևով մեկը մյուսի հտեից տողանցում են հայրենական հարազատ պատկերները իրենց յուրահատուկ գեղեցկություններով: Բայց այնտեղ կա և ավելին. դա հեղինակի խորհրդածություններն են հայրենիքի և հայ ժողովրդի, նրա անցյալ ճակատագրի և այսօրվա իրականության մասին: Եվ այդ բոլոր մտքերը դալիս, խաչաձևվում են մի կիզակետում՝ որպես եզրակացություն, որ արտահայտված է հեղինակի հետևյալ խոսքերում՝ գրված Հայֆիլհարմոնիայում լսած համերգի թարմ տպավորության տակ.

«Զգայական ու մտավոր հրձվանքի այդ բույնն կը փոխադրեր զիս քսանվեց տարի հո, ուր վերջին մնացորդը հայու վիրավոր հոգիին՝ գրված էր գլխատման կոճղին. ու եթե չհասնեին փրկարար ձեռքեր, պատմության տնդգամ էջերուն ոռ զանոնք հորինող ապառաժի խղճմտանքներուն վրա պիտի մնային միայն սառն ու սև հետքեր արյունի՝ այդ հոգիին վերջին անգամ ցայտած: Եվ այն ատեն, ո՞ւր պիտի մնային աս հրաշալի ձայները, ո՞ր անդունդին մեջ սուզված և անմակաբերելի: Այդ ձեռքերուն հրաշքը չէ՞ր, որ դավանափոխ մեր ժողովուրդին դեմ բավմադարյան գժտութենն մը հետո՝ հաշտեցուցեր էր վերջապես Հարալեզները մեզի հետ: Լիզեր ու դար-

մաներ էին անոնք մեր վերքերը, ու վերանորոգ մեր հոգին հիմա կը բաշխվեր աշխարհին՝ իբրև քաղցրագույն նվազ...»<sup>70</sup>։

«Հարալեզներու հաշտությունը» մեծ ընդունելություն գտավ հայկական բոլոր դադուքներում։

Դրամատիկական ժանրի երկու ինքնուրույն գործ է տպագրել ամսագիրը. Պետրոս Զարոյանի «Մենք ալ հայրենիք ունինք»<sup>71</sup> թատերախաղի առաջին արարը և Պարույր Մասիկյանի «Ուրբուհին խաչը»<sup>72</sup> պիեսը՝ ամբողջությամբ։ Երրորդ գործը, որ արդեն թարգմանական է, Կ. Սիմոնովի «Ռուսական հարց»-ն է։

Պ. Զարոյանի թատերախաղի մասին դժվար է ամբողջական եզրակացություն հանգել, քանի որ, ինչպես նշեցինք, տպագրված է նրա առաջին արարը միայն։ Սակայն այդ արարն էլ ցույց է տալիս, որ այն հետաքրքիր պիեսի սկիզբ է, հետաքրքիր այն առումով, որ արժարժում է սփյուռքահայության կյանքի հետ առնչվող հասարակական հարցեր։

Գործողությունն սկսվում է սուր կոնֆլիկտով հոր՝ Արշակի և որդու՝ Գեղամի միջև։ Գեղամի սրտի ընտրածը Սիրվարդն է, հոր ցանկացածը՝ Զարուհին։ Բախումի հիմնական պատճառն այն է, որ Սիրվարդը համայնավարի (կոմունիստի) քույր է։ Իսկ պահպանողական մտայնության տեր, պետական հայթայթիչ Արշակի հասկացողությամբ, համայնավարները «ազգուրացներ են»։ Գործին խառնվում է մի երրորդ անձնավորություն, «հանրային գործիչ» Սահակը։ Բնորոշ է, որ պիեսում միայն նա է խոսում արևելահայերենով։ Կասկածից դուրս է, որ այդ գործիչը Կովկասից փախած դաշնակցականներից է։ Նա խորհուրդ է տալիս Արշակին համայնավարներին հետ Գեղամի ունեցած կապերի մասին հայտնել «իր բարեկամ ոստիկանապետին»։ «Գեղամի բռնած ուղին,— ասում է Սահակը,— եթե շարունակի, չի կարող անհայտ մնալ պետական ապահովության շրջանակներից։ Ու դա մի անդամանելի հարված կլինի թե քո անձնական գործերի և թե, ավելի վատը, մեր գաղափարական պրեստիժի տեսակետներից»։

70 «Անի», 1947, հ. 5 (17), էջ 249։

71 «Անի», 1953, հ. 1 (61), էջ 1։

72 «Անի», 1952, հ. 4—5 (52—53), էջ 231, հ. 6—7 (54—55), էջ 297։



Յավուք թատերախաղն այստեղ ընդհատվում է:

Պ. Մասիկյանը իր պիեսի առանցքը դարձրել է անապատի ավազուտներից փրկված որբուհիի՝ Արմենուհու անուշոք ճակատագիրը, որ կարծես հետապնդում է նրան իր ամբողջ կյանքի ընթացքում: Նրա և Արմենի անկեղծ սերը ավարտվում է անհաջողությամբ: «Հազար ու մեկ զրկանքներով, — ասում է Արմենուհուն երիտասարդի հայրը իր զավակի՝ Արմենի մասին, — այս տարի ճարտարապետ պիտի ըլլա: Ի՞նչ պիտի ընե, ըսեք, ձեզի հետ: ...Աղքատությունը՝ երկու կողմեն, երկու կողմն ալ կը փշացնե»: Սեփականատիրական աշխարհի այս հուռի բարքերն են, ի վերջո, որոնց զոհ է դառնում սիրող զույգի երջանկությունը:

Փրկությունը հայրենիքն է, ուր և ուղղում է իր հերոսին հեղինակը: Այդ կասկածելիցամբ Արմենուհին ասում է նրա հորը.

«Այս անգամ ան շիյնար գետին, ոտքը պիտի դնե ամուր տեղ: Քարափին կռթնած շոգենավին կամրջակը թող պիտի չտա, որ ան իյնա: Մոռնալու համար զիս, ան իր Երկիրը պիտի գտնե, Երկիրին հողն ու շունչը»:

Այս լավ մտահղացումով զրված պիեսը դրամատիկական տեսակետից բավականին թույլ գործ է. կան անհամոզիչ, շինծու դրույթներ, որոնք զգալիորեն կենսազրկում են այն որպես գեղարվեստական երկ:

\* \* \*

Երկու խոսք ամսագրում տպագրված հեքիաթների մասին: Դրանց թիվը մեծ չէ, ընդամենը տասը, որոնցից միայն վեցն է ժողովրդական, զրի առնված Տիգրան Զիթունու կողմից: Սակայն այդ հեքիաթների մեջ ակներև է իր՝ Զիթունու եռանդուն միջամտությունը, մի հանգամանք, որ զգալիորեն իջեցնում է նրանց բանահյուսական արժեքը:

Զիթունին իր հեքիաթներից մի քանիսի ծանոթագրություններում և «Թլու-Դավիթ՝ Տրդատ-Մեծ նորագույն լուսեբու տակ»<sup>73</sup> ուսումնասիրության մեջ հակված է ի դեմս հեքիաթների հերոսների անպայման պատմական վավերական

<sup>73</sup> «Անի», 1946, հ. 6, էջ 333:

անձնավորություններ տեսնել, որ, ինչ խոսք, սխալ է: Ժողովրդական բանահյուսությունը՝ էպոսը, հեքիաթները դեղարվեստական երկեր են: Նրանց հերոսները, ինչպես գրում է ակադեմիկոս Հ. Օրբելին, «Իրենց մեջ կրում են հարյուրավոր շերտավորումներ, որոնք գոյացել են մարդկային հասարակության աճին ու զարգացմանը համընթաց»<sup>74</sup>: Պնդել, թե Սասունցի Թլու-Դավիթը Տրդատ Մեծն է և թե «ատոր ալիս կասկած չկա»<sup>75</sup>, կամ գծել նման ուրիշ զուգահեռներ, ինչպես անում է Տ. Զիթունին, զուրկ է գիտական հիմքից:



Նախորդ գլխում մենք խոսեցինք այն սկզբունքների մասին, որոնցով դեկավարվել է ամսագիրը, կատարելով սովետահայ հեղինակների չափածո գործերի բնորոշությունը: Հասկանալի է, որ այդ նույն սկզբունքը պահպանված է և արձակի բնորոշության դեպքում: Հիմնականը այդ մոտեցման մեջ՝ «հայրենի մշակույթի բարիքները» սփյուռքահայությանը ներկայացնելն է:

Զանազան առիթներով «Անի»-ն բազմիցս անդրադարձել է հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերի հարցերին, բնորոշելով, որ սփյուռքը կարող է ավելի երկար պահպանել իր լեզուն ու մշակույթը և կերտել իր գրականությունը, եթե մշտական ու սերտ հաղորդակցության մեջ լինի հայրենիքի հետ, իր ներշնչումը, մղումն ստանա հայրենիքից:

Իր հոդվածներից մեկում՝ «Հայաստանի Սովետական Գրողներու Բ. Համագումարին շուրջ»<sup>76</sup>, Վահե-Վահյանը այդ հարցի կապակցությամբ գրում է.

«Մինչև հայրենի հողին վրա միաձուլված մե՛կ ժողովուրդի և մե՛կ գրականության իդեալին ամբողջական իրականացումը, պանդուխտի ճակատագիրով մը երկնվող մեր գրականության կեցուցիչ միակ ուժը կրնա բխիլ մայր երկիրի մեր ժողովուրդեն և անոր մշակույթին հետ խորունկ, աննախա-

74 Տե՛ս Հովսեփ Օրբելի—«Հայկական հերոսական էպոսը», Երևան, 1956, էջ 63:

75 «Անի», 1946, հ. 6, էջ 336:

76 «Անի», 1946, հ. 8—9, էջ 467:



սլաշար ու սրտբաց հաղորդակցութենէ մը: Ահա վասիկ դա-  
վանանքը և ուղին անոնց որ կը հավատան հայրենիքին»:

Այս մտահոգութեամբ էլ «Անի»-ն մոտեցել է սովետահայ  
հեղինակներին գործերի տպագրութեան հարցին: Կարելի է,  
իհարկե, վիճել այս կամ այն գործի ընտրութեան շուրջը, սա-  
կայն դս էական չէ տվյալ դեպքում: Անհրաժեշտ է միայն  
նշել, որ ամսագիրը, հատկապէս իր լույս ընծայման ա-  
ռաջին շրջանում, ընտրութեան որոշ դժվարութիւններ  
այնուամենայնիվ ունեցել է, երբ Արտասահմանի հետ Կուլ-  
տուրական կապի Հայկական Ընկերութեան աշխատանքները  
դեռ չէին ծավալվել և համեմատաբար քիչ նյութեր էին ժա-  
մանակին սփռուր հասնում: Մի տեղ<sup>77</sup> Վահե-Վահյանն ան-  
գամ գանգատվում է «Հայաստանէն հասած աշխատութիւն-  
ներու և օգտագործելի նյութերու» անբավարարութիւնից:  
Բայց և այնպէս ամսագիրը ջանք չի խնայել իր ընթերցողնե-  
րին՝ լայնորեն ծանոթացնելու սովետահայ հեղինակներին  
ստեղծագործութիւններին: Ավելի քան քսանհինգ սովետահայ  
գրողներ են ներկայացված ամսագրի արձակի բաժնում:  
Նրանց պատմվածքներն ու գեղարվեստական ակնարկները  
օգնել են սփռութեամբ ընթերցողներին ոչ միայն չկտրվելու  
հայրենի ժամանակակից գրականութիւնից, այլև ճանաչելու  
Սովետական Հայաստանի կյանքը, ծանոթանալու սովետա-  
կան մարդկանց աշխատանքին ու կենցաղին, նրանց ապրում-  
ներին ու մտորումներին: Այդ գործերի թվում հիշենք Արագու  
«Ալեքը» պատմվածքը, Դ. Դեմիրճյանի, Հր. Քոչարի, Գ. Սե-  
վունցի, Բ. Սևյանյանի պատմվածքներն ու ակնարկները,  
Վ. Անանյանի «Ուշացած խոստովանութեան»-ն ու որսորդա-  
կան մի քանի պատմվածքները, Ն. Զարյանի «Հացավան» և  
Վ. Անանյանի «Սևանի ափին» վեպերից վերցրած հատված-  
ները և այլն:

«Անի»-ում տպագրված սովետահայ պատմվածքների  
մի ուրիշ խումբ արտացոլում է Հայրենական մեծ պատե-  
րազմի դրվագները և հայ մարտիկների սխրանքները, ինչպէս  
Ստ. Զորյանի պատմվածքներից՝ «Մայրը», «Որդին», «Սե-  
րորը», «Աղավիններ»-ը, նույնպէս և Արաքսի, Սիրասի,

<sup>77</sup> «Անի», 1948, հ. 12 (24), էջ 667:

Հր. Քոչարի, Վ. Խեչումյանի, Գ. Սևունցի, Բ. Սեյրանյանի, Հ. Մկրտչյանի և ուրիշների արձակ գործերը:

Մի շարք դեպքերում ամսագիրը սովետահայ արձակա-  
դիրներին ներկայացրել է գրախոսականների միջոցով, տպա-  
գրելով քննարկվող գրքից այս կամ այն գործը կամ առանձին  
հատվածներ: Այսպես, օրինակ, Վահե-Վահյանը, գտնելով,  
որ սփյուռքահայ ընթերցողը բավականաչափ ծանոթ չէ Խա-  
չիկ Դաշտենցի ստեղծագործությանը, տպագրել է, գրախոսա-  
կանից բացի, մի հատված «Խոզեղան» վեպից և ավելացրել,  
որ «...Դրեն նման հարադատ խառնվածքով ու բեղուն գրիչ  
մը ցարդ չէ գտած արժանի իր տեղը՝ հայրենական գրակա-  
նության հանդեպ արտասահմանի հետաքրքրության մեջ»<sup>78</sup>:

Նույն միտքն է արտահայտում ամսագրի խմբագիրը նաև  
Հար. Մկրտչյանի մասին նրա «Նովելներ և ակնարկներ» գիրքը  
գրախոսելիս:

Ավելին. Բ. Սեյրանյանի «Լեռնային բյուրեղ» ժողովածուի  
գրախոսականում ամսագիրը դժգոհություն է հայտնում, որ  
հեղինակը պատշաճ զնահատանքի չի արժանացել սովետա-  
հայ գրաքննադատության կողմից: Այդ կապակցությամբ,  
Բ. Սեյրանյանին ավելի լայնորեն ներկայացնելու նպատա-  
կով, ամսագիրը իր հաջորդական երկու համարներում տպա-  
գրում է նրա «Իմ առաջին սերը» պատմվածքը, իսկ այնու-  
հետև նաև մի շարք այլ արձակ գործեր:

Սովետահայ արձակը, այսպիսով, զգալի բաղմազանու-  
թյուն ու թարմություն է մտցրել «Անի»-ում, ճոխացնելով  
ամսագիրը թե՛ իր բովանդակությամբ և թե՛ արվեստով:

Ավարտելով մեր խոսքը «Անի»-ի արձակի մասին, պետք  
է ավելացնենք, որ ամսագիրը անդրադարձել է նաև մեր դա-  
սական գրողներին (Խ. Աբովյան, Հովհ. Քումանյան, Ալ. Շիր-  
վանդադե), հորեկյանական կամ նշանավոր տարեթվերի առի-  
թով առանձին փոքրածավալ գործեր տպագրելով նրանց  
ստեղծագործություններից:

Սակայն «Անի»-ի չափածոն ու արձակը չեն սահմանա-  
փակվում հայ հեղինակների գործերով: Ամսագիրը իր էջե-  
րում զգալի տեղ է հատկացրել նաև ռուս և միջազգային  
գրականությանը:

<sup>78</sup> «Անի», 1951, հ. 9 (45), էջ 528:



## ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՆԻ» ԱՄՍԱԳԻԻՐԸ

«Միջազգային գրականություն» ընդհանուր խորագրի տակ «Անի»-ն իր երկրորդ համարից բաց է անում նոր բաժին, որի նպատակը տարբեր ժողովուրդների գրական կյանքում «...տիրող կամ կազմավորվող արդի ձգտումները» նեկայացնելն է: Ամենից առաջ լայն տեղ այդ բաժնում հատկացված է ռուս գրականությանը, որ խոսում է ոչ միայն խմբագրի նախասիրության, այլև այն շրջանակների վերաբերմունքի մասին դեպի ռուս գրականությունն ու ընդհանրապես մշակույթը, որոնց արտահայտիչն է «Անի»-ն:

Ամսագրում ներկայացված է ինը ռուս հեղինակ. դրանք են Վ. Գ. Բելինսկին, Ա. Ս. Պուշկինը, Ն. Վ. Գոգոլը, Ն. Ա. Նեկրասովը, Լ. Ն. Տոլստոյը, Մաքսիմ Գորկին, Վ. Վ. Մայակովսկին, Կ. Սիմոնովը և Վ. Գրոսմանը:

Համաշխարհային քննադատական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից ամսագիրը «Միջազգային գրականություն» բաժնում հանգամանորեն անդրադարձել է միայն Վ. Բելինսկուն: Եվ դա սլատահական չէ:

«Անի»-ի սլաշտպանած գեղագիտական հայացքները, գրականության դերի ու նշանակության մասին բազմաթիվ առիթներով արտահայտած մտքերը ցույց են տալիս, թե որքան դրանք համահնչյուն են ռուս ռեվոլյուցիոն-դեմոկրատական գեղագիտական սկզբունքներին, որի հիմքը այնպիսի հանճարեղությամբ դրեց Վ. Բելինսկին:

Ահա թե ինչու «Անի»-ն այդպիսի սիրով է տեղ տվել Վ. Բելինսկուն իր էջերում: Նրա նպատակն է եղել, — ինչպես ասում է հոդվածի հեղինակ Վահե-Վահյանը, — հաղորդակից

դարձնել իր ընթերցողներին «մեծ մշակույթի մը մեծ խանդավառություններուն»:

Բացի այդ հոգւածից ու կենսագրական ակնարկից, ամսագիրը տպագրել է նաև «Հատընտիր մտածումներ Բելինսկուց՝ գրականության, արվեստի և հասարակության մասին», որ անգլերենից թարգմանել է Վահե-Վահյանը: Բնորոշ է, որ այդ «Հատընտիր»-ի գաղափարներից շատերին կարելի է հանդիպել ամսագրի (առավելապես խմբագրի գրած) տեսական-քննադատական նյութերում:

Իր հոգւածում Վահե-Վահյանը շափաղանց բարձր է գնահատում Բելինսկուն, «ուսս քննադատական մտքի այդ հզոր ներկայացուցիչն»:

Նա բնութագրում է մեծ քննադատին որպես առաջադաս մտքի քաջարի զինվոր, որի մեջ գեղեցիկի ու իրականի սերը պաշտամունքի ջերմեռանդությունն ուներ և, ընդհակառակը, կեղծն ու վերամբարձը առաջ էր բերում աններող զայրույթ:

Որպես Բելինսկու քննադատական մտքի հատկանշական կողմ, Վահե-Վահյանը շեշտում է մեծ քննադատի կրքոտ ու անողոր անհաշտվողականությունը «մաքուր արվեստի» սնդուրված ասպետների նկատմամբ, և նրա խիստ բացասական մերաբերմունքը բոլոր նրանց հանդեպ, որոնք ձգտում էին կտրել ընթերցողին կյանքի հրատապ հարցերից:

«Գրականության մեջ, — գրում է Վահե-Վահյանը Բելինսկու մասին, — չատաղովն էր ինք աղգային՝ նկարագրին, և արվեստի մեջ՝ ստեղծագործ իրապաշտության: Իր փնտրած ու փառաբանածը կենսագոր աչյն բանաստեղծությունն էր, որ խորունկ էր բովանդակությամբ, հավատարիմ՝ կյանքի ճշմարտություններուն, և մատչելի՝ ժողովուրդին: Իր դատումով, այնքան մեծ էր հեղինակ մը՝ որքան խորությամբ, ճշտությամբ ու հեռահայաց գուշակումով կրցեր էր արտահայտել իր ժողովուրդն ու ժամանակը»<sup>1</sup>:

Վահե-Վահյանը ընդհանուր գծերով անգրադառնում է նաև մեծ քննադատի մի շարք այլ կարևոր մտքերին գրականության ու արվեստի մասին: Հեղինակը մասնավորապես կանգ է առնում Բելինսկու գրական հայացքների խոր գեմոկրատիզմի

<sup>1</sup> «Անի», 1949, հ. 4 (28), էջ 212:



վրա, շեշտելով, որ նա «...գրականության խորքն կը պահանջեր ամեն բանն առաջ մարդկայնություն, ու ձևեն՝ ազգային դրոշմ, հարազատ ինքնուրույնություն»<sup>2</sup>:

Վահե-Վահյանը խոսում է և այն հսկայական ազդեցության ու դերի մասին, որ ունեցել է Բելինսկին ռուս հասարակական ու գրական մտքի հետագա զարգացման գործում, և ռուսական մշակույթի միջոցով՝ բովանդակ մարդկության հասարակական մտքի զարգացման վրա: Եթե մեծ քննադատի սլայծառատես միտքը ջահի պես վեր բարձրացավ ռուս գրականության անցյալի ու ներկայի վրա, շարունակում է պարզաբանել իր մտքերը հողվածի հեղինակը, — ապա եղավ նաև նրա ապագան խուզարկող ու հետագա զարգացման ընթացքին ուղղություն տվող վառ լուսարձակ:

Ինչպես խոստովանում է Վահե-Վահյանը, Բելինսկու հանդեպ ունեցած իր ջերմ վերաբերմունքը արդյունք է նաև այն խոշոր ու բարերար ազդեցության, որ ունեցել է ռուս մեծ քննադատը հայ մշակույթի և մասնավորապես հայ գրականության վրա: Ամբողջ մի դար, սկսած Աբովյանից մինչև մեր ժամանակները, «...Արևելահայոց գրական որոնումները՝ ամեն մարդն ավելի Բելինսկին ունեցեր են որպես ուղեցույց»<sup>3</sup>, — գրում է նա:

Եթե այդ ազդեցությունը թերևս պետք է ենթադրել Խ. Աբովյանի ազատատենչ հայացքների վրա, շարունակում է Վահե-Վահյանը, ապա այն շատ որոշակի է արևելահայ գրական և մասամբ հասարակական մտքի զարգացման վրա՝ հետագա շրջանում՝ Մ. Նալբանդյանից մինչև մեր օրերի հեղինակները:

Բելինսկու ազդեցության բարերար հետևանքների մասին խոսելիս Վահե-Վահյանը այն միտքն է զարգացնում, որ արևելահայ գրականության մեջ հաստատված ռեալիզմը, ժողովրդագյուղականությունը, գաղափարայնությունը, «սեփական սլայծառների բերումից» բացի, նշանակալից չափով հետևանք են նաև Բելինսկու ու նրա մեծ ժամանակակիցների գաղափարների ներգործության:

<sup>2</sup> «Անի», 1949, հ. 4 (28) էջ 211:

<sup>3</sup> «Անի», 1949, հ. 4 (28) էջ 210:

Այդ գաղափարների ազդեցության ներքո խորացել են այն առողջ գծերը, որոնք հատուկ են արևելահայ գրականությանը, զարգացել է այն կենսունակ ռեալիզմը, որի ակունքը գտնվում է ժողովրդական կյանքի ընդերքում ու մոտ է նրա սրտին, ռեալիզմ, որը հաղորդակից է նրա միտքը զբաղեցնող ազգային-հասարակական պրոբլեմներին, հետամուտ է նրանց լուծումը փնտրելուն և հարուստ՝ տեղական գույներով ու կենցաղային պատկերներով:

Ավարտելով իր հոգվածը Բելինսկու մասին, Վահե-Վահյանը գրում է.

«Մարդն էր անիկա՝ որուն համար ճշմարտության որոնումը դարձավ կիրք, գեղեցիկին սերը՝ պաշտամունք և գաղափարական պայքարը՝ հոգեկան սնունդ: Իր ամբողջ կյանքը եղավ հարատև այրում մը, որմե արձակված ճառագայթները լուսավորեցին սերունդներու ուղին: Ի դուր չէ, ուրեմն, որ այսօր կ' ողջունեն իր մեջ մարգարեաշունչ ռահվիրան՝ մարդկությունը նորոգող գաղափարներուն»<sup>4</sup>:

Բելինսկու գրական-գեղագիտական հայացքների լուսաբանմանը նվիրված նյութերը ամսագրի քննադատական լավագույն էջերի թվին են պատկանում:

Անցյալ դարի ռուս խոշորագույն հեղինակներից Ա. Պուշկինի և Ն. Գոգոլի մասին հոգվածները, ինչպես, ի դեպ, նաև ռուս գրականությանը նվիրված նյութերի մեծ մասը, պատկանում են «Անի»-ի խմբագրի գրչին:

Արժանի գնահատական տալով Պուշկինի և Գոգոլի հանձարների մեծությանը, Վահե-Վահյանը առաջին հերթին շեշտը դնում է նրանց ստեղծագործությունների ազգային բնույթի, ազգային դրոշմի վրա:

Պուշկինի մասին նա ասում է, որ քննադատությունը նույնացրել է մեծ բանաստեղծի անձնավորությունն ու ստեղծագործությունը իր ժողովրդի հետ, այլ կերպ ասած՝ Պուշկինը իր երկերում, իր հերոսների միջոցով, հարազատորեն արտացոլել է բնավորության ու հասարակական մտածողության այն բնորոշ կողմերը, որոնք հատուկ են ռուս ժողովրդին, այն է՝

<sup>4</sup> «Անի», 1949, հ. 4 (28), էջ 212:



խիզախութիւնն ու տոկունութիւնը, պարզութիւնն ու անկեղծութիւնը, ճշմարտութեան սերը, հավատը իր մեծ ապագայի նկատմամբ և այլն:

Շարունակելով զարգացնել իր մտքերը, հեղինակը նշում է, որ Պուշկինը դատապարտում էր օտարամոլութիւնը և կոսմոպոլիտիզմը («աշխարհաքաղաքացի մտայնութեան մը հետքը անգամ»), հանդիսանալով «չերմեռանդ ջտտագովը ազգային նկարագիրին ու ժողովրդական (այս պարագային՝ ռուս ժողովրդին հատուկ) ոգիին—գրականութեան և արվեստի բոլոր արտահայտութիւններին մեջ»<sup>5</sup>:

Վահե-Վահյանը Պուշկինի հանճարի հզորութիւնը ճշմարտացիորեն վերագրում է ռուս մեծ ժողովրդին, որ սնեց ու աճեցրեց իր բանաստեղծին, և ռուսական հայրենիքին, պատմութեանն ու մշակույթին, որոնք ամենից ավելի նյութ տվին նրա ստեղծագործութեանը:

Բոլորովին պատահական չէ, որ ամսագիրը իր հետևյալ համարի «Միջազգային գրականութիւն» բաժնում (նույնպես նվիրված Պուշկինին) ղետեղել է Գոգոլի հոգովածը Պուշկինի մասին: Ինչպես հայտնի է, այդ հոգովածում Գոգոլն ընդգծում է Պուշկինի ստեղծագործութեան խորապես ազգային բնույթը:

Նույն միտքն է արտահայտում Վահե-Վահյանը և «Մեռած հոգիներ»-ի ու «Ռեկվոր»-ի հանճարեղ հեղինակի մասին, շեշտելով, որ նա «հարազատորեն ռուս» էր թե՛ իր երկերի մեջ տիրող մթնոլորտով, և թե՛ իր պատկերած տիպարներով:

Սակայն հանճարները, հավատարիմ մնալով հարազատ ժողովրդի ոգուն ու նկարագրին, չեն մնում իրենց հայրենիքի ու ազգայինի սահմաններում, այլ հայրենականի ու ազգայինի միջոցով ճամփա են հարթում դեպի մյուս ժողովուրդների սիրտը, դեպի համամարդկային ճանաչում: Այսպես են հանճարները դառնում միջազգային մեծութիւններ: Այս ճանապարհով է, ասում է հեղինակը, որ Պուշկինն ու Գոգոլը հասել են իրենց բարձրութեանը:

Պուշկինի և Գոգոլի ստեղծագործութիւններում, ինչպես և Բելինսկու քննադատական հոգովածներում, Վահե-Վահյանի

5 «Անի», 1949, հ. 8 (32), էջ 434:

ուշադրությունը դրաւում է նրանց ազատասիրական ոգին, պայքարի կամքը, տիրող հասարակական կարգերի անողոր քննադատությունը, հումանիզմը, հայրենիքի սերը:

«Իբրեւ պատմող, թատերագիր ու վիպասան, — գրում է Վահե-Վահյանը Գոգոլի մասին, — իր երգիծանքին անխնա թափովը մերկացուց ու ձաղկեց ապականությունը Ռուսաստանի վերնախավերուն, ու նույն ատեն՝ քնարերգական վճիռ գեղումներով ու դուրյազնաշունչ հրաշքով երգեց սերը հայրենիքին և ազատասեր ու արդարակորով անձնվիրությունը խոնարհ զանգվածներին ցայտած հերոսներուն»<sup>6</sup>:

Այդ նույն հատկութիւններն է ընդգծում հեղինակը, երբ անդրադառնում է Պուշկինի ստեղծագործութիւններին, թեպետ ուրիշ խոսքերով, բայց նույն տրամաբանությամբ ու համանման պատկերներով: Ահա այդ հատվածը Վահե-Վահյանի հոգվածից՝ Պուշկինի մասին.

«Հրաշունչ դուրյազներդուն եղավ ազատության և իրավունքի պայքարին: Աններող իր զայրույթին շանթերն արձակեց ընդդէմ բռնավոր ինքնակալության ու ճորտատիրական կեղեքումներուն: Իր երգիծանքին շամփուրովը խարանց անիդեալ մեղկութիւնն ու վսեմաշուք ստահակութիւնը պալատական պնակալեղներուն: Եղավ զգայուն խղճմտանք մը բոլոր ցավերուն ու տրամոթիւններուն դեմ, ու ժողովրդական զանգվածներուն մեջ տեսավ ու երգեց հոգեկան մեծութիւնները»<sup>7</sup>:

Վահե-Վահյանը իր հոգվածներում առանձին շեշտ է դրնում նաև Պուշկինի ու Գոգոլի ստեղծագործութիւնների ռեալիզմի վրա: XIX դարի առաջին կեսին, ասում է նա, Բելինսկին՝ իր քննադատական երկերով, Պուշկինը՝ իր բանաստեղծութիւններով և Գոգոլը՝ իր արձակով դրեցին ռեալիզմի հիմքը ռուս գրականութեան մեջ: Նա ընդգծում է միաժամանակ, թե ինչպիսի հակադարձութիւն առաջ բերեց Պուշկինի ու Գոգոլի մերկացնող, քննադատական ռեալիզմը ժողովրդական զանգվածների ու առաջավոր մտավորականութեան մեջ՝ մի կողմից և

6 «Անի», 1952, հ. 6—7 (54—55) էջ 380—381:

7 «Անի», 1949, հ. 8 (32), էջ 434:



հետադիմական ու պահպանողական խավերի մեջ՝ մյուս կողմից: Այն ժամանակ, երբ առաջադեմ մտածողները մեծ համակրանք էին տածում դեպի այս մեծ ուսուցողները և հրճվում նրանց երկերով, տեսնելով դրանցում իրենց հուզող կենսական հարցերի ու երևույթների քննադատությունը, պահպանողական շրջանները ջանք չէին խնայում ատելության ու թշնամանքի մթնոլորտ ստեղծել իր ժամանակին թե Պուշկինի և թե Գոգոլի շուրջը: «...Իր ոսոխներուն ժահրոտ ատելությունը կը վերածվեր սև վհուկի մը և կը հետապնդեր զինք ամեն վայրկյան, շուքի նման՝ իրմե անբաժան»<sup>8</sup>, — գրում է Վահե Վահյանը Պուշկինի մասին: Անդրադառնալով Գոգոլի «Մեռած հոգիներ»-ի լույս ընծայմանը, նա ասում է. «Անոր երևումը կը ցնցեի բովանդակ Ռուսիան: Կատաղության աստիճանին կը հասնի թշնամանքը հետադիմության»<sup>9</sup>:

Վահե Վահյանը իր հողվածներում ոչ միայն չի սահմանափակվում ուսուցողական և հասարակական մտքի զարգացման վրա Պուշկինի, Գոգոլի կամ Բելինսկու ստեղծագործությունների թողած խոր ազդեցության նշումով, այլև ընդգծում է այն նշանակալի դերը, որ ունեցան դրանք «ուսուցչական հաղորդակից» ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի գրական-հասարակական կյանքում:

Ռուս հանճարեղ մտածողներին նվիրված նյութերի տպագրումը ամսագրի խմբագիրը համարում է «հիացումի ու հրախտագիտության արձանագրում», «պարտքի հատուցում», «սիրելի պարտականություն»:

Պուշկինի ստեղծած երկերը, գրում է նա, արտահայտում են ոչ միայն ուսուցչական ժողովրդի խոհերն ու ձգտումները, այլև արձագանքում են կովկասյան, այդ թվում, մանավանդ, իր ազգային զարթոնքն ապրող հայ ժողովրդի նվիրական երազանքներին: Մեծահանճար բանաստեղծի արվեստում և ստեղծագործության մեջ հայ ժողովուրդը գտավ իր համար հարազատ շատ ճշմարտություններ: Այստեղից էլ վարմանալի չէ, որ Պուշկինին թարգմանող 76 լեզուների մեջ առաջիններից մեկը հայերենն է, սկսած անցյալ դարի երեսնական թվականնե-

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 435:

<sup>9</sup> «Անի», 1949, հ. 6—7 (54—55), էջ 435:

րից, շարունակում է Վահե-Վահյանը և ավելացնում, որ նորանոր թարգմանությունների շնորհիվ շուտով հայ ընթերցողը իր ձեռքի տակ կունենա Պուշկինի համարյա բոլոր երկերը՝ ամփոփված մի շարք հատորների մեջ: Ինչպես հայտնի է, այդ հատորներն արդեն դարձել են հայ ընթերցողի սեփականությունը:

Նույն ջերմությունը է արտահայտվում «Անի»-ի խմբագիրը նաև Գոգոլի մասին, գնահատելով նրա թողած ազդեցությունը հայ գրականության վրա: «Մեր գրականությունը,— գրում է նա,— անոր արևելյան թևը հատկապես, XIX դարի կեսին սկիզբ առած մեր վերածնունդին արշալույս են մինչև ներկա օրերը, կրած է բարերար ներգործությունը Գոգոլի արվեստին և ուղղության»:

Ամսագիրը Պուշկինից տպագրել է նրա մի շարք բանաստեղծությունները («Կովկաս», «Հուշարձան», «Զմեռվա իրիկուն», «Պոետին» և այլն)՝ հայ անվանի գրողների թարգմանությամբ, հատվածներ՝ Վ. Բելինսկու «Պուշկինի մասին» հոդվածների շարքից, Հ. Այվազովսկու «Հանդիպումներ Պուշկինի հետ» հոդերը (նամակ Ն. Ն. Կուզմինին) և Ավ. Իսահակյանի «Մեծահանճար Պուշկինը» հոդվածը: Գոգոլը ներկայացված է «Մեռած հոգիներ» վեպի հատվածներով: Բացի այդ, ամսագիրը տպագրել է նաև հատվածներ Գոգոլի մասին՝ Բելինսկու գրած հոդվածներից:

Ռուս մեծ բանաստեղծ Ն. Նեկրասովի մասին հոդվածը<sup>10</sup> պատկանում է սովետահայ քննադատ Ռ. Վարդազարյանի գրչին:

Հոդվածի նեղ սահմաններում հակիրճ ձևով բնութագրելով Նեկրասովի գրական ժառանգությունը, սովետահայ հեղինակը նշում է այն սերտ կապը, որ կա նրա ստեղծագործության և ռուս ժողովրդի ու ժողովրդական բանահյուսության, ինչպես նաև ժամանակի առաջավոր մտքի ու հեղափոխական-դեմոկրատական շարժման միջև: Մեծ բանաստեղծը, պատկերելով իր բարձրարվեստ գործերում ճորտ գյուղացիների, խեղճ ու թշվառ աշխատավորների կյանքը, ասում է հե-

<sup>10</sup> «Անի», 1952, հ. 11—12 (59—60), էջ 643:



զինակը, անում է լայն ու ճշմարտացի ընդհանրացումներ ճորտատիրական հասարակարգի ողջ սիստեմի մասին: Կանգ առնելով մասնավորապես «Ո՞վ է Ռուսիայում լավ ապրում» պոեմի վրա, Ռ. Վարդադարյանն ընդգծում է, որ այդ ստեղծագործության միջոցով Նեկրասովը ցույց է տվել ճորտատիրական Ռուսաստանում տիրող անմարդկային կարգերն իրենց ողջ մերկությամբ: Սակայն բանաստեղծ քաղաքացին դրա հետ միասին տեսնում էր և այն նորը, որ ծնունդ էր առնում հնի ընդերքում, ու սլաքաբարձ էր արդարացի կյանքի համար: Հողվածի հեղինակը արժանին է հատուցել բանաստեղծին և՛ նրանով, որ ընթերցողի ուշադրությունն է հրավիրել Նեկրասովի «Պոետ ու քաղաքացի» բանաստեղծության վրա, որտեղ այնքան գեղեցիկ կերպով բնորոշված է մարդ-քաղաքացու դերը հասարակության կյանքում:

«Պոետ կարող ես չլինել,  
Բայց քաղաքացի՝ պարտավոր ես»:

Ավարտելով հոդվածը, հեղինակը նշում է այն սիրո մասին, որ հայ ժողովուրդը միշտ տածել է դեպի մեծ պոետի ստեղծագործությունները:

Ամսագիրը արձագանքել է Նեկրասովի մահվան 75-րդ տարելիցին, ելնելով, անկասկած և՛ այն հանգամանքից, թե ինչպիսի մեծ ու կարևոր տեղ է գրավում Նեկրասովը ռուս գրականության մեջ, և՛ բանաստեղծի խոր դեմոկրատիզմից ու հումանիզմից, որ հարազատ ու սիրելի է եղել նաև դարեր տառապած հայ ժողովրդի սրտին:

Նեկրասովից ամսագիրը տպել է մի ամբողջ շարք բանաստեղծություններ՝ Ալ. Մատուրյանի և Աշ. Գրաշու թարգմանությամբ:

«Անի»-ն ռուս մեծ գրողների շարքում անդրադարձել է նաև Լ. Ն. Տոլստոյին: Տոլստոյի մասին գրած Հ. Էսեկյուլյանի հոդվածը արծարծում է միայն մեկ հարց, որը և արտահայտվել է հոդվածի վերնագրում՝ «Արվեստը ըստ Տոլստոյի»<sup>11</sup>:

Էսեկյուլյանի հոդվածը, ի տարբերություն մյուս նյու-

<sup>11</sup> «Անի», 1952, հ. 11—12 (59—60), էջ 651:

թերի, չի գտնվում ամսագրի նվաճած ընդհանուր տեսական բարձրության վրա:

Ներածական մասում հեղինակը խոսում է Տոլստոյի մեծության մասին, անվանելով նրան XIX դարի ռուս գրականության երեք գագաթներից մեկը (Պուշկինի և Դոստոևսկու հետ մասին) և այն ազդեցության մասին, որ նա ունեցել է ինչպես ժամանակի ռուս հասարակական կյանքի ու մտածողության, այնպես էլ եվրոպական կուլտուրայի այլալլ բնագավառների վրա: Այնուհետև հեղինակն անցնում է Լ. Ն. Տոլստոյի «Ի՞նչ է արվեստը» ուսումնասիրության քննարկմանը, նշելով, որ իր ձեռքի տակ ունեցել է այդ գործի 1898-ի ֆրանսերեն հրատարակությունը: Տոլստոյի այդ ուսումնասիրությունը, ավելացնում է նա, «...այսօր ալ կը պահե իր այժմեությունը»:

Հ. Էսեկյուլյանը իր հոդվածը կառուցել է հետևյալ սկզբունքով. նախ շարադրում է արվեստի այն սահմանումները, որ հերքել է ինքը Տոլստոյը, հետո տալիս է Տոլստոյի սահմանումները արվեստի մասին և ապա այդտեղից առանձնացնում, ինչպես ինքն է ասում, «...այն մասը, որ կը համերաշխի ներկա առաջապահ մտածողության հետ»:

Մենք կանգ չենք առնի այն մասի վրա, որ Տոլստոյը հերքել է: Մեզ հետաքրքրողն այն է, որի հետ համաձայն է մեծ գրողը, և որը, այդպիսով դառնում է նաև իր՝ Հ. Էսեկյուլյանի տեսակետը:

«Իբրև արվեստի տեսաբան, — գրում է հեղինակը, — Տոլստոյի արժանիքը կը կայանա՝ արվեստը իր բնազանցական կամ շատ բնապաշտական շրջանակեն ձերբազատելուն և ընկերային կյանքի ծոցը տեղավորելուն մեջ»: Ու ավելացնում է. «Արվեստը իրական ընկերային արարք է. քանի որ անոր արտադրությունները կը դառնան հանրության սեփականությունը, պետք է որ ան նպաստի ընկերության բարօրության»<sup>12</sup>:

Ասելով այս մասնակի և ոչ այնքան էլ որոշակի ճշմարտությունը, հեղինակը երկու վերապահում է կատարում, որոնք նույնպես տառապում են անորոշությամբ: Ծճմարիտ

12 «Անի», 1952, հ. 11--12 (59--60), էջ 656:



արվեստը կրոնական ղգացումի կամ նախնական քրիստոնեության մեջ փնտրելը Տոլստոյի կողմից նա համարում է միմիայն չափազանցություն, չավելացնելով քննադատական ոչ մի խոսք և ըստ էության շփտելով այն:

Երկրորդ իր վերապահումը հեղինակը ձևակերպում է այսպես. «...Արվեստի իր (Տոլստոյի—Մ. Բ.) սահմանումը կը թվի քիչ մը շատ պարզունակ: Արվեստագետին ու հանրության միջև գեղարվեստական հաղորդակցությունը կրնա բխիլ վսեմ իդեալի մը, որ սակայն չէ միշտ իրագործելի»<sup>13</sup>: Էսեկյուլյանը, այսպիսով, շատ անորոշ ու վարանոտ եղանակով կարծեք ուզում է մոտենալ արվեստի բովանդակության, գաղափարայնության հարցին, սակայն հստակ պատկերացում չունենալով արվեստի՝ որպես հասարակական գիտակցության ձևերից մեկի՝ բուն էության մասին, նա չի փորձում անգամ քննարկել հարցի այդ շատ կարևոր ու էական կողմը: Տոլստոյը դիտում էր արվեստը, իր խոսքերով ասած (Չ. էսեկյուլյանի հոդվածում դրանք բերված են), որպես «զգացումները փոխանցելու միջոց»: Նրա համար արվեստը լոկ մարդու զգացումների պատկերավոր արտահայտություն էր: Այնինչ, ինչպես հայտնի է, արվեստը իմաստավորվում է այն ժամանակ միայն, երբ կրում է իր մեջ խոր, հասարակայնորեն հետաքրքրություն ներկայացնող գաղափարներ ու կենսական հշմարտություններ:

Շարունակելով առարկել Տոլստոյին, Չ. էսեկյուլյանը սխալ դիրքերից է մոտենում գեղագիտության տեսական հարցերին: Նա գրում է. «Հոգեբանական գիտությունը կը հավաստե թե յուրաքանչյուր անհատ իր ձևովը կը մեկնաբանե արվեստի գործ մը: Ատկե ծնունդ կ'առնե գեղագիտության հարաբերականությունը: Գեղեցկությունը լուսարձակումն է հոգիին ու նյութին»<sup>14</sup>: Եթե մի կողմ թողնենք այս վերջին ճապաղ նախադասությունը, նորից Չ. էսեկյուլյանը շփոթում է առնվազն երկու բան, այն է՝ գեղեցիկի բնորոշման (գեղարվեստականության) օրյեկտիվ չափանիշը և գեղեցիկի հասկացողության հարաբերականությունը: Եթե, ինչպես գրում է

13 «Անի», 1952, հ. 11—12 (59—60), էջ 656:

14 Նույն տեղում:

նա, յուրաքանչյուր մարդ «իր ձեռով մեկնաբանի» արվեստի գործը կամ գեղեցիկը, անկախ հասարակական միջավայրից, որպես անհատ, ապա այդ կլինի ժխտումն իսկ գեղեցիկի հասկացողության ընդհանրապես: Անկախ ճաշակների տարբերությունից, գեղեցիկն ունի իր օբյեկտիվ չափանիշը, որ ընդհանուր է հասարակայնորեն նման մտածողություն ունեցող կամ միեւնոյն դասակարգի շահերով ապրող մարդկանց միծամասնության համար: Այլ բան է գեղեցիկի հասկացողության բացարձակ կամ հարաբերական ըմբռնման հարցը: Ինչ խոսք, գեղեցիկի հասկացողությունը փոխվում է ժամանակի ընթացքում և պատմականորեն հարաբերական է, բայց այն իմաստով, որ յուրաքանչյուր դարաշրջան (սակայն ոչ անհատ) գեղեցիկը բնորոշելու իր մոտեցումն ու չափանիշն ունի:

Սխալվում է հեղինակը և մեկ ուրիշ հարցում, երբ գրում է Տոլստոյի մասին, թե «իր ստեղծագործությունը համերաշխ է արվեստի իր ըմբռնումին, անոր հարազատ կիրարկումն իսկ է»<sup>15</sup>: Այստեղ անտեսված է այն մեծ հակասությունը, որ կա Տոլստոյ-ստեղծագործողի և Տոլստոյ-մտածողի միջև, և որի մասին ժամանակին այնպես հանճարեղ կերպով արտահայտվել է մեծ Լենինը Տոլստոյի մասին գրած իր հոդվածներում:

Սոցիալիստական ռեալիզմի հիմնադիր Մ. Գորկու, հանճարեղ բանաստեղծ Վ. Մայակովսկու և սովետական անվանի գրողներ Կ. Սիմոնովի ու Վ. Գրոսմանի մասին հոդվածների հեղինակը նույնպես Վահե-Վահյանն է: Այսպիսով, «Անի»-ի խմբագիրը ամսագրի էջերում կարծեք ծաղկաքաղի ձեռով ներկայացրել է ռուս գրականությունը Պուշկինից մինչև մեր օրերը: Կասկածից դուրս է, որ եթե չընդհատվեր ամսագրի հրատարակությունը, այդ փունջը կշքեղանար այլ մեծություններով ևս:

Մ. Գորկու մասին գրած հոդվածը Վահե-Վահյանի՝ ամսագրում տպագրած գործերի մեջ լավագույններից է: Հակիրճ, կուռ, Մ. Գորկուն բազմակողմանիորեն ներկայացնող և նրա ստեղծագործության մեծ նշանակությունը լուսաբանող այդ

15 «Անի», 1952, հ. 11--12 (59--60), էջ 652:



հոգւածը, ինչպես և Գոգոլի մասին նրա գրածը, հետազայում մտել են հեղինակի «Ոսկի կամուրջ» ժողովածուի մեջ, որ հրատարակեց Հայպետհրատը 1958 թվականին:

«Միջազգային ժամանակակից գրականությունը շունի ուրիշ դեմք մը, որ մարդկային միտքին տված բլլա պայծառ տեսիլքներ արթնցնող այնքան ուժգին ցնցումներ՝ որքան տվաւ Մաքսիմ Գորկին»<sup>16</sup>: Այսպես է սկսում Վահե-Վահյանն իր հոգւածը, առաջին իսկ նախադասութեամբ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով մեծ գրողի ստեղծագործութեան ամենից ավելի էական կողմի՝ «պայծառ տեսիլքներ արթնցնող» նրա ուժի վրա:

Մի փոքր ցած հեղինակը ավելի որոշակի է դարձնում ու զարգացնում իր միտքը, երբ ասում է, թե Մ. Գորկին «...եղավ նաև ռազմակոչ շեփոր մը և բանականեր հանեց ոտքի, իրավունքի և արդարութեան դատին ի խնդիր»<sup>17</sup>:

«Պայծառ տեսիլքներ արթնցնող» և «բանականներ ոտքի հանող» սահմանումները հենց այն հատկանիշներն են, որոնք բնորոշ են սոցիալիստական ռեալիզմին: Վահե-Վահյանը սոցիալիստական ռեալիզմ տերմինը չի գործածում, ինչպես և, խոսելով ըստ էութեան քննադատական ռեալիզմի մասին, դերադասում է անվանել այն «անողոք իրապաշտություն»: Նրա մոտ այդ ամենը միաձուլվում է մեկ բառի՝ «իրապաշտություն» հասկացողութեան մեջ: Բայց լինելով հիրավի իրապաշտ մտածող և լայն դիապազոնի տեր գրող ու գրականագետ, նրա համար դժվար է Գորկու գրականությունն ու ստեղծագործական մեթոդը տեղավորել սոսկ ռեալիզմ հասկացողութեան սահմաններում: Ուստի Գորկու մասին խոսելիս նա կարծեք հարկադրված է լինում լայնացնել ռեալիզմի սահմանները «անողոք», ապա «շինիչ» որոշիչներով: Նա գրում է. «Առողջ է Գորկիին իրապաշտությունը, շինիչ, բնկերութեան հառաջամարտիկ ուժերը զորացնող»<sup>18</sup>: Անգամ այն դեպքում, երբ ուղղակիորեն մատնանշում է Գորկու ստեղծած գրական

16 «Անի», 1951, հ. 11—12 (47—48), էջ 627:

17 «Անի», 1951, էջ 628:

18 «Անի», 1951, էջ 628, 629:

նոր ուղղութիւնն ու խոստում է այդ մասին, նա նորից խուսա-  
փում է անուն տալ դրական այդ մեթոդին: Բայց տալիս է այդ  
ուղղութիւնն դիպուկ բնորոշումը: «Իզուր չէ, — ասում է նա, —  
որ Գորկին կը նկատուի գրականութեան մեջ հիմնադիրը այն  
ուղղութեան, որ իր դրական հերոսները կը հանն աշխատանքի  
բովնն, կառուցումն ու կառուցանողը կը դարձնեն առանցքը իր  
դուցադներգութեան...»<sup>19</sup>: Եւ ապա, ավելի զարգացնելով  
այդ միտքը, շարունակում է. «Ախտաճանաչին հետ կը հայտ-  
նելի և ախտահանը իր մեջ: Ընկերայնորեն կազմված՝ պայ-  
քարի մարդն է ինք: Հզոր ձայնովը իր համոզումին՝ հերոսներ  
կը հարուցանեն ճակատագիրի իր եղբայրներն, ու գիտակցու-  
թեան լույսով պայծառացած անոնց աչքերուն դեմ կը շողացնեն  
կատարները իրենց գրավումին սպասող բարձունքներուն:  
Այդպէս է մանավանդ, որ գրագետը կը դառնա առաջնորդ ու  
բանակներ կը քաշի իր ետեւն—միտքի, սիրտի ու բազուկի  
բանակներ, — ազատագրական պայքարներու հաշվույն»<sup>20</sup>:

Վահե-Վահյանը կարեւոր է գտնում նշել, որ Գորկին թըշ-  
նամի էր այն բոլոր կարգերին ու օրենքներին, որոնք կաշկան-  
դում են մարդու միտքը, սահմանափակում նրա հորիզոնը,  
հոգու թռիչքը, ապականում գեղեցիկի սերմերը նրա մեջ: Նա  
թշնամի էր և բուրժուական բարոյական նորմաներին («բարո-  
յականի փարիսեցիական ընթացիկ ըմբռնմանը», ինչպէս աս-  
ում է Վահե-Վահյանը): Կյանքում և գրականութեան մեջ  
Գորկու համար անբարոյականը այն է, ինչ դիմափոխում է  
իրականութիւնը: Ահա թե ինչու նրա գրականութիւնից  
վտարված են կեղծիքն ու շպարը: Գորկին իր արվեստի լու-  
սարձակի տակ է առնում իրենից առաջ չխուզարկված մի նոր  
աշխարհ և այդտեղ է գտնում իր դրական հերոսներին, որոնք  
պետք է վերափոխեն հին ու նեխված աշխարհը և տան մարդ-  
կային եղբայրութեան ու համերաշխութեան իդեալը:

Հոգվածում հեղինակը տալիս է Մ. Գորկու հակիրճ կեն-  
սագրութիւնը, թվարկում նրա գլխավոր երկերը, խոստում նրա  
հասարակական լայն գործունեութեան մասին, վերջում նշելով,  
որ հանճարեղ գրողը ջերմ բարեկամն էր հայ ժողովրդի ու նրա

<sup>19</sup> «Անի», 1951, հ. 11—12 (47—48), էջ 628, 269:

<sup>20</sup> Նույն տեղում: :



մշակույթի և մեծ նպաստ է բերել հայ գրականությանն ու թատրոնին:

Վահե-Վահյանը Գորկուն, տարբեր առիթներով, հիշում է իր այլ հոգվածներում ևս, առանձնապես շեշտելով նրա ստեղծագործության և գործունեության հասարակական կարևոր նշանակությունը: Անհետաքրքիր չէ նաև նշել, որ «Անի»-ի խմբագիրը ամսագրի էջերում տպագրելու համար ընտրել է Գորկու այնպիսի ցայտուն գործերը, ինչպիսիք են «Դանկոյի սիրտը» («Պառավ Իդերգիլը» պատմվածքից) և «Մրրկահավի երգը»:

Ամսագրում Մ. Գորկու ստեղծագործությանն է անդրադառնում իր «Նյութը և ձևը գրականության մեջ»<sup>21</sup> հոդվածում նաև Ստ. Շահպաղը:

Ժխտելով բուրժուական հետադիմական ու քաղբեհի գրողների այն պնդումը, թե գրականության նյութը պետք է փնտրել «...ախտալոր սերերու, կիրքերու, ունակության»<sup>22</sup> ու ձանձրույթի մեջ միայն...», Ստ. Շահպաղը դիմում է Մ. Գորկու «Մայրը» վեպին, հաստատելով, որ իսկական ռեալիստական գրականության նյութը ինքը կյանքն է, մարդկայինը, աշխատավոր մարդը իր իդեալներով: Եվ որպես օրինակ բերում է վեպի գլխավոր հերոսներին՝ Պավել Վլասովին և նրա մորը, որոնք, ելնելով ժողովրդի ընդերքից, պայքարում են նույն այդ ժողովրդի ապագայի համար, նոր, առաջավոր ու արդար հասարակարգ ստեղծելու համար: «Պավելը և իր մայրը,— գրում է հեղինակը,— այնքան ուժեղ ու հետաքրքրական տիպարներ են, որքան գրական որևէ հանճարի մինչև այսօր տված որևէ տիպարը»:

Վ. Մայակովսկուն «Անի»-ն անդրադարձել է իր երկու համարներում, երկու հոդվածներով<sup>23</sup>: Դրանցից մեկը, ինչպես ասացինք, պատկանում է Վահե-Վահյանի գրչին. երկրորդի հեղինակը անգլիացի Հերբերտ Մարշալն է:

21 «Անի», 1947, հ. 5 (17), էջ 276:

22 Այստեղ գործ է ածված սովորամոլության իմաստով (տե՛ս Ն. Բ. Գալայան, «Բառարան-գանձարան հայ լեզվի հոմանիշներու», Կահիրե, 1938):

23 «Անի», 1946, հ. 8—9, էջ 485 և «Անի», 1947, հ. 10, էջ 542:

2. Մարշալի հոգւածը Մայակովսկուն բնութագրելու մի փորձ է, թեև շատ ընդհանուր գծերով: Վահե-Վահյանի հակիրճ հոգւածը՝ «Անի» ստորագրությամբ, նվիրւած է Մայակովսկու բանաստեղծական արվեստին՝ գիտւած ավելի շատ թարգմանչի տեսանկյունից:

Վահե-Վահյանը ինքն է թարգմանել 2. Մարշալի հոգւածը և գրում է ծանոթագրության մեջ, որ անգլիացի հեղինակը Մայակովսկու հանճարով հիացողներից է, հմուտ՝ ուսա լեզվին և ձեռնհաս՝ ծանոթացնելու մեծ բանաստեղծին ընթերցող հասարակությանը: Ինքը, Վահե-Վահյանը, նույն ծանոթագրության մեջ որակում է Մայակովսկուն որպես «մեր դարաշրջանի ամենեն ինքնատիպ բանաստեղծական հանճար», «...որ հրաբխային իր հզորության կը միացնէ շշմեցնող ինքնատպություն մը զգացողության և արտահայտության»<sup>24</sup>:

«Հեղափոխական ամենեն ահարկու կորովովը տոգորւած» Երգիչը, որ իր ստեղծագործական առաջին քայլերն սկսել էր որպես ըմբոստ անհատապաշտ, գրում է անգլիացի հեղինակը, կարողացաւ կանխատեսել գալիք հեղափոխությունը և Հոկտեմբերի հաղթանակից հետո դարձաւ «դասակարգային սուր պայքարի դարագլուխ մը», ինչպես ինքը, մեծ բանաստեղծն է ասել, և իր գրիչը տվեց «ղինյալ աշխատավորության ղինարանին»:

Քաղաքացիական պատերազմի ամենածանր շրջանում, ինտերվենցիայի, սովի ու համաճարակների դեմ մղւած դժնդակ պայքարի օրերին նա անսասան մնաց պայծառ ապագայի իր հավատի մեջ, շարունակում է հոգւածագիրը, և երբ բոլորեց հեղափոխության առաջին տասնամյակը, նա գրեց «քերթված մը՝ որ Հոկտեմբերյան հեղափոխության համար այն է, ինչ որ է «Իլիական»-ը Տրովադայի պատերազմներուն համար»<sup>25</sup>: Խոսքը Մայակովսկու «Շատ լավ» պոեմի մասին է:

Ինչպես ասացինք, Վահե-Վահյանի հոգւածն արծարծում է Մայակովսկու բանաստեղծական արվեստի հարցերը և շատ սեղմ է ու գրւած՝ հեղինակի՝ Մայակովսկուց կատարած թարգմանությունների առիթով: Թարգմանությունները կա-

<sup>24</sup> «Անի», 1946, հ. 8—9, էջ 485:

<sup>25</sup> «Անի», 1946, հ. 8—9, էջ 488:



տարված են անգլերենից և տպագրված ամսագրի նույն համարում: Դրանք են՝ արձակից՝ «Ես ինքս» և չափածոյից՝ «Դեպի հայրենիք» (հատված) ու «Զախ, հառաջ»-ը («Левый марш»): Այդ կրկնակի թարգմանությունների մեջ Վահե-Վահյանն աշխատել է պահպանել Մայակովսկու բանաստեղծության իմաստային շեշտը և հասել է հաջողության: Խոսելով Մայակովսկու բանաստեղծության ձևի և ոճի առանձնահատկության մասին, հեղինակն այն անվանում է հեղափոխական: Հայկական բանաստեղծության մեջ, ասում է Վահե-Վահյանը, ձևի այդ նորությունը բերողը (չափի փոխարեն իմաստի շեշտի գործածությունը) եղավ Սիմոնովն:

Ռուս գրականության ժամանակակից դեմքերը ևս չեն վրիպում «Անի»-ի ուշագրությունից: Մանավանդ եթե նրանց ստեղծագործություններն առնչվում են մեր օրերի հրատապ հարցերին: Դրանցից մեկը միջազգային ասպարեզում սովետա-ամերիկյան հարաբերությունների հարցն է ետպատերազմյան շրջանում, որ իր գեղարվեստական արտահայտությունն է գտել Կ. Սիմոնովի «Ռուսական հարցը» թատերգության մեջ:

Կ. Սիմոնովի մասին հոդվածում<sup>26</sup> Վահե-Վահյանը կենսագրական մի քանի տեղեկությունների հետ միասին տալիս է ռուս անվանի և բեղուն գրողի ստեղծած գործերի ընդհանուր բնութագիրը ու եզրակացնում, որ «իր երկերը սերտորեն աղերսված են ժամանակակից կյանքին հիմնական հարցերուն հետ, ու կրնան լիովին բնութանվիլ ու գնահատվիլ՝ վերջին տասնամյակի խորհրդային ու միջազգային կյանքի մեծ երևույթներու լույսին տակ միայն»<sup>27</sup>:

Անդրադառնալով Կ. Սիմոնովի ստեղծագործության բովանդակության ու ոճի հարցերին, Վահե-Վահյանը շեշտում է, որ նրա երկերում վերլուծումից ավելի կա գործողություն, մարդկային բնավորությունների ու դադափարների բախում, որոնք ընդգրկում են մեծ մասամբ սոցիալ-քաղաքական հարցեր՝ դիտված ոչ միայն իրենց գոյության, այլ նաև ապագա զարգացման տեսանկյունով: Այդ հանգամանքի հետևանքով

<sup>26</sup> «Անի», 1947, հ. 4 (16), էջ 209:

<sup>27</sup> «Անի», 1947, հ. 4 (16), էջ 210:

է, ավելացնում է հոգւածի հեղինակը, որ ընթերցողները մըշտական հետաքրքրութիւն են ցուցաբերում դեպի նրա ստեղծագործութիւնները: Առանձնապէս մեծ ուշադրութեան արժանացաւ Կ. Սիմոնովի «Ռուսական հարց»-ը, որ թարգմանւեց եվրոպական բազմաթիւ լեզուներով ու «գտաւ տենդոտ ընդունելութիւն մը, որչունվելով մեկէն ու բանադրվելով մյուսէն»: Այդ հետաքրքրութիւնն է առիթ տվել նաև Վահե Վահյանին՝ թարգմանելու և տպագրելու նրա պիեսը: «Ռուսական հարց»-ը Վահե-Վահյանը թարգմանել է անգլերեն ու ֆրանսերեն թարգմանութիւններից, բաղդատել ու ճշտել բնագրի հետ և տպագրել ամբողջութեամբ ամսագրի երեք հաջորդական համարներում («Անի», 1947, հ. հ. 4, 5, 6):

Ռուս ժամանակակից գրողների մասին «Անի»-ում զետեղված մյուս հոգւածը նվիրված է Վ. Գրոսմանին<sup>28</sup>: Այստեղ Վահե-Վահյանը կանգ է առնում հիմնականում հեղինակի երկու գործերի՝ «Ստեպան Կալչուգին» և «Ժողովուրդն անմահ է» վեպերի վրա, որոնցից վերջինը, ինչպէս ինքն է վկայում, նույնպէս մեծ հետաքրքրութիւն է առաջ բերել արտասահմանում և թարգմանվել եվրոպական մի շարք լեզուներով:

Հայրենական մեծ պատերազմի իրադարձութիւններին նվիրված այդ գրքից, որ գրված է, Վահե-Վահյանի խոսքերով ասած, «զգայուն ու քնարական ոճով և հավատալիքով», նա թարգմանել է «Հրամանատարները» գլուխը: Այն, Գրոսմանի մասին հոգւածի հետ միասին, տպագրված է ամսագրի նույն համարում:

Ռուս գրականութեան վերաբերյալ նյութերը չեն սպառվում վերոհիշյալ հոգւածներով: Ամսագիրը այլ առիթներով ևս անդրադառնում է ռուս և սովետական գրականութեանն ու գրողներին, օրինակներ բերում, վկայակոչումներ կատարում, դնահատումներ տալիս: Այսպէս, օրինակ, Գ. Գասպարյանը, Սայաթ-Նովային նվիրված իր հոգւածում, խոսելով այն մասին, թե ինչպիսի խանդավառութեամբ տոնեցին ժողովրդական մեծ երգչի մահվան 150-ամյակը հայերը, վրացիներն

<sup>28</sup> «Անի», 1947, հ. 3 (15), էջ 154:



ու ադրբեջանցիները, գրում է. «Նույն խանդավառությամբ բարախեց նաև սիրտը մեր մեծագույն բարեկամ ազգին՝ ուսին, որուն մեկ հանճարեղ զավակին՝ Վալերի Բրյուսովի խորաթափանց ուսումնասիրությունն էր որ ամենեն առաջ հայտնաբերեց միջազգային տարողությունը այս աշուղին արվեստին»<sup>29</sup>:

Մենք առիթ ունեցանք Գորկու մասին խոսելիս հիշատակելու Ստ. Շահպաղի «Նյութը և ձևը գրականության մեջ» հոդվածը: Գրականության տեսության հարցերին նվիրված այս լավ հոդվածը, քննադատելով «արվեստն արվեստի համար» սկզբունքը և ժամանակակից արևմտյան գրականության մեջ ուժեղացող անկումայնության ու բարոյալքումի պրոցեսը, եզրակացնում է, որ «...գրականություն առանց ուղղության ու իդեալի՝ կարելի չէ ընդունել»: Այս մատնանշելով Մ. Գորկուն և Կ. Սիմոնովին, ու առհասարակ սովետական գրողներին, գրում է, որ «...Նորհրդային Միության հեղինակները վտարած են բուրժուական այն նյութերը, որոնք անկումի, բարոյալքումի, անբարոյականության, տգեղության, մոլության, ցոփության, ձանձրության ու հետադիմության կը մղեն մարդը: Անոնք կը հավատան, հոյակապ ինքնագիտակցությամբ մը, թե գրագետը մաքուր հոգին կերտելու կոչումը ունի: Եվ այս ըմբռնումը կրցավ տալ, հակառակ քաղքենի «դասական» կեղև ստացած կարծիքին՝ գրական, նկարչական ու քանդակագործական այնպիսի երկեր, որոնք ունին առինքնելու հմայքը, հուզելու ուժը, ապրելու, տևելու հատկությունը»<sup>30</sup>:

Պետք է ասել, որ սփյուռքահայության շրջաններում մեծ հետաքրքրություն են տածում դեպի ռուս և առհասարակ սովետական գրականությունը: Այդ է վկայում ոչ միայն «Անի» ամսագիրը, այլև սփյուռքահայ բազմաթիվ այլ պարբերականներ, որոնք հաճախ են անդրադառնում սովետական գրականությանը և, առաջին հերթին, ռուս գրականությանը:

<sup>29</sup> «Անի», 1946, հ. 4, էջ 203:

<sup>30</sup> «Անի», 1947, հ. 5 (17), էջ 277:

Սովետական Միության ժողովուրդների գրականությունից «Անի»-ն անդրադարձել է նաև ադրբեջանցի մեծահանճար բանաստեղծ և իմաստասեր Նիզամիին: Ամսագրի 1948 թվականի հ. 11 (23)-ում տպագրված է Ավ. Իսահակյանի հոդվածը Նիզամիի մասին և մի հատված «Լեյլի և Մեջնուն» հայտնի սիրավեպից: Հոդվածում մեծ բանաստեղծը վեր է հանում Նիզամիի ստեղծագործության մեծ հմայքը և համաշխարհային կուլտուրական նշանակությունը, ընդգծելով, որ «Նիզամին ոչ միայն Ադրբեջանի պարծանքն է, այլև մեր— Կովկասի ժողովուրդների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ողեկան մեծագույն նվաճումներից մեկը»:

Ինչպես վկայում է ամսագիրը, «Լեյլի և Մեջնուն»-ից տպագրված հատվածները ջերմ ընդունելություն են գտնում ընթերցողների մոտ: Ելնելով դրանից, «Անի»-ն իր հաջորդ համարի «Միջազգային գրականություն» բաժինը ևս նվիրում է Նիզամիին, այս անգամ տպագրելով էդ. Աղայանի. համառոտ ուսումնասիրությունը ադրբեջանցի մեծ բանաստեղծի մասին և նոր հատվածներ «Լեյլի և Մեջնուն»-ից:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ

«Միջազգային գրականություն» լուրջ ու մնայուն բաժնի դոյությունը մեկ անգամ ևս շեշտում է «Անի»-ի գրական ծանրակշիռ պարբերական լինելու հանգամանքը:

Անշուշտ դյուրին չի եղել խմբագրության համար հաղթահարել այն դժվարությունները, որոնք նման դեպքերում ծառանում են ամեն մի գրական պարբերականի առջև, մանավանդ սփյուռքի պայմաններում:

Ամսագրում ընդգրկված հեղինակների անցողակի թվարկումը միայն բավական է, դադափար կազմելու համար կատարված աշխատանքի ծավալի մասին. Սերվանտես և Գյոթե, Պուշկին և Հյուգո, Գոգոլ և Բալզակ, Շոու և Գորկի, Հեմինգուեյ, Ստայնբեկ, էլյուար և ուրիշներ, որոնք մարդկային միտքը հարստացրել են իմաստուն գաղափարներով և ստեղծել գեղարվեստական բազմաթիվ հոյակապ երկեր:

«Միջազգային գրականություն» բաժինն «Անի»-ում բացվում է արաբական գրականությանը նվիրված էջերով: Միանգամայն հասկանալի նախապատվություն, եթե նկատի ունենանք ամսագրի միջավայրը և օրեցօր ամրապնդվող հայ-արաբական բարեկամության ու մշակութային մերձեցման փաստը, որի մի արտահայտությունն է հայ հասարակայնության աճող հետաքրքրությունը դեպի արաբական լեզուն, գրականությունն ու արվեստը:

Առաջին նյութն այդ բաժնի նվիրված է Օմար Ֆախուրիին<sup>1</sup>, արաբական հասարակական մտքի խոշորագույն ներ-

<sup>1</sup> «Անի», 1946, հ. 2, էջ 98:

կայացուցիչներից մեկին, որն իր ստեղծագործություններով կարևոր ներդրում է կատարել ռեալիզմի կազմավորման գործում արաբական արդի գրականության մեջ և մեծ դեր է խաղացել իր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Նրա մահը (1946, ապրիլ), գրում է Օ. Ֆախուրիին նվիրված հոդվածի հեղինակ, բանաստեղծ և հրապարակախոս Բաիֆ խուրին, «...մեծ կորուստ էր ազատագրական ու հառաջդիմական արդի արաբական շարժումին ու մասնավորաբար՝ արաբ գրականության մեջ կազմավորվող արդի ձգտումներուն...»:

Անդրադառնալով Օ. Ֆախուրիի կենսագրությանը, հեղինակը նշում է, որ հրե երիտասարդ թուրքերը գեն շպրտեցին իրենց հեղափոխական ֆրազները և սկսեցին հետամուտ լինել կայսրության բոլոր ոչ-թուրք բնակչության թրքականացմանը (առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին), Օ. Ֆախուրին հարեց նոր սերնդի այն շարժմանը, որի նպատակը արաբական անկախությունն էր: Նա հազիվ ազատվեց կախաղանից, որին Զեմալ փաշայի հրամանով զոհ գնացին իր ընկերներից երիտասարդ բանաստեղծ Օմար Համատը և Աբդուլ Հանի Ուրայխսին:

Դաշնակիցների հաղթանակից հետո, նրանց արևելյան քաղաքականությունը լրիվ հիասթափություն է առաջ բերում Օ. Ֆախուրիի մեջ: Երկրորդ պատերազմի ընթացքում, գրում է հեղինակը, Ֆախուրին հարում է մարքսիզմին, իսկ հրե ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Սովետական Միության վրա, «ինք հղավ մեկը առաջին ու փոքրաթիվ այն ձայներեն, որոնք հայտարարեցին թե պետք էր տապալել նացիզմն ու ֆաշիզմը, թե՛ անոնք դատապարտված էին տապալումի»: Այդ շրջանում է, որ կազմակերպվում է «Սովետական Միության բարեկամների Լիբանանյան ընկերությունը», որի նախագահ է ընտրվում Օ. Ֆախուրին:

Արաբ ականավոր մտածողի գրական-գեղագիտական հայացքները միանգամայն համահնչյուն էին «Անի»-ի տեսակետներին, և պատահական չէ, որ ամսագիրը այդպիսի սիրով իր էջերը նվիրել է նրան: Օ. Ֆախուրիի համար գրականության, արվեստի նյութը մարդն է, ժողովուրդը՝ իր ստեղծած



մտավոր գանձերով, որից նա վերցրեց գրական իր ներշնչանքը, իմաստությունը, լեզվի պարզությունը և որին տվեց իր ամբողջ կյանքը: Ժողովրդական բանահյուսությունը, մի առիթով ասում է նա, այն անսպառ աղբյուրն է, որից խմում են մարգարեները և բանաստեղծները:

Օմար Ֆախուրին եղել է և հայ ժողովրդի լավ բարեկամը: Խոսելով հայերի ճակատագրի մասին, նա ասել է. «Հայ ժողովուրդը թիվով մեծ ժողովուրդ մը չէ, ոչ ալ Հայաստանը՝ քարտեզի վրա ընդարձակ երկիր մը. սակայն հայ ժողովուրդը, դարերից ի վեր, իր արյունոտ պատմության ընթացքին պայքարելով թվով իրմե մեծ ժողովուրդներու դեմ, քալած է դեպի ազատություն և ապահովություն: Ահա թե ինչու հայ ժողովուրդին իրավունքն է Հոկտեմբերը նկատել իր պատմության վերջին ամենափառահեղ ակտը: Ազգերու ազատության և անկախության իրավունքին անբաժանելիության մեջ, նկատի չի առնվիր ազգի մը թվական մեծությունը կամ փոքրությունը, ինչպես պայքարին մեջ ժողովուրդներու ցուցաբերած հերոսությունը չի չափվիր երբեք անոնց թվական մեծությամբը կամ անոնց երկրին հողային տարածությունովը:

Արեշատություն կը մաղթեմ Սովետական Հայաստանին: Ո՛չ որ պիտի կրնա խլել այլևս անոր ձեռքեն մեծ Հոկտեմբերին բարիքները: Ինչ որ մեծ Հոկտեմբերը գրած է աշխարհի ճակատին, պիտի չընջվի այլևս երբեք»<sup>2</sup>:

Ամսագիրը իր «Միջազգային գրականության» բաժիններից երկուսը ևս նվիրել է արաբական գրականությանը, յուրաքանչյուրում տալով Րաիֆ Խուրիի «Անի»-ի համար գրած մեկական հոդված՝ արաբական ժամանակակից գրականության մասին<sup>3</sup>, և մի շարք հատկանշական նմուշներ արաբ գրողների երկերից:

Պետք է ասել, սակայն, որ Ր. Խուրիի երկու հոդվածն էլ շատ ընդհանուր բնույթ ունեն և սխեմատիկ են: Հեղինակը համառոտակի բնութագրում է մի քանի հեղինակների և ավելի փանգ է առնում նրանց ստեղծագործությունների նկարագրու-

2 «Գիրք գրականության և արվեստի», Բեյրութ, ապրիլ, 1956, էջ 10:

3 «Անի», 1946, հ. 4, էջ 206 և հ. 5, էջ 265:

թյան ու ռճային-առանձնահատկությունների վրա, քան վերլուծում գրական պրոցեսները ըստ էության, չկապելով դրանք ժողովրդի սոցիալ-հասարակական կյանքի հետ: Հոգվածների աղքատիկ բովանդակությունն ու գիտական ցածր մակարդակը, դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս քիչ թե շատ ամբողջական գաղափար կազմելու ժամանակակից արաբական գրականության մասին<sup>4</sup>:

Ամփոփելով իր հոգվածները, Բ. Խուրին գրում է՝ «...մինչև այսօր տակավին՝ արաբ գրական ճաշակը կը մնա խորունկ ազդեցությանը տակ հին (դասական արաբական գրականության.—Մ. Բ.) արժեքներու, չափանիշներու և օրենքներու, թե՛ ոճի և թե բանաստեղծության մեջ»:

Այդ ազդեցությանը հակադրվում են «արդիականները»: Նրանց նպատակն է, ասում է հեղինակը, հեղաշրջում մտցնել արդի արաբական գրականության մեջ: Սակայն նա շատ թուլեցիկ կերպով է խոսում «արդիականների» մասին, որից ընթերցողը հստակ գաղափար չի կազմում, թե որն է ծրագրվող այդ հեղաշրջման բուն նպատակը:

Բ. Խուրիի հոգվածների հետ միասին ամսագիրը տպագրել է արաբ հեղինակների մի շարք գործեր, սակայն նա անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել և իր հետագա համարներում այլևս չի անդրադարձել արաբական գրականությանը<sup>5</sup>: Դա «Անի»-ի բաց թողած հնարավորությունն է, որի համար այսօր ամսոսալ կարելի է միայն<sup>6</sup>:

---

4 Հայ ընթերցողի համար մասնակի հետաքրքրություն կարող է ներկայացնել լիբանանցի արաբ գրող Ադիբ Իսհակը, որի մասին հեղինակը, Բաիֆ Խուրին, ասում է, թե նա ծագումով հայ էր, եղել է նորամուծ արաբական նոր գրականության մեջ, «գրելով և թարգմանելով բազմաթիվ թատերախաղեր»: Կապված լինելով եվրոպական առաջավոր մշակույթի հետ, նա համակրանքով է վերաբերվել ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարներին, մեծ դեր կատարելով նրանց «տարածման ի նպաստ»: Ադիբ Իսհակի երկերը ամփոփված են ետմահու հրատարակված «Գուրար» («Մարգարիտներ») հատորի մեջ:

5 Եթե չհաշվենք Մ. Տեր-Ստեփանյանի մշակած «Ազրալիլի գատասանը» արաբական ավանդակալը («Անի», 1947, հ. 5 (17)):

6 Արաբական գրականությունը ներկայացնելու գործում ավելի հետևողականություն են ցուցաբերել լիբանանահայ գրական պարբերականներ



Միջազգային գրականության իր հետագա էջերը «Անի»-ն այնուհետև նվիրում է եվրոպական ու ամերիկյան գրողներին: Ամենից շատ տեղ հատկացված է ամերիկյան ու ֆրանսիական գրականությանը (ուստի գրականությունից հետո, որի մասին մենք խոսեցինք նախորդ գլխում): Եվրոպական մյուս ժողովուրդների գրականությունը (անգլիականը, գերմանականը, իսպանականը) ներկայացված է մեկական հեղինակով: Իտալականը, օրինակ, բոլորովին ներկայացված չէ: Պատկերն իհարկե, այլ կլիներ, եթե «Անի»-ն է՛լ ավելի հարատևեր: Սակայն դա այլ խնդիր է:

Ամսագիրը անդրադարձել է ամերիկյան հինգ հեղինակի՝ էպոսոն Սինկլեր, Սինկլեր Ջուլիս, էռնստ Հեմինգուեյ, Զոն Ստայնբեկ և հայազգի Վիլյամ Սարոյան, նվիրելով նրանց առանձին հոդվածներ (բացառությամբ Վ. Սարոյանի) ու տպագրելով առանձին փոքրիկ գործեր կամ հատվածներ նրանց երկերից:

Է. Սինկլերի մասին Գերսամ Ահարոնյանի հոդվածը՝ ամերիկյան գրողի ընդհանուր բնութագրման մի փորձ է: Հեղինակը ընթերցողների ուշադրությունը հրավիրում է Սինկլերի ստեղծագործության երեք բնորոշ կողմերի վրա, որոնցով և աշխատում է բացատրել նրա ժողովրդականությունը: Այդ բնորոշ կողմերից առաջինն այն է, որ Սինկլերը ամերիկյան կյանքը ներկայացնում է որպես դասակարգերի միջև մղվող անողոք պայքար: Երկրորդ՝ չնմանվելով ամերիկյան մի շարք այլ գրողների, «...որոնք սովորություն ունին Միացյալ Նահանգները աշխարհին ներկայացնելու իբր բարեգործ ու վեհանձն Օնքլ Սեմ, Սինկլեր կը ծանոթացնե զայն նաև իբր Օնքլ Շելլոկ—ընչաքաղց և այլամերժորեն շահախնդիր—որ ըստ ոչ ամերիկացի ընթերցողներու մեծամասնության, ավելի հարազատ և ճշմարտանման պատկերացում է»: Եվ, վերջապես, Սինկլերի ստեղծագործության երրորդ բնորոշ կողմը,

«Մշակութ», «Գիրք գրականության և արվեստի» ժողովածուները, իսկ ավելի ուշ այդ ուղղությամբ ղեհատելի աշխատանք է տարել «Հառաջ-Գրական»-ը, որտեղ ընթերցողը բազմաթիվ հետաքրքիր նյութեր կարող է գտնել արաբական ժամանակակից գրականության մասին:

7 «Անի», 1946, հ. 7, էջ 379:

ըստ հողվածի հեղինակի, այն է, որ նա, որպես վիպասան, կարողանում է համատեղել քաղաքական, հրապարակախոսական տարրը իսկական գեղարվեստականության հետ:

Այնուհետև Ահարոնյանը կանգ է առնում Սինկլերի պատմական վեպերի վրա («Լեննի Բադդի պատմությունները» շարքը): «Վեպերու այս շարքը, — գրում է նա, պատկերազարդ պատմությունն է մեր ժամանակներու ամենեն փոթորկալից շրջանին: Հոն են միջազգային վիճազործները իրենց ոճրային մտայնությամբ. հոն են ֆինանսական շրջանակներու շահամոլ մեքենայությունները: Ու միշտ հոն է խաբվող, շահագործվող ու դժգոհ «փողոցի մարդը»: Կան Վերսայլը, Ուոլ Սթրիթի փլուզումը, Ռայխստագի հրդեհը, Մադրիդի հերոսամարտը, Մյունխի (Մյունխենի) խաղբությունը և դեռ այն բոլոր դեպքերը, որոնք աշխարհը դահավիժեցին դեպի ֆաշիզմի շղթայազերծված ընդհանուր սպանդը»:

Հողվածի հեղինակի մոտ սակայն բացակայում է քննադատական մոտեցումը դեպի Սինկլերի ստեղծագործությունը: Նրա բնութագրումները ավելի մոտ են ճշմարտությանը Սինկլերի սկզբնական շրջանի երկերի համար («Ջոնզլի», «Ջիմմի Հիգենս», «Թագավոր ածուխը», որոնցից նա հետագայում քիչ էր մնում անգամ հրաժարվել), բայց ոչ գրողի վերջին վիպաշարքի համար, որտեղ խիստ կերպով զգացվում է Սինկլերի մակերեսային մոտեցումը դասակարգային-քաղաքական պայքարի հարցերին, նրա ուժգին հակումը դեպի ռեֆորմիզմի գաղափարախոսությունը, ամերիկյան ապրելակերպի ներբողումը, նրա ստեղծագործական հակասություններն ու սկզբունքային անկայունությունը:

Գ. Ահարոնյանի հողվածն ավարտվում է գրողի համառոտ կենսագրությամբ:

Ամսագիրը տպագրել է Սինկլերի «Լայն է դուռը» վեպից երկու փոքրիկ հատված, ուր, ինչպես ասված է խմբագրության ծանոթագրության մեջ, «...կը մերկացվի Սպանիո քաղաքական կռիվներուն տնտեսական ու հոգեբանական խորքը»:

Ս. Լյուիսի մասին հողվածը<sup>8</sup> թեև գրված է նրա «Արքա-

<sup>8</sup> «Անի», 1949, հ. 5—6, (29—30), էջ 305:



յական արյուն» վեպի առիթով, սակայն հեղինակը (Ավ. Սան-ճյան) անդրադառնում է գրողի նաև մյուս երկերին։ Ս. Լյուիսի լավագույն վեպերից յուրաքանչյուրը «անխնա մերկացումն է ամերիկյան կյանքին ու բարքերուն արատավոր մեկ երեսին», գրում է հեղինակը։

Մասնավորելով իր խոսքը «Արքայական արյուն» վեպի շուրջը, հեղինակը շեշտը դնում է ցեղային խտրականության այն այլանդակ երևույթների վրա, որ գոյություն ունեն Միացյալ Նահանգներում, և որոնք արտացոլվել են այդ վեպում։ «Վեպը ոչ միայն ցույց կուտա թե 13 միլիոն սևամորթներ դուրկ են ռասկապիտության սահմանած հավասարության իրավունքեն, այլ թե՛ ինչ հալածանքներու կ'ենթարկվին անոնք»։ Հալածանքների է ենթարկվում և վեպի հերոս Նիլ Քինգսբլումը, գրում է հոգվածի հեղինակը։ Պարզվում է, որ Նիլի երականերում 1/32-ով սևամորթի արյուն է հոսում։ Այդ բավական է լինում, որ նա կորցնի ամեն ինչ՝ և՛ պաշտոնը, և՛ իւր աշխատանք գտնելու հույսը, և՛ հանգիստն ու ապահովությունը։ Դա առիթ է տալիս Նիլ Քինգսբլումին՝ վերադնահատելու իր հայացքները կյանքի և ամերիկյան իրականության մասին, մոտիկից ճանաչելու սևամորթներին, որոնց մեջ նա զարմանքով բացում է այն իրողությունը, թե նրանք ևս մեծ արժանիքներ, տաղանդ ու խորապես մարդկային հմայք ունեցող էակներ են։ «Հետևաբար, — գրում է Ավ. Սանճյանը, — իր հին աշխարհի կործանումեն հոք, ան իր ապաստանը կը գտնե՛՛ զրկանքով, նախատինքով, թշվառությամբ ապրող, իրենց ճակատագիրին դեմ բոլորքսով զայրույթի պահուն անդամ խորապես մարդկայնական մարդոց աշխարհին մեջ»։

Ճիշտ է նկատում հոգվածի հեղինակը, որ Լյուիսը բացում, ցույց է տալիս ամերիկյան կյանքի խոցերը, սակայն չի նշում այն ուղիներն ու միջոցները, այն ուժերը, որոնք ի վիճակի են սոցիալական վերափոխումներ մտցնելու այդ կյանքում, վիրաբույժի «փրկարար մկրատի» դեր կատարելու «Համենայն դեպս, — ավարտում է հեղինակը, — իր վեպերը կուտան տաղնապները ամերիկյան կյանքին, և կ'արթնցնեն ընթերցողին մեջ խորունկ տրամոթյուն մը անոնց հանդեպ։

Փոքր բարիք մը չէ ասիկա, երբ մանավանդ կը կատարվի ար-  
վեստով մը որ վարժ է, վստահ ու տիրական»:

Ամսագիրը հաջող ընտրութիւնն է կատարել, թարգմանե-  
լով ու տպելով «Արքայական արշուն» վեպի այն գլուխները,  
որտեղ նկարագրված են մոլեռանդ ամբոխի հարձակումները  
Նիլի բնակարանի վրա:

Ամերիկյան ժամանակակից գրականութեան խոշորագույն  
դեմքերից Հեմինգուեյին և Ստայնբեկին անդրադառնալու  
փաստը ինքնին խոսում է հօգուտ «Անի»-ի, միջազգային գրա-  
կան կյանքի հետ համաքայլ ընթանալու նրա ձգտման մասին:  
Այդ ձգտումը նկատելի է ամսագրի գործունեության ամբողջ  
ընթացքում և տվել է իր լավ արդյունքները, մանավանդ երբ  
գիտեղված նյութերը հասնում են հետամտված նպատակի  
բարձրութեանը: Սակայն պետք է ասել, որ Ա. Գեղակի հոդ-  
վածք<sup>9</sup>, նվիրված Հեմինգուեյի ստեղծագործությանը, այդ  
պահանջը լիովին չի բավարարում:

Հեղինակը, ընդհանուր ակնարկ նետելով ամերիկյան  
գրականութեան վրա ու մի քանի խոսքով պատմելով գրողի  
կենսագրությունը, անցնում է նրա զխաւոր երկերի գնահատ-  
մանը: Բայց այն շատ թուուցիկ է և տեղ-տեղ՝ չհիմնավորված:  
«Հրաժեշտ դենքերին» վեպի մասին, օրինակ, նա գրում է  
միայն, թե «վեպը կուտա իտալական ճակատի իր (Հեմին-  
գուեյի) փորձառութիւնները և կը պատմէ Կապորետտոյի ճա-  
կատին պարտութիւնն ու նահանջը», առանց մի խոսք ասելու  
այդ նշանավոր գրքի խորապես հակապատերազմական էու-  
թեան մասին: Ըստ հոդվածագրի՝ Հեմինգուեյի «Երեք պատ-  
մըվածք և տասը քերթված» գիրքը ու «Մեր ժամանակներում»  
պատմածքների ժողովածուն՝ «այսօր շահեկանութիւն չեն  
ներկայացնիր», կամ «Ունենալով՝ չունենալ» վեպը «կը նը-  
կատվի իր ամենեն տկար գործը»:

Ավելի հանգամանորեն է խոսում հեղինակը «Ում հա-  
մար է դողանջում զանգը» վեպի մասին, որտեղ պատկերված  
է քաղաքացիական պատերազմը Իսպանիայում:

«Այս վեպին մեջ, — գրում է Ա. Գեղակը, — Հեմինգուեյ կը

<sup>9</sup> «Անի», 1948, հ. 8 (20), էջ 440:



ջանա տալ համապատկերը Սպանիո քաղաքացիական կռիվ-ներուն: Իր դիտարանը կը գտնվի հանրապետականներուն կողմը, և իր տխարները կը կռվին ֆաշիստներու գործունեության դեմ: Վեպին պատգամը հավատք մըն է ժողովրդավարության հաղթանակին վրա և կը ջատագովե մարդկայնական սկզբունքները»:

Հեմինգուեյը ստեղծագործական բարդ ուղի է անցել: Հեղինակը փորձել է ինչ-որ չափով արտացոլել այդ իր հոգվածում, ցույց տալ մեծ զրոգի անցած հանգրվանները: Բայց նա չի կարողացել հաղթահարել մի շարք բուրժուական գրականագետների այն կարծիքը, թե «Հեմինգուեյի գլխավոր նյութը կը հանդիսանա մահը՝ իր շոշափելի իրականությամբ և մրդձավանջային ներկայությամբ»: Չի կարելի ժխտել անհուսության և անհեռանկարայնության տարրերը նրա թե պատմվածքներում և թե վեպերում (Ա. Գեյալը բացատրություն է անում «Ո՛ւմ համար է զողանջում զանգը» վեպին): Բայց չի կարելի չնկատել միաժամանակ, որ մահը Հեմինգուեյի երկերում ոչ թե «մղձավանջային ներկայություն» է միայն, այլ մի իրողություն, որի դեմ նա միշտ էլ ըմբոստացել է: Այդ մասին է խոսում և մեծ զրոգի հումանիզմն ու խոր ատելությունը մահ ու բռնություն տարածող ֆաշիզմի և պատերազմի հրձիգների հանդեպ:

Հոգվածի հեղինակը աշխատել է արժանի գնահատանք տալ Հեմինգուեյի արվեստին, ընդգծելով նրա բարձր վարպետությունը և ոճի ինքնատիպությունը: Հոգվածում նշվում է և այն ջերմ ընդունելությունը, որ գտել են զրոգի երկերը Սովետական Միությունում:

Ամսագիրը տպագրել է Հեմինգուեյի «Մարդասպանները» պատմվածքը, բնորոշություն, որ չի կարելի ասել, թե լավագույններից է:

Ջոն Ստայնբեկը ամսագրում ներկայացված է Գ. Ահարոնյանի հոգվածով<sup>10</sup>: Հոգվածի կենտրոնը ականավոր զրոգի «Ցասման ողկույղներ» (ամսագրում՝ «Ցասման խաղողներ») վեպն է:

Գ. Ահարոնյանը բարձր է գնահատում Ստայնբեկի վեպը,

<sup>10</sup> «Անի», 1946, հ. 3, էջ 143:

որպես պարզ ու գեղեցիկ ոճով գրված ռեալիստական ստեղծագործություն, որը մերկացնում է կապիտալիստական Ամերիկայում տիրող սոցիալական խոր անարդարությունները և ցույց տալիս այն ցասումն ու ըմբոստությունը, որ ծնունդ է առնում երկրի հարստությունն իրենց ձեռքը պահող դրամատերերի դեմ: «Յասման խաղողները» իբրև արվեստի գործ «գլոխգործոց մըն է և միևնույն ատեն»՝ դրամատիքության դատապարտությունը, — գրում է հեղինակը: — Անիկա պարզ բայց ազդու կոչ մըն է՝ հաստատելու ընկերային արդարություն և մարդկային եղբայրություն»:

Հոգվածում հետաքրքիր է և այն մասը, որտեղ հեղինակը պատմում է ամերիկյան խոշոր կապիտալիստների ձեռնարկած փորձերի մասին՝ ինչ գնով էլ լինի «ճղմել» Ստայնբեկի դիրքը, վախենալով, որ այնտեղ արժարժված անիրավ կարգերի հարցը կարող է վաղը ոտքի հանել զանգվածներին՝ դրամատիքության դեմ:

Հեղինակը համառոտակի ծանոթացնում է ընթերցողներին Ստայնբեկի կենսագրությանը և նրա ստեղծած մյուս երկերին, շեշտելով ականավոր գրողի դեմոկրատիզմը:

«Յասման ողկույզներ» գրքից ամսագիրը տպագրել է նրա 21-րդ և 25-րդ գլուխները, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս վեպի հիմքը հանդիսացող կյանքի մասին:

Վ. Սարոյանը ամսագրում տեղ է գտել միայն «Պատերազմը» պատմվածքով<sup>11</sup>, որ վերցված է նրա 1934 թվականին լույս ընծայած «Խիզախ երիտասարդը թռչող ճոճածողի վրա» գրքից: Պատմվածքին ուղեկցվող ծանոթագրության մեջ ամսագիրը նշում է միայն, որ Վ. Սարոյանը «...պահելով հանդերձ հայու իր հոգին, ամերիկացի գրագետ մըն է գերազանցապես, ու միջազգային համբավ մը»: Այդ նույն ծանոթագրության մեջ «Անի»-ն խոստանում է առաջիկա համարներում տալ Վ. Սարոյանի կյանքն ու գրական վաստակը ուրվագծող ուսումնասիրություն, բայց որևէ նյութ նրա մասին չի տպագրում<sup>12</sup>:

11 «Անի», 1947, հ. 11, էջ 601:

12 «Անի»-ն (Վահե-Վահյանը) Վ. Սարոյանին անդրադառնում է մեկ ուրիշ առիթով:



Անգլիական գրողներից ամսագիրը անդրադարձել է միայն Բեռնարդ Շոուին, տպագրելով Գ. Ահարոնյանի ակնարկը հոշակավոր դրամատուրգի ծննդյան 90-ամյակի առթիվ:

Բ. Շոուն, նշում է հեղինակը, համառոտակի խոսելով նրա կենսագրության մասին, նաև աչքի ընկնող հասարակական գործիչ էր: Իր հասարակական գործունեությունը Շոուն սկսում է ութսունական թվականների սկզբից, երբ ծանոթանում է Կ. Մարքսի «Կապիտալ»-ին և հարում սոցիալիզմին: Ռեֆորմիստական «Ֆաբիանների» ընկերակցության ազդեցության ներքո Շոուն որոշ տատանումներ է ապրում, սակայն մարդկության լավագույն ապագայի նրա հավատը մնում է անսասան, որը և լատացիված է նրա բաղձաթիվ ստեղծագործություններում:

Շարունակելով Շոուի կենսագրությունը, ակնարկի հեղինակը կանգ է առնում նրա կյանքի մի քանի կարևոր մոմենտների վրա: Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, և անգլիացի մի շարք մտավորականներ առաջարկեցին Շոուին ստորագրել պատերազմին Անգլիայի մասնակցությունն արգարացնող կոչի տակ, նա, «Եվրոպայի ամենահամարձակ մարդկանցից մեկը», ինչպես արտահայտվում է Մ. Գորկին<sup>13</sup>, ոչ միայն հրաժարվեց այդ անել, այլև հանդես եկավ իմպերիալիստական պատերազմը դատապարտող զրույցով: «Շոուն, — գրում է ակնարկի հեղինակը, — կը դատապարտե պատերազմը իբր կայսերապաշտական ոճիր և կ'ա-

---

Ինչպես հայտնի է, ժամանակին (անհատի պաշտամունքի տարիներին), ընդհանուր թոհուրոհի մեջ, սովետահայ մամուլում ևս երևացին հոգվածներ, որոնք սխալ դիրքերից էին մոտենում Վիլյամ Սարոյանի ստեղծագործության գնահատման հարցին: Առարկելով «Սովետական Հայաստան» ամսագրում տպագրված դրախտականին, որտեղ Վ. Սարոյանի «Պատերազմ» պատմվածքը որակվել էր որպես «զրպարտիչ հեյդուրանք» և ցավ էր հայտնված նրա տպագրության առթիվ, Վահե-Վահյանը գրում է. «Պատերազմ»-ը խաղաղասեր, արդարամիտ ու մարդկայնական ոգիով պատմվածք մըն է, անհատապաշտ՝ ինչպես Սարոյանի գրեթե բոլոր գործերն են, բայց առողջ» (սեպտեմբեր, 1948, հ. (24), էջ 669):

13 М. Горький, Собрание сочинений, М., 1954, том 29, стр. 345.

առջարկե որ զինվորները տուն վերադառնան»։ Շոուն ողջունեց Մեծ Հոկտեմբերը և պաշտպանում էր հեղափոխական Ռուսաստանը անգլիական սոցիալիստների հարձակումներից։ «Կ'արժե հիշել նաև, — գրում է Գ. Ահարոնյանը, — որ երբ նացի հորդաները 1941-ին հարձակեցան Սովետ Միության վրա և նույնիսկ կարգ մը արևմտյան սպայակույտների նախատեսեցին Սովետներուն վաղահաս պարտությունը, Շոուն հանդիսացավ առաջին ականավոր արևմուտքյին որ հայտարարեց թե Սովետները պիտի տանհին հաղթանակը և նացի Գերմանիան պիտի ջախջախվեր»։

Ակնարկի նեղ սահմաններում հեղինակը կանգ է առել Շոուի մի շարք գործերի վրա, առանց հնարավորություն ունենալու խորանալ մեծ դրամատուրգի ողջ ստեղծագործության ծալքերի մեջ, սակայն այդ սեղմ վիճակում էլ այն ծանոթացնում է հանճարեղ գրողի մեծությանը, նրա հումանիզմին, գեպի ժողովուրդների ճակատագիրը ցուցաբերած նրա կենդանի հետաքրքրությանը։

Ֆրանսիական գրականությունը «Անի»-ում ներկայացված է երեք հեղինակով. Հյուգո, Բալզակ, Էյլուար։

Վիկտոր Հյուգոյին ամսագիրն անդրադարձել է երկու անգամ, 1947-ի հ. 2 (14)-ում և 1952-ի հ. 4—5 (52—53)-ում։ Առաջին հոդվածը, Գ. Ա. ստորագրությամբ (Գերսամ Ահարոնյան), շատ համառոտ է և կենսագրական մի քանի տեղեկություններից զատ հետաքրքրություն ներկայացնող այլ բան չունի իր մեջ։ Այդ նույն համարում տեղ է գտել նաև Հյուգոյի «Օլիմպիայի տրամությունը» բանաստեղծությունը՝ Մ. Գյուրջյանի թարգմանությամբ։

Հյուգոյին նվիրված երկրորդ, ավելի ծավալուն հոդվածը գրված է հանճարեղ արվեստագետի ծննդյան 150-ամյակի առթիվ։ Այն պատկանում է Վահե-Վահյանի գրչին։

Հյուգոն հմայում է բոլոր երկրների առաջադեմ մարդկանց ամենից առաջ իբրև հայրենասիրական պայքարի խիղաս մարտիկ և ազատության ու արդարության պերճախոս ախոյան, — գրում է Վահե-Վահյանը։ Իր ուսումնասիրության մեջ նա ընթերցողի ուշադրությունը բևեռում է Հյուգոյի հան-



Ճարի մեծությունն ու նորարարական համարձակ ոգու վրա: Հյուզոյին, այդ տեսակետից, նշում է հեղինակը, կարելի է բաղդատել միայն Շեքսպիրի, Գյոթիի ու Պուշկինի հետ:

Հյուզոն ուժմանտիվմի հաղթանակն էր Ֆրանսիայում: Բայց նա դրանով իսկ ճանապարհ հարթեց ռեալիզմի համար: Վկայաբերելով «Կրոմվել»-ի առաջաբանը, որ «...հիմնական իր շատ մը կետերով բանաձևումն է իրապաշտ արվեստի սկզբունքներուն», Վահե-Վահյանը գրում է. «Հյուզոն կը մոտեցնէ գրականությունը կյանքին, իրականության: Երբ գրականության համար պայման կը նկատի պատմական ճշմարտության պահպանումը և տեղական գույնի հարազատությունը, պաշտպանած կ'ըլլա սկզբունքներ որ կը պատկանին իրապաշտ դեղագիտության»<sup>14</sup>:

Հյուզոն սոցիալական արդարության մեծ ջատագով էր և անհուն հավատ ուներ դեպի մարդ էակը: Այս հատկություններն են, ասում է Վահե-Վահյանը, որ միացած իր ճշմարիտ մարդասիրության, սիրելի են դարձնում նրան «...որքան իր հայրենակիցներուն՝ նույնքան և տառապյալ ամբողջ մարդկության»:

Ընդարձակ տեղ է հատկացված ուսումնասիրության մեջ Հյուզոյի կենսագրությանը և նրա հասարակական-քաղաքական գործունեությանը, որոնք սերտորեն առնչվում են մեծ գրողի ստեղծագործության հետ: «Երիտասարդության առաջին տարիներուն արդեն, — գրում է հեղինակը, — բանաստեղծը իրեն համար կոչում մը կը նկատեր հասարակական գործունեությունը»: Հյուզոյի ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին միանգամայն հասկանալի ու տրամաբանական է, եթե նկատի ունենանք նրա այն խորին համոզումը, թե «...ամեն գրական երկ ընկերային արարք մըն է», կամ «գեղեցիկ թատերախաղի մը մեջ, պետք է որ միշտ գտնվի օգտակար գաղափար մը, ընկերային գաղափար մը»: Գրականության հասարակական մեծ դերի նման ընկալումը, ինչ խոսք, չէր կարող գրողին հեռու պահել ժամանակի քաղաքական կյանքի եռուզեռից, և նա, իր գրական գործունեությանը

<sup>14</sup> «Անի», 1952, հ. 4—5 (52—53), էջ 251:

ղուգահեռ, ծավալում է նաև քաղաքական գործունեությունը: Բացատրել այդ նրանով, թե «դառնալի հետո գերիշխան դեմք մը գրականության մեջ, իր փառասիրությունը կը փնտրե նոր ասպարեզ», ինչպես եղրակացնում է Վահե-Վահյանը, մենք համարում ենք վրիպում: Տրամաբանական չէ նաև Վահե-Վահյանի այն պնդումը, թե «այդ տեսակետները (գրականության հասարակական գերի մասին.—Մ. Բ.) կը հանդիս լինէին չոր աշխարհի համոզումին թե «բանաստեղծին կոշումն» է՝ դառնալ պետական մարդ»<sup>15</sup>: «Պետական մարդ» (հասարակական գործիչ) չեն դառնում ինչ-որ տրամաբանական կամ խոհական եղրահանդումների հետեանքով: Հյուզոն հասարակական գործիչ էր արդեն որպես ստեղծագործող, և ի՞նչ նա քաղաքական ասպարեզ է նետվում, ապա անում է դա ոչ թե նրա համար, որ ցանկանում է նաև այդ ասպարեզում գործել, այլ որովհետև ուրիշ կերպ վարվել չէր կարող, դա նույնպես նրա կոշումն էր: Այն ներքին ուժերը, և, առաջին հերթին, ժողովրդի ու իր հայրենիքի հանդեպ տածած սերը, որ անում էր նրա ստեղծագործությունը, մղում է նրան նաև հասարակական ասպարեզ: Այդ մասին մի փոքր հետո խոսում է և հեղինակը՝ Վահե-Վահյանը, մեջ բերելով Հյուզոնի հայտնի խոսքերը, նրա հավատամբը. «Աշխատիլ ժողովուրդին համար—ահալա—սիկ մեծ անհրաժեշտությունը...»: Այդ դավանանքն էր, որ մղում էր հանճարեղ գրողին և՛ ստեղծագործելու, և՛ գործելու հանուն իր ժողովրդի: Այլ խնդիր է, թե ինչ չափով հաջողվեց այդ նրան (մեր խոսքը տվյալ դեպքում Վ. Հյուզոնի հասարակական-քաղաքական գործունեության մասին է), ինչ վրիպումներ ու սխալներ եղան, ինչ հուսախաբույթություններ ապրեց նա և ինչպես տարավ նա իր պայքարը ռեակցիայի դեմ, երբ ստիպված էր ստարագրվել և երկար տարիներ ապրել Ֆրանսիայից դուրս: Վահե-Վահյանն այդ մասին խոսում է հանգամանորեն, պատմում Հյուզոնի պայքարի մասին Ֆրանսիական ռեակցիայի և Նապոլեոն երրորդի դեմ, Սեդանի պարտության, Փարիզի Կոմունայի ու նրա ճնշման մասին: «Հյուզոն,— գրում է հեղինակը,— ահագնաձայն կը բողոքե

15 «Ասի», 1952, հ. 4—5 (52—53), էջ 259:



ինչպես թիեռականներու անողորմության, նույնպես և Բելգիական կառավարության դեմ, որ իբրև ռճրագործներու կը վերաբերվեր փախստական ապստամբներուն (կոմունարների) հետ»<sup>16</sup>։

Այդ բոլորի հետ միասին Վահե-Վահյանը խոսում է և Հյուգոյի առանձին երկերի մասին, բնութագրում դրանք, վերահանում նրանց արժանիքները, ընդհանրացումներ կատարում։ Անդրադառնալով «Թշվառները» վեպին, նա գրում է. «...Վիպաշարք մըն է ան, ուր լայն հմտությամբ ու ճարտար արվեստով մը կ'ապացուցանե յլիպասանը, թե թշվառության ու ռեփրներու իսկական հեղինակն է ընկերային այն գրովյունը որ չի ճանչնար մարդկային իրավունքներու հավասարությունը, կը հալածե ընչազուրկն ու տկարը։ ...Համապարփակ նայվածքով մը, բանաստեղծը կը տեսնե ընկերային շարիքը իր ահավորության մեջ ու մարդկությանը կ'առաջնորդե անոր դեմ պայքարի։ Եթե հայտնապես անբավարար են իր առաջարկած միջոցները զայն տապալելու համար, անվիճելի է ազնվությունը զինք դեկավարող սկզբունքներուն»<sup>17</sup>։

Հյուգոյի կորուստը ողբացողների, ինչպես և նրա հանձարը զնահատողների մեջ, նշում է Վահե-Վահյանը, հայ ժողովուրդը առաջիններից մեկն էր։ Նրա «Թշվառները» վեպը հայերեն է թարգմանվել Ֆրանսերեն առաջին հրատարակությունից համարյա անմիջապես հետո և այնուհետև երբեք չի թուլացել հայ հասարակայնության հետաքրքրությունը «միշտ կենդանի Հյուգոյի հանդեպ»՝ ընդհուպ մինչև մեր օրերը։

Վահե-Վահյանի գրչին է պատկանում և Ֆրանսիայի դասական խոշորագույն գրողներից Բալզակին նվիրված ծավալուն հոդվածը<sup>18</sup>։

Պատասխանելով այն հարցին, թե ո՞րն է Բալզակի թողած հսկայական ժառանգության տոկունության գաղտնիքը, մեր ժամանակներում, նրա մոհից մեկ դար անց, հոդվածի հեղինակը գրում է. «Պետք է զայն փնտրել իրենցմե ծավալող այն

16 «Անի», 1952, հ. 4—5 (52—53), էջ 262։

17 Նույն տեղում, էջ 261։

18 «Անի», 1950, հ. 4—5 (40—41), էջ 257։

լուսյին մեջ, որ կը թափանցի մինչև հատակը անհատական և ընկերային հարաբերություններուն, երևան բերելով մնայուն հշտարտությունները անոնց»:

Իր ստեղծած երկու հազարից ավելի կերպարների միջոցով և արվեստի աստիճանի բարձրացրած պատմության մեջ ժամանակի ու բարքերի, Բալզակն իրոք ստեղծել է անանցանելի արժեքներ, որոնք թանկ էին ու սիրելի ոչ միայն իր ժամանակակիցների համար, այլև հմայիչ են մեր դարաշրջանի մարդկանց համար՝ թե՛ իբրև ճանաչողական արժեքներ և թե՛ իրենց պատճառած զեղարվեստական մեծագույն հաշույթով:

«Ֆրանսիական հասարակության ամենասքանչելի ուսուցիտական պատմությունը» (էնգելս) կերտող իր ստեղծագործություններով Բալզակը անխնա մերկացրել է ժամանակի բուրժուական բարքերը՝ իր բոլոր աշխատակություններով: Այս մասին է ասում իր հոգվածում Վահե-Վահյանը, երբ գրում է թե՛ «Ամենն մոռալ իր գույները տրամադրված եղան պատկերացնելու մանավանդ խաթարիչ դերը արծաթին և հրեշտային աշխատակությունը արծաթամուկ հոգիներուն», թեև իր իսկական անունով չի կոչում այն հասարակությունը, որի ծնունդըն են այդ բարքերը:

Խոսելով մեծ վիպասանի ստեղծագործության ճանաչողական արժեքի մասին, հեղինակը նշում է, որ չնայած Բալզակը իր վեպերում սոցիալական շարիքներից ազատվելու ելք չ'ույց չի տվել, բայց նրա նկարագրած քաոսը «եւթ՝ մը կը փնտրե»:

Բալզակյան երկերը իրենց «անխնա իրապաշտության», ինչպես ասում է հեղինակը, ունեն «հեղաշրջական նկարագիր մը ընկերային տեսակետով ալ» և կանխում են սոցիալական հեղաշրջման մեծ տեսաբաններին: Տեղին է հիշել այստեղ էնգելսի այն խոսքերը Բալզակի ստեղծագործության մասին, թե ինքը նրանից ավելի շատ բան է քաղել, «քան այդ ժամանակաշրջանի բոլոր մասնագետների՝ պատմաբանների, տնտեսագետների, վիճակագիրների գրքերից՝ միասին վերցրած»<sup>19</sup>:

<sup>19</sup> К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, Гослитиздат, 1948, стр. 405—406.



Բալզակը իր բազմաբեղուն գրչով պատկերից ու բացահայտեց ոչ միայն XIX դարի առաջին կեսի Ֆրանսիան ու այնտեղ տիրող բարքերը, այլև, ինչպես նկատում է հոգվածի հեղինակը, «...խուզարկեց մարդոց արարքները ղեկավարող բնազդներուն ու կիրքերուն սկզբնական աղբյուրները և փոխադարձ հարաբերությունները անոնց»։ Մասնավորելով իր խոսքը սիրո ղգացմունքի մասին, որ միշտ էլ տիրական տեղ է գրավել գրականության մեջ, հեղինակը ընդգծում է, որ այն «Բալզակի գործերուն մեջ կը ներկայացվի որպես մեկ արտահայտությունը անհատին ընկերային կյանքին», շեշտելով, այդպիսով, մարդկային բնազդների ու ղգացմունքների արտահայտության ձևերի ենթակա լինելը հասարակության սոցիալական միջավայրին, տիրող պայմաններին։

Հոգվածի կենսագրական մասում Վահե-Վահյանը ամփոփ կերպով նկարագրում է Բալզակի՝ տաղնապներով ու որոնումներով լեցուն կյանքը, նրա հսկայական աշխատունակությունը և այն անսասան հավատը, որ ուներ նա մարդու հանդեպ, նրա արդար ու լուսավոր ապագայի հանդեպ։

Այն օրերին, երբ գրվել է այդ հոգվածը, դեռ չէր ծրագրվել Բալզակի երկերի տասնատորյակի հրատարակությունը հայերեն լեզվով՝ հայ ժողովրդի ազատագրված հայրենիքում, այլապես հեղինակը կանդրադառնար դրան։ Սակայն անկախ այդ տասնատորյակից, Բալզակի մի շարք երկեր թարգմանվել ու ծանոթ էին հայ ընթերցողներին։ Դրանց մասին հոգվածի հեղինակը դժբախտաբար չի խոսում։

«Անի»-ն իր երկու զույգ համարներում (1950, հ. 4—5 (40—41) և հ. 6—7 (42—43) տպագրել է Բալզակի «Անծանոթ գլուխ-գործոցը» Վահե-Վահյանի և Ա. Դարյանի թարգմանությունները։

Նոր ժամանակների Ֆրանսիական գրողներից ամսագիրը իր ընթերցողներին ներկայացրել է Պոլ էլյուարին։ Դա ամսագրի լավագույն ընտրություններից է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ էլյուարը շատ քիչ է թարգմանված ու ծանոթ՝ հայ ընթերցողներին։

Ֆրանսիական պոեզիայի ամենաազգայուն լարերից մեկը՝ Պ. էլյուարը իր ստեղծագործական կյանքն սկսում է առաջին

Համաշխարհային պատերազմի տարիներին: Նա ապրում է այդ պատերազմի արհավիրքները, միջպատերազմյան Նվրո-պոլի հուսալքման ու տագնապի ժամանակաշրջանը, իսպա-նական ողբերգությունը, երկրորդ Համաշխարհային պատե-րազմն ու Ֆրանսիայի ֆաշիստական օկուպացումը, վերջա-պես, դեմոկրատական ուժերի հաղթանակը՝ իր հետ բերած վառ, բայց կարճատև հույսերով: Հոգով՝ լավատես, միշտ սի-րառատ՝ մարդկանց հանդեպ ու միշտ խաղաղության համար պայքարի առաջին դիրքերում—ահա այդպես է ուրվագծում իր հոգվածում<sup>20</sup> Պոլ Էլյուարին Պետրոս Մինասյանը:

Պատմելով բանաստեղծի կյանքի ու այն միջավայրի մա-սին, որտեղ նա ապրել է, հեղինակը դրանք հյուսում է Էլյու-արի ստեղծագործությունների վերլուծումով, տալով «տառա-պողների հավաքական վիշտն ապրող» բանաստեղծի ամփոփ դիմաստվերը:

Պ. Էլյուարի առաջին իսկ բանաստեղծությունները, գրում է Պ. Մինասյանը, բերում են «պայքարելու, մարդը վերանո-րոգելու իր սկզբնական խռովքները, աքտացողումը՝ հեղափո-խական ու վարակիչ իր հավատքին, նոր մարդու իր հույսե-րուն»: Այդ նորն ստեղծելու համար Պ. Էլյուարը և համախոհ մյուս բանաստեղծները գտնում էին, որ անհրաժեշտ է քանդել անցյալի բոլոր կեղծ ըմբռնումները, արթնացնել, զորացնել մարդկանց, մխիթարել, խանդավառել և մանավանդ ներշնչել նրանց, հասցնել հավաքական գիտակցության, որ մարդիկ կարողանան տիրանալ երջանկությանը: Մարդկանց վերափո-խելու իրենց ճիգի ճանապարհին նրանցից ոմանք, այդ թվում և Պ. Էլյուարը, հասան մինչև սյուրռեալիզմի ոլորտները: Սակայն ինչպես ճիշտ նկատում է Ի. Էրենբուրգը, սյուրռեա-լիզմը Էլյուարի կենսագրության մեջ թեև «պատահական մոլո-րություն չէր, բայց ուղեցույց աստղ էլ չէր, այլ զարգացման մի փուլ, մի միջադեպ: ...Էլյուարի պոեզիան միշտ կապված էր այն հասարակության կյանքի հետ, որի մեջ նա ապրում էր»<sup>21</sup>:

20 «Անի», 1948, հ. 9—10, (21—22), էջ 531:

21 Sh'ya Поль Элюар, Стихи. М. Гослитиздат, 1958, առաջաբանը:



Նրբ սկսվեց իսպանական ողբերգությունը, էլյուարը ժողովրդի կողմն էր, դեմոկրատիայի, արդարության կողմը: «Արվեստագետը, — գրում է այդ առթիվ Պ. Մինասյանը, — եղավ մեկը անոնցմե, որոնք իրենց գրիչն ու խոսքը դրին իրավադուրի ժողովուրդին ի սպաս, եղավ արդարության և իրավունքին հետ, պաշտպանեց քաղաքակրթությունը՝ բարբարոսություններուն դեմ»:

Շուտով ֆաշիստական բարբարոսությունը մուտք գործեց և էլյուարի հայրենիքը, Ֆրանսիան բնկավ գերության մեջ: Ազատասեր բանաստեղծը միացավ ֆրանսիական դիմադրական շարժմանը, «...եղավ մեկը անոնցմե, — շարունակում է հեղինակը, — որոնք իրենց անձն ու կարողությունները, իրենց արվեստը միացուցին ժողովուրդին հավաքական բռնկումներուն, հեքին, խուլ ու խորունկ ընդդիմության մաքառումին՝ ժողովրդասեր, ինքնանվեր առաքելությամբ մը»:

Նրա այդ շրջանի բանաստեղծությունները, և հատկապես «Ազատություն»-ը, որ մի շարք այլ գործերի հետ թարգմանաբար բերված է ամսագրի նույն համարում, ոգեշնչող ազդեցություն ունեցան միլիոնավոր մարդկանց վրա:

Էլյուարի հումանիզմը, սոցիալիստիկ ոգին, հավատը մարդկության երջանիկ ապագայի հանդեպ, նրա բանաստեղծությունների թարմ շունչն ու բարձր արվեստը այսօր էլ հուզում ու վարակում են ընթերցողին:

Պ. Մինասյանը իր ուշադրավ հոգվածն ավարտում է մի բանի հետաքրքիր մեջբերումներով էլյուարից՝ հայ ժողովրդի ու գրականության մասին<sup>22</sup>:

«Հայ գրականությունը... իհարկե կը ճանչնամ, — ասում է էլյուարը... բարձրանալով տեղից ու ցույց տալով Զոսմանյանի թարգմանություններն ու այլ գրքեր:

— Կը պաշտեմ արեւելյան բանաստեղծությունը. ավելի անկեղծ շեշտ մը ունի ան — Հաֆիզ, Խայյամ և ուրիշներ: Հայ երգերը անոնցմե տարբեր գույն մը ունին, քաղցր, լուսավոր... Նահապետ Քուշա՛կը, ի՛նչ մեծ բանաստեղծ...

22 Ֆրանսահայ գրող Կ. Փոլատյանի հետ ունեցած զրույցից:

Հայաստան չեմ գացած, ոչ ալ Արևելք, բայց առիթը չպիտի փախցնեմ այցելելու ամբողջ Խորհրդային Միությունը, Իհարկե Հայաստանն ալ մեջը, ինչպես նաև Սուրիա, Պարսկաստան»:

Եվ ապա՝ «Դիմադրական» գրականության մասին.

«—Հարկ չկա, հայերուն՝ պետք չունիմ այդ մասին խոսելու: Դուք ավելի լավ գիտեք, գացեք հարցուցեք այն անման տղոց, որոնք հոս ևս, Ֆրանսայի մեջ, ցույց տվին մեզի թե ի՞նչ է դիմադրությունը, ազատության համար հերոսական պայքարը»:

«Անի»-ն բելգիական գրականությունից կանգ է առել Ժորժ Ռոդենբախի վրա, որի մասին գրում է թե՝ «իր գործը թեև խորքով ու ոգիով արտացոլումն է իր ծննդավայրին, բայց լեզվով ու ձևով կը մնա ֆրանսական»:

Ժորժ Ռոդենբախը, որ ապրել ու ստեղծագործել է անցյալ դարի երկրորդ կեսում, սիմվոլիզմի ներկայացուցիչներից է եվրոպական գրականության մեջ:

Նրա ստեղծագործության հատկանշական մի կողմը հոռետեսությունն է, հուսալքումը: Բուրժուական անկումային գաղափարախոսության մի արտահայտությունն էր այդ, որ ձգտում էր հեռու պահել արվեստը հասարակական-քաղաքական կյանքից, դարձնել այն հսական, նեղ-անձնական արժանների մի անձուկ բնագավառ:

Ժ. Ռոդենբախին նվիրված հոդվածն<sup>23</sup> ամսագրում կրում է Հ. Էսեկյուլյանի ստորագրությունը: Զգալի տեղ տալով բանաստեղծի կենսագրությանն ու նրա 50-ամյա հորելյանի նկարագրությանը, խղճամիտ կերպով բնութագրելով նրա ստեղծագործությունը, հեղինակը ու հեղինակի հետ միասին և ամսագրի խմբագրությունը, քննադատական կամ բացատրական ոչ մի խոսքով չեն անդրադառնում սիմվոլիզմին՝ որպես գրական ուղղության, չեն բացատրում նրա անկումայնային բնույթը, որը հեռացնում է արվեստը ռեալիզմից, շրջափակում անհատին ենթագիտականի ոլորտում:

Էսեկյուլյանը Ռոդենբախի ստեղծագործության մեջ գրտնում է «...հիշատակին երկյուղած խորությունը, սարսուռը

<sup>23</sup> «Անի», 1950, հ. 2 (38), էջ 99.



լուսկյան, հոգեվարքը լույսերուն և կարոտագին, մեկամաղ-  
ձոտ ոգեկոշումը անցյալին»։ «Ան տեսակ մը հոգեխռով հեշ-  
տանքով մը կը մրմնջե բանաստեղծությունը այն բոլորին,—  
շարունակում է էսեկյուլյանը,— որ կը թառամի և կը նվաղի  
տարտամության կամ լուռ ստվերին մեջ։ Ահա թե ինչու իր  
քերթվածները իրենց խորհրդով, պատկերներով ու օրորում-  
ներով՝ հաղորդակից արձագանք մը կը հարուցանեն ընթերցող  
սիրտերուն մեջ»։

Այս օբյեկտիվիստական հայեցակետը «մաքուր ար-  
վեստի» պատվանդանին է բարձրացնում Ռոդենբախի սիմ-  
վոլիզմը, որը իր խորքում հակասում է ամսագրի որդեգրած  
առողջ, ռեալիստական ուղղությանը։

Հեղինակի ոչ քննադատական մոտեցումը հանգեցրել է  
նաև նրա լուսկայն համաձայնությանը արվեստի բնույթի մա-  
սին Ռոդենբախի արտահայտած անընդունելի մտքերին։ Այս-  
պես, օրինակ, նա առանց առարկելու կատարում է հետևյալ  
մեջբերումը Ռոդենբախի «Փարիզը և փոքրիկ հայրենիքները»  
հոդվածից. «Փարիզը մեկուսացում կուտա, կարոտ կուտա։  
Արդ, կարելի է ըսել թե ամեն արվեստ կը բխի կարոտի մը՝  
բացակայությունը նվաճելու, զայն վերստին ապրելու փափա-  
գեն, ինքնիրենդ համար պահպանելու ճիգով մը այն, որ քիչ  
հետո պիտի հեռանա քեզմե, կամ պիտի դադրի գոյություն  
ունենալի»։

Հասարակական այս պասսիվությունը ինքնին հակասում  
է էսեկյուլյանի այն մտքին, թե «արվեստը՝ իրապես ընկերա-  
յին արարք է»։

Ինչպես ասացինք, գերմանական գրականությունը  
«Անի»-ում ներկայացված է միայն Գյոթեով։ Գյոթեին նվիր-  
ված ընդարձակ հոդվածով<sup>24</sup>, նրա ծննդյան 200-ամյակի կա-  
պակցությամբ, հանդես է եկել խմբագիր Վահե-Վահյանը։

Հոդվածն սկսվում է մեծարանքի խոսքերով հանձարեղ  
բանաստեղծի հասցեին։ Դա հարգանքի տուրքի հատուցումից  
ավելի՝ գնահատանքն է մեծ մտածողի, որ խուզարկելով

24 «Անի», 1949, հ. 10 (34), էջ 546 և հ. 11 (35), էջ 593։

մարդկային հոգին, կյանքի ու բնության օրենքները, ստեղծեց ու ժառանգություն թողեց սերունդներին իմացական ու հոգեկան անհուն հարստություններ: Այդ հսկայական գեղարվեստական ժառանգության ստեղծումի «գաղտնիքը» հեղինակը փնտրում է ոչ միայն նրա վիթխարի տաղանդի («ուներովը վեր իր ժամանակակիցներեն»), այլև այն բանում, որ նա «իր ոտքերը ամուր պահեց հոգին վրա, և իր նայվածքեն չհեռացուց իրականությունը կյանքին»:

Այնուհետև Վահե-Վահյանը խոսում է Գյոթեի կենսագրության մասին, հերքում այն ընդհանրացած կարծիքը, թե իբր զրկանքն է սնում տաղանդը. «իր կյանքն ու գործը,—ասում է նա Գյոթեի մասին,—հերքումն իսկ են՝ անիրավ ու անխիղճ այն տեսության, թե ստեղծումին հուրը կը բխի անձնական զրկանքներու կրակեն»:

Կենսագրական մասը հողվածի կեսից ավելին է, բայց դա տարեթվերի ու փաստերի կուտակում չէ: Հետևելով Գյոթեի կյանքի փուլերին, հեղինակը այդ միջոցով փորձում է տալ այն էվոլյուցիան, որ ապրել է Գյոթե-ստեղծագործողը իր մեծ կյանքի ընթացքում, շաղկապելով այդ բոլորը նրա ապրած միջավայրի ու ժամանակաշրջանի հետ: Հմտորեն ընդգծված են հանճարեղ ստեղծագործողի կյանքի կարևորագույն հանգրվանները, նրա հարումից՝ «Փոթորիկի ու գրոհի» շարժումին, և մինչև իմաստությամբ լեցուն ու բեղուն տարիները Վայմարում: Այդ շարագրության ընթացքում տրված է նաև պատմական հարուստ իրադարձություններով հագեցված ժամանակաշրջանի խտացված պատկերը, որի կենտրոնը ֆրանսիական մեծ հեղափոխությունն էր և նապոլեոնական արշավանքները՝ բեկված ավատական Գերմանիայի յուրահատուկ պրիզմայում:

Ժամանակի իրադարձությունները իրենց խոր կնիքն են դրել Գյոթեի ողջ ստեղծագործության վրա: «Գյոթեի կյանքին ու գրականության մեջ նկատված ներհակությունները՝ իր անձեն ավելի՛ կը բխին իր ժամանակեն, շրջապատեն»,—գրում է հեղինակը, նկատի ունենալով այն հակասությունները, որ ստեղծվել էին հեղափոխական խմորումների, դասակարգային ուժերի նոր փոխհարաբերության, էպոխայի ընդ-



հանուր առաջադիմության, գիտության ու տեխնիկայի զարգացման և ավատապետական կարգերի ներքո տառապող ու տնտեսապես հետամնաց գերմանական ժողովրդի ողբալի դրության միջև: «Եվ այնքան ուժեղ է արվեստագետը իր մեջ՝ որ ոչինչ կը հոժարի զիջիլ իրողութենին: — Կարգում ենք այնուհետև հոգւածում: — Իր գաղափարները, գեղագիտական իր ըմբռնումները կը հատկանշվին ահալուր անկախությամբ, որ ճշմարտության դեմ ճակատ-ճակատի իր կեցվածքովը միայն կրնա բացատրվի»:

Եթե «Վերթերը», Գյոթեի առաջին վիպական ստեղծագործությունը, կրում է իր մեջ «Փոթորկի ու գրոհի» շրջանին հարապատ ընդհանուր բաղժի ու ըմբոստության ոգին՝ տիրող իրականության դեմ, զարգացնում է իր մտքերը հեղինակը, ապա նրա «Պրոմեթեոս»-ը և «Գյոց ֆոն Բեռլինգեն» ողբերգությունը արտացոլում են բողոքի մեկ ուրիշ ձև՝ անհատի (դյուցազնի կամ ասպետի) սխրագործությունների միջոցով մարդկության ազատագրման ուղին:

Այլ է Գյոթեն Վայմարում, երբ ստեղծում է իր «Իֆիգենիան», «Էգմոնտ»-ը: Այդ երկերում մեծ մտածողը չարիքի դեմ պայքարի այլ ճանապարհ է որոնում՝ մարդու վերագատիարակման, կատարելագործման, ազնվացման ուղին, հանգելու համար ի վերջո «Վիլհելմ մայստեր»-ին, «Ֆաուստ»-ին, «այն պայծառ համոզումին, թե մարդուն հարադատ երջանկության աղբյուրները կը բխին՝ ընկերայնորեն օգտակար գործունեության ակունքեն», որ մարդկային կյանքի իմաստը գործն է, հասարակության բարօրության համար թափած աշխատանքը:

Վահե-Վահյանը իր հոգւածի մեջ անցողակի անդրադառնում է նաև Գյոթեի գեղագիտական հայացքներին: Արվեստը, մեծ բանաստեղծի համոզմամբ, «թոթափելով պատահականը, պետք է որ հատկանշականին մեջեն ձգտի հավերժորեն մարդկայինին», քստ ոբում բոլոր հայեցողական տեսությունների հիմքը՝ թե գիտության և թե արվեստի մեջ, պետք է լինի կենդանի իրականությունը:

Գյոթեին նվիրված էջերը ամսագիրը հարստացրել է Ստեֆան Յվայգի «Գյոթեի բանաստեղծությունը» փոքրիկ հոդ-

վածով<sup>25</sup> և մեծ քնարերգուի ութ բանաստեղծություններով՝ Հովհ. Թումանյանի, Եղիշե Չարենցի և ուրիշների թարգմանությունները:

Իսպանական. դրականությունը նույնպես մեկ ներկայացուցիչ ունի «Անի»-ում: Դա աշխարհահռչակ Սերվանտեսն է: Հոգվածը (հեղինակ՝ Հ. Ս. Ակայյան)<sup>26</sup> գրված է մեծ գրողի ծննդյան 400-ամյակի կապակցությամբ:

Գերակշռողը հոգվածում, որ իր մակարդակով շատ է դիջում ամսագրի նույնատիպ նյութերին, Սերվանտեսի կենսագրության շարադրանքն է: Թույլ կողմն այն է, որ հեղինակը, հիշատակելով շատ փաստեր, Սերվանտեսի կենսագրությունը չի շաղկապում իր ժամանակի Իսպանիայի հասարակական-քաղաքական միջավայրի հետ:

Խոսելով Սերվանտեսի ստեղծագործության (մասնավորապես «Դոն Կիխոտ»-ի) նշանակության մասին, հեղինակը կրկնում է եվրոպական մի շարք գրականագետների թյուր տեսակետները, ընկնելով պարզունակ ենթադրությունների մեջ ու հանգելով սխալ եզրակացությունների: «Ըստ Ակայյանի՝ Դոն Կիխոտը ինքը Սերվանտեսն է, որ «կյանքի մեջ իր ունեցած հուսախաբություններն ու թշվառությունները՝ անոր պատմել կուտա. իր կարգ մը խենթ գրքերը անո՛ր կատարել կուտա»: Սակայն հարցը վեպի հեղինակի ու հերոսի նույնացումը չէ (գեղարվեստական երկերում հեղինակի կենսագրության հետ կապված փաստերի հաճախ կարելի է հանդիպել):

Ո՞վ է Դոն Կիխոտը Ակայյանի բնորոշմամբ. «Հոգեբանական տեսակետով... — ասում է նա, — միջավայրին չհամակերպող մը, արդյունք՝ ամուրիության (°): — Եվ բարոյական՝ տեսակետով. — Չքապաշտ մը...»: Այս չափով իշեցնելով այդ հոյակապ կերպարի իմացական ու գաղափարական նշանակությունը, հեղինակը կարծեք չի նկատում, որ նույն չափով նսեմացնում է և նրա մեծ կերտողին՝ Սերվանտեսին:

Հոգվածի հեղինակը չի կարողացել ներկայացնել Սերվանտեսին ու նրա ստեղծագործությունը այնպես, ինչպես

25 «Անի», 1949, հ. 11 (35), էջ 599:

26 «Անի», 1947, հ. 12, էջ 659:



արժանի է ներկայացվելու համաշխարհային նման մեծություն: Ընթերցողի համար չի բացահայտվում Սերվանտեսի վեպի ու նրա նովելների հումանիստական խոր բնույթը, մերկացնող ուժը, բողոքի ոգին, որ ուղղված է ֆեոդալական Իսպանիայի հասարակական կացութաձևի դեմ: Չի ցույց տրված վեպի գեղարվեստական հարստությունը, նրա համամարդկային բովանդակությունը, իդեալականի ու բիրտ, շահամոլ իրականության բախումը, վեհ գաղափարների այն ամբողջ հմայքը, որով հագեցած է «Դոն Կիխոտ»-ը: Հեղինակը բավականանում է միայն ասելով, որ Սերվանտեսի վեպը իսպանական գրականության լավագույն գիրքն է, և, չգտնելով համեմատության ուրիշ եղը, նշում, որ Աստվածաշնչից հետո թերևս ամենից շատ տարածված գիրքն է աշխարհում:

Հեղինակը մի շարք դեպքերում արտահայտում է չհիմնավորված, քմահաճ մտքեր, կատարում սխալ ընդհանրացումներ: Հումորը, ըստ նրա, «ծիծաղաշարժ թաքուն ույժ մըն է. անիկա կյանքի խանդավառ լրջությունն է: Հումորը հեթանոսական դարու գյուտ չէ. քրիստոնեական ծագում ունի ան: Սերվանտես ինք գտավ և ծանոթացուց հումորը զոր անգլիացիք յուրացուցին և ազգայնացուցին՝ օգտվելով սպանացվոց անհոգութենեն: Հումորը ծնունդ առավ Սպանիո մեջ, և սպանեցավ «Դոն Բիշոտ»-ով», և այլն:

Ամսագիրը իր «Միջազգային գրականության» բաժիններից մեկը նվիրել է սկանդինավյան ժամանակակից գրականությանը՝ շվեդացի բանաստեղծ, նովելիստ, վիպագիր ու դրամատուրգ Պեր Լագերկվիստին<sup>27</sup>:

Պեր Լագերկվիստը ծնվել է 1891 թվին: Ինչպես գրում է ամսագիրը, նա, դեռևս 1913 թվականին, թոթափելով Արևմտյան Եվրոպայի անկումային գրականության ազդեցությունը, հանդես է գալիս գրական մի մանիֆեստով, որի մեջ ժխտում է «արվեստը արվեստի համար» սկզբունքը, համարելով այն անիմաստ, ու պաշտպանում է հասարակայնորեն ակտիվ, պայքարող արվեստը: Նա գտնում է, ինչպես ասված է հոդվածում, որ «արվեստը ինքնանպատակ չէ, այլ միայն զորա-

27 «Անի», 1951, հ. 10 (46), էջ 572:

## ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՆ ԱՄՍԱԳՐՈՒՄ

Դրա-քննադատական բաժինը գրական-գեղարվեստական ամեն մի ամսագրի տեսական մտքի հայելին է: Դա հավասարապես վերաբերում է և «Անի»-ին: Ամսագիրը առավելապես այդ բաժնի միջոցով է արտահայտել իր գրական-գեղարվեստական հայացքները, իր վերաբերմունքը հասարակական մտքի, փիլիսոփայության, արվեստի և շատ այլ հարցերի վերաբերյալ, պայքարել հակադեղագիտական, հետադիմական գրական հոսանքների ու թշնամական հարձակումների դեմ, պրոպագանդել ռեալիզմը գաղութահայ մտավորական շրջաններում<sup>1</sup>:

Աշխատության սկզբում մենք խոսեցինք այն կարևոր դերի մասին, որ հատկացնում է ամսագիրը գրականությանն ու առհասարակ արվեստին հասարակական կյանքում: Այդ թեման բազմիցս արծարծվում է «Անի»-ում, այլևայլ առիթներով և զանազան ասպեկտներով, թե գրական-բանասիրական հոդվածներում և թե գրախոսականներում:

Գրական մի շարք ընդհանուր և սկզբունքային խնդիրներ

---

1 Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ «Անի»-ն այն ամսագրերից է, որտեղ խմբագիրը բոլորից ավելի է ներկա: Առավել ճշմարտացիությամբ այդ կարելի է ասել նրա գրական-քննադատական բաժնի մասին: Վահե-Վահյանը միայն մի-երկու բանաստեղծություն է տպագրել ամսագրում և իր «Հարալեզներու հաշտությունը» հուշերը, սակայն բազմազան են նրա գրական-բանասիրական հոդվածները և, մանավանդ, գրախոսականները, որոնք համարյա ամբողջովին պատկանում են նրա գրչին: Նկատելի է նաև, որ Վահե-Վահյանը հաճախ գրախոսականները դարձնում է միջոց՝ իր գրական-գեղագիտական մտքերն ու տեսակետներն արտահայտելու համար:



արծարծված են ամսագրի խմբագրական հոդվածներում, որոնք նույնպես պատկանում են Վահհ-Վահյանի գրչին:

Այդ խնդիրներից կարևորագույնները գրականության նյութի (բովանդակության) ու դերի (գաղափարայնության) հարցերն են, որոնք երկուսն էլ հասունացել ու իրենց լուծումն էին պահանջում հայ գաղութներում ստեղծված նոր իրադրության պայմաններում: Հայ աշխատավոր զանգվածները և մտավորականության մեծամասնությունը նոր վերելք էր ապրում ի տես հայրենիքի բարգավաճման: Նրանց միտքն զբաղեցնողը ոչ թե դառն անցյալն էր՝ ողբի ու անհուսովյան իր ճնշող մթնոլորտով, այլ այն պայծառ ապագան, որ ավելի ու ավելի հստակ կերպարանք էր ստանում հայրենիքի լուսավոր ու հուսալից ներկայի շնորհիվ: Անցյալի մասին շատ էր գրավել: Անցյալը («երկիր», ինչպես ասում է «Անի»-ն) իր տեղն էր պահանջել գրականության մեջ և ստացել էր այն: Գրականությունը կատարել էր իր պարտքը, ստեղծվել էին գեղարվեստական տարբեր արժեք ներկայացնող արձակ և շափածո գործեր, որոնցում արտացոլվել էին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած հայկական կոտորածների պատկերները և հայ բեկորների կյանքը արտասահմանյան տարբեր գաղութներում:

Գրականության դուռն այժմ բախում էր ներկան ու պահանջում իր արդար տեղը: Դա արդիականության հարցն էր, որ դնում էր կյանքը սփյուռքահայ գրականության առջև՝ որպես անհրաժեշտություն: Կյանքը պահանջում էր գրականությունից պատկերել գաղութահայ աշխատավորների ներկան, իսկ այն արդեն սերտորեն շաղկապվել էր հայրենիքի հետ, նրանով էր լիցուն, նրանով էր ապրում<sup>2</sup>:

2 Արդիականության հարցը սփյուռքահայ մամուլում արծարծվում էր դեռևս երևոնական Բովանդակներից, մասնավորապես գաղափարական խմբումներով հարուստ ֆրանսահայ գաղութում: Առավելապես նորահաս սերնդի գրողներն էին, և նրանց պարբերականները, որ դնում էին այդ պահանջը գրական հասարակայնության առջև, «Զանք»-ը (1930—1931)՝ մի փոքր հախուռն կերպով, հասնելով երբեմն կոսմոպոլիտիզմի գաղափարին, «Մենք»-ը (1931—1932)՝ անորոշ խաբխափումներով և, որոշակիորեն՝ «Մշակույթ»-ը (1935—1937): Այդ հարցը բարձրացնում էր նաև ֆրանսահայ աշխատավորության հասարակական-քաղաքական «Զանգու» շաբաթա-

«Անի»-ի արժանիքներից մեկը այդ խնդրի կարևորության լիակատար գիտակցումն էր:

Ամսագրի երկրորդ տարեշրջանի առաջին համարի խմբագրական: հոդվածում Վահե-Վահյանը, անդրադառնալով արդիականության հարցին գրականության մեջ, գրում է.

«Արդ, եթե բնական, կարելի, արդար և ընդունելի էր այդ պահանջը երեկին հաշվույն, ինչո՞ւ առնվազն նույնքան բնական, կարելի, արդար և ընդունելի չըլլա նման պահանջը մեր մեր այսօրին հաշվույն:

...եթե ցավը, տխրությունը, անհուսությունը, մղձավանջը, վախը իրավ բաներ էին երեկ մեր կյանքին մեջ, և արժանի գրականություն բերվելու.

...Այսօր, մեր կյանքին մեջ, նույնքան իրավ և շատ ավելի գեղեցիկ բաներ են ազատ ու բարգավաճող կյանքով հայրենիքի մը պատկերը, հավատավորությունը, պայծառությունը, խիզախությունը, վերականգնած արժանավորությունը, կյանքին ու մարդոց սիրովը բաբախուն առուգությունը. հետևաբար, նույնքան և շատ ավելի արժանի՝ գրականություն բերվելու...»<sup>3</sup>:

«Անի»-ի առաջադրած այս պահանջները հայտարարություն չմնացին լոկ: Ամսագիրը քիչ գործ չկատարեց «հեռանկարավոր ու կենսունակ գրականության մը ձևավորումին» գործում: Այդ են վկայում ամսագրում տպագրված և չափածո ու արձակ գործերը, որոնց մեծ մասի թեման արդիականությունն է, ներառյալ և՛ սովետահայ հեղինակների գործերը, և՛ գրական-քննադատական հոդվածներն ու բազմաթիվ գրախոսականները, որոնց մեջ քննարկվող հարցերը ևս սերտորեն առնչվում են արդիականության հետ:

---

Թերթը (1935—1936): «Գաղութահայ աշխատավորական ղանգվածներում ոտ,— գրում էր նա,— վաղուց է, որ կզգացվի պահանջը իր այժմյան պայմաններուն, կյանքին և պայքարներուն զեղարվեստական վերարտադրությունը հանդիսացող գրականության մը» (հ. 16): Բայց անհրաժեշտ եղավ էլի մոտ մեկ տասնամյակ, որ պայթեր ու անցներ պատերազմի փոթորիկը, և արդիականությունը, որպես թեմա, կաշուն կերպով արմատավորվեւր գրականության մեջ:

3 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 3:



Երկրորդ կարևոր խնդիրը, որ բարձրացնում և սկզբունքային հողի վրա է դնում ամսագիրը, ինչպես ասացինք, գրականության կատարելիք դերի հարցն էր:

Նոր շէր այդ հարցը թե հայ գրականության մեջ, բնդհանրապես, և թե, մասնավորապես, արտասահմանյան հայ գաղութների գրական միջավայրում: Սփյուռքը ևս «երկփեղկված» էր, և ամեն մի կողմը իր ուրույն մոտեցումն ուներ և իր պահանջները՝ գրականությունից:

Առաջավոր մտածողներն ու գրողները գրականության դերը գտնում էին նրա ակտիվ միջամտության մեջ կյանքի երեւոյթներին՝ «գրականության դերը հասարակությանը ծառայելն է» սկզբունքով: Այդ դիրքերի վրա էին կանգնած առավելապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչները:

Բայց գաղութահայ կյանքի աննպաստ պայմանները տարիների ընթացքում ստեղծել էին մոռալատես, նահանջողական տրամադրություններ հայ մտավորականների շրջանում, ու նրանց մի մասի համար խորթ շէր արեւմուտքի հետադիմական գաղափարախոսությունը՝ գրական իր ղեկագլխատական հոսանքներով: Սփյուռքահայ գրողներից ոմանք համակվել էին հոռետեսական այդ հոգեվիճակով և ի վերջո ապավինեցին «արվեստը հանուն արվեստի» գաղափարազուրկ սկզբունքին: «Անի»-ն նրանց անվանում է «գաղափարական դատարկությունը շքազարդող աճաբարներ»<sup>4</sup>: Ոմանց համար դա հասարակական ակտիվ կյանքից սեփական անձուկ ներաշխարհը հեռանալու մի ձև էր, ուրիշների համար՝ նահանջի միջոց՝ առաջադիմական, հեղափոխական գաղափարների առաջ: Այդ ուղղության ծայրահեղ աջ թևը «գաշնակցության բացասական գաղափարաբանության ավաղուտքը մխրձված գրողներն» էին<sup>5</sup>, որոնք, կորցնելով բոլոր հեռանկարները, ժխտում էին ամեն բան, ինչ առաջադիմական էր, և, մանավանդ, Սովետական հայրենիքի հոյակապ իրականացումները, այդ թվում և սովետահայ գրականության նվաճումները: Նրանք մեղադրում էին

4 Վահե-Վահյան, Հառաջապահ գրականություն, «Անի», 1946, հ. 7, էջ 340:

5 Անդրանիկ Անդրեասյան, Դրական ու բացասականը գրականության մեջ, «Անի», 1952, հ. 1 (49), էջ 43:

սովետահայ գրականությունը (և սովետական գրականությունն ընդհանրապես) տենդենցիոզության մեջ: «Զգտումնավոր (տենդենցիոզ) գրականություն» պիտակի տակ նրանք փորձում էին ժխտել սովետական գրականության առաջադիմական գաղափարները և անջատել սփյուռքահայ ընթերցողներին այն լուսավոր մտքերից ու պայծառ լավատեսությունից, որ բովանդակում էին իրենց մեջ մեր գրականության լավագույն երկերը:

Ահա ժխտողական այդ տենդենցների և հետադիմության անմաքուր պայքարի դեմ է, որ բարձրացնում է իր ձայնը «Անի»-ն, պաշտպանելով ու պրոպագանդելով գրականության գաղափարայնության տեսությունը:

«Զգտում... Սատանա՛ն տանի բոլոր սալոնական վեճերը:

Եթե հոգիիդ մեջ կը լեցվին ալիքները ժամանակիդ մտածողության, քու սեփական մտածումներդ՝ մտածումներն են նաև քու ժամանակիդ:

Եթե սիրտդ կը տրոփե կշռույթովը ժողովրդիդ սիրտին, քու սեփական հուզումներդ՝ հուզումներն են նաև քու ժողովուրդիդ:

Ու երբ կը խոսիս դուն, քու ձայնիդ մեջ կա ձայնը քու ժամանակիդ ու ժողովուրդիդ: Եվ ժամանակն ու ժողովուրդը երբեք չեն պատահականություններ—անիմաստ ու անձդտում, գաղափարական ներուժովենի զուրկ գոյություններ»<sup>6</sup>:

Այսպիսի կրքոտությամբ է հարձակվում ընդհանրապես հանդարտ ու խոհուն «Անի»-ն «մաքուր արվեստի» տեսության կողմնակից, «իմացական սնանկությունից տառապող եղկելիներուն» դեմ, պաշտպանելով արվեստի առողջ գաղափարայնության սկզբունքները:

Եթե գրականությունը, իր իմացական կամ ճանաչողական հատկանիշներով լուսավորում է մարդկության անցյալը, պայծառ կերպով արտացոլում ներկան և լուսարձակի դեր կատարում ապագայի նկատմամբ, պարզաբանում է իր մրտքերը Վահե-Վահյանը վերը հիշված խմբագրական հոդվածում, ապա ուրեմն այն «անհրաժեշտաբար նպատակավոր

6 «Անի», 1946, հ. 7, էջ 341:



է», առաջապահի դեր ունի կատարելու, նրա կոչումն է օգնել մարդկանց՝ ճանաչելու մեծ իրողությունները, խորացնելու, հիմնավորելու, արագացնելու դրանց ընթացքը:

«Եթե անվիճելի է թե ճշմարիտ գրականությունը, միշտ և ամեն տեղ, եղած է գեղարվեստական արտահայտությունը հառաջապահ միտքերու, — գրում է նա, — անվիճելի է նաև թե անիկա ունեցած է զգաստություն, գաղափարական խորք՝ և ուղղություն: Առանց գաղափարի՝ չկա իմաստավոր շարժում, և առանց իմաստավոր շարժումի՝ չկա գրականություն» (ընդգծումը մերն է. — Մ. Բ.):

Մեկ ուրիշ տեղ, վերադառնալով գրականության գաղափարայնության հարցին և աչքի սռաջ ունենալով սովետահայ հեղինակների լավագույն երկերը (Վ. Անանյանի «Սևանի ափին» վեպը՝ մասնավորապես), Վահե-Վահյանը շեշտում է, որ «մեծ գրականությունը կրնա ծնիլ մեծ իդեալներով տոգորուն կյանքեն միայն»<sup>7</sup>:

Գրականության և արվեստի հասարակական, սոցիալական էությունն ու նրանց «տենդենցիոզ» բնույթն է շեշտում և Ա. Անդրեասյանը, երբ գրում է.

«Ապրելու սահմանված արվեստի գործը անհրաժեշտ է որ ցույցնե, հարադատ ու կենդանի բարախումով՝ նկարագիրներու հոգեկան տպրումները, որոնք ուժգնորեն կը ներշնչվին, կ'ազդվին նույն այդ ժամանակներու հատուկ ձգտումներեն: ...Ոչ ոք... կրնա ժխտել, թե գրականության բարձրագույն, ազնվագույն ու գեղեցկագույն արտահայտությունները նաև պրոպագանդի հորդ ու անսպառ աղբյուրներ եղած են, սկսյալ Աստվածաշունչեն և հունական ու հայկական ոսկեդարյան գործերեն մինչև «Նարեկ» և «Աստվածային կատակերգություն», «Օթեկը» և «Դրախտ կորուսյալ», «Դոն Բիշոտ» և «Մարդկային կատակերգություն»-ը, մինչև «Պատերազմ և խաղաղություն», «Դավիթ Կոպերֆիլդ» և «Ամերիկյան ողբերգություն մը», «Մայրը» և «Ժան Քրիստոֆ»...<sup>8</sup>:

Ամսագիրը կարևոր նշանակություն է տալիս ճշմարիտ ստեղծագործության և առաջավոր գաղափարների միջև եղած

7 «Անի», 1952, հ. 4—5 (52—53), էջ 280:

8 «Անի», 1946, հ. 5, էջ 280:

սերտ կապի հարցին: Այդ տեսակետից շատ ուշագրավ է Ա. Անդրեասյանի մեր կողմից արդեն հիշատակված հոդվածը՝ «Դրականն ու բացասականը գրականության մեջ»:

Հեղինակն այդտեղ դարգացնում է այն ճշմարիտ միտքը, թե հասարակության բացասական (հետադիմական) ուժերի գաղափարախոսության հետևորդները արվեստի ճշմարիտ ու վսեմ գործեր ստեղծել չեն կարող և որ ժողովրդի իդեալներին թշնամի գաղափարները ինքնին հակադեմոկրատական ու հակահասարակական են: Միայն դրական (առաջադիմական) գաղափարներն են, որ կարող են ոգեշնչել իսկական տաղանդը, արգասավորել այն արվեստի հանճարեղ գործերով:

Նշելով այն ուղղակի կապը, որ կա հասարակական կեցության ու մտածողության և արվեստի ստեղծագործության լույսնդակության ու ոգու միջև, հեղինակը հանդում է այն եզրակացության, թե որդերից կրժոտված ու գոսպցած ծառը հյութեղ պտուղներ տալ չի կարող: Իր այս միտքը Ա. Անդրեասյանը փաստում է մի շարք օրինակներով թե՛ գաղղթահայ և թե՛ միջազգային գրականությունից, սկսած Համաստեղից, որը «Գյուղը» և «Անձրեք» գրքերից՝ հետո տասնյակ տարիների ընթացքում չստեղծեց ուրիշ ուշագրավ բան, մինչև Կնուտ Համսունը և Ջոն Դոս Պաստսը, որոնք ամլության դատապարտվեցին ռեակցիոն գաղափարներ որդեգրելուց հետո:

Այսպիսով, «Անի»-ն վճռականորեն կանգնում է արվեստի գաղափարայնության դիրքերում և պաշտպանում ու պրոպագանդում է ռեալիզմը, պայքար մղելով ապաքաղաքական, «մաքուր արվեստի» ու նրա այլևայլ արտահայտությունների դեմ<sup>9</sup>:

Մեր ասածից չի հետևում, իհարկե, թե «Անի»-ում տպագրված բոլոր նյութերը (գեղարվեստական, քննադատական-

9 «Մաքուր արվեստի» կողմնակիցների դեմ պայքարը նոր չէր սփյուռքում: Դեռևս երեսնական թվականներին այդ սկզբունքի դեմ վճռականորեն հանդես էին գալիս Ֆրանսահայ երիտասարդ գրողները (Վ. Շուշանյան, Ա. Սևմա, Պ. Զարոյան և ուրիշներ): Տե՛ս, մասնավորապես, Վ. Շուշանյանի «Արվեստը մարդուն համար է...» հոդվածը «Մշակույթ»-ի 1935 թվականի երկրորդ համարում: «Անի»-ի վաստակն այն էր, որ այդ պայքարը, ավելի լայն հիմքերի վրա ծավալեց Մերձավոր արևելքի հայ գրական միջավայրում:



տեսական կամ արվեստի հարցերին նվիրված) անխտիր ռեալիստական են իրենց բովանդակությամբ ու գաղափարային: Ո՛չ, կան ռեալիզմի ոգուն խորթ, թույլ գործեր ևս (ղրանց մասին մենք խոսեցինք նախորդ գլուխներում): Բայց զրանք շատ չեն ու որակ չեն կազմում ամսագրում: Հիմնականը, էականը «Անի»-ում ռեալիստական խորք ունեցող նյութերի ամբողջությունն է, որ բնորոշում է նրա դեմքը, և այն հետևողական պայքարը, որ մղել է նա հակազեղագիտական և հետադիմական տենդենցների դեմ՝ գաղութահայ գրական միջավայրում:

Ելնելով իր հիմնական սկզբունքներից, ամսագիրը որոշակի պահանջ է ներկայացնում և քննադատությանն ու քննադատին: Քննադատը պետք է «...խոր հասկացությունն ունենա՝ անհատը և ընկերությունը վարող տնտեսական ու բարոյական ուժերուն, — գրում է «Անի»-ն, — որպեսզի կարենա ըմբռնել ու բացատրել զեղարվեստական երկի մը պատկերացուցած նկարագիրներն ու միջավայրը»:

«Անի»-ն ժխտական դիրք է բռնում «Անցյալը իրեն առանցք դարձուցած» գաղութահայ քննադատության հանդեպ: Ինչպես գրում է ամսագիրը, այս վերջինը նշանաբան էր դարձրել այն բացասական ըմբռնումը, որի համաձայն «գրական գործի մը արժեքը այնքան բարձր կը նկատվեր՝ որքան սեռուուն կերպով կը պատկերացներ ան մեր ծննդավայրին երեկը»<sup>10</sup>:

Տրամագծորեն այլ էր քննադատության սկզբունքը «Անի»-ում: Նա ետ չէր նայում, այլ ուղղում էր իր հայացքը դեպի դալիքի հորիզոնները: Ամսագիրը չէր ժխտում մեր հրեկը և ոչ էլ հրաժարվում անցյալի ժառանգությունից: Նրա նպատակը «հեռանկարավոր ու կենսունակ գրականության մը ձևավորումին» նպաստելն էր, զրականություն, որն արտացոլեր գաղութներում ապրող հայության կյանքն ու մտորումները, նրա առաջադիմական ձգտումները, նրա սերը հարազատ մշակույթի ու հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հանդեպ:

10 «Անի», 1948, հ. 9—10 (21—22), էջ 555:

Հատկանշական է, որ ամսագիրը վճռական դիրք է բռնում և չեզոքություն դնում: «Զարիքին չհամակերպի՛լ երբեք...» — Հայտարարում է նա: — Մնալ արթուն պահակը՝ միտքի և հոգիի մեր հարստության, ու թույլ չտալ որ մեր գրականությունը վերածվի սև շուկայի, ուր անպատիժ տիրակալեն հայ գիրքին ու խոսքին շարաշահները»<sup>11</sup>:

Ուշի-ուշով հետևելով սփյուռքահայ գրական-գեղարվեստական կյանքին, «Անի»-ն արձագանքել է աճեն մի նոր երեւոյթի, անդրադարձել քիչ թե շատ ուշագրավ երկի երևան գալուն:

Հիմնականը, որի վրա բեկում է իր ուշադրությունը ամսագիրը, քննարկելով այս կամ այն երկը, ստեղծագործության գաղափարական բովանդակության և արվեստի հարցերն են: Նա, ինչպես և պետք էր սպասել, հանդես է բերում գովելիք անհանդուրժողականություն գաղափարազուրկ և արվեստի տեսակետից թույլ ու ապաշնորհ գործերի նկատմամբ:

Ամսագիրը խիստ քննադատության է ենթարկում այն երկերը, որոնք շրջանցում են ժողովրդի բուն իղձերը, չեն լուսավորում նրա միտքն ու ճամփան, չեն արտացոլում ռեալ իրականությունը: Այդ գործերի շարքին է դասում «Անի»-ն, օրինակ, Կ. Փոլատյանի «Արևելքի տղաքը», «Կը հրաժարիմ հայութենի» վեպերը, և այլ գրքեր, որոնց և անդադարձել է նա: Գլխավորը, որ բացակայում է այդ գործերում, գրում է ամսագիրը, հստակ գիտակցված նպատակն է, այն գաղափարը, որ «մշուշներ է փարատում», «բարի սերմեր է տարածում» և «լույսեր է կախում հոգիների մութի մեջ»: Երբ չկա լուսատու գաղափարը, կամ աղճատվում է այն՝ գիտակցաբար թե անգիտակցաբար՝ իրականությունը չճանաչելու, չհասկանալու կամ այն խեղաթյուրելու միջոցով, ստացվում է կեղծ, անդամալույծ մի գործ, որ գեղարվեստական լինել չի կարող իր էությունը:

«Արևելքի տղաքը»<sup>12</sup> վեպի նյութը՝ հայ ժողովրդի դառն ճակատագրի հետևանքով Ֆրանսիա ապաստանած և այդ ճա-

11 «Անի», 1946, հ. 1 (25), էջ 1:

12 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 54:



կատաղրի ողբերգությամբ տառապող մի խումբ ուսանող երիտասարդների կյանքն է: Թվում է, թե նրանց չէին կարող չհետաքրքրել ժամանակի քաղաքական, սոցիալական հարցերը: Բայց այդպես չէ. նրանք վեպում մնում են «անհաղորդ... ժամանակը լեցնող բնկերային, տնտեսական, քաղաքական և ազգային հարցերուն»: Ավելին. նրանց տեսադաշտից դուրս է մնացել Սովետական Հայաստանը: Ինչպես նկատում է Վահե-Վահյանը, վեպում դեպքերը տեղի են ունենում 1934-ին, «Թվական մը՝ ուր այլևս ներելի չէ որ խելահաս հայ տղաք չգիտնան թե ունին ապրող հայրենիք մը: Ինչ որ ալ ըլլար իրենց կողմնորոշումը, Հայրենիքը անպայման կը գրավեր տեղ մը իրենց միտքին մեջ: Նթե չէր հանդիսանար բեռն իրենց շարժումներուն, գոնե կը դռնար լուսավոր կետ մը, որուն կը հառելին, պարտավոր էին հառիլ երբեմն»: Բայց հայրենիքը չկա վեպում: Ահա թե ինչու այդքան անհեռանկար է նրանց կյանքը, «առանց նշույլ մը լույսի, որ իրենց ճամփուն մութը մեղմացներ»: Այդ անհեռանկարայնությունը, որ ի վերջո իրական կյանքի աղճատված պատկերացման արդյունք է, ասում է Վահե-Վահյանը, կեղծիք է մտցնում ոչ միայն վեպում ընդհանրապես, այլև գործող անձանց վիճակի մեջ, աննախանձելի դրություն մատնելով նաև հեղինակին, կենսազրկելով նրա երկը:

Նույն այդ ախտերը, ավելի ևս խորացված, հատուկ են նաև հեղինակի վերը հիշված երկրորդ վեպին («Կը հրաժարիմ հայութենե») <sup>13</sup>:

Նրա հերոսները, որոնք ճառում և երբեք չեն գործում, իրականությունից կտրված մարդիկ են, «պզտիկ, նիհար, անօգնական գաղափարի մը կառչած...», այնքան իրար նման, որ չի կարելի զանազանել մեկը մյուսից, գրում է ամսագիրը: Վեպը, ամբողջությամբ վերցրած, կշիռ չունեցող գործ է, «...անհարիր մտքերու հանդիսարան մը..., հակասություններով խճողված քաոս...» <sup>14</sup>:

<sup>13</sup> «Անի», 1949, հ. 9 (33), էջ 502:

<sup>14</sup> Նկատի ունենալով այն հանրահայտ ճշմարտությունը, որ յուրաքանչյուր ստեղծագործություն նախ և առաջ ինքը՝ հեղինակն է, կարող ենք ասել, որ թերևս այդ վիպերի հերոսներն ավելի ամբողջական լինեին, ավելի

«Անի»-ն ավելի անողոր է, երբ պատասխանում է թշնամական հարձակումներին: Այդպիսին են նրա հողվածները Հ. Օշականի և Շ. Նարդունու դեմ:

Հակոբ Օշականը (1883—1948) գաղութահայ «միականի քննադատության» աչքի ընկնող ներկայացուցիչներից է: «Գիտակցորեն բարդ ու քմաքոտ ոճի» տեր այդ հեղինակը, ինչպես գրում է Վահե-Վահյանը, երբեք չկարողացավ դիտել գրականությունը «որպես ընկերային հզոր արարք», հասարակական բնույթի երևույթ: Խոստովելով գրականությունից և խրվելով «քաղաքականության ճախճախուտքին մեջ, մինչև շփոթունքը» Հ. Օշականը իր բացասումների ու ամբաստանությունների «...ոստայնը տարածեց մեր հայրենիքին ոչ միայն գրական արտադրություններուն, այլ նաև ազգային ու քաղաքական ձգտումներուն և արարքներուն վրա...»<sup>15</sup>:

1945-ին Երուսաղեմում լույս տեսավ Հ. Օշականի «Վկայություն մը» գիրքը՝ լի թշնամական հարձակումներով Սովետական Հայաստանի ու նրա գրական մշակույթի դեմ: «Անի»-ն պատասխանեց դրան խիստ, բայց բարեպետալ մի գրախոսականով: Սակայն դա չզգաստացրեց Օշականին: Նա «գիմեց նոր փամփուշտներով հին դեմքին», հանդես գալով այդ գրախոսականի դեմ («Նաիրի», 1946, հ. 8—9): «Անի»-ն հարկադրված էր կրկին անդրադառնալու այդ տխրահռչակ գրքին, այս անգամ ավելի հանգամանորեն: Իրար հետեից ամսագիրը տպագրեց երկու հողված՝ մեկը Վահե-Վահյանի, մյուսը՝ Ա. Անդրեասյանի, ուղղված Օշականի հերյուրանքներով լի «ուսումնասիրության» դեմ:

Հ. Օշականը իր վերոհիշյալ տխրահռչակ աշխատության մեջ, ինչպես և վանազան այլ հողվածներում, այդ գրքից դեռ

լուսավոր մտքերի տեր, ու նրանց տեսագաշտից դուրս չմնար Սովետական Հայաստանը, եթե նրանց կերտողը՝ Կ. Փոլատյանը հայրենիքն ընկալեր այնպես, ինչպես իր այցի ժամանակ՝ 1962-ին՝ «ծաղկած, հզոր, անպարտելի», որը և թևադրեց նրան գրելու, թե՛ «Մեր կարոտակեզ աչքերը միշտ ալ հառած կը մնան անոր: Վստահ ենք որ ան պիտի հասնի մեզի օգնության: Գիտենք ու կը հավատանք, որ օր մը չէ օր մը, բոլոր ցրված գունդերը պիտի միանան հայրենական բանակին...»: («Գրական թերթ», հոկտեմբեր, 1962):

<sup>15</sup> «Անի», 1948, հ. 7 (19), էջ 369:



տարիներ առաջ, բոլորովին անհիմն, անարգար ու անվայել հարձակումներ էր գործել արևելահայ գրողների ու գրականության վրա: Նա հասարակ տաղաչափ է անվանում Հովհաննես Հովհաննիսյանին, գտնում է, որ Ռափայել Պատկանյանը «բանաստեղծության տարրական իսկ պայմաններեն» դուրս էր և էժան քարոզից այն կողմ շանցավ, նախնական է անվանում Հովհ. Թումանյանի արվեստը, ժողովրդական մոտիվներն ընդօրինակող արհեստավոր՝ Ավ. Իսահակյանին: Ամբողջ արևելահայ բանաստեղծությունը, ներառյալ և սովետահայ բանաստեղծների սերունդը՝ Ե. Չարենցից մինչև Շիրազ՝ նա համարում է վրիպանք:

«Կը հավատամ,— գրում է նա,— թե մոտ է օրը երբ ամբողջ արևելահայ քնարերգությունը... իրենց իսկ ձեռքերով պիտի առաջնորդվի դամբարան»:

Եվ ապա՝

«...Արևելահայ բանաստեղծությունը ուրանալը ոչ սըրբապղծություն է և ոչ ալ հերոսություն»:

Գրչի անփույթ ու անպատասխանատու հարվածներով «ոչնչացնելով» ամբողջ արևելահայ բանաստեղծությունը, Հ. Օշականն անցնում է և արձակին: Նա վրիպանք է համարում ու «բառակույտ» Գ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ը, Ստ. Զորյանի «Պապ թագավոր»-ը և առհասարակ սովետահայ վեպը:

Եվ այս բոլորը այն բանից հետո, երբ Օշականի իսկ խոստովանությամբ, «վերջին քսան տարվան ընթացքին» ինքը գրեթե ոչինչ չի կարդացել «խորհրդահայ գրականության արվեստի գործերեն»<sup>16</sup>, որ ցույց է տալիս, թե ինչպիսի

<sup>16</sup> Քաղվածքը բերում ենք Վ. Վ.-ի մեկ այլ հոդվածից (տե՛ս «Անի», 1948, հ. 7 (19), էջ 369), գրված Հ. Օշականի մահվան առիթով: Նույն կարծիքին է նաև ամերիկահայ գրական առաջադիմական «Նոր Գիր» եռամսյա հանդեսը, որը շատ բարյացակամ վերաբերմունք ուներ Օշականի հանդեպ և 1946 թվականի իր 3—4-րդ միացյալ համարը ամբողջովին նվիրել է նրա ստեղծագործություններին: Սկսյա տարօրինակ և անհավատալի ատելությունն ալ ինքնին ապացույց մը չէ,— գրում է «Նոր Գիր»-ի այդ համարում (էջ 136) ամերիկահայ գրող Վահե-Հայկը,— թե մեր այսօրվան հոբելյարը (Հ. Օշականը.— Մ. Բ.) ոչ միայն պատեհություն չէ ունեցած, այլև արտահայտված բաղձանքն իսկ արհամարհած է հ. Հայաստանի բանաստեղծությունը ու-

անմաքուր աղբյուրներից է օգտվել նա, հորինելով իր ամբաստանությունները սովետահայ գրականության ու գրողների մասին:

«Անի»-ն մանրակրկիտ վերլուծման է ենթարկում Օշականի վերոհիշյալ ամբաստանությունները և ցույց տալիս նրա չարամիտ հարձակումների ողջ վնասակարությունն ու վտանգը այն շրջանակների համար (մանավանդ երիտասարդական), որոնք նրան համարում էին «խստապահանջ» ու «անաչառ» քննադատ:

Մերկացնելով այդ առասպելը, ամսագիրը նշում է և այն ակունքները (դաշնակ դեկավարությանը նկատի ունենալով), որտեղից ոգեշնչվում և ուղղություն էր ստանում «համբավավոր գրական դատավորը»:

Անողորմ գնահատական է տալիս Օշականին իր հոգվածներում Վահե-Վահյանը. «Օշականի անգերազանցելի արժանիքն այն է...,— գրում է նա ոչ առանց հեղինակի,— որ կիմանա առանց լսելու, կը նկարագրե առանց տեսնելու, կը դատե առանց կարդալու, կը վճռե առանց մտածելու ու կը մնա քուրմը հայ գրականության մեհյանին»:

Օշականի գրական քննադատությունը այլ բան չէր, եթե ոչ «քենոտ, անկապակից ու չարամիտ բամբասանք», գրում է Անդրեասյանը: Մանավանդ վրդովեցուցիչ էին Օշականի հարձակումները սովետահայ գրականության դեմ, որ միաժամանակ մարտահրավեր էր նաև սփյուռքահայ առաջադեմ մտածողներին: Ինչպես շեշտում է Անդրեասյանը, «Օշականը բոլորովին կորսնցուցեր է գրադատի ամեն իրավունք և հեղինակությունը». Գաղութահայ երիտասարդությունը ևս այդ հավակնոտ, «անհանդուրժողության, նախապաշարումի և անսխալականության առասպելի աններելի մեղքերով շաղախված» քննադատությունը դիտում է որպես անհնթեթ ու վնասակար:

---

սումնասիրելու: Հոս բացորոշապես երևան կուգա մեր գրական քննադատին ամենեն խոցելի տկարությունը: Որակել և վճիռներ տալ հեղինակի մը կամ հեղինակներու մասին՝ առանց զանոնք լայնորեն և խզմտորեն ուսումնասիրելու: Եվ ասիկա ցավազին վրիպում մըն է, և ծանր մեղադրանքներ հրավիրելու արդար առիթներ և պատճառներ կուտա անկասկած»:



Պ. Զարույանը Վ. Թեքեյանի մասին իր հիշողություններում բնութագրելով Հ. Օշականին, ասում է. «Անիկա կույտ մըն էր հակասություններու և ինքնաժխտումներու, առաջնորդված ըլլալով պարզապէս ու միմիայն հաշիվներե, ապահովելու համար իր անձին ու գործին ի նպաստ լավագույն պայմաններն ու ընդունելությունը և գոհացնելու իր ճշմարտութիւնները»<sup>17</sup>:

Հ. Օշականի քննադատական մի շարք ուսումնասիրությունները և, մանավանդ, «Վկայությունը...» խիստ բացասական արձագանք գտան սփյուռքահայ հայրենասիրական-առաջադիմական մամուլի բազմաթիւ այլ օրգաններում ևս<sup>18</sup>:

Ինչն էր Օշականի թաւալգլոր անկման պատճառը գրական քննադատությունից դեպի շարախոսությունների ճահճութիւն: Առաջին հերթին, Ա. Անդրեասյանի դիպուկ արտահայտությամբ, «գրական քննադատության տղեղեն քաղաքական նետեր արձակելու» մղումը<sup>19</sup>: Դա գալիս էր, «Անի»-ի խոսքերով ասած, «վավերական դավաճանների» այն խմբից, որը տասնյակ տարիներ շարունակ պայքար էր մղում Սովետական Հայաստանի դեմ, զրպարտում նրա վերելքը, հերյուրանքներ հյուսում սովետական ժողովրդի արվեստի ու գրականության շուրջը: Այդ նույն վավերական դավաճաններին

17 «Անի», 1952, հ. 2 (50), էջ 99:

18 Ինչպե՜ս վկայում է «Արարատ-Գրական» ամսագիրը (1958, հ. 1, էջ 36—37), Հ. Օշականի գիրքը այնքան էր զրգոել «Կայծ», «Միածան», «Դեպի երկիր», «Նոր ուղի» ամսագրերի ղալույթը, որ նրանք «հավաքաբար բողոքեցին նրա առեւ, անոր (Հ. Օշականի.— Մ. Բ.) անհեթեթ ելույթին դեմ»:

Օշականի գրական այդ դիրքավորումը խիստ քննադատության է ենթարկել նաև Ա. Զոպանյանը իր «Անահիտ»-ում (1947, հ. 1, էջ 63): Երկու տարի անց, իր արտահայտությունների մեջ ընդհանրապէս չափավոր Զոպանյանը, նորից անդրադառնալով այդ հարցին, գրում է, թե «...գրական քննադատություն ընող Օշականը իր ձեռքով իր անունի Օ-ն Ի-ի կը փոխէ երբեմն» («Անահիտ», 1949, հ. 1, էջ 37):

19 Ի դեպ, նոր չէր այդ երևույթը Հ. Օշականի գրական քննադատության մեջ: Սփյուռքահայ առաջադիմական մամուլն անդրադարձել է դրան և առաջներում, մինչև «Վկայության» հրապարակ հանվելը: Ուշագրավ է այդ տեսակետից, օրինակ, Զ. Մ. Որբունու հոդվածը («Բանաստեղծության մասին. նամակ պ. Հ. Օշականին») Փարիզի «Լուսաբաց»-ում (1938, հ. 3):

նկատի ունի և Վահե-Վահյանը Օշականի մահվան առթիվ զբրած իր հոգովածում, երբ խոսում է այն մարդկանց մասին, ովքեր Օշականի «վրիպանքը նյութեցին ու հետո եղան մունետիկները անոր», իսկ վերջում «նոր շահարկումներու համար այլևս անհուսալի նկատելով, մութ հաշիվներու հետամտության հանցանքով ամբաստանեցին զայն»<sup>20</sup>:

Ինքը, Օշականը, կյանքի վերջում, ադրադառնալով իր դատողությունների մի մասի կանխակալ բնույթին, խոստովանեց, որ «մեր հայրենիքին մեջ տիրող ազգային ու քաղաքական ձգտումներուն մասին իր ծանոթությունները հասեր էին իրեն՝ նախապաշարյալ վկայություններե»: Հետաքրքիր է Օշականի հայացքների էվոլյուցիայի տեսակետից նրա «Լուսավորչի պատգամը»<sup>21</sup>, որ տպագրվեց «Նոր Գիր»-ի վերը հիշատակված միացյալ համարում: Դա մեծ ծոն է, նվիրված Սովետական Հայաստանին և հայրենադարձությանը: Գեղարվեստական տեսակետից աննախանձելի այդ չափածո գործը ռեալիստական է իր բովանդակությամբ, հայրենադարձի պատմական նշանակության ճիշտ ընկալմամբ: Օշականը այդտեղ այն միտքն է պարզացնում, որ Սովետական Հայաստանի նախաձեռնած և «Հյուսիսի մեծ, արիարանց իր պաշտպանի» օգնությամբ իրագործվող հայրենադարձը անվերադարձ կերպով փակում է «Գիրքը մուսլ մեր գերության»: Նա գրում է, դիմելով Սովետական Հայաստանին.

Ու դու ազվոր, ու դուն ազատ  
Ու դուն հրգոր՝  
Ջեռքդ երկարած քու հյուսիսի  
Մեծ պաշտպանին,  
Մոխիրներեդ ինչպես փյունիկ  
Մաշյր բախտավոր,  
Առնես ծոցիդ քու զավկներդ  
Քու իսկ մատով հրաշակերտ  
Նոր դրախտիդ,  
Խորհրդային Հայրենիքին:

20 «Անի», 1948, հ. 7 (19), էջ 369—370:

21 Դա մի հատված է «Օրն օրերուն» քերթվածից, որ լույս է տեսել «Սիոն»-ում: Ցավոք սրտի, «Սիոն»-ի այդ համարը մեր ձեռքի տակ չի եղել:



Բայց այդ զղջումն էլ լրիվ կերպով չօգնեց, գրում է «Անի»-ն, որ նա դադարեր նայել «Ժամանակակից հայ կյանքին ու զայն լեցնող մեծ երևույթներուն» «մահվան մշուշին մեջն ու անոր գույնովը ներկված»:

Այդպես ավարտեց իր կյանքը Օշականը՝ խճողված սեփական «գատումների վրիպանքների» և գաղութահայ բարդ իրադրության հակասությունների մեջ: Դրանից չվարանց ճարպիկ կերպով օգտվել «վավերական դավաճանների» խումբը՝ դաշնակ ղեկավարությունը:

Անողորք քննադատության ենթարկելով Օշականի գրչի տակից ելած բոլոր չարամիտ ամբաստանությունները, ցույց տալով Օշական-քննադատի հիմնական արատը՝ այն, որ նա չկարողացավ դիտել «գրականությունը որպես ընկերային հզոր արարք...», «Անի»-ն այնուամենայնիվ չի հրաժարվում և այն ժառանգությունից՝ «վեպ, հեքիաթ ու նորավեպ, տպավորություն ու մտածում, թատերախաղ, դատում և ռևուսիոնարություն», որ թողել է Օշականը: Ամսագիրը հավատում է, որ «Ժամանակին իրավարար մականը պիտի սրբե բոլոր զեղծմտությունները, և ճշմարիտ ու անկորնչելի մասը Օշականի վաստակին՝ պիտի գանձարանվի հայ միտքի հարստության մեջ»<sup>22</sup>:

Շավարշ Նարդունու (Ասքանազ Այվազյան) դեմ «Անի»-ի ելույթը սերտորեն աննշվում է «Անդաստան» հանդեսի մասին Վահե-Վահյանի զրախոսականի հետ: Մի քանի խոսք, ուրեմն, այդ հանդեսի մասին:

«Անդաստան» գրական-գեղարվեստական հանդեսը հիմնադրվել է 1952-ին, Փարիզում, նախապես որպես եռամսյա պարբերական, այնուհետև սկսել է լույս տեսնել տարին մեկ անգամ:

«Անդաստան»-ի դավանած սկզբունքը, մանավանդ առաջին տարիներին, «անաղարտ արվեստի» տեսությունն է: Նրա վրա խիստ զգալի էր ժամանակակից արևմտյան արվեստի գաղափարազուրկ հոսանքների ազդեցությունը: Հանդեսի հա-

<sup>22</sup> «Անի», 1948, հ. 7 (19), էջ 368:

մար հատկանշական էր և ինքնամեկուսացումը սովետահայ իրականությունից<sup>23</sup>:

1952-ին, երբ լույս էին տեսել «Անդաստան»-ի երկու համարները, «Անի»-ն գրախոսեց դրանք<sup>24</sup>: Գրախոսությունը կրում էր սկզբունքային բնույթ, քննադատության էր ենթարկվում հստակ ուղեգծի պակասը հանդեսում, նրա որդեգրած գաղափարների ու հետապնդած նպատակների անորոշությունը:

Վահե-Վահյանին առանձնապես վրդովում է հանդեսում տպագրված երկու նյութ. Կ. Փոլատյանի «Զրույցը Ահարոնի հետ» և «Օտար գրականություն» բաժնի համար Շ. Նարդունու գրած «Իբրև հանգանակ...» ներածականը:

Կ. Փոլատյանը, հավաստելով, թե Ահարոնը<sup>25</sup> «մեր ապրող բանաստեղծներուն մեծագույնն է» և «կը սիրե պարագոքները», մեջ է բերում դրանցից հետևյալ արտառոց մտքերը.

«Հայոց պատմությունը.

— Հավիտենական պարտության մը ողբերգությունը...»

«Հայոց գրականության պատմությունը...

— Միջակություններու անվախճան կատակերգություն  
Ֆր...»<sup>26</sup>:

Վահե-Վահյանն իր քննադատության գլխավոր սլաքն աղղղում է «Անդաստան»-ի դեմ, որն իր էջերը բացել էր նման անհեթեթությունների առջև, որոնք աններելի վիրավորանք էին հայ ժողովրդի արի զավակների ու հայ գրականության բազմաթիվ լուսաշող գաղաթների հասցեին:

Ահարոնից ետ չի մնում և Շ. Նարդունին, որը, նույն նիհիլիստական դիրքերից ելնելով, նոր հարձակումներ է գործում հայ ժողովրդի ու հայ մշակույթի դեմ:

«Մեր պատմության դժբախտ երևույթներեն մին ալ այն է՝ որ հայ միտքը շատ կը սիրե պառկիլ ու քնանալ ջաղացքին

23 Վերջին տարիներին «Անդաստան»-ի մեջ զգացվում է որոշ թարմություն ու բեկում դեպի սովետահայ մշակութային կյանքը: Այդ նկատելի է մանավանդ հանդեսի վերջին մի քանի գրքերում:

24 «Անի», 1952, հ. 6—7 (54—55), էջ 392 և հ. 8 (56), էջ 446:

25 Ահարոն Տատուրյան.— արևմտահայ բանաստեղծ:

26 «Անդաստան», 1952, հ. 2, էջ 95:



ևտե, պարծենալու ձևով մը թե աղմուկը չի խանդարեր իր քունը: Հետո՝ կը սիրե նստիլ ու երազ պատմել: Կամ իր հիասքանչ սերը՝ մեծ-հայրիկին ու մեծ-մայրիկին մասին: Ահա թե ինչու հայոց գրականությունը մեզի կը ներկայանա իբրեւ երեսա մը, որ ուրիշ բան ստրված չէ՝ բայց միայն մեծ մայրիկին գիտցած բաները»<sup>27</sup>:

Ժխտելով հայ ստեղծագործ մտքի կարողությունները և մեղադրելով այդ միտքը ծուլության ու անշարժության, իսկ հայ գրականությունը՝ սահմանափակության ու զավառացնության մեջ, Նարդունին հույ է պատրաստում իր երկրորդ հարձակողական բալլի համար, որը ներքոհիշյալ առաջարկի ձևն ունի, բայց հետապնդում է մի ավելի հեռավոր նպատակ, որի մասին, սակայն, խոսք կլինի մի փոքր հետո: Նա գրում է, թե՝

«Անդաստան»-ին մեջ ցանկալի է սերմանել այնքան ունդ ու հունտ՝ որքան կարելի է բերել օտար անդաստաններ»<sup>28</sup>:

Ահա այն դրույթները, որի դեմ իր ձայնը բարձրացրեց «Անի»-ն: Արժանի պատասխան տալով Ահարոնին ու Շ. Նարդունուն, Վահե-Վահյանը քննադատական իր սուր խոսքն ուղղեց և «Անդաստան»-ի դեմ, մաղթելով նրան «...աշխարհայնություն, իրատեսություն, հստակություն, ուղեգիծի մը քնտրություն և հետևողականություն»:

«Անդաստան»-ը խուսափեց բանավեճի մտնել «Անի»-ի հետ, նա զերադատեց մնալ «փղոսկրյա աշտարակում», բավականանալով մի փոքրիկ ռեպլիկայով, թե՝ «Անի»-ի հոդվածները չեն «հուզում» գրական-գեղարվեստական հարցեր»:

«Անի»-ի դեմ «Նայիրի» շաբաթաթերթում (Ա. տարի, հ. հ. 35—36) «Իրփրալից զայրույթով» հանդես եկավ Շ. Նարդունին, լրացնելով իր նախորդ հոդվածի անհեթեթ մտքերը նոր հարձակումներով:

Գործածելով մի շարք անվայել ածականներ ու արտահայտություններ Վահե-Վահյանի դեմ, Շ. Նարդունին նրան մեղադրում է ոչ ավելի, ոչ պակաս, քան... «վճարված ըլլալու» մեջ:

27 «Անի», 1952, հ. 8 (56), էջ 449:

28 «Անի», 1952, հ. 8 (56), էջ 450:

«Հապա եթե վճարված ըլլար ոչ թե Հայաստանի գրականութիւնն արտատպելու տաղանդաշատ հարմարութեան համար,— գրում է նա,— այլ խմբագրական շնորհ ունենալուն համար...»<sup>29</sup>։

Ասված է շատ որոշակի կերպով և դավադրական ոճով։ Ինչպես գրում է Վահե-Վահյանը, դա բոլոր նարդունիների հյուլեական ումբն է՝ դադութահայ առաջագիմական կադմակերպութուններին, մամուլի՝ օրգաններին ու գործիչներին օտար պետութիւնների առջև կասկածելի ու անվստահելի դարձնելու և նրանց անվանարկելու սիրած մեթոդը։

Վերոհիշյալ հատվածի մեջ ուշադրավ է և այն մասը, որտեղ նարդունին «Անի»-ին մեղադրում է «Հայաստանի գրականութիւնն արտատպելու» մեջ։ Սովետահայ գրականութեան բերած դեղարվեստական ճշմարիտ խոսքը, կայտառ ու կադդուրիչ ոգին, կոմունիզմի ուղիով հայրենիքի անշեղ ընթացքի պատկերումը հանգիստ չի տալիս նարդունիներին, որովհետև ուղղակիորեն հարվածում է սփյուռքը հայրենիքից պատենշելու նրանց ծրագրերին։

«Անի»-ն պատասխանում է նարդունուն սուր ու կարճ ռեպլիկաներով, բնութագրելով նարդունուն՝ նրա իսկ խոսքերով։ Հարցի մյուս կողմի վրա, սակայն, ամսագիրը քիչ ուշադրութիւն է դարձրել։ Դա ուրիշ անդաստաններից «ունդ ու հունտ» բերելու նարդունու խորհուրդն է, որ հետապնդում է շատ որոշակի նպատակ։

Որ հայ ժողովուրդը երբեք չի հրաժարվել իր մշակույթը «օտար անդաստանների ունդ ու հունտով» հարստացնելուց, սկսած Մեսրոպից մինչև մեր օրերի ժրաջան մշակները, այդ հայտնի է նաև նարդունուն։ Թեև պետք է ավելացնել, որ այն, ինչ վերցրել է մեր ժողովուրդը օտարներից (ինչպես անում է այդ յուրաքանչյուր ժողովուրդ), արդեն «օտար» չի եղել, այլ դարձած է եղել հարազատ իր հոգուն։ Հարցի կարևորութիւնն այն է, թե օտար ո՞ր անդաստանների ունդ ու հունտը նկատի ունի նարդունին, երբ անում է իր առաջարկը։ Արդյո՞ք այն ամեն առաջավորը, որ ստեղծում է մարդկութիւնը՝ լինի դա

<sup>29</sup> «Անի», 1953, հ. 1 (61), էջ 53։



արեւելքում թե արեւմուտքում, թե՛ խոսքը իր նախասիրած այն «անդաստանների» մասին է, որոնց տերերի հետ բարեկամություն է անում փարիզյան «համայնագետը», ինչպես կոչում է նրան Վահե-Վահյանը:

Այդ բանի վրա բավականին առատ լույս է սփռում Նարդունու հետեւյալ «սենտենցը».

«...Մենք կ'արհամարհենք Աբովյանը, որ հայրն է ամբողջ մեկ դար տևող ռուսասիրության մը, կովկասյան լեւան-թինիզմին, ռուսացած հայերու՝ Ադոնցներու...»<sup>30</sup>:

Ահա թե որտեղ է գաղտնիքը: Պարզվում է, որ ամբողջ հարցը հայերի «ռուսասիրության», ռուսական օրինատացիայի մեջ է, որ այնքան դուր չի գալիս նարդունիներին: Եվ այն չարամիտ սուտը, որ հորինում է նա հայ մտքի «քնկոտության» ու «ծուլության» մասին, պետք է նարդունուն միայն նրա համար որ մեր ժողովրդին հրամցնի օտար անդաստանների «ունդ ու հունտը», տվյալ դեպքում՝ արեւմտյան օրինատացիան՝ ռուսականի փոխարեն՝ լինի դա քաղաքականության՝ թե մշակույթի ասպարեզում: Դա այն է, ինչ մտածում ու քարոզում են նարդունու կուսակիցները, կատարելով իմպերիալիստների քաղաքական պատվերը (թեկուզ և մշակույթի բողի տակ), պատվեր, որը հետապնդում է հայ և ռուս ժողովուրդների մեծ ու անխախտ բարեկամության մեջ ճեղք բանալու չարամիտ նպատակ:

Թե ինչ է ինքը՝ նարդունին վերցրել օտար անդաստանների ունդ ու հունտից, ակնառու կերպով ցույց են տալիս նրա հետեւյալ մտքերը:

«Ինչ որ կը կոչվի մարդկություն, հիվանդություն մըն է»:  
«Կ'ուրանամ ընդհանրական եսը և կ'ընդունիմ անհատական եսը»:

Եթե սրան ավելացնենք և այն մեծամտությունը, որ սնում է նրա երեւակայությունը, պատկերը միանգամայն պարզ կլինի.

«Երբ ես սխալ գրեմ,— ուզում է համոզել նա,— ուղիղ է

հետևիլ իմ սխալ գրելու ձևիս: Վասնզի իմ սխալս վաղը օրենք  
կը դառնա և օրինակ՝ ուղիղ գրելու»:

Շ. Նարդունու բնութագիրը ամբողջացնելու համար, դի-  
մենք երկու վկայություն ևս:

Անդ. Ծառուկյանը, որի հոգվածից<sup>31</sup> լայնորեն օգտվում է  
Վահե-Վահյանը, բերելով մեզ ծանոթ քաղվածքը Նարդունուց  
(Խ. Աբովյանի մասին) և ավելացնելով նրա հայհոյական  
խոսքերը պրոֆ. Ն. Ադոնցի մասին («միջին դարու բրածո»,  
ներքինի, ցարական Ռուսիո լաբե»), գրում է.

«Հոս ալլևս անկարելի կը դառնա առարկայական մոտե-  
ցում մը, և ստիպված ենք շեղիլ գեթ առայժմ, միանգամայն  
ընդգծելով թե մտային ջլախտ ենթադրել տվող այս ցափո-  
տութենքն ալ կու գան նույն ողորմելի Նար ցուցադրելու տի-  
րական ճիգեն: ...Մեծ մարդ ըլլալու համար պետք է հարձա-  
կիլ մեծերու վրա: Փնտրեց, փնտրեց ու գտավ Աբովյանը»  
(Քաղվածքը բերում ենք Վահե-Վահյանի հոգվածից):

Որ հարցը միայն Նարդունու «Ծաը» կամ «մտային ջլախ-  
տը» չէր, այլ վերաբերում էր մի ամբողջ կոնցեպցիայի, այդ  
մասին խոսեցինք:

Բերենք մի հատված ևս Պ. Զարոյանի հիշողություննե-  
րից, որտեղ նա գրում է.

«Շավարշ Նարդունին, առանց խնդրո առարկա ընելու իր  
գրագետի արժանիքը, այն գրողներեն է, որոնց զլխավոր  
մտասկեռումներին մեկն է իրենց անձին շուրջ աղմուկ հա-  
րուցանել ու համբավ ստեղծել:

...Նարդունիի համար, օգտագործված այնքան ուրիշ ա-  
ռիթներու կարգին, հարատև շահագործումի աղբյուրն է դաշ-  
նակցությունը, և անշուշտ՝ փոխադարձաբար: Առաջին օրեն,  
հասկցած է Նարդունին թե այս վերջինը միշտ ալ համբավին

31 Ա. Ծառուկյանի հոգվածը Նարդունու մասին, Վ. Խաժակ ստորա-  
գրությամբ, հրապարակվել է 1948-ին, «Երիտասարդ հայուհի» ամսագրում  
(Բ. տարի, հ. 3): Հոգվածում սրամտորեն ուրվագծված է Նարդունու դի-  
մաստվերը: Վահե-Վահյանը դիմում է այդ հոգվածին նաև այն պատճառով, որ  
Նարդունին իր պատասխանը տպագրել էր, ինչպես հիշատակել ենք, «Նա-  
յիրի»-ում, որի խմբագրի՝ Ծառուկյանի հետ նրանք այն ժամանակ միև-  
նույն կուսակցության անդամ էին:



շնորհը կը պարգեւէ անոնց՝ որոնք չեն խղճահարիլ վարձկան գրիչ դառնալու» (ընդգծումը մերն է.— Մ. Բ.)<sup>32</sup>:

Գրականությանը ներկայացրած առաջին պայմաններից մեկը, որ բազմիցս շեշտում է «Անի»-ն, կյանքին մոտ ու հարազատ լինելն է:

Դեռևս իր առաջին համարներից մեկում ամսագիրը, խոսելով հասարակության կյանքում գրականության ու գրողի դերի մասին, ասում է, որ գրողը «ուխմպոսյան բարձունքի վրա մեկուսացած, անզգա և անձնակենտրոն մակաբույծ» չէ, որ հեռադիտակով է ուսումնասիրում կյանքը, այլ հասարակության ակտիվ անդամներից մեկը, որ իր արվեստը վերածելով «հատու և հզոր զենքի», նվիրում է այն «մարդկությանը պատուհասող ընկերային չարիքները հաղթահարելու և ավելի ազատ ու զվարթ կյանք մը կերտելու պայքարին»<sup>33</sup>:

Թե ինչպիսի մեծ դեր է հատկացնում ամսագիրը գրական ստեղծագործության կենսականությանն ու ակտուալությանը, երևում է Վահե-Վահյանի հետևյալ դիտողությունից բանաստեղծ Դևի «Իմ երգերը» գրքի առթիվ. «Պիտի ուզեինք որ իր (Դևի—Մ. Բ.) երգերը ըլլային նվազ նրբարվեստ, բայց ավելի մոտ կյանքին և անոր իրավ ու մեծ տագնապներուն...»<sup>34</sup>: Գրական երկի արվեստի նկատմամբ բծախնդիր ու անզիջող խմբագրի այս դատողությունը շատ հատկանշական է:

Այլ է ամսագրի վերաբերմունքը, օրինակ, Հեղինե Դավթյանի «Ճակատագիր» պատմվածքների ժողովածուի նկատմամբ: Թե Դևի և Թե Հ. Դավթյանի ժողովածուների նյութը վերցված է միևնույն միջավայրից՝ իրանահայ կյանքից, բայց այլ է վերջինիս մոտեցումը կյանքի տագնապալից հարցերին: Նա հանդես է բերում արթուն հետաքրքրություն ճնշվածների, հալածվածների, անիրավվածների հանդեպ և նույնիսկ այն չափով, որ նրանց ցավագին տառապանքները կարծեք դառնում են իրենք: Ուրիշ հարց է, որ Հ. Դավթյանը, ձգտելով գտնել չարիքի հիմնապատճառները և դեմ-հանդիման գալով նրանց, վշտահար կանգ է առնում: Ի տես այդ

32 «Անի», 1952, հ. 2 (50), էջ 100:

33 «Անի», 1946, հ. 5, էջ 279—280:

34 «Անի», 1948, հ. 1 (25), էջ 56:

առաւայանքների նա, ինչպես դիպուկ կերպով նկատում է Վահե-Վահյանը, «կը հեա, սակայն չ'աղաղակեր»։ «Ընկերա-լին վեպը, — շարունակում է իր միտքը հեղինակը, — առանց արվեստի որևէ զիջողության, անցած է հիմա քայլ մը առաջ, մեծ քայլ մը։ Եւ ատիկա՝ դուրացնելն է ժամանակէն սպասված աշխատանքը, ցույց տալն է՝ դեպի արեւ տանող ճամփան»<sup>35</sup>։ Ոչ միայն բացել մարդկային հասարակության խոցերը, այլև նշել դրանք վերացնող ուղին, ահա այն պահանջը, որ ամսագիրը դնում է հեղինակի առջև։ Դա գալիս է ամսագրի այն դավանանքից, որ հնարավոր է ու պետք է վերացնել սոցիալական անհավասարությունն ու դրանից բխող շարիքները, ինչպես այդ արվեց «...աշխարհի մեկ-վեցերորդին վրա»<sup>36</sup>։

Ինչպես ասացինք, «Անի»-ն ցուցաբերում է մեծ խստապահանջություն դրական երկի արվեստի (գեղարվեստականության) նկատմամբ։ Ամսագիրն անդրադառնում է այդ հարցին բաղմամբով առիթներով, դարձնելով այն իր շատ գրախոսականների նյութը։ Մենք այստեղ կանգ կառնենք հարցի մի քանի կողմերի վրա միայն, որոնք սկզբունքային հետաքրքրություն են ներկայացնում։

«Անի»-ն պաշտպանում է գեղարվեստական երկի ձևի և բովանդակության միասնության սկզբունքը։ «Առանց այդ երջանիկ համերաշխության, կարելի չէ երևակայել գործ մը, որ իրավունք ունենա արվեստի հավակնություն սնուցանելու», — գրում է Վահե-Վահյանը Զ. Որբունու «Վարձու սենյակ» գրքին նվիրված գրախոսականում<sup>37</sup>, ընդ որում և՛ այդտեղ, և՛ ուրիշ նման դեպքերում միշտ շեշտը դնելով բովանդակության հասարակական նշանակալիցության վրա<sup>38</sup>։

Արվեստը դրական երկի անքակտելի մասն է. նա է, որ որպես սրտի տրոփ, որպես հուզում արժեցնում, շունչ է տա-

35 «Անի», 1946, հ. 3, էջ 163։

36 Տե՛ս «Անի»-ի գրախոսականը Ա. Անդրեասյանի «Կարմիր ասպատակի օրագրեն» գրքի մասին, 1947, հ. 4 (16), էջ 222։

37 «Անի», 1946, հ. 2, էջ 108։

38 Տե՛ս Հր. Զարգարյանի «Որբացող մարդիկ» վեպի առթիվ Վ.—Վ.—ի գրախոսականը. «Անի», 1954, հ. 3 (63), էջ 165։



չիս գաղափարներին: «Ճշմարտություն գաղանված գաղափարները,— գրում է ամսագիրը,—...հարկ է որ պան գրականության իբրև կյա՛նք, ո՛չ իբրև խոսք»<sup>39</sup>, որը կարող է հրապարակագրություն ստեղծել, բայց ոչ գեղարվեստական ձևով:

Ամսագիրը խոշոր նշանակություն է տալիս ճշմարտին ու ճշմարտացիությանը գեղարվեստական երկում: Նրանք իրենց օրինական տեղն ու իրավունքն ունեն արվեստի մեջ և դրանց խախտելը անհետևանք չի անցնում: Անգրագառնալով վերոհիշյալ հարցին և ցույց տալով արվեստի այդ նորմաների խախտումները Կ. Փոլատյանի «Արևելքի տղաքը» գրքում՝ «բնականին, կարելիին, ճշմարտանմանին դեմ մեղանշողներին», ամսագիրը գրում է. «Հեղինակը այստեղ կը հասնի ճիշտ հակառակ արդյունքին, որովհետև արհամարհած է ճշմարտին կամ ճշմարտանմանին իրավունքը արվեստի մեջ»<sup>40</sup>:

Խիստ բացասաբար է վերաբերվում «Անի»-ն ճշմարտացիի խախտումներին նաև մանրամասնություններում, պահանջում գեղարվեստական երկից ստուգություն և նման հարցերում: Նա, օրինակ, հանդիմանում է Հր. Զարդարյանին, որ վերջինս իր «միջահասակ, խարայաշ» հերոսուհուն, որպես հակակրանքի արտահայտություն, գրքի վերջում դարձնում է «կարճահասակ հրեշ»:

Ամսագիրը չի ժխտում հեղինակի իրավունքը՝ համակրելու կամ հակակրելու իր ստեղծած դրական կամ բացասական հերոսներին: «...Թող հստակորեն ըսված ըլլա,— գրում է նա,— թե ոչ միայն չենք ժխտեր արվեստագետին հարումներ ու մերժումներ ունենալու իրավունքը, այլև կը պահանջենք դայն»<sup>41</sup>: «Անի»-ն դեմ է այդ սկզբունքի գոհճիկ ըմբռնմանը: Նա պահանջում է, որ երկի գործող անձնավորությունները «...իրենց ընթացքովը, գործերովն ու խոսքերովը հայտնաբերեն... ատաղձը իրենց հոգիի»: Հեղինակի ուղղակի, անսրբող միջամտությունը և թշնամական կամ բարյացակամ բա-

39 «Անի», 1947, № 11, էջ 616:

40 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 55:

41 «Անի», 1954, հ. 3 (63), էջ 170:

ցարձակ վերաբերմունքը դեպի այս կամ այն երևույթը կամ գործող անձը կեղծիք է մտցնում գրական ստեղծագործության մեջ և իր էությունը հակադեղարվեստական է:

Նույն խտրապահանջությունն է ցուցաբերում ամսագիրը գեղարվեստական երկից նաև լեզվա-ոճական հարցերում: Գրականությունը, որպես խոսքի արվեստ, պետք է ունենա պատկերավոր, արտահայտիչ ու ճկուն լեզու, մշակված ոճ: Ամեն մի անփութություն լեզվի նկատմամբ հարված է երկի գեղարվեստականությանը: Այս չափանիշներով է մոտենում «Անի»-ն այն բոլոր գործերին, որոնք գրախոսվում են ամսագրում, առանց խնայելու հեղինակությունները:

Խիստ քննադատության է ենթարկում «Անի»-ն հետադուրությունը, ճարտասանական վերամբարձ ոճը գեղարվեստական ստեղծագործության մեջ, «ճապաղած երկարաբանությունները»:

«Հասարակական բովանդակությամբ քերթվածներու մեջ մասնավորաբար,— գրում է ամսագիրը,— հետադուրությունը կը փորձվի երբեմն փոխարինել հրայրքը, որ չի փոխարինվի»<sup>42</sup>:

«...Ուռուցիկ ճարտասանությունը,— գրում է մեկ ուրիշ առիթով «Անի»-ն, գաղափարական շփոթությունը պերճաշուք դարձվածքներով քողարկելու անզոր փորձ մըն է»<sup>43</sup>:

Հր. Զարդարյանի գրքի մասին Վահե-Վահյանը չի վարանում ասելու, որ «Հանդարտ վերանայումով մը կարելի պիտի ըլլար վեպէն ղեղչել գոնէ երկու հարյուր էջ, անոր բովանդակութենէն առանց կուտ մը անգամ գիշելու»<sup>44</sup>:

Ամսագիրը հատկապես երիտասարդ գրողներին ղգուշացնում է օտարաբանություններից, դավառաբարբառային ասությունների առատ գործածությունից, չափի կամ հանգի կարիքները գոհացնելու համար «պաշտոն ու պարտականություն չունեցող» բառերից, «իրենց մահկանացուն շատոնց

42 «Անի», 1948, հ. 12 (24), էջ 670:

43 «Անի», 1952, հ. 8 (56), էջ 447:

44 «Անի», 1954, հ. 3 (63), էջ 170:



կներած կարգ մը բառեր վերստին կյանքի կոչելու» փորձությունից և այլն:

Գեղարվեստական ապաշնորհ գործերի նկատմամբ, եթե մանավանդ նրանց հեղինակները տառապում են հավակնոտությամբ, «Անի»-ն անողոր է:

Այդպիսին է էսոն Գարմենի «Վայրկյաններ» գրքույկի առթիվ տպագրված գրախոսականը: Լեզվական «հանցավոր և ընդվզեցուցիչ մեղանշումներով» լի այդ գրքույկի մասին գրախոս Վահե-Վահյանը գրում է.

«Մարդ կը վարմանա թե Վարուժան, Մեծարենց ու Թեքեյան, կամ՝ Թումանյան, Տերյան ու Չարենց ունեցող ազգի մը դավալը ինչպես կրնա 15 տարի ոտանավոր գրել ու հրատարակել, առանց սորված ըլլալու թե բանաստեղծությունը արվեստ մըն է, որ անկախաբար իր ոգեղեն հատկություններեն, ունի իր կանոնները և իր հետևորդներեն կը պահանջե առնչվազն տարրական յուրացումը անոնց»<sup>45</sup>:

Ավելի խիստ է «Անի»-ն մեկ ուրիշ գրքույկի հանդեպ: Դա Ե. Գավալճյանի «Անգին» ժողովածուն է, որի հեղինակի մասին ամսագիրը հեզմանքով գրում է, թե «կարելի է հետևցրնել, թե գիտե, խոսելիս զատ, նաև կարդալ հայերեն, եթե ոչ հասկնալով, գոնե բառերը միտք պահելով: Եվ պզտիկ շնորհ մը չէ ատիկա, մեր ներկա օրերուն մանավանդ»:

Եվ գրախոսը խորհուրդ է տալիս Գավալճյանին հրաժարվել սատանայից:

«Անի»-ն ուշադիր ու հոգատար վերաբերմունք է ցույց տվել երիտասարդ գրողներին, ջանք չի խնայել համախմբելու նրանց միջից շնորհալիներին իր շուրջը, գուրգուրելու նրանց, վեր հանելու դրականն ու հուսադրիչը նրանց սպեղծագործություններում, քննադատելու թերությունները, խորհուրդներ տալու և, անհրաժեշտության դեպքում, աշխատել նաև ձեռագրերի վրա: Այդ աշխատանքը եղավ բեղմնավոր ու դրական հետևանք ունեցավ գրողների աճող սերնդի վրա: Պատահական չէ, որ լիբանանահայ ժամանակակից շնորհալի գրողների մի զգալի մասը անցել է «Անի»-ի բովով:

<sup>45</sup> «Անի», 1948, հ. 7 (19), էջ 392:

Ռեալիզմի հետևողական պաշտպանությունն ու պրոպագանդն ինքնին արդեն նշանակալից դաստիարակչական գործ էր նոր սերնդի համար: Բայց ամսագիրը չի բավարարվում դրանով: Նա իր էջերում լայն տեղ է տալիս երիտասարդ ստեղծագործողներին, տպագրելով նրանց բանաստեղծություններն ու պատմվածքները, և անում է այդ ոչ առանց պահանջկոտության կամ ինչ-որ ղեղչի: Նույն պահանջկոտությանը մենք հանդիպում ենք և երիտասարդ գրողների գործերին նվիրված գրախոսականներում: Նա խորհուրդ է տալիս երիտասարդներին ականջ դնել ժամանակի տրոփին, նայել միշտ առաջ և սերտ կապեր պահպանել հայրենիքի ու նրա առօրյայի հետ:

Արվեստը, գրում է ամսագիրը, ինքնանպատակ պերճանք չէ, այլ «կենսական արարք», որ դադափարի ու գեղեցկության իդեալներով առաջնորդում է մարդկանց «իրենց ինելության վսեմ իրագործումին»: Այստեղից էլ հետևում է, որ արվեստը «պարտավոր է ըլլալ ժողովրդական, կյանքեն բխած ու կյանքին վերադարձող, դայն լուսավորելու, զորացնելու շեշտով մը»<sup>46</sup>:

Այս հիմնական միտքն էլ, որպես պահանջ, ամսագիրը ներկայացնում է երիտասարդ գրողներին: Նա խրախուսում է երիտասարդ հեղինակների երկերում այն կենդանի հետաքրքրությունը, որ հանդես են բերում նրանք դեպի հասարակական կյանքը և հասարակական մարդը, դեպի այն գեղեցիկ ու արդար՝ սոցիալական չարիքներից ազատ ապագան, որի մասին երազում են ժողովուրդները և որի համար պայքարում են աշխատավոր մարդիկ:

Ամսագրի ջերմ գնահատանքին են արժանանում երիտասարդ գրողների հայրենասիրությունը, որ նա ընկալում է հումանիստական լայնախոհությամբ, ժխտելով այդ զգացմունքի նեղ, ազգայնական ըմբռնումը: «Անի»-ն ժխտում է և կոսմոպոլիտիզմը, որպես «վատառողջ ու քայքայամետ մտայնություն»: «Երազե ու երգե պարպված տղա մը հանկարծ,— գրում է ամսագիրը, հեգնելով կոսմոպոլիտ հեղի-

<sup>46</sup> «Անի», 1949, հ. 11 (35), էջ 615:



նակին, — շեռ գիտեր որ հողին վրա բուսած, կը հռչակե ինք-  
զինք «անհայրենիք» ու կ'ելլե մանելու անկարելի երգը իր  
գնչու հոգիին»<sup>47</sup>:

«Անի»-ն դեմ է արտահայտվում նաև սկսնակ գրողներին  
տեական զիջումներ անելուն: Երրորդ տարեշրջանի առաջին  
համարում ամսագիրը խոստանում է երիտասարդ ձայների  
համար բացել նոր բաժին՝ «Իբրև ածու մը բողոքոջ ծաղիկնե-  
րու»: Զեականացելով իր պահանջները նորերի նկատմամբ,  
«Անի»-ն հիշյալ բաժնի մասին գրում է. «Մնայուն բնակչու-  
թյուն չի շնորհվիր որեւէ թեկնածուի: Գուրգուրալից խնամք՝  
ժամանակի մը համար: Եթե աճումը կը նկատվի խոստմնա-  
լից, ենթական կը փոխադրվի բաց տարածությանը մեջ պար-  
տեզին. այլապես՝ կ'ըլլա արմատախիլ... ու կը հանձնվի իր  
հակատագիրին՝ բարի մաղթանքով մը»:

Մեծ հոգատարություններ և բազմակողմանիորեն վերլու-  
ծելով երիտասարդ հեղինակների ստեղծագործությունները,  
ամսագիրն անում է շատ ուշագրավ դիտողություններ ու տար-  
բեր առիթներով մի շարք խորհուրդներ է տալիս նրանց,  
որոնք ընդհանուր գծերով հանգում են հետևյալին.

Անհատին դիտել որպես հավաքականության անդամ,  
որպես հասարակական մարդ:

Զբոնանալ հուզումների ու խոհերի վրա, որոնք դեռ չեն  
հասունացել արվեստի համար.

Դիտել, զգալ, մտածել, մանավանդ՝ երազել.

Զգրել առանց ներշնչման հրամանի.

Խուսափել պատրաստի մտածումներից.

Հեռու մնալ ամեն գնով նորություն փորձելու մոլորու-  
թյունից, դյուրին ձևերի հրապույրից.

Պարզվելու փութկոտությունից ավելի՝ լցվելու կիրք ու-  
նենալ.

Զգուշանալ ժամանակավոր բաներին տուրք տալուց.

Խուսափել իմաստի տարտամությունից.

Խղճմիտ կերպով օգտագործել լեզուն և այլն:

Պահանջների այս կոմպլեքսն ուշագրավ է այն տեսակե-

<sup>47</sup> «Անի», 1954, հ. 4 (64), էջ 224:

տից, որ բացահայտում է ամսագրի պաշտպանած գրական-գեղագիտական հայացքները, համերաշխ է նրա ընդհանուր սկզբունքներին:

Հետաքրքիր է երիտասարդ ձայների հանդեպ ամսագրի ցուցաբերած ուշադրության մեկ ուրիշ կողմը ևս: Գրական հետախույզի աչքերով մոտենալով հրապարակ իջած ամեն մի նոր հեղինակի, նա կարողանում է ժամանակին հայտնաբերել ու գնահատել իրավ տաղանդավորներին՝ նրանց գրական առաջին իսկ քայլերից: Գ. Սևանի առաջին ժողովածուի մասին, օրինակ, ամսագիրը գրում է. «...Գիրք մըն է նաև, որ հեղինակ մը կը հայտարարե», կամ՝ «Սևանը գրող մըն է որ ըսելիք ունի, ու գտած է ըսելու կերպն ալ»: Մեկ ուրիշ առիթով, այս անգամ Գ. Աղաբաբյանի մասին՝ որ նա «ուշ մըն է, բանաստեղծի տուրքերով օժտված»:

Ամսագիրը շատ ուշադիր հետևել է սովետահայ երիտասարդ գրողների առաջին քայլերին, գրախոսել նրանց անդրանիկ գրքերը և առաջիններից մեկը բարձր գնահատանքի արժանացրել այսօր արդեն հանրածանոթ բանաստեղծներ Պարույր Սևակի, Վահագն Դավթյանի և ուրիշների տաղանդը:



«Անի»-ի բազմապիսի վաստակների շարքում իրենց արժանի տեղն են գրավում և բանասիրական այն նյութերը, որոնք նվիրված են հայ գրականության ականավոր ու ճանաչված գեմքերին: Տարբեր առիթներով գրված այդ հոդվածներն ու հուշերը նորից վերակենդանացնում են ընթերցողի առջև հայ գրողների ու գրականագետների կերպարները, խոսում նրանց ստեղծագործությունների ու այն դերի մասին, որ կատարել են նրանք հայ դպրության անդաստանում: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և կենսագրական բնույթի նյութերը, որոնք մեջ են բերվում հոդվածներում և առանձին հեղինակների հուշերում:

Սայաթ-Նովա, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Հ. Պարոնյան, Խրիմյան Հայրիկ, Հ. Հովհաննիսյան, Հ. Թումանյան, Ալ. Շիրվանզադե, Գ. Զոհրապ, Ծ. Օտյան, Ա. Զոպանյան, Վ. Թեքեյան, Լ. Շանթ, Տիրան Զրաքյան, ավելի երիտա-



աարդներին՝ Վ. Շուշանյան, Շ. Շահնուր, Լաս, Սեմա: Ահա ոչ լրիվ թվարկումն այն հեղինակների, որոնց անդրադարձել է ամսագիրը, հանգամանք, որ ցույց է տալիս, թե որքան լայն է եղել «Անի»-ի հետաքրքրությունների շրջանակը:

Մենք այստեղ կանդ կառնենք թվարկված հեղինակներից մի քանիսի վրա միայն, որոնց մասին մեր գրականությունն մեջ համեմատաբար քիչ է խոսվել: Դրանցից մեկը Վահան Թեքեյանն է (1878—1945):

Ամսագիրը մի քանի հոդված է նվիրել Վ. Թեքեյանին ու տպագրել մի շարք անտիպ գործեր նրանից: Ուշագրավ են այդ նյութերի մեջ Պ. Զարոյանի ընդարձակ հուշերը անվանի բանաստեղծի մասին, հատկապես այն հատվածները, որոնք պատմում են Վ. Թեքեյանի կյանքի դժվարին տարիների մասին պանդխտության մեջ:

Իր հուշերում Պ. Զարոյանը հաղորդում է հետաքրքիր էինսագրական տեղեկություններ Թեքեյանի կյանքից, ուրվագծում է նրա բնավորության հատկանշական կողմերը, պատմում բանաստեղծի դրական ու քաղաքական համակրանքների ու հակակրանքների մասին: Ուշագրավ են նաև ֆրանսահայ մտավորականների միջավայրը վերարտադրող պատկերները:

Վ. Թեքեյանը արևմտահայ այն գրողներից է, որոնք անկեղծորեն ուղչունեցին Սովետական Հայաստանը, դարձան նրա համոզված բարեկամները և, բնականաբար, շահեցին դաշնակցության թշնամանքը: Խոսելով այդ թշնամանքի և առհասարակ հայրենասեր գրողների ու հայրենիքի հանդեպ դաշնակցության բռնած դիրքի մասին, Պ. Զարոյանը, ի դեպ, գրում է. «Ճիշտ էր անշուշտ, թե դաշնակցությունը բացարձակ կերպով բոլկոտի ենթարկած էր ձեռնարկը<sup>48</sup>, սկիզբն էր թալանավորության: Բայց 1934 թվականին ու Թեքեյանի հոբելյանի առիթով չէր որ այդ կաղմակերպությունը առաջին անգամ ըլլալով պիտի հայտնվեր՝ իրմե դուրս, իր պիտակը չկրող կամ իր հովանիին չենթարկվող որևէ արժեքի հանդեպ այդպիս Ժխտական ու

48 Խոսքը Վ. Թեքեյանի պատվին Մարտիում կաղմակերպված հոբելյանի մասին է:

խափանարար դիրքով: Այդ դիրքը կը կազմեն՝ դաշնակցութեան ընդհանուր քաղաքականութեան անժխտելիորեն ու բացառաբար հետևողական երկու երեսներեն մեկը, մյուսը ըլլալով հայրենիքին հանդեպ որդեգրած իր ոխերիմ կեցվածքը»<sup>49</sup>:

Ուշագրաւ են Պ. Զարոյանի հուշերի այն մասերը, որոնք վերաբերում են Ա. Զոպանյանին, Զ. Սյուրմեկյանին, Հ. Օշականին:

Հետաքրքրութեանից զուրկ չեն նաև Սիմեոն Կյուլոյի հուշերը Վ. Թեքեյանի մասին: Պ. Զարոյանի հուշերի հետ մեկտեղ, նրանք ուրվագծում են Թեքեյանի՝ որպէս բանաստեղծի ու քաղաքացու՝ դիմաստովերը, խոստում նրա բնավորութեան հատկանշական գծերի մասին:

Երկրորդ հեղինակը, որի վրա մենք կուզենք կանգ առնել, դա Վազգեն Շուշանյանն է (1903—1941), մի գրող, որն արժանի է ուշադրութեան և որի մասին մեզ մոտ, դժբախտաբար, շատ քիչ է գրված: «Անի»-ն տպագրել է Վ. Շուշանյանի անձին ու գործին նվիրված մի ընդարձակ ակնարկ (Պ. Մինասյան) և երկու փոքրիկ գործ՝ Շուշանյանից (1949-ի հ. 5—6-ում (29—30)):

Անցնելով 1915-ի տառապանքի ուղիներով ու մաքառելով օրվա հացի համար, Վ. Շուշանյանը երբեք չընկճեց դժվարութեանների առջև, մնաց հավատարիմ աշխատանքի մարդկանց հանդեպ, և անհունորեն սիրեց իր ժողովուրդը, հայրենիքն ու հայրենի մշակույթը:

Դեռևս 1935 թվականին, երբ Եվրոպայի երկնակամարում օրեցօր խտանում էին ամպերը, նա, դիմելով «ժայրագույն վշտով... իրենց ճիգերուն ամլութունը դիտող» երիտասարդ հայ գրողներին ու մտավորականներին, ասում է. «ճարձ է հալատալ մեր ժողովուրդի վերածնունդին, անոր հեղափոխական առավոտյան ու թոթափել հետադիմական վերջին ցրնցոտիները, խորին հավատքով մը փարիլ մեր երկրի վերաշինութեան դադափարին»<sup>50</sup>:

49 «Անի», 1952, հ. 3 (51), էջ 158:

50 «Անի», 1949, հ. 5—6 (29—30), էջ 302: Տե՛ս նաև Վ. Շուշանյան, «Վտանգին հանդեպ» («Մշակույթ», 1935, № 2, էջ 83):



Վ. Շուշանյանը դատապարտում էր այն մտավորականներին, որոնք հեռու էին պահում իրենց մարդկությանը հուզող հարցերից, խուսափում էին մխրձվել հասարակական քաղաքական կյանքի մեջ, որը դառնում էր ավելի ու ավելի տագնապալից: «Այսօր արվեստագետն ու գրողը չեն կրնաո կղզիացած ապրիլ, եթե արժանի են իրենց կոչումին ու կուզեն տալ իրական կյանքը: Ընկերային ու քաղաքական հարցերը՝ հրատապ խնդիրներ են, որոնցմե չի կրնար հեռու մնալ ճշմարիտ մտավորականը, եթե չ'ուզեր խզել իր կապը կյանքին հետ»<sup>51</sup>:

Լինելով «իր սերունդին հառաջապահ, հեղափոխաշունչ և ընկերայնորեն ամենեն ավելի խորապես պատրաստված գրագետն ու քնարերգակը», — ինչպես գրում է Պ. Մինասյանը Վ. Շուշանյանի մասին, — նա խորապես ատում էր պատերազմը, որից այնքան շատ էր տուժել իր ժողովուրդը: «Քաղքենի պատերազմը, — ասում է նա, — կործանաբար աղետ մըն է. մարդկային առաջադիմության ընթացքը կասեցնող: Անիկա ծնունդն է դրամատիրական մրցակցության»: Ահա թե ինչու նա այնպիսի տագնապով ընդունեց ֆաշիզմի սանձաղեբած պատերազմը 1939-ին եվրոպայում:

Վ. Շուշանյանը ուշի-ուշով հետևում էր վերածնված հայրենիքի արվեստի ու գրականության ծաղկմանը: «Չարենցը՝ հետպատերազմյան մեր բանաստեղծության մեջ ամենեն հզոր արտահայտությունն է հեղափոխական ոգիին, — կ'ըսեիր ան, — ուժգին, լայնածավալ», — վկայում է Պ. Մինասյանը:

Շուշանյանի խորին համոզումով, միայն հայրենիքի գոյությունն ու նրա իրականությունն է ի վիճակի պտղավորելու պանդխտության մեջ ապրող հայ զանգվածների մշակութային ճիգերը:

Վ. Շուշանյանի թողած գրական ժառանգությունը դեռ կարոտ է ուսումնասիրության և հրատարակության:

Լասը (Լուիզա Ասլանյան, 1906—1945) ամսագրում ներկայացված է Վահե-Վահյանի հոդվածով<sup>52</sup>: Բնութագրելով

51 «Անի», 1949, հ. 5—6 (29—30), էջ 381:

52 «Անի», 1952, հ. 6—7 (54—55), էջ 373:

Ֆաշիստական մահվան ճամբարներում զոհված հայրենասեր գրողի ստեղծագործությունը, հեղինակը վեր է հանում այն զլխավորն ու բնորոշը, որ հաստուկ է վիպասանուհուն. դեռևս ռոմանտիկական երանգավորումներ ունեցող ռեալիզմը, հարուստ ոճը, «որ կը միացնէ առնական կորով մը իր կանացի քնքշության», մեր «գրական զուգը լեզուներուն յուրահատուկ առավելությունները — արեւելյանին հյութեղությունն ու հընչյունային քաղցրությունը և արևմտյանին ճշմարտասեր ճկունությունը»:

Ունենալով իր շեշտված անհատականությունը և ուրույն կեցվածքը կյանքի երևույթների հանդեպ, ընթանալով համաքայլ իր ժամանակի առաջավոր գաղափարների հետ, Լասը, ինչպես արտահայտվում է Վահե-Վահյանը, հասնում է պայծառ համոզումների: Հիմնական խմաստն այդ համոզումների հետևյալն է.

— Արվեստը ինքնանպատակ չէ, այլ ազդվում և ազդում է իր շրջապատի վրա:

— Պատմության անխիլը ետ չի շրջվում, այլ ունենալով հանդերձ իր անկումներն ու վերելքները, շարժվում է միշտ առաջ: «Հառաջագրություն, հակադրություն ու համադրություն կը հաջորդեն իրարու, մինչև որ արտադրողը դառնա բաշխողն ու վաճելողը նաև»:

Ինչ վերաբերում է սփյուռքին, ապա օտարության մեջ ապրող հայության ճիգերը իրենց առավելագույն արդյունքին կհասնեն, վիպասանուհու խորին համոզումով, հայրենիքի հետ սերտ պայմաններում միայն:

«Ահավասիկ թե ինչու, — եղրակացնում է Վահե-Վահյանը, — Լասը խանդավառ է խորհրդային Հայաստանով և իր վեպի («Հարցականի ուղիներով». — Մ. Բ.) հերոսուհին կուղարկե հայրենիք»:

Հոգվածում զգալի տեղ է հատկացված Լասի կենսագրությանը ու շեշտված է այն հերոսական պայքարը, որ տարել է վիպասանուհին Ֆաշիստական օկուպանտների դեմ Ֆրանսիայում, որին ի վերջո նա, իր ամուսնու՝ Արփիար Ասլանյանի հետ միասին, զոհաբերեց իր երիտասարդ ու եռանդով լի կյանքը:



Այս շարքի ուշագրավ նյութերի թվին են պատկանում Ա. Չոպանյանին, Ա. Սեմային (Գեղամ Աթմաճյան), Շ. Շահնուրին և այլոց նվիրված հոգվածները:



1946 թվականի սեպտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարը: Այն կարևոր երևույթ էր հուպատեիրադմյան սովետահայ մշակութային կյանքում և մեծ հետաքրքրություն առաջ բերեց թե Հայաստանում և թե սփյուռքահայ զաղութներում. նրա աշխատանքներին մասնակցում էին նաև արտասահմանից ժամանած շատ հայ գրողներ:

Բնական է այն լայն արձագանքը, որ գտավ համագումարը «Անի»-ում, մանավանդ որ արտասահմանից հրավիրված հայ գրողների թվում էր և նրա խմբագիր Վահե-Վահյանը:

Ինչպես հայտնի է, համագումարը ջերմորեն դիմավորվեց զաղութահայ հասարակայնության կողմից, թեև եղան և չարամիտ հարձակումներ: Դաշնակ ղեկավարությունը, մասնավորապես, որտեղեց այն «որպես պաշտոնականացումը... հայ մշակութային դեմ շարված դավադրության մը»:

«Անի»-ն լայնորեն լուսաբանեց համագումարի աշխատանքները, տպագրելով թե՛ կարգացված ղեկուցումների ու ելույթների հետ կապված նյութերը և թե՛ իր մեկնաբանություններն ու սփյուռքահայ գրողների տպավորությունները համագումարի մասին:

Համագումարի նյութերից ամսագիրը ներկայացրեց իր ընթերցողներին Ավ. Խահակյանի բացման խոսքը, Հր. Գրիգորյանի «Սովետահայ գրականությունն ու նրա հետագա զարգացման ուղիները» և Էդ. Թոփչյանի «Արտասահմանյան ժամանակակից հայ գրականությունը» ղեկուցումները (կըրճատումներով, բայց «առանց զիջում ընելու հիմնական գիծերին»): Բացի այդ, «Անի»-ն տպագրեց հատվածներ Ա. Ժգանովի՝ Լենինգրադի սովետական գրողների միության ժողովում կարդացած ղեկուցումից, նշելով, որ նրա մեջ հայտնված մտքերը «...լուրջ ազդեցություն ունեցան Հայաստանի սովետական գրողներու երկրորդ համագումարի ընթացքին վրա»:

Ամսագիրն ավելացնում է նաև, թե «Այդ միտքերը ոչ նվազ շահեկան են նաև արտասահմանի հայ գրողներուն ու գրասերներուն համար: Անոնք մեծ շահով կը դյուրացնեն ըմբռնումը սովետական գրականության վերաբերյալ հարցերու, և նույն ատեն կը բովանդակեն տեսություններ՝ որոնցմէ կըրնա թելադրվիլ արտասահմանի մեր գրականությունն ալ»<sup>53</sup>:

Ամսագրի էջերում լույս տեսավ նաև Գրողների միության նորընտիր քարտուղար Հմայակ Սիրասի հոգւածը՝ նվիրված համագումարի նշանակութանը և սովետահայ գրողների հետագա անելիքների հարցին:

Սփյուռքահայ գրողներից «Անի»-ն տպագրեց «Նոր գիր»-ի խմբագիր Բ. Նուրիկյանի և համագումարի մասնակից Զ. Որբունու արտահայտած կարծիքները սովետահայ գրական կյանքի այդ կարևոր իրադարձության մասին: Նրանք երկուսն էլ շեշտում են այն խոշոր դերը, որ տրվում է գրականությանն ու գրողին մեր երկրում:

Համագումարի աշխատանքներին ավելի հանգամանորեն անդրադառնում է ամսագրի խմբագիրն ինքը՝ Վահե-Վահյանը: Պատասխանելով համագումարի հասցեին եղած թշնամական հարձակումներին, նա նշում է, որ դա գալիս է այն շրջանակներից, որոնք «խեղաթյուրումն ու հերյուրանքը դարձրել են սկզբունք, և հայհոյությունը՝ միջոց, հանուն մեղապարտ հետապնդումներու»:

---

53 «Անի», 1946, հ. 7, էջ 388:



## ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՅԵՐԸ ԵՎ «ԱՆԻ»-Ն

Արվեստին նվիրված բաժինը «Անի»-ում համեմատաբար փոքր է, թեև ընդգրկում է նրա գլխավոր ճյուղերը՝ կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, ճարտարապետություն: Կինոարվեստին ամսագիրն անդրադարձել է հարևանցիորեն, մի հոգվածով միայն:

Ինչպես դրականության, այնպես էլ արվեստի հարցերում ամսագրի հիմնական ելակետը ռեալիզմն է, գաղափարայնության պահանջը: Լինելով առավելապես զրական ամսագիր, «Անի»-ն ավելի լայն տեղ է հատկացրել և ավելի բազմափուլմանի ու խոր վերլուծման է ենթարկել դրականության հետ կապված պրոբլեմները, քան արվեստի այս կամ այն ճյուղն ընդգրկող հարցերը: Բայց այստեղ ևս, արվեստի բնագավառում, նա մնացել է հիմնականում սկզբունքային իր բարձրության վրա:

## Կ Ե Ր Պ Ա Ր Վ Ե Ս Տ

Արվեստի այս ճյուղը արտասահմանյան հայ գաղութներում ունի իր բազմաթիվ ներկայացուցիչները, այդ թվում և այնպիսի մեծություններ, որոնք արժանի համբավ են ձեռք բերել և ընդհանուր ճանաչում գտել: Կերպարվեստին նվիրված իր նյութերի միջոցով ամսագիրը, մի կողմից, վեր է հանում սփյուռքում ապրող հայ նկարիչներին ու քանդակագործներին, արժեքավորում նրանց արվեստը, մյուս կողմից ծանոթացնում է իր ընթերցողներին հայրենիքի՝ Սովետական Հայաստանի արվեստի և արվեստագետների ձեռք բերած նվաճումներին:

«Անի»-ն անդրադարձել է նաև կիբանանում ու Եգիպտոսում կազմակերպված այն բոլոր ցուցահանդեսներին, որոնց մասնակցել են հայ արվեստագետները:

Ամսագրի՝ արվեստին նվիրված նյութերը ցույց են տալիս, որ հայ ժողովրդի շնորհալի զավակները, կյանքի ամենադժվարին պայմաններում իսկ, հայրենի երկրից դուրս էլ պահպանում են իրենց ստեղծագործական կորույն ու ձիրքերը և համառ ու հարստեղ աշխատանքի շնորհիվ հասնում նախանձելի բարձրության:

Խոսելով սփյուռքահայ կերպարվեստագետների մասին, ամսագիրը չի մոռանում շեշտել և այն կապը, որ կա նրանց ստեղծագործությունների ու իրենց ծնող հայ ժողովրդի արվեստի, ավանդույթյունների ու սովորույթյունների հետ: Հետաքրքիր է, որ այդ կապի մասին խոսում են ոչ միայն հայ հոգևածագրերը, այլև օտար հեղինակներ: Այդ հարցի առնչությամբ ամսագիրն անում է հետևյալ շատ ուշագրավ դիտողությունը.

«Եթե ճիշտ է թե փարթամ աճումը պայմանավոր է հարադատ հողով,— դրում է նա,— ճիշտ է նույնպես թե պարտադրյալ մեր հեռացումը մեր հայրենիքեն՝ չէ նաև անվերադարձ խզում մը անկե»<sup>1</sup>:

Սփյուռքի հայ արվեստագետների վերաբերյալ նյութերը ամսագրում հետաքրքիր են և այն առումով, որ նրանցում ոչ միայն խոսվում է այս կամ այն արվեստագետի ստեղծագործության առանձնահատկությունների մասին, այլև առաջ են քաշվում մի շարք սկզբունքային հարցեր ու պահանջներ: Կերպարվեստը ոչ միայն գույն է ու ձև, այլ, նախ և առաջ, բովանդակություն: Ելնելով դրանից, «Անի»-ն պահանջում է արվեստագետից, ստեղծագործական անհատականության հետ միասին, գաղափարայնություն, սերտ կապ կյանքի հետ, արվեստի այնպիսի գործեր, որոնք մտքեր, զգացմունքներ, հուղումներ հարույցեն մարդկանց հոգիներում: «Անի»-ն հանդես է գալիս էպիգրոսության դեմ՝ կերպարվեստի մեջ, ինչպես նաև

<sup>1</sup> «Անի», 1952, հ. 9 (57), էջ 502:



ֆորմալիզմի ու «վերացական նկարչության ամուլ փորձարկություններուն...»<sup>2</sup> դեմ:

Սփյուռքահայ կերպարվեստագետների մեջ աչքի ընկնող և միջադգային համբավի արժանացած դեմք է Գառզուն (Գառնիկ Զուլումյան), որին ամսագիրը մի քանի հոդված է նվիրել զանազան առիթներով: Գառզուն շատ ինքնատիպ նկարիչ է: Նրա արվեստը դերազանցորեն մարդկային է, լավատես իր խորքով: Բարձր պրոֆեսիոնալիզմը Գառզունի մոտ գեղեցիկ ներգաշնակության մեջ է գտնվում իրականի ու բանաստեղծականի հետ:

Գառզունի կտավներում, մանավանդ նրա ստեղծագործական կյանքի առաջին շրջանում, գունեղ ու շեշտված կերպով արտահայտվում է մարդկանց ներաշխարհի ողբերգությունը, որն արդյունք է կամ արտացոլումը շրջապատող կյանքի թշվառության: Ողբերգականի այդ տարրը, նշում է ամսագիրը, «անկասկած ունի իր մեջ վերապրող մաս մը արվեստագետին հայու հիշողութենեն»:

Բայց Գառզունի արվեստի առանձնահատկությունն այն է, շարունակում է ամսագիրը, որ ողբերգականը նրա մոտ չի տանում դեպի հոռետեսություն, որովհետև թշվառության պատկերումը ինքնին ենթադրել է տալիս անհամաձայնություն ու բողոք տիրող իրականության դեմ, և հետո՝ նկարչի մոտ ողբերգականին զուգահեռ խիստ որոշակիորեն հանդես է գալիս և հեքիաթայինի պայծառ տարրը, որ հուսալ ու երազել է տալիս մարդկանց: Սակայն լավատեսության այդ դողան չի լրացնում այն պահանջը, որ «Անի»-ն ներկայացնում է արվեստին: Ճիշտ է, գրում է ամսագիրը, որ Գառզունի արվեստում տիրողը կամազուրկ համակերպությունը չէ, բայց այնտեղ բացակայում է նաև մաքսառումի ոգին: «...Մինչ հեղափոխական խառնվածքով արվեստագետը պիտի ծառանա՝ իր աչք իրականության դեմ և իր ուժերը պիտի լարեր զայն իր տեղին վրա փոխելու, իր մտատեսած տիպարին բերելու ուղղությամբ, Գառզուն կրնարե անկե փախուստի ճամփան: Իրեն հետ տանելով իր ցավերը՝ որ ցավերն են նաև նույն մղձավանջեն հա-

2 «Անի», 1950, հ. 2 (38), էջ 114:

լածված մարդկության մը, կը հորինեն ուրիշ աշխարհ մը, ի՛ր աշխարհը»<sup>3</sup>:

Բնորոշ է ամսագրի համար և այն ցանկություն-մաղթանքը, որ արտահայտված է հիշյալ հոդվածի վերջում անվանի նկարչի ստեղծագործական հետագա զարգացման առթիվ.

«Ձեմ գիտեր, ներելի՞ էր, կարելի՞ էր հուսալ, մաղթե՛լ, որ օտարացած անունի մը տակ իր հոգին հարադատորեն հայ պահող, պղտիկ աշխատանոցի մը մեջ՝ իր պղտիկ ազգին չափ, ամբողջ մարդկության ալ ցավերը սեղմեցնող մեծատաղանդ մեր հայրենակիցը կարենար օր մը տեսնել, տալ հզոր գեղեցկությունը այդ ցավերը բառնալու մաքառումին»:

Նկարչի հետագա տարիների աշխատանքները ցույց են տալիս, որ եթե նա դեռ չի հասել «մարդկության ցավերը բառնալու» համար մաքառելու «հզոր գեղեցկությանը», ապա կանգնած է այդ ուղու վրա: «Անի»-ի հոդվածից ավելի քան մեկ տասնամյակ հետո, 1961 թվականին, «Սովետական արվեստ» ամսագիրը, անդրադառնալով «Իսկական հումանիստ, տաղանդավոր ու պայծառամիտ նկարիչ» Գառզուի նոր աշխատանքներին («Ապոկալիպս»-ի շարքը), գրում է, որ «...արվեստագետը արտահայտել է իր հոգու բողոքը ատոմային արհավիրքի դեմ, մերկացրել պատերազմի գաղջ էությունը»<sup>4</sup>:

Նույնտիպի պահանջներ է ներկայացնում «Անի»-ն արվեստին իր մյուս հաջողված նյութերում ևս:

Եգիպտահայ անվանի նկարիչ Աշոտ Զորյանին, նկարչուհի Վափա Սարգիսին (Խաչատրյան) և ուրիշներին նվիրված հոդվածներում<sup>5</sup> ամսագիրը վերստին անդրադառնում է այն դերին, որ պետք է ունենա արվեստը կյանքում: Իսկական, ապրելու կոչված արվեստը չի կարող մեկուսանալ, կտրվել կյանքից, չարձագանքել ժամանակի հրատապ ու հուզող հարցերին: «Արվեստի գործ մը՝ միտքի գործ է նույն ատեն: Հետևաբար,

3 «Անի», 1950, հ. 2 (38), էջ 112:

4 Տե՛ս Մելինե Մանուշյան, «Գառզուն... նա ինքը՝ Գառնիկ Զուրում-յան» հոդվածը «Սովետական արվեստ» ամսագրում, 1961, № 7, էջ 55:

5 Ա. Զորյանի մասին նյութերից նկատի ունենք Վահե-Վահյանի հոդվածը:



ինքնուրույն տեսակետի մը, կյանքի ուղղության մը բացա-  
կայութիւնը անկե՝ պակաս մըն է միշտ»<sup>6</sup>:

Պաշտպանելով արվեստի գործերում «կյանքի տեսակետ  
մը, որ ներկայացներ արվեստագետին գաղափարական խոր-  
քը», ամսագիրը աչքաթող չի անում և վարպետության հար-  
ցերը, ձեռն ու բովանդակության միասնության, զգացմունքներն  
ու ապրումները հստակորեն ու հշմարտացի կերպով արտա-  
հայտելու պահանջը, գաղափարական բովանդակութիւնը դի-  
տողի հոգուն «գույներու (ու ձեւերու) կախարդանքին մեջն»  
հաղորդելու պահանջը:

Ամսագրում տպագրւած ոչ բոլոր հոդւածների հեղինակ-  
ներն են, սակայն, որ արվեստի ստեղծագործութիւններին մո-  
տենում են որպէս «միտքի գործերի»: Մի շարք նյութերում  
առկա է ֆորմալիստական մոտեցումը կերպարվեստի հարցե-  
րին, երբ նկարչի կամ քանդակագործի ստեղծագործութիւնը  
կամ նրանց առանձին աշխատանքի վերլուծումն ու արժեքա-  
վորումը հանգեցւում է լոկ գույների ու երանգների, գծերի  
ու ձևերի համակցության, զուգորդման, հաջորդականության  
կամ ներդաշնակության հարցերին, ըստ որում ամեն մի կոմ-  
պոնենտի տրվում է ինքնուրույն, որոշիչ դեր ու նշանակու-  
թիւն: Այդ կարգի նյութերի թվին է պատկանում Ա. Շ. Պեր-  
պերյանի հոդւածը նկարիչ Աշոտ Զորյանի մասին և տեղա-  
կան մամուլից արտատպւած մի շարք այլ նյութեր՝ կերպար-  
վեստի զանազան ցուցահանդեսների առթիւ:

Ամսագիրը իր էջերում անդրադարձել է նաև սփյուռքա-  
հայ անվանի նկարիչ Օննիկ Ավետիսյանին, քանդակագործ  
Լևոն Մուրադովին, մանրանկարիչ Աբրահամ Գուրգենյանին  
և ուրիշների: Ուշագրավ են հայտնի ծաղրանկարիչ Ալեքսանդր  
Սարուխանին նվիրւած նյութերը<sup>7</sup> և իր՝ Ալ. Սարուխանի մեկ  
ընդարձակ ակնարկը ծաղրանկարչության մասին<sup>8</sup>:

«Եզրիպտոսի ամենեն ավելի փնտրված ծաղրանկարիչը»՝  
Ալ. Սարուխանը տաղանդավոր արվեստագետ է: Նա մեծ ազ-

6 «Անի», 1948, հ. 1 (25), էջ 45:

7 Տե՛ս Օն, Ավետիսյան. Ծաղրանկարիչ Ալ. Սարուխան, «Անի»,  
1947, հ. 2 (14), էջ 105:

8 «Անի», 1946, հ. 4, էջ 214 և հ. 5, էջ 269:

դեցութիւնն է թողել թե՛ Եգիպտոսի և թե՛ հարեան արաբական երկրների ծաղրանկարչության զարգացման վրա: «Այնքան ուժեղ և հմայիչ է ոճը Սարուխանին,— գրում է Օն. Ավետիսյանը,— որ կարելի է ըսել թե ան իր արվեստին դրոշմը ձգած է եգիպտական ժամանակակից բովանդակ ծաղրանկարչության վրա»:

Հայտնի են Ալ. Սարուխանի պատերազմի շրջանի խայթող, սրամիտ ու դիպուկ ծաղրանկարները՝ ուղղված հիտլերյան Գերմանիայի ու ֆաշիզմի դեմ: Նրա ստեղծագործական գլուխգործոցներից են Նր. Օտյանի «Ընկեր Փանշունի»-ի հոյակապ նկարազարդումները (1938):

Բնութագրելով Ալ. Սարուխանի արվեստը, «Անի»-ն (Վահե-Վահյանը) գրում է. «Չարիքին, բռնության, ցավազար փառամոլության ու ճղճիմ հասկանության դեմ զգացած իր նողկանքը եթե լայնորեն մարդկային է, խորապես հայկական է իր էությունը»<sup>9</sup>:

Ալ. Սարուխանի ակնարկը ծաղրանկարչությանը նվիրված մի հակիրճ ուսումնասիրություն է սկսած հին ժամանակներից մինչև մեր օրերը: Այնտեղ խոսվում է նաև հայ ծաղրանկարչության ու երգիծական պարբերականների մասին: Անդրադառնալով սովետական ծաղրանկարչությանը, Ալ. Սարուխանը բարձր է գնահատում մասնավորապես Բ. Նֆիմովի և Կուկրինիկսիների արվեստը:

«Անի»-ն լայն տեղ է հատկացրել իր էջերում Ալ. Սարուխանի ծաղրանկարներին: Վերջինս աշխատակցել է ամսագրին նրա լույս ընծայման ամբողջ ընթացքում: Սարուխանի՝ «Անի»-ում ապագրված ծաղրանկարների թիվը անցնում է հիսունից:

Հայկական հին, նախասովետական և սովետական շրջանի կերպարվեստին նվիրված նյութերից հիշատակության արժանի են Լ. Ա. Դուռնովոյի «Հին Հայաստանի գրքային զեղանկարչությունը» ակնարկը, որ ամսագիրը, որպես խորաթափանց ու շահեկան մի ուսումնասիրություն, հարկ է համարել տալ իր երկու համարներում, արտատպելով այն «Հին հայկա-

<sup>9</sup> «Անի», 1946, հ. 1, էջ 48:



կան մանրանկարչություն» ալբոմից: Ուշագրավ է և հայ մանրանկարչության անխոնջ ուսումնասիրող Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանի «Համառոտ ղեկուցում»-ը, որ ժամանակին (1948-ին) նա ուղարկել է Փարիզ, բյուզանդագետների ընդհանուր կոնֆերանսին: Այդ «Զեկուցում»-ը հայ մանրանկարչությանը նվիրված նրա ընդարձակ աշխատության համառոտ շարադրանքն է՝ թեղիսների ձևով:

Կերպարվեստին նվիրված հետաքրքիր նյութերից են նկարիչ Օննիկ Ավետիսյանի մի հոդվածը<sup>10</sup> XVIII դարի հայ նկարիչ Յուհաննա էլ էրմենիի մասին:

Յուհաննա (Հովհաննես) էլ էրմենին ծնվել է Նրուսաղեմում, սակայն ստեղծագործել ու իր հասուն կյանքն անց է կացրել Նգիստոսում: Նրա նկարները (մոտ 120) պահպանվել են Նգիստոսի կոստական (ղստի) եկեղեցիներում, որոնց նկարադարձող ամենացայտուն դեմքերից մեկն է եղել Յուհաննան:

Օն. Ավետիսյանը բարձր է գնահատում Յուհաննայի ուժեղ անհատականությունը ու հարուստ երևակայությամբ օժտված արվեստը և գտնում, որ նրա գործերում ղգալի է մեր հին մանրանկարիչների ազդեցությունը (հեղինակը անվանում է Սարգիս Պիծակին): Յուհաննայի ստեղծած դեմքերը, գրում է Օն. Ավետիսյանը, ոչ թե ղստի կամ հունա-բյուզանդական են, այլ հայկական:

Ամսագիրը կարևոր աշխատանք է տարել, պարբերաբար հոդվածներ տպագրելով մինչսովետական շրջանի և, մասնավորապես, սովետահայ խոշոր արվեստագետների կյանքի ու ստեղծագործության մասին, օգնելով, այդպիսով, մեր կերպարվեստի ժողովրդականացմանը արտասահմանյան հայ ղաղղթներում:

<sup>10</sup> «Անի», 1948, հ. 1 (25), էջ 33:

Նկարիչ Օննիկ Ավետիսյանը գրաղվում է նաև արվեստագիտությամբ, մասնավորապես հայկական կերպարվեստի ուսումնասիրության ու պատմության հարցերով և մի ամբողջ շարք հոդվածներ ունի «Անի»-ում: Նրա գրչին է պատկանում «Հայ նկարիչներ և քանդակագործներ» ծավալուն ուսումնասիրությունը, որ լույս է տեսել 1961-ին, Կահիրեում (Ֆրանսերեն լեզվով):

Նախասովետական շրջանի հայ նկարիչներից «Անի»-ն անդրադարձել է Գեորգ Բաշինջաղյանին և Վարդգես Սուրենյանցին, ցույց տալով այն մեծ դերը, որ կատարել են նրանք հայ կերպարվեստի զարգացման գործում. առաջինը՝ որպես հայկական բնանկարչության տաղանդավոր ներկայացուցիչ, գրող ու հրապարակախոս, և, երկրորդը՝ որպես լայն դիպլոմատի տեր արվեստագետ, որ ստեղծել է և՛ պատմական կրթամիտներ, և՛ ժամանակակից կյանքի պոտենցիալներ ու բնանկարներ, և՛ գրքային հիասքանչ զարդանկարներ, զբաղվելով միաժամանակ թատերական նկարչությամբ, քանդակագործությամբ ու ճարտարապետությամբ:

Սովետահայ կերպարվեստն «Անի»-ում ներկայացված է Մ. Սարյանին, Հ. Կոչոյանին, Ա. Սարգսյանին, Ա. Ուրարտունին և է. Իսաբեկյանին նվիրված նյութերով:

Ժամանակակից հայկական կերպարվեստի խոշորագույն գեմբի՝ Մարտիրոս Սարյանի կյանքի և ստեղծագործության մասին ընդարձակ հոդվածը գրել է նկարիչ Յն. Ավետիսյանը: Նա Մ. Սարյանին դասում է այն մեծագույն արվեստագետների շարքը, «...որոնց էություն մեջ խտացած կ'ըլլան իրենց ժողովուրդին պատմությունն ու ավանդությունները, հարստներն ու երազները, վիշտերն ու տառապանքները, ուրախություններն ու խանդավառությունը, հավատքն ու բարոյական ըմբռնումները»<sup>11</sup>:

Հայկական բնաշխարհի գեղեցկությունների գունագեղ և խորապես բանաստեղծական վերարտադրության, գույնի ու լույսի սարյանական ընկալման, լակոնիկ ընդհանրացումների ու բնորոշի շեշտված ընդգծումների մեջ Յն. Ավետիսյանը տեսնում է ոչ միայն հանճարեղ արվեստագետի պայծառ ունակիզմը, այլև արտահայտությունը այն ուրույն հոգեբանության, այն մտերմիկ հարաբերության, որ ստեղծվում է դարերով միևնույն հողի վրա ապրող ժողովրդի ու իրեն շրջապատող բնության միջև:

Գույների մեծ վարպետի ունակիզմի մասին հեղինակը գրում է. «Մարտիրոս Սարյանը խորապես իրապաշտ արվես-

<sup>11</sup> «Անի», 1950, հ. 6—7 (42—43), էջ 409.



տագետ մըն է: Իր նկարչությունը մեզի կը թելադրեն տեսանելի իրականութենէն ավելի հարազատ, ավելի ճշմարիտ իրականութիւն մը, շնորհիվ իր պայծառ տեսիլքին, հանձարեղ հայտնատեսութեան»<sup>12</sup>:

Ճիշտ է Օն. Ավետիսյանը, երբ Մ. Սարյանի ստեղծագործութեան լավատեսութեան մեջ գտնում է հայ աշխատասեր ժողովրդի լավատես ոգու և խաղաղասիրական իղձերի յուրահատուկ արտացոլումը, սակայն չի կարելի համաձայնել հեղինակի հետ, երբ նա ասում է, թե «հեքիաթայինը կը կազմեն Մարտիրոս Սարյանի նկարչութեան խորքը»<sup>13</sup>:

Հեքիաթայինը, որի մասին, ի դեպ, հիշատակում է և ինքը՝ Մ. Սարյանը դեռևս ուսանողական տարիներին, իր մի շարք գործերի վերաբերյալ, էկզոտիկականի հետ միասին վաղուց անցած էտապ էր մեծ վարպետի ստեղծագործական լայնահուն ճանապարհին:

Օն. Ավետիսյանի եղրակացութեան սխալը գալիս է այն բանից, որ, ինչպես հոգւածի հեղինակն է գրում, ինքը հնարավորութիւն չի ունեցել «...պետք եղածին պես հետեւելու Սովետ. Հայաստանի արվեստագետներու գործունեութեան»: Եւ իրոք, ինչպես վկայում է ամսագիրը<sup>14</sup>, Օն. Ավետիսյանը մինչև հոգւածը գրելու պահը «...կրցած է տեսնել...» ոչ ավելի քան մեկ, մեկ ու կես տասնյակ «հարազատ նկարներ Սարյանէն», կատարված մինչև 1937 թվականը: Այդ, իհարկե, շատ քիչ է Սարյանի նման մեծ արվեստագետի ստեղծագործութիւնը բազմակողմանիորեն ու ճիշտ գնահատելու համար: Դրանով պետք է բացատրել նաև, որ հեղինակը իր հոգւածում քիչ տեղ է տվել Սարյանի գիմանկարային և թատերական-դեկորատիվ գեղանկարչութեանը:

Հայկական գրաֆիկայի ու գեղանկարչութեան խոշորագույն ներկայացուցիչ Հակոբ Կոչոյանին նվիրված Վ. Գայֆեճյանի հոգւածը տալիս է արվեստագետի կյանքի ու ստեղծագործութեան հակիրճ բնութագրումը: Հոգւածում շեշտված

12 Նույն տեղում, էջ 407:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում, էջ 401:

է Հ. Կոչոյանի հետաքրքրութիւնների լայնութիւնը և ստեղծագործութեան բազմակողմանիութիւնը:

Հայ երիտասարդ գեղանկարիչները տաղանդաշատ սերնդից «Անի»-ն իր ընթերցողներին է ներկայացրել էդուարդ Խաբեկյանին, որ այդ տարիներին գտնվում էր ղեռ իր ստեղծագործական ձանապարհի սկզբին, սակայն արդեն հաստատուն տեղ էր գրավել սովետահայ արվեստում:

Սովետահայ քանդակագործութիւնն ամսագրում ներկայացված է Արա Սարգսյանով և Ալծեմնիկ Ուրարտուով:

Ա. Սարգսյանի մասին հոգվածը պատկանում է Օն. Ավետիսյանի գրչին: Բնութագրելով անվանի արվեստագետի ստեղծագործութիւնը, հեղինակը շեշտում է, որ «...անիկա իրագործված է լավ ըմբռնված իրապաշտութեամբ մը, իր ապրած միջավայրի ու դարաշրջանի կյանքն ու մարգերը հարադատորեն պատկերացնող»<sup>15</sup>:

Օն. Ավետիսյանի այս հոգվածը ևս կազմված է շատ սահմանափակ նյութի՝ «10-ի մոտ դիմաքանդակներուն լուսատիպ վերարտադրութիւններու...» հիման վրա և, պարզ է, չէր կարող տալ Ա. Սարգսյանի ստեղծագործութեան քիչ թե շատ ամբողջական վերլուծութիւնը:

Ավելի հանգամանորեն է գրված, նյութի ընդգրկման լայնութեան տեսակետից, իրանահայ բանասեր Արամ Երեմյանի ակնարկը<sup>16</sup> Ալծեմնիկ Ուրարտուի մասին: Ա. Ուրարտուի ստեղծագործութեան արժեքավորման և ընդհանուր բնութագրման հետ միասին, որտեղ նույնպէս շեշտվում է արվեստագիտուհու ռեալիզմը, կապը կյանքի և իր ժողովրդի հետ, հեղինակը մանրամասնորեն խոսում է նաև Ա. Ուրարտուի առանձին գործերի մասին:

#### Ե Ր Ա Ժ Շ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Անի»-ն իր արվեստի բաժնում զգալի տեղ է հատկացրել երաժշտութեանը: Երաժշտական արվեստին նվիրված նյութերը բավականին բազմազան են և լուսաբանում են թե սփյուռ-

15 «Անի», 1946, հ. 8—9, էջ 493:

16 «Անի», 1948, հ. 9—10 (21—22), էջ 541:



քի և թե մայր հայրենիքի երաժշտական կյանքի մի շարք կարևոր հարցեր:

Արտասահմանյան հայ կոմպոզիտորներից ամսագրում ներկայացված են Օննիկ Պերպերյանը, Համբարձում Պերպերյանը և Գուրգեն Ալեմշահը: Ամենից ավելի հանդամանորեն է գրված Օ. Պերպերյանին նվիրված հոդվածը, որտեղ փորձ է արված տալ կոմպոզիտորի ստեղծագործության վերլուծումն ու գնահատականը: Ամսագիրը այդ և հայկական երաժշտությանը նվիրված այլ հոդվածներում շեշտում է սփյուռքահայ երաժշտագետների գործունեության այն կողմը, որի նպատակն է «պահել պանդուխտ մեր ժողովուրդը՝ հմայքին տակ հայ էրգին»:

Երաժշտական կատարողական արվեստի հայ տաղանդավոր դեմքերից «Անի»-ն անդրադարձել է դաշնակահար Րաֆֆի Պետրոսյանին և ջութակահարներ Մանուկ Բարիբյանին ու Զավեն Խաչատրյանին: Առաջին երկուսին մեր երաժշտասեր հասարակությունը լավ ծանոթ է Հայաստանում տված նրանց համերգների առնչությամբ: Ծանոթացնելով իր ընթերցողներին երիտասարդ կատարողների բարձր արվեստին, գնահատելով նրանց տաղանդն ու աշխատասիրությունը և մեջ բերելով հայ և օտար մամուլի շատ նպաստավոր կարծիքները, ամսագիրը ձգտում է ժողովրդականացնել նրանց և նրանց միջոցով՝ երաժշտական արվեստը զաղրվթահայ զանգվածների մեջ:

«Անի»-ն իր նպաստն է բերել նաև հայ կլասիկ և մանավանդ սովետահայ երաժշտական կուլտուրայի մասնաշաղկապացման դործին սփյուռքում:

1949 թվականին մեր ամբողջ ժողովուրդը նշեց Կոմիտասի ծննդյան 80-ամյակը: Ամսագիրը, որ մինչ այդ անդրադարձել էր Կոմիտասին սովետահայ երաժշտագետ Ս. Գասպարյանի մի ընդարձակ հոդվածով, լայն կերպով արձագանքեց այդ տոնին. տպագրեց նյութեր հոբելյանի տոնակատարության մասին, Ավ. Իսահակյանի «Կոմիտասի անմահ հիշատակին» և կոմպոզիտոր-երաժշտագետ Մ. Աղայանի «Կոմիտասի ժողովրդայնությունը» հոդվածները: «Անի»-ի խմբ-

բազրույթյունը, իր հերթին, ջերմ խոսք նվիրեց Կոմիտասին<sup>17</sup>, նշելով այն խանդավառությունը, որով մեծարեց հայ ժողովուրդը իր հանճարեղ զավակի ծննդյան 80-ամյակը: Վերհիշելով անցյալի այն եղեռական իրադարձությունները, որոնց ղոհը դարձավ մեծանուն կոմպոզիտորը, և ակնարկելով թուրքական մտավորական որոշ շրջանների կողմից Կոմիտասի երաժշտական ժառանգությունը կողոպտելու, իրենցը համարելու ամբարտաւան ցանկությունները, «Անի»-ն գրում է.

«Հիմա, Կոմիտասը, իր երգերուն հետ, կապրի սիրաին մեջ ազգի մը, որ այլևս չէ անտեր և անհայրենիք: Վա՛յ անոնց որ կը մոտենան Կոմիտասի ազգին կողոպուտի կամ կոտորածի ախորժակով»<sup>18</sup>:

Ամսագիրը Կոմիտասին անդրադառնում է և այլ առիթներով, այլ հոգվածներում, համարյա բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է մասնավորապես հայ երաժշտությանը:

Հայ դասական երաժշտության խոշոր ներկայացուցիչներից ամսագիրը հոգվածներ է նվիրել նաև Ալեքսանդր Սպենդիարյանին ու Արմեն Տիգրանյանին, ցույց տալով նրանց կատարած մեծ դերը հայ ժամանակակից երաժշտության, հատկապես նրա սիմֆոնիկ և օպերային ժանրերի զարգացման գործում: Հոգվածներում վեր է հանված անվանի կոմպոզիտորների արվեստի ժողովրդայնությունն ու ռեալիզմը:

Սովետահայ կատարողական արվեստի վառ դեմքերից «Անի»-ն իր ընթերցողներին ներկայացրել է ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհիներ Հայկանուշ Դանիելյանին, Տաթևիկ Սաղանդարյանին և պարարվեստի մեծ վարպետ Թամարա Խանումին:

Խոսելով Հ. Դանիելյանի փայլուն վերելքի մասին, ամսագիրը գրում է.

«Տաղանդավոր զավակն իր ժողովուրդին, ու երջանիկ՝ անոր անհաշիվ սերովը, Դանիելյան իր շքեղ հաղթանակները կը պարտի մասնավորապես կյանքի այն պայմաններուն»

17 «Անի», 1949, հ. 12 (36), էջ 665:

18 Նույն տեղում:



որոնք կարելի դարձան շնորհիվ ստեղծագործ իրավակարգին՝  
ընծայած առիթներուն»<sup>19</sup>։

Ուշադրության արժանի են սփյուռքահայ արվեստագետ  
Շահան Պերպերյանի գրած «Երաժշտությունը հայրենի մշա-  
կութային վերելքի մեջ»<sup>20</sup> և «Պարարվեստը հայրենի մշակու-  
թային վերելքի մեջ»<sup>21</sup> զույգ հոդվածները։ Նրանցում հեղինակը  
հանգամանորեն խոսում է սովետահայ արվեստի ձեռք բերած  
նվաճումների մասին անցած քառորդ դարի ընթացքում։ Նշե-  
լով, որ «...մեր ազգային երաժշտական մշակույթին զարգաց-  
մանը համար...» ստեղծվել են «գերազանց պայմաններ»,  
հայրենիքում, Շ. Պերպերյանը գրում է.

«Այսօր երաժշտական բարձր կյանք մը կը ծաղկի մեր  
հայրենի երկրին մեջ։ Պիտի ըսեմ, երաժշտական մեծ գարուն  
մը բռնեի է մեր Հայաստան բարձրաշխարհը։ Անկե երբեմն  
զգլխիչ շունչ մը կը բերե մինչև մեզի Երևանի ձայնասփյուռը՝  
վառելով մեր մեջ անդիմադրելի տենչանքը հոն ըլլալու, մաս-  
նակից՝ այդ կյանքին»<sup>22</sup>։

Շ. Պերպերյանը շեշտափում է և արվեստի տեսության  
հարցեր, մասնավորապես հայ ազգային երաժշտության զար-  
գացման հետադա ուղիների հարցերը։ Պետք է ասել, սակայն,  
որ արվեստի տեսությանը վերաբերող (թե երաժշտության և  
թե, ինչպես հետո կտեսնենք, ճարտարապետության) հարցե-  
րում նա հանդես է բերում սխալ ըմբռնումներ. նեղ ազգային՝  
երաժշտության և իդեալիստական՝ ճարտարապետության  
բնագավառում։

Ազգային երաժշտությանը ներկայացվող իր պահանջների  
մեջ Շ. Պերպերյանը ընդգծված կերպով շեշտում է «զուա-  
հաշկականի» հասկացողությունը, նեղացնելով մեր երաժշ-  
տության, այդ թվում և Կոմիտասի ու կոմիտասյան երաժշ-  
տության սահմանները։ Նա դժգոհ է, օրինակ, որ Ալ. Սպեն-

19 «Անի», 1946, հ. 5, էջ 154։

20 Նույն տեղում, հ. 6, էջ 321։

21 Նույն տեղում, հ. 3, էջ 149։

22 Հոդվածը գրված է 1946-ին, երբ մեր երաժշտական արվեստ-  
սփյուռքի ունկնդիրներին հասցնելու համարյա միակ միջոցը դեռևս ուղիղն  
էր։

դիարյանը և Ա. Խաչատրյանը «կերպով մը... հեռացած են բուն հայկական ինքնուրույնին»։ Այդ գալիս է, մեր կարծիքով, այն սխալից, որ որոշ հեղինակներ, հատկապես սփյուռքում, Կոմիտասն ու նրա երաժշտությունն ընկալում են ոչ թե որպես գագաթ և ուղի, այլ որպես առաստաղ։

Շ. Պերպերյանի հոդվածում (Հայաստանի երաժշտական մշակույթին նվիրված) հետաքրքիր տեղեկություններ կան 1922-ին, Կ. Պոլսում, Հ. Թումանյանի հետ իր հանդիպումների մասին.

«Թումանյան հայտնեց..., — գրում է նա, — թե Թիֆլիզի ու Երևանի մեջ հիմնվել էր Հայ Արվեստի Տուն, խմբելով հայ ամեն կարգի մտավորական ուշժերը ազգային մշակույթի դործին համար կազմակերպվելու, աշխատելու։ Իր թելադրանքն էր՝ նմանօրինակ ձևոնարկ մը ընել նաև Պոլիս, ու ոգեկան կապ հաստատել հայրենիքի մտավորականության հետ։ — Իրեն ի պատիվ սարքված մեծ թեյասեղանին «Բարձրավանք»<sup>23</sup>-ի ընկերներս բոլորանվեր կ'ընդառաջեինք բանաստեղծի թելադրանքին»։ Ասլա խոսելով մեծ բանաստեղծից ստացած իր տպավորությունների մասին, նա շարունակում է.

«Կյանքիս մեջ այդքան սրամիտ զրուցողի քիչ էի հանդիպել. տակավ սակայն, «հանաք անողին» տակ կը հայտնվել տեսանողը, մարդարեն։ Ու կը բարձրանային մեր սիրտերը... Այդ մարդը «Ջահը<sup>24</sup> տեսնողներեն» էր. ու իր տեսիլքով կը գրավեր մեզ ևս. եվ հույսը, կորուվը վերստին կը վառեին մեր մեջ»<sup>25</sup>։

Ամսագիրը ուշադրություն է նվիրել նաև Հայաստանի երաժշտական ուսումնական հաստատություններին, հոդվածներ տպագրելով Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ու Չաչկովսկու անվան երաժշտական տասնամյա դրպրոցի մասին։ Երկու հոդվածներում էլ խոսվում է Հայաստա-

23 «Բարձրավանք», ամսագիր հայ արվեստի և մտածման, որի պատասխանատու տնօրենն է եղել Շ. Ռ. Պերպերյանը։ Հրատարակվել է Պոլսում, 1922-ին։

24 Խոսքը «Լուսավորչի կանթեղ»-ի մասին է։

25 «Անի», 1946, հ. 6, էջ 321—322։



նում երաժշտական կադրեր պատրաստելու կարևոր հարցի մասին:

Երաժշտության միջազգային խոշորագույն գեմքերից ամառներին անդրադարձել է միայն Ֆ. Շոպենին: Նրա մահվան հարյուրամյակի տոթիվ գրված հոդվածում լեհ մեծ կոմպոզիտորի կենսագրության հետ մեկտեղ տրված է և նրա հիասքանչ ու ինքնատիպ արվեստի բարձր գնահատականը:

#### Թ Ա Տ Ր Ո Ն

Արտասահմանի հայ գաղութները հասկանալի պատճառով չունեն իրենց մշտական գործող թատրոնները: Մշակութային կյանքի այդ պակասը որոշ չափով լրացնում են սիրողական թատերախմբերը, որոնք ղեղարվեստական ինքնագործ այլ խմբերի հետ միասին (երգչախմբեր, պարային խմբեր և այլն) բավականին կենսունակություն են ցուցաբերում և ղգալի դեր են կատարում հայրենիքից՝ հետևապես ազգային թատերական ու երաժշտական առօրյայից հեռու ապրող հայ ղանգվածների կյանքում: Գնղարվեստական այդ խմբերին «Անի»-ն ցավոք սրտի չի անդրադառնում, թեև հետաքրքիր շատ բան կա նրանց գործունեության մեջ: Թատերական արվեստը, այդպիսով, ամսագիրը ներկայացնում է հայ հին և սովետական շրջանի թատրոնի ու թատերգության միջոցով:

Հայ թատրոնին ու թատերական արվեստին նվիրված նյութերի մեջ ուշագրավ է Գ. Դոյանի ընդարձակ հոդվածը հայ թատրոնի գոյության երկու հաղարամյակի մասին: Դա մի հատված է հայ անվանի արվեստագետի բաղմահատոր ուսումնասիրությունից և վերաբերում է մեր թատրոնի սկզբնավորման հարցին: Հայ մշակույթի պատմության այդ կարևոր հանգրվանն է, անշուշտ, որ շահագրգռել է ամսագրին հրապարակելու հոդվածը: Այնտեղ շեշտվում է, թե որպիսի կարևոր դեր է կատարել թատրոնը հին Հայաստանի մշակութային-հասարակական կյանքում ու մինչև անգամ քաղաքական պայքարում՝ «հանուն հին Հայաստանի ազգային շահերի»<sup>26</sup>:

26 «Անի», 1947, հ. 12, էջ 666:

Երկու հոգված ամաստեղում պատմում են հայ ռեալիստական թատերգության հիմնադիր Գաբրիել Սունդուկյանի արվեստի մասին։ Առաջինը գրել է ժողովրդական դերասան Գուրգեն Զանիբեկյանը, երկրորդը պատկանում է Դերենիկ Դեմիրճյանի գրչին։ Երկու հեղինակներն էլ ընդգծում են մեծ դրամատուրգի արվեստի ռեալիզմը։ Առավել հետաքրքիր է երկրորդը, որտեղ գրականությամբ են մեր ականավոր գրողի մտքերը Սունդուկյանի արվեստի մի քանի կարևոր կողմերի վերաբերյալ։

Երկու այլ հոգված նվիրված են Երևանի Երաժշտական կոմեդիայի ու Տիկնիկային թատրոններին։ Այդ թատրոնները նոր երևույթ էին հայկական բեմական արվեստի պատմության մեջ և ծնունդ էին առել Հայաստանում սովետական տարիներին։ Տպագրելով այդ հոգվածները, ամսագիրը, անկասկած, նպատակ է ունեցել ծանոթացնելու իր ընթերցողներին հայկական թատերական կուլտուրայի վերելքի հետ հայրենիքում, ցույց տալու այն դերը, որ ունեն հիշյալ թատրոնները ժողովրդի և հատկապես մանուկ սերնդի գեղարվեստական դաստիարակության գործում։

Հայ թատրոնին վերաբերող մյուս նյութերը ակնարկներ են՝ նվիրված մեր բեմի վարպետներին։ Ամսագիրը աչքալիսի ակնարկներ է հրապարակել Հովհաննես Արելյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Օլգա Գուլազյանի, Արուս Ասրյանի, Օրի Բունիաթյանի մասին։ Ակնարկներում համառոտակի բնութագրված են նրանցից յուրաքանչյուրի արվեստի առանձնահատկությունները, կատարած դերերը, բերված են և կենսագրական տեղեկություններ։ Այդ բոլորը, միասին վերցրած, բավականին ամբողջական գաղափար են տալիս ընթերցողներին նրանց բեմական կերպարի մասին։

Ինչպես ասացինք, «Անի»-ն հայկական կինոարվեստին համարյա չի անդրադարձել, բացառությամբ մի հոգվածի (Ա. Գասպարյան — «Կինո-արվեստը Հայաստանում»), որը շատ ընդհանուր ակնարկ է և չի ընդգրկում, ու չէր էլ կարող ընդգրկել, ստեղծագործական այն ուղին, որ անցել է հայ կինոն՝ իր հաջողություններով ու թույլ կողմերով հանդերձ։



Ճարտարապետական արվեստին ամսագրում բավականին լայն տեղ է տրված: Շուշափված են հայ հին և սովետական շրջանի ճարտարապետության հարցեր: Կան և հոգվածներ՝ նվիրված ճարտարապետության ընդհանուր պրոբլեմներին:

Սովետահայ ճարտարապետության վերաբերյալ նյութերն ուշագրավ են այն առումով, որ նրանց միջոցով ամսագիրը պատմում է նախ մեր երկրում ծավալված շինարարական աշխատանքների մեծության և ապա, միաժամանակ, խոսում մեր կանոցողական արվեստի մասին, որ ազգային է իր ավանդություններով, սակայն նոր՝ իր բովանդակությամբ, լինելով միանգամայն ներդաշնակ սոցիալիստական դարաշրջանի բարձր պահանջներին: Այդ հարցերին է նվիրված, օրինակ, Վ. Հարությունյանի «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» հոդվածը:

Շատ հետաքրքիր են Շվեյցարիայի ճարտարագետների և ճարտարապետների միության անդամ ճարտարապետ Ս. Ճեհհիրճյանի հոգվածները: Նա լավատեղյակ է սովետահայ ճարտարապետության զարգացմանը և Ա. Թամանյանի դպրոցի ջերմ ջատագովն է: Նրա հոգվածներից երկուսը նվիրված են արդի հայ ճարտարապետությանը<sup>27</sup>: Իր հոգվածներում Ճեհհիրճյանն անդրադառնում է այն մեծ հնարավորություններին, որ ստեղծեց սովետական իրավահարգը ժողովուրդների ազգային կուլտուրայի, այդ թվում և ճարտարապետական արվեստի զարգացման համար: «...Յուրաքանչյուր հանրապետության մեջ ազգային ճարտարապետությունը սկսած է բոլորել վերածնունդի շրջան մը», գրում է նա սովետական ճարտարապետության մասին: Դա հավասարապես վերաբերում է և մեր ռեսպուբլիկային: «Հայաստանի մեջ, — ասում է նա, — երբ հաստատվեցին խորհրդային կարգերը և խաղաղ աշխատանքի շրջան մը բացվեցավ, շինարարական գործունեությունը ստացավ աննախընթացորեն եռանդուն թափ մը»:

Ճեհհիրճյանը այնուհետև շարադրում է այն սկզբունքները, որոնց հետևում է սովետահայ ճարտարապետական միտքը,

27 «Անի», 1948, հ. 6 (16), էջ 328 և հ. 11 (23), էջ 609:

կառուցելով իր վերածնված հայրենիքը, և գտնում, որ Թամանյանի ստեղծած դպրոցը կանգնած է ճիշտ ուղու վրա:

Իր երկրորդ հոգվածը Ճեհահիրճյանն ամբողջովին նվիրել է Հայաստանի արդյունաբերական շինությունների ճարտարապետությանը: Կառուցողական արվեստի այս ճյուղը շատ քիչ է ուսումնասիրված մեզ մոտ: Առավել ևս քիչ են ծանոթ Հայաստանի արդյունաբերական կառույցներին սփյուռքահայ շրջանները:

Հայաստանը, գրում է Ճեհահիրճյանը, որ ստեղծել է իր հարուստ ճարտարապետությունը, պատմական բերումով դուրի կիներով իր սեփական արդյունաբերությունը դարգացնելու հնարավորությունից, չի ունեցել և իր արդյունաբերական ճարտարապետությունը: Այդ հնարավորությունը ստեղծվեց միայն սովետական իրավակարգի շնորհիվ, երբ Հայաստանում սկսվեցին կառուցվել մեկը մյուսի ետևից խոշոր, ինչպես ասում է հեղինակը, «համամիութենական վիթխարի աստիճանաչափով» արդյունաբերական ձեռնարկություններ:

Կառուցումների այս նոր տեսակը, որ կապ չունի Հայաստանում մինչ այդ ստեղծված ճարտարապետական արվեստի հետ և բխում էր երկրի արդյունաբերության «նետի մը նման ուղղաձիգ և արագ» վերելքի հետ, պահանջ դրեց ստեղծելու նոր՝ արդյունաբերական շինությունների ճարտարապետություն: Հեղինակը այնուհետև ցույց է տալիս, որ սովետահայ ճարտարապետների սերունդը հաջողությամբ լուծեց այդ խնդիրը, տալով արդյունաբերական յուրաքանչյուր շինության ճարտարապետական պարզ ու տպավորիչ ոճ, որ բխում է նրանց մասնահատուկ պահանջներից ու ներդաշնակ է միաժամանակ հայկական ճարտարապետության ընդհանուր ոգուն:

Ամսագիրը առանձին հոգվածներ է տպագրել ճարտարապետական մտքի աշխարհային ներկայացուցիչներ Ալ. Թամանյանի և Կ. Հալաբյանի մասին, վեր հանելով նրանց շինարարական արվեստի նշանակությունը, մասնավորապես շեշտելով Ալ. Թամանյանի մեծ դերը հայ նոր ճարտարապետության սկզբնավորման ու դարգացման գործում:

Ճարտարապետության վերաբերյալ հոգվածների մի մասը ամսագրում շոշափում է մեր անցյալի ժառանգության հար-



ցերը: Այդ նյութերի շարքում ուշագրավ են հայ ժողովրդի ճարտարապետական բազմահարուստ ժառանգության անխոնջ հետազոտող Թ. Թորամանյանի Զվարթնոցին նվիրված հոդվածները, որոնցում հեղինակը բնութիւյան է առնում այդ հուշակալ հուշարձանի շինութեան ժամանակաշրջանը, պատմական հանգամանքները, նրա տեղն ու նշանակութիւնը հայ ճարտարապետութեան և ընդհանրապես կառուցողական արվեստի պատմութեան մեջ:

Ուշագրութեան արժանի ուսումնասիրութիւններ են Ս. Զեազիրճյանի «Վիմագրոշմները հայ ճարտարապետութեան մեջ», «Տաճարը հայ ճարտարապետութեան մեջ», «Ժամատունը հայկական ճարտարապետութեան մեջ», «Տրդատ՝ ճարտարապետ հայոց» և մյուս հոդվածները, տպագրված ամսագրի տարբեր համարներում:

Խոսելով հայկական բազմապիսի վիմագրոշմների գոյութեան փաստի մասին, հոդվածի հեղինակը մատնանշում է, թե դրանք գալիս են ապացուցելու, որ ժամանակին հայ շինարարները (որմնադիր վարպետները, ճարտարապետները)՝ ունեցել են իրենց կազմակերպութիւնները, «որմնադրական դասերը» (արհեստակիցների միութիւնը), և որ հին հայկական շինարարական արվեստը ղեկավարվել է որոշակի կանոններով, այլ կերպ ասած՝ գոյութիւն է ունեցել կազմակերպված ճարտարապետական դպրոց:

«Վիմագրոշմները, — գրում է Ս. Զեազիրճյանը, — ...ճարտարապետական զարգացած կազմակերպութեան մը նշաններն են: Եվ երբ կը գտնենք նման նշաններ՝ հայ հիշատակարաններու վրա, այդ կը նշանակե թե՛ հայ որմնադրութիւնը, ապա ուրեմն՝ ճարտարապետութիւնը ունեցեր է իր կազմակերպութիւնը, կանոնները, ծեսերը, շինութեան գաղտնիքները և նվիրապետութիւն մը: Ասոնց հետքը կը տեսնենք հայ վիմագրոշմներուն մեջ»<sup>28</sup>:

Զետաքրքիր մտքեր է արտահայտում Զեազիրճյանը իր մյուս հոդվածներում, որոնք վերաբերում են հայկական ճարտարապետական կառուցվածքների առանձին մասերին, ինչպես, օրինակ, տաճարը, որ, ըստ հոդվածի հեղինակի, նա-

<sup>28</sup> «Անի», 1949, հ. 3 (27), էջ 160—161:

խապես եղել է հանդիսասրահ կամ տոնասրահ պալատներում ու արքունիքներում, ծառայելով ավագանիին որպես խորհրդանքի վայր և քրիստոնեության մուտքից հետո է միայն ստացել ժամանակակից կրոնական բովանդակությունը:

Միջնադարի մեր ահանավոր ճարտարապետ Տրդատին նվիրված հոգվածում Ճեաֆրճյանը շոշափում է և հայ-բյուզանդական ճարտարապետական ոճերի փոխադրեցության հարցերը, որոնք ղուրկ չեն հետաքրքրությունից:

Ուշագրության արժանի է նաև նույն հեղինակի «Հայկական ոճը ուս դասական ճարտարապետության մեջ» հոգվածը<sup>29</sup>: Այնտեղ շոշափվում են ուս դասական ճարտարապետության սկզբնավորման ու հայ-ուսական կապերի հարցերը: Ճեաֆրճյանը խիստ քննադատության է ենթարկում այն դիտողներին, որոնք ամեն մի աղբեցության մեջ, որպես սկզբնաղբյուր, փորձում են փնտրել արևմտյան քաղաքակրթության հետքերը: Անդրադառնալով ուս դասական ճարտարապետական ոճի կազմավորման ու կրած ազդեցություններին, հեղինակը գրում է.

«...Ռուս դասական ճարտարապետության վարպետները չեն եղած պարզ ընդօրինակողներ, այլ գիտցած են իրենց մեջ մը ավելցնել, իրենց հոգեկան ձգտումներուն արտահայտիչ, և հաջողած են ձևավորել ինքնահատուկ ոճ մը, այնքան հետաքրքրական՝ որքան որևէ դասական ոճ»<sup>30</sup>:

Ճեաֆրճյանը հանգես է եկել ամսագրում նաև արդի ճարտարապետության ընդհանուր հարցերին նվիրված հոգվածներով («Ճարտարապետության արդի ձգտումները», «Ճարտարապետներու միջազգային համաժողովը Լոզանում», «Ուստանաշինություն»): Ժամանակակից ճարտարապետության հիմնական խնդիրները նա կապում է քաղաքաշինության հետ, շեշտը դնելով կառուցվածքների հարմարավետության, ժողովրդի լայն խավերի առողջապահական և այլ պահանջները հաշվի առնելու վրա: Իր հոգվածներում հեղինակը քննադատության է ենթարկում քաղաքաշինական պրակտիկան և ճար-

29 «Անի», 1950, հ. 4—5 (40—41), էջ 273:

30 Նույն տեղում, էջ 288:



տարապետական անկումային ոճը արեւմուտքում երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում (1919—1939), երբ «ճարտարապետներու մեծագույն մասը, առանց որեւէ գեղարվեստական և բնազանցական<sup>31</sup> նկատումներով, փնտրելու կը նետուէր «նոր ձեւեր»... ճարտարապետութեան մեջ և անհեթեթութենէն անհեթեթութիւն կերթար...»<sup>32</sup>: Ճեւհիրճյանի ուշադրութիւնից չի վրիպում նաև այն հանգամանքը, որ այդ «ձախողված» ճարտարապետական ոճը ոչ թէ մեկուսացած երևույթ էր, այլ բուրժուական աշխարհի անկումայնութեան արտահայտութիւններից մեկը: «1914—1918-ի պատերազմէն վերջ,— գրում է նա,— շատեր միամիտ կերպով կարծեցին թէ կը սկսեր նոր դարաշրջանի մը բացումը, առանց մտածելու թէ բաղմաթիւ մութ շահեր արգելք պիտի ըլլային նոր դարաշրջանի մը սկիզբին և անոր հետ գալիք բոլոր փոփոխութեանց, թէ ընկերային և թէ գեղարվեստական: Այնպես որ վիժած նոր դարաշրջանի սկզբնավորութեան հարմարող նոր ճարտարապետութիւն մը մեջտեղ եկավ, նույնքան ձախողած:

1919-էն մինչև 1939, ճարտարապետութեան ասպարեզին մեջ,— շարունակում է նա,— կացութիւնը շատ չի տարբերիր մյուս մարզերուն մեջ տիրող խառնակ և անկայուն վիճակէն»<sup>33</sup>:

Կանգ առնելով քաղաքաշինութեան խնդիրների վրա և տալով այդ հարցի սպտմականը, Ճեւհիրճյանը նշում է, որ հնում հիմնական ուշադրութիւնը դարձվում էր քաղաքի կենտրոնի բարեկարգման վրա, որտեղ սովորաբար բարձրանում էին կառավարական և հանրային շէնքերը, բոլորովին անուշադրութեան մատնելով աշխատավորական դասերին հատկացված թաղամասերը, որոնք ողբալիորեն անխնամ և հակաառողջապահական վիճակում էին գտնվում:

31 «Բնազանցութիւն» բառը հեղինակը գործ է ածում ոչ մետաֆիզիկայի, այլ «նախապատճառների մասին ծանոթութիւններ» ունենալու իմաստով: Տե՛ս Ն. Թ. Գալայանի բառարանը:

32 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 40:

33 «Անի», 1947, հ. 1 (13), էջ 39—40:

Արդյունաբերության վարդապետը XIX դարում սկզբուն-  
քային փոփոխություն չմտցրեց այդ վիճակի մեջ: Խոշոր քա-  
ղաքների շուրջը բարձրացած գործարանային թաղամասերը,  
ասում է հեղինակը, որ կառուցում էին գործարանատերերը  
կամ արդյունաբերողների ընկերությունները, ելնելով, իհար-  
կե, սեփական շահերից, խճողուն վիճակ էին ներկայացնում  
և ղուրկ էին առողջապահական անհրաժեշտ պայմաններից:  
Իշխանությունները, շարունակում է Շեաֆիլդյանը, ուշադրու-  
թյուն էին դարձնում միայն քաղաքների բարեկարգ (կենտ-  
րոնական) թաղամասերի վրա, որոնք վարդարված էին լայն  
պողոտաներով, ընդարձակ հրապարակներով ու շքեղ շենքե-  
րով: Սակայն քաղաքի կամ երկրի տերերի այս վերաբերմուն-  
քը հեղինակը տարօրինակ կերպով փորձում է բացատրել այն  
փաստով, թե նրանք՝ իշխանությունները, «զբաղված» էին  
«զաղթային (զաղութարարական) նվաճումներով», չկարողա-  
նալով տեսնել այն կապը, որ կար քաղաքի ծայրամասերում  
ապրողների շահագործման և հրով ու սրով գաղութներ նվա-  
ճելու մեջ, չանդրադառնալով այն հարցին, որ «զաղթային  
նվաճումները» կեղեքման նույն քաղաքականության շարու-  
նակությունն էին, բայց ավելի վիթխարի մասշտաբներով ու  
ավելի վայրագ ձևերով:

Անցնելով մեզ ավելի մոտ ժամանակաշրջանի քաղաքա-  
շինության պրոբլեմներին, Շեաֆիլդյանը ուղղակի մատնա-  
նշում է, որ սեփականատիրական կարգերը արգելակում են  
ժամանակակից քաղաքների բարգավաճմանն ու բարեկարգ-  
մանը, հնարավորություն չտալով անգամ օգտվելու շինարա-  
րական տեխնիկայի նորագույն նվաճումներից:

«Մասնավորաբար արևմուտքի մեջ, — գրում է նա, — ուր  
ընկերային ու տնտեսական կարգերը առնվաղն կես դար ետ  
են մնացած՝ մեքենականության հառաջ բերած ճարտար-  
վեստականացումի հառաջդիմության հետ բաղդատելով, շի-  
նության ձևերը չեն հետևած այս հառաջադիմության ընձեռած  
կարելիությունը»<sup>34</sup>:

Հեղինակը ճշմարտացիորեն նկատում է, որ քաղաքաշի-

34 «Անի», 1948, հ. 2 (26), էջ 107—108 :



նության մեջ, արևմուտքում, տիրում է «...կատարյալ անիշխանություն մը, ու անհատական քմայքը ավերներ կը գործն: Այս երեվույթը,— բացատրում է նա,— հառաջ կու գա տիրող ընկերային կարգերու հետամնացութենեն ու չափազանց անհատապաշտ ըմբռնումներեն: Մինչդեռ, ներկա մեքենական հառաջադիմությունը կը պարտադրե ավելի հավաքական ըմբռնումներ, զոհելով անհատական շահը (խոսքը սեփականատիրոջ մասին է.— Մ. Բ.)՝ հասարակական շահուն: Այս տեսակետեն, կրնանք ըսել թե միայն հորհրդային Միությունն է որ ըմբռնած է այս իրողությունը և կը քալե ներկա դարու պահանջքին ճամփին»<sup>35</sup>:

Ճշմարտության մեծ մաս կա նաև Ճեհահիրճյանի այն մտքի մեջ, որ տակավին «անհատապաշտ տեսակետներու վրա» կանգնած արևմտյան ճարտարապետները «...բավական իմաստություն ունին տեսնելու համար թե այլևս հին ըմբռնումները չեն համապատասխաներ դարուս հառաջդիմության, և թե պետք են նոր հիմունքներ, վերածնող նվիրույան կերտելու համար»: Սակայն վրիպում է նա, երբ ենթադրում է, թե «ճարտարապետությունն է որ կը պատրաստե հեղաշրջումի տյս առաջին ուրվագիծը» և թե «վաղը ան պիտի տարածվի ուրիշ մարդերու վրա ևս—տնտեսական, ընկերային»<sup>36</sup>:

Պատմության ոչ մատերիալիստական ըմբռնումը խանգարում է Ճեհահիրճյանին հստակ կերպով ընկալելու, որ առաջնայիւր հենց այդ «տնտեսական-ընկերայինն» է (եթե պահպանելու լինենք հեղինակի արտահայտությունը և հասկանանք այն որպես արտադրական հարաբերությունների ամբողջություն), և նրա հեղաշրջումով է պայմանավորվում հին ձևերի («հին ըմբռնումների») փոխարինումը նորերով («դարուս հառաջդիմության համապատասխան»), ինչպես հասարակական գիտակցության այլ բնագավառներում, այնպես էլ արվեստի հարցերում, տվյալ դեպքում՝ ճարտարապետության մեջ:

Այսուհանդերձ Ս. Ճեհահիրճյանի հոգվածները շատ ուշա-

35 «Անի», 1948, հ. 2 (26), էջ 107—108:

36 Նույն տեղում, էջ 109:

գրավ են: Ճարտարապետության հարցերում նա միանգամայն իրատես է, կանգնած է ռեալիստական դիրքերի վրա:

Դրան հակառակ, ճարտարապետական արվեստի իդեալիստական, մետաֆիզիկ ըմբռնումներ է հանդես բերում Շահան Պերպերյանը, որի երկու հոգվածների մասին մենք առիթ ունեցանք խոսելու երաժշտության բաժնում:

Ճարտարապետությանը նվիրված իր հոգվածում<sup>37</sup> Շ. Պերպերյանը հայկական ճարտարապետության երեք ոճ կամ կարգ է սահմանում, որոնք, ըստ հեղինակի, համապատասխանում են հունականի «գոթիական»-ին (Պերպերյանն անվանում է այն «գուսպ-զանգվածագոր»), «հոնիական»-ին («նուրբ-վայելչական») և «կորնթական»-ին («պերճ-ճոխական»), հետո ընդհանրացնում է, որ այդ կարգերը հատուկ են նաև գոթական և վերածննդի շրջանի ճարտարապետությանը ու եվրոպացնում, թե դրանց «...բուն բացատրությունը կը գտնվի ավելի խորունկը՝ Զևերու կյանքի մը օրենքներուն մեջ... որ քերս ալ կյանքի Զևերուն մեկ օրենքն է (ընդգծումը մերն է. — Մ. Բ.), քանի՜ ծառերն ալ իրենց հզոր բունը կը բարձրացնեն նախ, կը նրբանան հետո իրենց ճյուղերուն մեջ, որոնք ծաղիկներուն շնորհիվ կը զարդարվին, մինչև կը հասնի պլազավորումի ծանր ճոխությունը... աշնաբեր եղանակին...» և այլն:

Այստեղ պարզ է ամեն ինչ, առանց մեկնաբանությունների:

Շ. Պերպերյանը իր հոգվածի վերջում հավատով է խոսում «մեր հայրենիքի ճարտարապետական նորագույն վերածնունդի» մասին, բայց, հավատարիմ մնալով իրեն, ելնում է նորից իր իդեալիստական հայեցակետից, վերագրելով այդ ոչ թե տնտեսական-հասարակական նոր՝ սովետական իրավակարգի ընձեռած լայն հնարավորություններին, այլ միայն «մեր ազգային մեծ արվեստին մեծ ոճին...»:

Ամբողջացնելու համար մեր խոսքը, ասենք, որ ամսագրի արվեստի բաժինը հարստացնում են, մի շարք այլ հոգված-

37 «Հայկական ճարտարապետության երեք կարգերը», «Անի», 1947, հ. 5 (17), էջ 269:



ների հետ միասին, խմբագրի հայրենական հուշերի («Հարա-  
լեզներու հաշտությունը») այն հատվածները, որոնք նվիրված  
են Սովետական Հայաստանի հռչակալ նվաճումներին՝ ար-  
վեստի զանազան բնագավառներում, և ապա ամսագրի ճա-  
շակով արված նկարազարդումները՝ ծաղրանկարներ (որոնց  
մասին հիշատակել ենք), նկարների ու քանդակների վերար-  
տադրություններ (մի մասը գունավոր), լուսանկարներ և այլն։  
Ամսագրի լուսանկարների բաժինը, սկսած 1950-ի առաջին  
համարից, հարստացել է հայրենական տեսարանների (եր-  
կուհի-չորս լուսանկար) հատուկ էջով՝ «Հայրենի աշխարհ»  
վերնագրի տակ։

\* \*  
\*

«Անի»-ն իր հիմնական բաժիններից դուրս, որոնք հա-  
մարյա անփոփոխ պահպանվել են առաջին համարից մինչև  
վերջինը, շատ քիչ բան է տպագրել։ Դրանք տարբեր համար-  
ներում լույս տեսած մի քանի հոդվածներ ու մանր ուսումնա-  
սիրություններ են հնագիտության, լեզվաբանության, բժշկու-  
թյան վերաբերյալ։ Այդ նյութերից հիշատակության արժանի  
են, մասնավորապես, մեր մեծ գրող Դ. Դեմիրճյանի «Անընդ-  
հատ զարգացող հայոց լեզուն»<sup>38</sup> և Ա. Շորվողյանի «Զեյ-  
թունի բարբառը (Գեղացոց լեզուն)»<sup>39</sup> հոդվածները։

<sup>38</sup> «Անի», 1948, հ. 12 (24), էջ 660։

<sup>39</sup> «Անի», 1952, հ. 2 (50), էջ 101։

## Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

«Անի»-ն իր առաջին համարի խմբագրականում գրել է, թե իր նպատակը «մանր փառասիրություններ շքազարդելը չէ», մի երևույթ, «որ շատ հաճախ եղած է ապերջանիկ շարժառիթը՝ Սփյուռքի իմացական պիտակով ձեռնարկներուն»:

Որ դա հայտարարություն չէր միայն, այլևս տվեց ամսագրի հետագա ամբողջ գործունեությունը:

Մոտ մեկ տասնամյակ շարունակ «Անի»-ն արձագանքեց սփյուռքահայ գրական-գեղարվեստական կյանքը հուզող հրատապ հարցերին, պրոպագանդեց արվեստը սնող վեհ ու առաջավոր գաղափարներ՝ շեշտը միշտ դնելով նրա հասարակական բովանդակության վրա:

Հատկապես նշանակալից է «Անի»-ի դերը ռեալիզմի պաշտպանության ու սրմատավորման գործում սփյուռքահայ նոր գրականության և, մասնավորապես, գրողների նոր սերնդի մեջ: Նրա գրական հայացքները ընդհուպ մոտենում են սոցիալիստական ռեալիզմի գաղափարներին: Այդ համահունչությունը մեր ժամանակաշրջանի գեղագիտական ամենաառաջադեմ գաղափարների հետ եթե մի կողմից արդյունք էր սովետահայ (իսկ ավելի լայն խմաստով՝ սովետական) գրականագիտական մտքի բարեբար ազդեցության, քանզի դա կար, բնական էր և անժխտելի իրականություն, ապա մյուս կողմից հետևանք էր մի ավելի խորունկ պրոցեսի, որի հիմքը պետք է փնտրել դեմոկրատական, հասարակական-քաղաքական այն շրջադարձի մեջ, որ տեղի ունեցավ հայկական գաղութներում դեպի Սովետական Միություն ու սովետական հայրենիքի իրականությունը երկրորդ համաշխարհա-



յին պատկերազմից հետո, և որը իր գաղափարական արտահայտութիւնը գտավ ինչպէս գաղութահայ հասարակական մտքի վարդաքման պրոցեսում՝ ընդհանրապէս, այնպէս էլ գրականագիտական մտքի ասպարեզում՝ մասնավորապէս:

«Անի»-ն մեծ աշխատանք կատարեց սփյուռքի և հայրենիքի կապերի ամրապնդման գործում, լայնորեն ծանոթացնելով արտասահմանի հայ ընթերցողներին սովետահայ գրականութեան ու արվեստի նվաճումներին:

«Սոսկապատկերազմյան մեր գրականութեան ամենամեծ իրագործումներն մեկը, — իրավամբ գրում է Գեղամ Սեւանը, — սփյուռքի և հայրենիքի միջև նետված ոսկե կամուրջն էր: Այդ կամուրջը, կապը պատճառ դարձավ սփյուռքահայ գրականութեան ծաղկման ու հետագա զարգացման... Վահե-Վահանն էր ճարտարապետը այս կամուրջին»<sup>1</sup>:

«Անի»-ն ստեղծեց շարժում, կարողացավ իր շուրջը համախմբել մեծ թվով սփյուռքահայ գրողների, արվեստագետների, մտավորականների, մանավանդ երիտասարդ սերնդից, դառնալով, այդպիսով, սփյուռքահայ պրոգրեսիվ գրականութեան կազմակերպիչ օղակներից մեկը հոսպատերազմյան առաջին տասնամյակում:

Այդպիսով «Անի»-ն զգալի ազդեցութիւն ունեցավ ժամանակի գրական կյանքի վրա:

Իր հրատարակման առաջին իսկ օրերից «Անի»-ն լայն արձագանք գտավ սփյուռքահայ մտավորական շրջաններում: Նրա գործունեութեան մասին արտահայտվեցին ամսագրերը, թերթերը, գրողները:

Նշելով արտասահմանյան հայ գաղութների ու «նոր և ամուր հիմերու վրա կերտվող հայրենիքի» կապերի մեծ կարևորութիւնը և այն խոշոր դերը, որ ունեն գրականութիւնն ու արվեստը «գաղութահայ միտքն ու սիրտը բյուրեղացնելու» գործում, Բեյրութի «Զարթոնք» օրաթերթը գրում է.

«Անի» գրականութեան և արվեստի ամսագիրը կը հանդիսանա ամենն լուրջ ձեռնարկը ստանձնելու համար այս գործը և իր շուրջ համախմբելու և կազմավորելու լավագույն

1 «Արարատ-Դրական», 1962, հ. 5—6, էջ 266:

մշակները գաղութաճայ գրականության և արվեստին»։ Հատկանշական է մանավանդ «Զարթոնք»-ի այն դիտողությունը, թե «Անի»-ն «...իր առաջին այս թիվովն իսկ զգալապես զերծ մնացած է լալիան, հուսահատ ու օդին մեջ դեղերոզ գրվածքներ»<sup>2</sup>։

«Անի»-ի «ճոխ բովանդակությունը և գեղարվեստական ճաշակն» է շեշտում «Ծիածան» ամսագիրը, ավելացնելով, որ նա ունի «աշխատակիցներու ընտրյալ խումբ մը...»<sup>3</sup>։

Շատ ջերմորեն է արտահայտվել «Անի»-ի մասին սփյուռքաճայ անվանի գրող Շահան Շահնուրը։ «Զեր այս թերթը, — գրում է նա Վահե-Վահյանին ուղղված մի նամակում, — ճշմարիտ ալպոմ մըն է, պերճ և հույժ գեղատեսիլ, որուն պարունակությունն ալ լեցուն է թանկագին իրականացումներով և սիրելի խոստումներով։ Ճշմարիտ four de force»<sup>4</sup>։

Համակրանքով է խոսում «Անի»-ի մասին և Ա. Զոպանյանը, անվանելով այն «գրական սիրուն ամսագիր, ղոր Բեյրութի մեջ կը հրատարակե Վահե-Վահյան տաղանդավոր բանաստեղծը»։

«Անի» ամսագիրը ջերմ ընդունելություն գտավ նաև հայրենիքում, սովետահայ ընթերցողների շրջանում։ Իր հրատարակության ամբողջ ժամանակամիջոցում այն սփյուռքաճայ ամենասիրված գրական պարբերականներից մեկն էր։ Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական Ընկերության օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը ողջունեց «Անի»-ն՝ որպես «Հայաստանի կենսուրախ, խորհրդավատ և ստեղծագործ ոգու արտահայտիչը սփյուռքի հայության մեջ», ընդգծելով այն կարևոր դերը, որ ստանձնել էր «Անի»-ն արտասահմանի հայ գրական կյանքում։

Միանգամայն թշնամական էր «Անի»-ի հանդեպ դաշնակցական մամուլի դիրքը։ Եվ դա հասկանալի է։ Հայրենիքի հետ սերտորեն կապված, առաջադեմ հայացքների տեր գրական ամսագիրը, որի համար դաշնակցական ղեկավարներն

2 «Զարթոնք», 1946, 5 մայիսի։

3 «Ծիածան», 1946, հ. 2 (32), էջ 77։

4 «Անի», 1947, հ. 4 (16), էջ 188։



այլ բան չէին, քան «հայ աթոռազուրկներ», «չարիքի գործակալներ», «տիրոջ ալգու ծուռ ծառեր», կամ «ոխով ու ոճիրով սեղած հոգիներ» ու «հայ բանի տաճարին գավիթը խոնված փերեզակներ ու քսակահառներ», իր նկատմամբ այլ վերաբերմունք չէր կարող վաստակել այն շրջաններում, որոնց նպատակը Սովետական Հայաստանը վարկաբեկելն ու գաղութահայ աշխատավոր զանգվածներին հայրենիքից կտրելն էր։ Բայց նրանց այդ թշնամանքը ավելի շատ արտահայտվեց ամսագիրը լուսնյան մատնելու, քան նրա վրա համձակումների կատարելու ձևով։ Թերևս այն պատճառով, որ այնքան էլ դյուրին բան չէր պայքարը «Անի»-ի և նրա հեղինակության դեմ։ «Անի»-ի դադարելուց հետո միայն Ս. Վրացյանը իր մաղձը թափեց Վահե-Վահյանի վրա, գրելով իր վերջին հոդվածներից մեկում<sup>5</sup>, թե՛ «Անի» կար Բեյրութում, որ փորձում էր Հայաստանի ձեթով վառ պահել սփյուռքի հայ գրական ճրագը։ Այժմ Անիի ավերակներն են հիշեցնում գրական այդ ձեռնարկը։ Չարախնդությամբ ասված այս խոսքերի մեջ ուշագրավն այն խարդախ թշնամանքն է, որ հանդես են բերում դաշնակցության ղեկավարներն ամեն անգամ, երբ հարյր վերաբերում է սովետական հայրենիքի և արտասահմանի հայության կապերին ու դրանց զարգացման, ամրապնդման գործին։

Վահե-Վահյանը «Անի» ամսագրի հետ մեկտեղ հիմնադրեց նաև «Անի» հրատարակչությունը, որն իր գոյությունը շարունակում է մինչև այսօր։ Այդ մատենաշարով լույս է տեսել 12 գիրք։ Առաջին հայացքից թերևս փոքր թվա այդ թիվը, բայց նախ՝ դրանք բոլորն էլ սփյուռքահայ գրականությունը հարստացնող արժեքավոր հրատարակչություններ են և, երկրորդ, պետք չէ մոռանալ, որ արտասահմանում յուրաքանչյուր հայերեն գրքի տպագրություն կապված է ղգալի դժվարությունների հետ։

«Անի»-ի մատենաշարով լույս տեսած գրքերի մեծ մասը ամսագրի մշտական աշխատակիցների երկերն են։ Դրանց թվին են պատկանում Սմբ. Փանոսյանի «Անարձագանք քայ-

<sup>5</sup> Տե՛ս «Նախիր», 1961, հ. 43։

լեր» պատմվածքների ժողովածուն և «Որ մրրկա՛վ էին դատված» վեպը, Գ. Սևանի «Սև ծովը նույնն է միշտ», Տ. Վարժապետյանի «Զառիթափին վրա» պատմվածքների և Զ. Մելքոնյանի «Երջանկություն» բանաստեղծությունների ժողովածուները, Ա. Անդրեասյանի «Վերջին կայանը» պատմվածքների ու «Խոհեր» գրական-հասարակական ակնարկների ժողովածուները, ինչպես նաև Ս. Ճևահիրճյանի «Տաճարը հայ ճարտարապետության մեջ» գրքույկը:

Այդ հրատարակություններով ամսագիրը, բացի սփյուռքահայ ընթերցողի գրադարանը հարստացնելուց, օգնում և խրախուսում էր հայ հեղինակներին, հնարավորություն տալով նրանց ծանր պայմաններում ստեղծագործած իրենց երկերը լույս աշխարհ բերելու առանձին գրքերով:

«Անի»-ի մատենաշարով լույս ընծայեց Վահե-Վահյանը իր «Հարալեզներու հաշտությունը» հայրենական հուշերը և բանաստեղծ Մաթեոս Զարիֆյանի «Ամբողջական գործեր»-ը: Այս վերջինը, որ մի ծավալուն հատոր է կազմում (650 էջ) և ամփոփում է հեղինակի բանաստեղծությունները, օրագրության էջերը և նամակները, սփյուռքահայ լավագույն հրատարակությունների թվին է պատկանում: Հատորը բարեխղճորեն կազմել ու խմբագրել են բանաստեղծի քույրը՝ գրող և «Երիտասարդ հայուհի» ամսագրի խմբագիր Սիրան Սեղան ու Վահե-Վահյանը:

Ամբողջացնելու համար մեր թվարկումը, պետք է հիշատակել նաև Բալզակի «Անծանոթ գլուխ-գործոցը» երկը, որ լույս է ընծայել «Անի» հրատարակչությունը՝ հեղինակի մասին Վահե-Վահյանի գրած համառոտ ուսումնասիրության հետ միասին:

«Անի»-ն ցուցաբերել է մեկ ուրիշ նախաձեռնություն ևս, որի մասին անհետաքրքիր չէր լինի հիշատակել այստեղ: Այն օրերին, երբ հայ թատրոնի երկհազարամյակի կապակցությամբ ծրագրվում էր պատմական Արտաշատում հատկապես կառուցվելիք բացօթյա թատրոնում ներկայացնելու Եվրիպիդեսի «Բաքոսի քրմուհիները», «Անի»-ն նույն նպատակով ձեռնարկում և իրականացնում է Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ»-ի բեմադրությունը, իրար հտեից տալով չորս ներկա-



յացում: «Շքեղ պատրաստությամբ այդ բեմադրությունը,—  
գրում է ամսագիրը,— եթե եղավ առաջին ձեռնարկը՝ հայ  
արվեստի մեծ թվականը հուշածող, կը հուսանք թե պիտի չմնա  
վերջինը: Երկու հազար տարի առաջ, երբ այսօրվան «քաղա-  
քակիրթ» ազգերեն շատերը իրենց «որսերը խորովել դեռ չէին  
գիտեր», մենք ունեցեր ենք թատրոն: Փառք մըն է ասիկա՝ զոր  
արդա՛ր է արժեցնել»<sup>6</sup>:

\* \* \*

«Անի»-ն լույս տեսավ դժվարություններով, երբեմն ամիս-  
ների, իսկ մեկ անգամ էլ ամբողջ մի տարվա ընդմիջումով և  
ի վերջո ստիպված եղավ դադարել նյութական միջոցների  
պակասի հետևանքով: Նյութական դժվարություններն առհա-  
սարակ սփյուռքահայ առաջադիմական պարբերականների  
հրատարակման ամենալուրջ խոչընդոտներից են եղել ու մը-  
նում են նաև մեր օրերում: «Անի»-ն այդ դժվարությունների  
ցավալի դոհերից մեկն է միայն:

Անգրագառնալով այդ հարցին, Վահե-Վահյանը մի առի-  
թով գրում է, որ «Անի»-ի հրատարակմանը «...զուգընթաց,  
ու մանավանդ՝... կարելի դարձնելու համար զայն, տեականո-  
րեն ավանդած եմ ու կ'ավանդեմ... Բեյրութի երկրորդական  
գույշ վարժարաններուն մեջ և այլուր...»: (Ընդգծումը մերն  
է.— Մ. Բ.):

Ուսուցչություն տնելով նյութական միջոցներ հայթայթել  
ամսագրի համար՝ ահա թե ինչպիսի ջանք է պահանջել «Անի»-ի  
հրատարակումը: Չնայած այդ դժվարություններին, նույն  
«Միջնաբերդ»-ում 1957-ին Վահե-Վահյանը գրում է, որ  
«Շուրջ երկու տարվան դադարե մը հետք մտադրած եմ շարու-  
նակել ամսագրիս հրատարակությունը»: Ի պատիվ Վահե-  
Վահյանի պետք է ասել, որ, որքան մեղ հայտնի է, մինչև  
այսօր էլ նա չի հրաժարվել «Անի»-ի հրատարակությունը  
շարունակելու մտքից, եթե փոքր ի շատե նպաստավոր պայ-  
մաններ ստեղծվեն դրա համար: Հուսանք, որ թերևս մի օր,  
Ա. Զոպանյանի «Անահիտ»-ի նման, «Անի»-ն ևս սկսի իր նոր  
շրջանը:

<sup>6</sup> «Անի», 1948, հ. 11 (23), էջ 608:

<sup>7</sup> «Միջնաբերդ», Դրական տարեգիրք, 1957, էջ 76:

|                                            |     |
|--------------------------------------------|-----|
| Նախարան                                    | 5   |
| Ներածություն                               | 7   |
| Զափածոն «Անի»-ում                          |     |
| Արձակը «Անի»-ում                           | 48  |
| Ռուս գրականությունը և «Անի» ամսագիրը       | 91  |
| Միջազգային գրականությունը և «Անի» ամսագիրը | 131 |
| Դրական քննադատության հարցերն ամսագրում     | 139 |
| Արվեստի հարցերը և «Անի»-ն                  | 173 |
| Վերջարան                                   | 195 |



ՄԱՆՎԵԼ ԱՎԵՏԻԿՈՎԻՇ ԲԱԲԼՈՅԱՆ

МАНВЕЛ АВЕТИКОВИЧ БАБЛОЯН

Սփյուռնահայ մամուլի պատմությունից  
«ԱՆԻ»  
(1946—1955)

Տպագրվում է ՀՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության  
ինստիտուտի զիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Ս. Տ. ԴԱՍՊԱՐՅԱՆ  
Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Նկարչական ձևավորումը Գ. ԱՐԱՄՅԱՆԻ  
Տեխ. խմբագիր՝ Է. Ս. ԱՎԵՏՅԱՆ  
Սրբագրիչ՝ Լ. Ս. ՍԱՐԱՅՅԱՆ

ՎՋ 06632, Հրատ. № 2495, ԽՀԽ № 940, պատվեր 1, տպաքանակ 1000  
Հանձնված է արտադրության 4/1 1965 թ., ստորագրված է տպագրու-  
թյան 26/V 1965 թ., տպագր. 12,75 մամուլ + 1 ներդիր, հրատ. 9 մամուլ,  
թաղիթ  $84 \times 108^{1/32}$ , Գինը կազմում 60 կոպ.:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության  
տպարան, Երևան, Բարեկամության 24:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220037205

A n  
37205